Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Der Genozid; Augenzeugenberichte; Notizen; Memoiren

ցեղասպանություն. վկայություններ, նոթեր, հուշագրություն

Im Lande des Blutes und der Tränen

Erlebnisse in Mesopotamien
während des Weltkrieges

von

Jacob Künzler



1921.
Tempel-Verlag in Potsdam

Յակոբ Կյունցլեր

Արյան և արցունքների երկրում

Իրադարձությունները Միջագետքում
Համաշխարհային պատերազմի ժամանակ

Երևան 2011

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Մենագրությունը երաշխավորվել է հրատարակման
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի կողմից

Հրատարակվում է Յակոբ Կյունցլերի ծննդյան 140-ամյակի առիթով

ՀՏԴ 941(479.25):930.9
ԳՄԴ 63.3(2Հ)+63.3(0)
Կ-602

շարի հայեցակարգ.
Հայկ Դեմոյան, Էմիլ Դանեղյան, Հարություն Սամուելյան

գլխավոր խմբագիր.
Էմիլ Դանեղյան

գիտական խմբագիր.
Հայկ Դեմոյան

գրաֆիկական նախագծում և էջադրում.
Հարություն Սամուելյան

Կյունցլեր Յակոբ
Կ-602 **Աղյան և արցունքների երկրում.** Իրադարձությունները Միջագետքում համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918) /Յակոբ Կյունցլեր; թարգ. Ա. Հայրունի, Հ. Մարտիրոսյան, Ա. Միրզոյան, խմբ.՝ Է. Դանեղյան.– Եր.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011. – 152 էջ

ՀՏԴ 941(479.25):930.9
ԳՄԴ 63.3(2Հ)+63.3(0)

ISBN 978-9939-822-12-9
© ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ. հայերեն թարգմանություն, 2011
Տպագրություն. Գասպրինտ տպագրատուն

ԱՍՏԻԱՄԱՆ
ՊԷՍՆԻ
ՄԵՐԵՐԷԿ
ԹԻԼԿԱՃՈՒՐՈՒՆ
ՍԱՄՈՍԱՏ
ՀԷՎԷՆՔ
(Հովակ)
ՀՈՄԿԼԱՅ
(Թում գալէ)
ԷՖՆԷԶ
ՑԻՊԻՆ
ԵԴԵՍԻԱ
(ՈՒՐՖԱ)
ԿԱԶԻԱՆԹԷՓ
ՊԻՐԷՃԻՔ
ՍՈՒՐՈՒՃ
ՔԻԼԻՍ
ՃՐԱՊԼՈՒՍ
ՄԷՅՏԱՆ
ԳՈՒՊԱՊ
ՄՄՊԷՃ
(Հիերապոլիս)
ՊԱՊ
ՀԱԼԷՊ
ՃԷՐԱՀ
ՄԷԱՔԷՆԷ
ԹԼ-ԱՆԷՋԷ
ՏԻԳՐԻՍ ԳԵՏ
ՏԻԳՐԻՍ
ՊԱՂ ՔԷՕՅ
ՇԷՐԱԿՐԱՊ
ԹԼ-ԷՍ-ՍԷՄՄԷ
ԹՈՒԱԼ ՍԱՊԱ
ՀԱՐԱՆ
ՊԻՐՈԷՅԻՆ
ՀԱՏԱՊԷԱԿԸՐ
ԱԳՏԷԳԱԼԷ
ԱՊՈՒՐՃԱՄ
ԹԼ-ԱՊՈՒՆ
ԱՊՈՒՆ
ԱՍԱՖ
ԷԼ ՀԱՄՄԱՄ
ՌԱՍ-ԷԼ-ԱՅՆ
ԹԼ ԽՆԳԻՐ
ՃԷՊԷԼ
ՊԷՅՏԱ
ԱՌՏ-ԸԼ-Ս
ՌԱՍԱՖԱ
ԳԱՐԱԳՈԼ ՀԱՄՄԱՄ
ՆԱՀՐ ՊԱՇԻՆ
ՇԷՊԷՔ
ԹԷՔԻՐ ԹԻՒՔԻՒՐ ՏԱՂ
ԳԱՄԸՂԸ
ՇԷՔԷՐԼԻ
ՄԱԼԱՊՏԷՐ
ՍԱՐՆԻՃ
ԿԷՍԱՐԻՈՅԸ
ՄԱՐԸ
ԹԼԷՆՊԱՐ
ՃԱՆԱՏԱՂԻՐ
ՔԱՐԱՔԷՕՓՐԻ
ԿԱՐՄՈՒՆՔ
ՇԷՆՇԻԿ ՏԱՂԱՐ
ՍՈՒՍՈՒՔ
ՔՕՇԻՔ ՏԱՂ
ԷԼԷՍԻԳՈՅՈՒ
ԱՂՎԸՐԱՆ
ՔԱՐԱՃԱՎԷՐԱՆ
ԹԼԿՈՒՂԱՆ
ԹԻԼՃԱՖԷՐ
ՎԷՐԱՆՇԷՀԻՐ
ՖԻՄՏԻՆՔԱԼԷ
ԹԷՔԹԷՔԻԼԵՌ
(ԹԷԿՔԷՊ)
ՄԱՐԻՆ
ՔԱՐԱՃԱՎԷՐԱՆ
ՄԱՂԱՐ
ՄԱԼՈՂԼԻ ՀԱՅԻԿ
ՓԱԶԱՐՄԸՂԱ
ՋԷՊՊԷՐԻՍ
ՏԱՂԼԱՐԸ
ՄԱՂԱՐ ՏԱՂԼԱՐԸ
ՋԷՓՆԻԷԱՆ

Առաջաբան

Յակոբ Կյունցլերն այն վառ անհատականություններից մեկն էր, որոնք, ականատես լինելով երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությանը, փորձել են անել առավելագույնը հայության զրկանքները մեղմելու և հայ ժողովրդի՝ սպանդից փրկված մնացորդներին զորավիգ լինելու համար: Եթե նկատի առնենք, որ նա Մեծ եղեռնի ժամանակամիջոցում գտնվում էր Ուրֆայում, որը դեպի Սիրիայի անապատները քշվող աքսորյալ հայերի վերջին հանգրվաններից մեկն էր, ապա պարզ կդառնա, թե որպիսի մեծ ընդգրկում և կարևորություն ունեն նրա վկայությունները:

Յ. Կյունցլերը ծնվել է 1871 թ. մարտի 8-ին Շվեյցարիայի Ապենցել շրջանի Հունդվիլ գյուղում, որմնադիրի ընտանիքում: Վաղ մանկության շրջանում կորցնելով ծնողներին՝ նա մեծացել է ազգականների խնամատարության ներքո: Առժամանակ զբաղվել է հյուսնագործությամբ իսկ այնուհետև, Բազելում ստանալով բժշկի օգնականի և հիվանդապահի մասնագիտություն, աշխատել է նախ Գլարուսի, ապա Բազելի հիվանդանոցներից մեկում: Այստեղ նա ծանոթացել է բժիշկ Հերման Խրիստի հետ, որը կարճ ժամանակ անց դր. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության հրավերով մեկնեց Ուրֆա այնտեղ այդ կազմակերպության որբանոցային հաստատությանը կից ստեղծված հիվանդանոցի և կլինիկայի աշխատանքները ղեկավարելու համար: Քանի որ այնտեղ աշխատանքների ծանրաբեռնվածության պատճառով շուտով լրացուցիչ օգնականի կարիք զգացվեց, Հ. Խրիստի առաջարկով Լեփսիուսը 1899 թվին Ուրֆա գործուղեց նաև Յ. Կյունցլերին, որտեղ նա այնուհետև ավելի քան 20 տարի աշխատեց որպես բժշկի օգնական՝ բժշկի բացակայության ժամանակ ստանձնելով նաև նրա պարտականությունները:[1] Այդ հիվանդանոցի և կլինիկայի առաջնահերթ խնդիրն, իհարկե, տեղի որբանոցային համալիրի սաների, ինչպես և 1895-96 թթ. կոտորածներից տուժած՝ Ուրֆայի հայ բնակչության սպասարկումն էր, սակայն, քանի որ հնարավորությունները ներում էին, դրանք սպասարկում էին նաև մահմեդական բնակչությանը:[2]

Իր բանիմաց, անձնվեր աշխատանքի շնորհիվ Կյունցլերը կարճ ժամանակում մեծ վստահություն և համարում ձեռք բերեց ինչպես հայերի, այնպես էլ մյուս քրիստոնյաների և մահմեդական բնակիչների շրջանում: Նա որոշակիորեն տիրապետեց թուրքերեն, հայերեն և քրդերեն լեզուներին, ինչը զգալիորեն դյուրացնում էր նրա շփումը տեղի բնակչության հետ: Նրան մշտապես մեծ աջակցություն էր ցուցաբերում նաև իր կինը՝ Էլիզաբեթ Բենդերը:

Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, Յ. Կյունցլերն, իբրև չեզոք երկրի՝ Շվեյցարիայի քաղաքացի, հնարավորություն ունեցավ մնալ Ուրֆայում՝ դառնալով հայ ժողովրդի հանդեպ իրագործվող ոճրագործությունների ականատեսը: Նրա դիտարկումներն ու նկարագրությունները մեծ կարևորություն ունեն Մեծ եղեռնի տարիներին, նաև մինչ այդ ու այդուհետ Ուրֆայում տեղի ունեցած իրադարձությունների համակողմանի լուսաբանման համար: Դրանք նոր լույս են սփռում ինչպես Ուրֆայի հայերի ինքնապաշտպանության, այնպես էլ՝ նրանց սպանդի և աքսորի բազմաթիվ էական մանրամասների վրա: Մեծ արժեք ունեն նաև եղերական իրադարձությունները վերապրած զոհերի և այլ ականատեսների տեղեկություններն ու նկարագրությունները, որոնք զետեղված են այս գրքում, և որոնց պահպանման համար մենք պարտական ենք Կյունցլերին:

Կյունցլերը, ինչպես մեծ եղեռնի տարիներին նմանապես Ուրֆայում գտնվող՝ հայ ժողովրդի մեծ երախտավոր, դանիուհի օրիորդ Կարեն Եփփեն, հաճախ վտանգելով իր կյանքը, փորձում էր անել հնարավորը հայերի զրկանքները մեղմելու համար: Լինելով «գերմանասեր», ինչպես ինքն էր իրեն երբեմն անվանում,

[1] Յ. Կյունցլերը, 1920 թ. Բազելի համալսարանում քննություններ հանձնելով, ստացավ բժշկի և վիրաբույժի դիպլոմ, որի շնորհիվ նա արդեն կարող էր ազատ կերպով բժշկական գործունեություն վարել: Մինչ այդ, երբ հիվանդանոցը որոշ ժամանակով զրկվում էր բժշկից, նա հարկադրված էր իր բժշկական գործունեությունը վարել մեկ այլ բժշկի վերահսկողության ներքո, ինչն, իհարկե, որպես կանոն ձևական նշանակություն ուներ:

[2] Հ. Խրիստն իր կնոջ ծանր հիվանդության պատճառով 1903 թ. ստիպված եղավ վերադառնալ Շվեյցարիա: Նրան առժամանակ հաջորդաբար փոխարինեցին հայ բժիշկներ Ա. Աթարյանը, Ա. Չեփեջյանն ու Ե. Արոյանը, մինչև 1905 թ. ԳԱԱ-ի կողմից Ուրֆա ուղարկվեց Բազելի հիվանդանոցի բժիշկ Ա. Ֆիշերը: 1907 թ. աշխատանքի ծավալներն այնքան էին մեծացել, որ հիվանդանոցում հաջորդաբար աշխատանքի ընդունվեցին երկու հայ բժիշկներ ևս՝ Մ. Հաղիդյանը և Ա. Աբուհայաթյանը:

նա երբևէ չտրվեց կույր «հայրենասիրության»՝ գերմանա-թուրքական դաշինքից բխող պահանջներին: Նա ավելի շուտ առաջնորդվում էր մարդասիրության և բարոյականության թելադրանքով՝ իր վարքագծով և բժշկական առաքելությամբ կերպարանագործելով աստվածաշնչյան պատգամները:

Կյունցլերի երախտիքն առանձնապես մեծ էր արևմտահայության՝ աքսորը վերապրած սակավ մնացորդների փրկության հարցում, որոնք 1916 թվի վերջից դարձյալ հավաքվում էին մեծ քաղաքներում, այդ թվում՝ Ուրֆայում և, որպես կանոն, գտնվում էին կատարելապես անմխիթար դրության մեջ, իսկ անգլիական զորամասերի՝ Թուրքիա մտնելուց հետո նա իր կնոջ հետ միասին ձեռնամուխ եղավ նաև մահմեդականների տներում բռնի կերպով պահվող հայ կանանց ու երեխաների ազատագրման գործին: Երբ զինադադարից հետո «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության՝ Ուրֆայում գտնվող՝ Գերմանիայի քաղաքացիություն ունեցող աշխատակիցները հարկադրված եղան հեռանալ Թուրքիայից, Կյունցլերին էր վիճակված ստանձնել գերմանական հաստատության շենքերը և դրանք, պահպանելով թուրքական կառավարության ոտնձգություններից, ծառայեցնել հայ ժողովրդի մնացորդների զրկանքների մեղմացմանը:

1919 թ. գարնանը, երբ դր. Ֆիշերը կարողացավ վերադառնալ Ուրֆա, Կյունցլերն իր ընտանիքի հետ մեկնեց Շվեյցարիա՝ երկարատև ծանրաբեռն աշխատանքից հետո փոքր-ինչ կազդուրվելու համար: Այստեղ էլ նա 1919-1920 թթ. ձմռանը հեղինակեց իր «Արյան և արցունքների երկրում» գիրքը, որը դր. Յոհ. Լեփսիուսի աջակցությամբ լույս տեսավ 1921 թվին Պոտսդամում: Այնուհետև Կյունցլերն ու իր կինը, չնայած Շվեյցարիայում ապրելու և աշխատելու՝ իրենց ուղղված մի շարք առաջարկներին, վճռեցին դարձյալ վերադառնալ Ուրֆա:

1922 թվին, երբ գերմանացի և շվեյցարացի բարեկամներն այլևս հնարավորություն չունեին բավարար նյութական աջակցություն ցուցաբերել Ուրֆայի հիվանդանոցի գործունեության շարունակման համար, նա և իր կինը աշխատանքի ընդունվեցին ամերիկյան Near East Relief («Մերձավոր Արևելքի նպաստամատույց») կազմակերպության՝ Ուրֆայի մասնաճյուղում, որտեղ Կյունցլերը վարում էր հաշվապահական գործերը և կնոջ հետ միասին զբաղվում այդ կազմակերպության կողմից հավաքված հայ որբերի խնամքով:[3]

[3] «Մերձավոր Արևելքի նպաստամատույցը» մեծագույն ներդրումն ունեցավ եղեռնը վերապրած՝ հայ ժողովրդի վերջին բեկորների փրկության գործում: Բավական է նշել, որ այդ կազմակերպությունն իր օգնության ծրագրի առաջին վեց տարիներ

Ամերիկյան այդ կազմակերպությունը Թուրքիայում ստեղծված աննպաստ իրադրության պատճառով 1922 թ. գարնանը վճռեց այդ երկրի տարածքում իր խնամքի տակ գտնվող որբերին տեղափոխել ոչ թուրքական անվտանգ տարածքներ, գլխավորապես՝ Հունաստան, Կովկաս, Սիրիա և Լիբանան: Հաշվի առնելով Կյունցլերի փորձառությունը և լեզուների իմացությունը՝ ընկերությունը նրան առաջարկեց մասնակցել այդ ձեռնարկի իրականացմանը, որը և վերջինս ընդունեց՝ հանձն առնելով կազմակերպել դեպի Սիրիա ուղարկվող երեխաների փոխադրումը: Ապրիլին, երբ կառավարությունը հայ կանանց և երեխաներին պաշտոնապես թույլատրել էր Թուրքիայից հեռանալ, Կյունցլերը ձեռնամուխ եղավ իր նոր առաջադրանքի կատարմանը՝ մինչև նոյեմբեր իր կնոջ հետ միասին հաջողությամբ իրականացնելով Ուրֆայից, Մարդինից, Դիարբեքիրից, Խարբերդից, Արաբկիրից, Ակնից և Մալաթիայից՝ մոտ 8 000 հայ որբերի տեղափոխումը Սիրիա:

Աշնանը, երբ Թուրքիայում մնացած բոլոր քրիստոնյաներին թույլատրվեց, իրականում ուղղակի կամ անուղղակի կերպով նաև պարտադրվեց արտագաղթել, երկրի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Ուրֆայում գտնվող հայության վերջին մնացորդները նույնպես սկսեցին հեռանալ հարևան երկրներ: 1922թ. հոկտեմբերի 1-ին փակվեցին նաև Ուրֆայի հիվանդանոցը և կլինիկան: Այնուհետև Կյունցլերը և իր կինը, ընդունելով ամերիկյան «Մերձավոր Արևելքի նպաստամատույցի» կառույցում իրենց գործունեությունը շարունակելու առաջարկը, մեկնեցին Լիբանան և այնտեղ 1923 թ. փետրվարի 6-ից ստանձնեցին Ղազիրում հիմնված որբանոցի ղեկավարումը, որտեղ հավաքագրվել էին 1400 որբուհիներ: Շարունակելով Ուրֆայի որբանոցային հաստատության արժեքավոր ավանդույթը՝ Կյունցլերն այս որբանոցում նույնպես ձեռնարկեց բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ երեխաների կրթության և դաստիարակության բարձր մակարդակն ապահովելու համար: Միաժամանակ Ուրֆայի որբանոցի օրինակով նա այնտեղ հիմնեց գորգագործարան և մի շարք արհեստագործական ձեռնարկություններ, մի կողմից՝ որբերի աշխատանքի ընթացքում՝ 1919-1925 թթ., Թուրքիայում և հարևան երկրներում հիմնված իր՝ ընդհանուր թվով 229 որբանոցներում հավաքել և խնամում էր ավելի քան 130 000 որբերի, որոնց 75 տոկոսը դեռ տասը տարին չէր բոլորել: Միաժամանակ այն հինգ տարի շարունակ նյութական օգնություն էր ցուցաբերում շուրջ 500 000 փախստականների՝ փորձելով նրանց համար ստեղծել գոյատևման պայմաններ: Այդ վիթխարածավալ փրկարար աշխատանքների համար կազմակերպության կողմից ծախսված գումարը նշված ժամանակամիջոցում կազմել է ավելի քան 100 միլիոն ԱՄՆ դոլար:

յին դաստիարակության ապահովման, մյուս կողմից՝ չափահաս դառնալուց հետո նրանց աշխատանքով ապահովելու համար:

1928 թվին ծառայության մտնելով Հայ օգնության շվեյցարական ընկերությունում՝ Յ. Կյունցլերն այդ ընկերության աջակցությամբ Ղազիրում գտնվող շուրջ 150 կույր որբերի համար ստեղծեց մի առանձին կացարան՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ նրանց կրթության և դաստիարակության համար[4], ապա մեկնեց Բեյրութ, որտեղ նրան հանձնարարվեց կառուցել բնակարաններ Լիբանանի հայկական ճամբարների՝ առավել ծանր վիճակում գտնվող ընտանիքների համար, իսկ Ղազիրի որբանոցային հաստատության ղեկավարումը սկզբնապես հանձնարարվեց նրա քսանամյա դստերը՝ օր. Մարիա Կյունցլերին, որը բավարար չափով տիրապետում էր հայերենին:[5]

Բեյրութում Յակոբ Կյունցլերն իր տիկնոջ հետ միասին ձեռնամուխ եղավ նոր առաջադրանքին՝ կառուցելով, անօթևան հայերին տրամադրելով բազմաթիվ բնակարաններ և միաժամանակ ցուցաբերելով տարաբնույթ մեծածավալ աջակցություն: Բացի այդ, նա Լիբանանի հայերի համար սեփական նախաձեռնությամբ կառուցեց մի առողջարանային հիվանդանոց՝ անձամբ հանգանակելով դրա համար անհրաժեշտ գումարը: 1939 թվին բեյրութահայերը հանդիսավոր կերպով նշեցին Կյունցլերի հայանպաստ գործունեության 40-ամյակը, իսկ 1947 թվին նա ստացավ նաև Բազելի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Այդ մեծավաստակ, արտասովոր կամքի և եռանդի տեր անձնավորությունը վախճանվեց Լիբանանում 1949 թ. հունվարի 15-ին (նրա աճյունն ամփոփվել է Բեյրութի՝ բողոքականների գերեզմանատանը): Նրա կինը՝ Էլիզաբեթ Կյունցլերը, վախճանվել է 1968 թվին՝ 93 տարեկան հասակում:

Յակոբ Կյունցլերն իր երկարամյա հայանպաստ գործունեության ընթացքում հեղինակել և հրատարակել է երեք ծավալուն գրքեր և բազմաթիվ հոդվածներ ու այլ աշխատություններ, որոնք առայսօր, ցավոք, չեն թարգմանվել և ըստ այդմ մատչելի չեն եղել հայ ընթերցողին: Խնդրո առարկա՝ «Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ» գիրքն առաջին անգամ լույս է տեսել

[4] 1924 թվից այդ որբանոցի սաների սննդի և հագուստի ծախսերը, որոնք կազմում էին ընդհանուր ծախսերի մոտ կեսը, իսկ 1928 թվից բոլոր ծախսերը ստանձնեց դր. Լեփսիուսի վերոհիշյալ կազմակերպությունը:

[5] Վերջինս Ղազիրի որբանոցում աշխատեց մինչև 1929 թվի սեպտեմբերը, որից հետո մեկնեց Հալեպ՝ այնտեղ ներգրավվելով չափահաս որբերի դաստիարակության աշխատանքներում:

1921 թվին, Պոտսդամում: Գրքի սույն՝ հայերեն հրատարակությունը համալրված է հեղինակի մի շարք հոդվածներով և մեկ նամակով, որոնք շարադրվել և հրատարակվել են գրքի լույսընծայումից հետո, բայց թե՛ ժամանակային և թե՛ բովանդակային առումով շարունակում ու ամբողջացնում են այն: Սա առաջին հրապարակումն է, որով Կյունցլերը ներկայանում է հայ ընթերցողին: Հուսանք, որ մոտ ապագայում կթարգմանվեն և կհրատարակվեն նաև այդ երախտավոր գործչի մյուս արժեքավոր աշխատությունները, որոնցից յուրաքանչյուրը որոշակիորեն համալրում է մյուսին՝ էլ ավելի ընդգրկուն և ամբողջական դարձնելով Հայոց ցեղասպանության՝ Կյունցլեր-ականատեսի փաստագրումներն ու վերապրումները:

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



1. Պատերազմի սկիզբը

Im Lande des Blutes und der Tränen

Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges

Եթե ես պատրաստվում եմ գրի առնել իմ ապրումներն ու դիտարկումները, որոնք Մեծ պատերազմի ժամանակ կատարել եմ Ուրֆայում, ապա դա, առաջին հերթին, այն պատճառով, որ ես միակ չեզոք անձն եմ, ով բոլոր սարսափելի իրադարձություններին, որոնցով Ուրֆան ավելի հարուստ է քան յուրաքանչյուր այլ թուրքական քաղաք, սկզբից մինչև վերջ ականատես է եղել:

Մինչև 1917 թ. վերջն Ուրֆայում էր նաև մի դանիուհի՝ օրիորդ Կարեն Եփփեն: Նա հայերի հետ սերտ հարաբերությունների մեջ էր գտնվում:

Պատերազմի բռնկման պահին ես ընտանիքիս հետ ամառային արձակուրդներս անցկացնում էի Գալիլեայում: Որոշակիորեն նախազգալով, որ մեծ իրադարձություններ են սպասվում, և այդ պատճառով ավելի լավ կլիներ Ուրֆայում՝ իմ աշխատավայրում լինել, քան՝ Գալիլեայում, ես որոշեցի շտապ վերադառնալ: Ես չէի սխալվել, պատերազմն իրոք բռնկվել էր, և Թուրքիայում ևս, սկզբից ևեթ, մեծ եռուզեռ էր տիրում: Երկաթուղային երթևեկությունը Հալեպի և Դամասկոսի միջև մասնավոր անձանց համար արգելված էր: Դամասկոսով մեկնող վերջին գնացքով ես ընտանիքիս հետ Հալեպ հասա:

Հալեպից Ուրֆա հասնելու միջոցին ես հանդիպեցի Ուրֆայի երկու խորհրդարանականների, որոնք սպասում էին կենտրոնական իշխանությունների անակնկալ կանչին: Նրանք հարցրեցին ինձ՝ արդյոք ես ճիշտ կհամարեի, եթե Թուրքիան Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտներ: Ես պատասխանեցի, որ ամենալավը կլիներ՝ ընդհանրապես պատերազմի մեջ չմտնել, անկախ նրանից՝ Գերմանիայի կողմից, թե՝ Անտանտի:

Երբ ես 1917 թ. դեկտեմբերին Կոստանդնուպոլսում այցելեցի այդ երկու խորհրդարանականներից մեկին, նա կրկին հիշեցրեց ինձ այդ խոսակցության մասին՝ արդեն արտահայտելով այն տեսակետը, որ Թուրքիան ավելի ճիշտ կաներ, եթե վարվեր ըստ իմ տեսակետի: Այսպես էր դատում մի թրծված երիտթուրք, որն իր շատ համախոհների նման Թուրքիայի չեզոքությունն օգտագործել էր անարգել կերպով հայ ժողովրդի բնաջնջումն իրականացնելու համար:

Աշխարհամարտի բռնկումը սկզբից ևեթ իմ մեջ մի ներքին երկդիմություն արթնացրեց: Որպես գերմանական շվեյցարացի՝ ես ինձ գերմանացի էի զգում ու նաև մինչև պատերազմի ավարտը մնացի գերմանակերպ մտածող: Դրան, հավանաբար, նպաստել էր նաև այն հանգամանքը, որ ես պատերազմի ընթացքում ընթերցելու համար գերմանական և թուրքական լրագրերից զատ երբեք այլ լրագիր չէի ստանում: Երբ ես Ուրֆա հասա, զորահավաքն արդեն եռուն ընթացքի մեջ էր: Ամենաերիտասարդները, այդ թվում նաև քրիստոնյաները, արդեն զորակոչված էին: 15-ից 50 տարեկան բոլոր տղամարդկանց ընդհանուր զորահավաք էր սկսվել. զորահավաքից խուսափելու դեպքում գործում էր մահապատիժը:

Այս ընդհանուր զորահավաքն, անշուշտ, կարող էր վերաբերել միայն մշտական բնակության վայր ունեցող հպատակներին. Թուրքիայի խորքում գտնվող քոչվոր ցեղերը, չնայած կանչվել էին ռազմական ծառայության, մտադիր չէին կատարել իշխանությունների պահանջը: Շուտով զինվորները մեկնեցին: Սակայն այդ օրերին մեկնող զինվորները կամ բնակչությունն առանձնապես մեծ ոգևորություն չէին ցուցաբերում, չնայած երաժշտությունը, ինչպես բոլոր նման դեպքերում, փորձում էր անհրաժեշտ տրամադրություն ստեղծել:

Այն երկու եվրոպական գլխավոր տեսուչները՝ նորվեգացի Հոֆը և բելգիացի Վեստենենկը, որոնք մեծ տերությունների կողմից Թուրքիային պարտադրվել էին արևելաանատոլիական վեց նահանգներում օրինակելի կարգ ու կանոն հաստատելու համար և որոնք 1914 թ. գարնանը եկել էին Թուրքիա՝ սկսելու իրենց գործունեությունը, պատերազմի բռնկումից քիչ անց վերադարձան իրենց հայրենիք: Նրանցից մեկն անցավ Ուրֆայով: Քաղաքի պարետը նրան պահակախումբ հատկացրեց: Ակնհայտորեն թուրքերն էին այդ մարդկանց ետ ճամփել. այժմ, երբ մեծ տերությունները պայքարում էին միմյանց դեմ, նրանք այլևս ոչինչ չունեին անելու Թուրքիայում:

1914 թ. օգոստոսի վերջին Ուրֆայում լուրեր տարածվեցին, թե իբր Զեյթունի հայերն իրենց շրջանում դիմադրել էին զորակոչին:[6] Այս լուրերի նպատակն էր մուսուլման բնակչությանը մոլորության մեջ գցել: Բնակչությանն ասվում էր, որ եթե Ուրֆայի հայերը նույնպես կամենան ապստամբություն բարձրացնել, ապա մահմեդականների վիճակն այնտեղ լավ չի լինի: Թեև Ուրֆա քաղաքում մահմեդականները մեծամասնություն էին կազմում, մոտավորապես կրկնակի ավելի էին քրիստոնյաներից, սակայն նրանք հաշվի էին առնում, որ քրիստոնյաները քաջությամբ ու, ամենից առաջ, նաև ձեռներեցությամբ իրենց գերազանցում էին:

[6] Զեյթունի իրադարձությունների մասին, որոնցով սկսվեց հայ ժողովրդի աքսորն իր բնօրրանից, տես «Հայ ժողովրդի մահուղին», հրատ. դր. Յոհ. Լեփսիուս, 2-րդ համալրված հրատարակություն, 1919, Պոտսդամ, Տեմպել հրատարակություն: (Ծան. թարգմ.)

Երբ օգոստոսի վերջին Ուրֆայում ծանուցվում էին գերմանական հաղթանակները, և մահմեդականները հաղթանակի յուրաքանչյուր լուր ցնծությամբ էին ողջունում, նրանք ուշադիր հետևում էին հայերին: Ուրախանու՞մ էին նրանք իրենց հետ, թե՞ կարելի էր նրանց մոտ ներքին մերժում նկատել. այսպես թե այնպես, կարելի էր սեփական հետևություններ անել: Առանձին հայեր չէին թաքցնում, որ իրենց կարծիքով գերմանացիները պատերազմում երբեք չէին կարող հաղթել, քանի որ նրանք չափազանց փոքրաթիվ էին: Դա, անշուշտ, չէր նպաստում հայերի նկատմամբ եղած կասկածների փարատմանը, և շուտով կարելի էր լսել, որ մահմեդականները հայերի մասին խոսում էին բացառապես որպես "դավաճան հայ ազգի" (Melun ermeni milleti):

Սեպտեմբերի 10-ին Ուրֆայում ծանուցվեց կապիտուլյացիաների վերացումը, և մեկ օր անց դա տոնվում էր մահմեդականների կողմից, կարծես Թուրքիայում եվրոպացիների իրավունքների վերացումը թուրքերի համար արդեն մի մեծ հաղթանակ լիներ:

Քանի որ Ուրֆայում մեր գերմանական միսիոներական հիվանդանոցը, որը ես այն ժամանակ գլխավորում էի, մինչ այդ, չնայած գործադրված բազմաթիվ ջանքերին, թուրքական կառավարության պաշտոնական արտոնություն դեռ չէր ստացել, ես պետք է փորձեի մի նոր դիմումի միջոցով ձեռք բերել պաշտոնական ճանաչումը: Մեր հիվանդանոցը գերմանական հաստատություն էր: Ըստ այդմ կարելի էր ակնկալել, որ բարեկամ և դաշնակից ազգի՝ արդեն իսկ երկու տասնամյակ առկա գործունեությունը թուրքերի կողմից անտարակույս պետք է որ ճանաչվեր, սակայն, կանխավ ասեմ, որ այդ ակնկալիքը չիրականացավ. երբևէ որևէ պատասխան չստացվեց թուրքական իշխանությունից, այնպես որ՝ հիվանդանոցի գործունեությունը ոչ արտոնագրվեց, ոչ էլ արգելվեց: Ամեն դեպքում մենք մեզ այնպես էինք պահում, կարծես հիվանդանոցը արտոնագրված լիներ:

Այն օրը, երբ Հալեպի գերմանական հյուպատոսն Ուրֆայի գերմանացիներին հեռագրով տեղեկացրեց Մազուրյան ջրերում հինդենբուրգյան հաղթանակի մասին, Ուրֆայի հայերի ղեկավարները հավաքվել էին գերմանական հիվանդանոցի բակում: Ես հայտնեցի նրանց հաղթանակի լուրը: Սակայն նրանք ինձ խորհուրդ տվեցին նման լուրերին չհավատալ: Գերմանական հաղթանակի մասին չարժեր մտածել նույնիսկ այն դեպքում, եթե Թուրքիան ևս նրա կողմում պատերազմի մեջ մտներ: Ես չկարողացա այդ մարդկանց, ովքեր բոլորն էլ իմ ընկերներն էին, խորհուրդ չտալ, որ նրանք, որպես թուրքական պետության հպատակներ, պետք է նման դեպքերում ավելի մեծ քաղաքական խոհեմություն ցուցաբերեին, այլապես կարող է իրենց և իրենց ժողովրդի համար վատ լինի: Անտանտը հեռու էր, թուրքական ուրը՝ սարսափելի մոտ, իսկ կասկածամիտ մուսուլմանները, իրենց հաղթական տրամադրության մեջ՝ դյուրագրգիռ: Այդ պատճառով

ավելի լավ կլիներ շրջահայաց և զուսպ լինել, քան որևէ կերպ ցույց տալ, որ թուրքերի հաջողություններն ուրախություն չեն պատճառում իրենց:

Դեռ նախքան Թուրքիան պաշտոնապես կմտներ պատերազմի մեջ արդեն շատ զինվորներ փախչում էին զորանոցներից, բայց սկզբնական շրջանում դրանք գրեթե միայն մահմեդականներ էին: Արդեն զենք կրող երիտասարդ հայերը մնում էին, և որքան էլ որ դա նրանց համար հաճախ դժվար էր, ստիպված էին ատելությամբ լցված մահմեդականների ենթակայության տակ, նրանց ռազմական միավորումների ձևավորման այդ առաջին շրջանում ամենաստորին ծառայությունները կատարել: Ահա մի օրինակ, թե ինչ [ստորացումներ] էին կրում քրիստոնյաները թուրքական բանակում:

Իմ հիմնադրած մի դպրոցի գերմաներենի ուսուցիչը զորակոչվել էր: Որպես Երուսաղեմի ասորական որբանոցի նախկին սեմինարիստ՝ նա լավ նախապատրաստական կրթություն էր ստացել ռազմական դասընթացի համար: Նա իսկապես կկարողանար սկզբից ևեթ սպայական աստիճան ստանալ: Թեև նրան տվել էին նորակոչիկների մարմնամարզության ղեկավարումը, բայց զորանոցում նրա տասնապետը, որը ոչ կարդալ և ոչ էլ գրել գիտեր, տանջում էր նրան և, առանձնակի հաճույքով, հանձնարարում էր մաքրել արտաքնոցը: Նման պայմաններում, որոնք ընդհանուր բնույթ էին կրում, հասկանալի է, որ քրիստոնյաների մեջ նվազում էր զինվորական ծառայության պատրաստակամությունը, և շուտով նաև նրանցից շատերը փորձում էին ազատվել [զինվորական ծառայությունից] կամ, պարզապես, դասալիք էին դառնում: Վերոհիշյալ ուսուցիչը գտնվում էր Այնթապի զորանոցում: Այնտեղից նա, որպես դասալիք, բռնեց դեպի Ուրֆա վերադարձի ճանապարհը: Մի քանի օր նա մնաց թաքնված: Այնուհետև ես կարողացա նրա համար Բաղդադի երկաթուղում մի աշխատատեղ գտնել: Սակայն քանի որ նա իր մեկնումը անզգուշաբար շատ ձգձգեց, ոստիկանությունը ձերբակալեց նրան, և նա միայն 200 ֆրանկ "բախշիշի" միջոցով կարողացավ ազատվել: Սակայն հետագայում երկաթուղու կառուցման ժամանակ նա վերագտավ ինքն իրեն և իր երկրին, անկասկած, շատ ավելի օգուտ բերեց, քան եթե զինվոր մնար: Մինչև պատերազմի ավարտը նա աշխատեց Տավրոսի շինարարական դիվիզիայում՝ որպես գլխավոր հաշվետար:

2. Դիվանագիտության հետքերով

1914 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին Ուրֆայում թուրք սպաների և զինվորների ուղեկցությամբ երևացին երկու պարսիկ արքայազներ: Ձիավարության ժամանակ նրանցից մեկը՝ արքայազն Ռ. էս-Սալթանե-էդ-Դովլեհը, վնասեց ոտքը: Իմ պարտքն էր նրան բուժել: Երբ հետո արքայազները շարունակեցին իրենց ճանապարհը, ես, որպես նրանց բժիշկ, նրանց ուղեկցեցի: Ես պետք է նրանց հետ գնայի մինչև Բաղդադ: Նրանք գերմանացիների կողմից Պարսկաստան էին ուղարկվել: Որպես Քաջարների տոհմի ներկայացուցիչներ՝ նրանք պետք է պարսիկներին և, հատկապես, իրենց մեծ տոհմին խրախուսեին սրբազան պատերազմ սկսել Կենտրոնական տերությունների կողմից: Երկու արքայազներն էլ վերջին ութ տարիներն անցկացրել էին Շվեյցարիայում: Ռուսական կառավարությունը ժամանակին նրանց, համարելով վտանգավոր անձինք, վտարել էր Պարսկաստանից: Ամսական 4000 ֆրանկով, որ նրանց վճարում էին ռուսները, նրանք կարող էին Շվեյցարիայում փառահեղ ապրել: Այնուամենայնիվ նրանցից մեկը՝ Սալեհ էս-Սուլթանե-էդ-Դովլեհը, 1912 թ. պարսիկների ազատագրական պատերազմի ժամանակ դերվիշի հագուստով ծպտված, առանց ռուսների գիտության իր հայրենիք էր վերադարձել: Ժամանելով այնտեղ՝ նա հանդիպել էր իր ընկերներին և այնուհետև՝ միապետության կողմնակից պարսիկներին կոչ էր արել պայքարի դուրս գալ սահմանադրականների դեմ, որոնց ղեկավարում էր հայ Եփրեմ խանը: Սակայն արքայազնն իր միապետականների հետ տանուլ տվեց, չնայած 30000 միապետականների դեմ 3000 սահմանադրականներ էին կանգնած:

Մեր ճամփորդությունը դեպի Բաղդադ ընթանում էր շատ դանդաղ, ոչ թերևս այնպես արագ, ինչպես գերմանացիները կուզենային: Այս ճամփորդության ժամանակ էր, որ մեր արշավախմբի ղեկավարը՝ մայոր Նեֆիս բեյը, մի երեկո անդրադարձավ Հայկական հարցին: Նա երիտթուրքերի առաջնորդներից էր, մեծապես աչքի էր ընկել 1908 թվին Կոստանդնուպոլսի Թաշքշլա զորանոցի գրավման ժամանակ: Այդ պատճառով նրա դատողություններն ինձ համար առանձնապես հետաքրքիր էին: «Մենք՝ թուրքերս,- ասում էր նա,- կամ պետք է բոլոր հայերին առանց բացառության բնաջնջենք, կամ պետք է նրանց ստիպենք, որ գաղթեն: Նրանց հետ համատեղ ապրելը մեր կայսրության սահմաններում բացառված է»:

Քանի որ զրույցին ներկա արքայազն Սալեհը, հավանաբար հիշելով այն պարտությունը, որ կրել էր Եփրեմ խանից, նույնպես քիչ անց նույն կերպ արտահայտվեց, ես նույնպես ինձ թույլ տվեցի հարցի վերաբերյալ մի քանի խոսք ասել:

«Յուրաքանչյուր ժողովուրդ,- ասացի ես,- ունի գոյության իրավունք: Ընդ որում նա պետք է կարողանա ապրել այնտեղ, որտեղ ծնվել է: Ով այդ

իրավունքի դեմ մեղանչում է, գործում է մի անիրավություն, որի համար, վաղ թե ուշ, վրեժ է լուծվելու: Այն բանից հետո, երբ 1908 թվին երիտթուրքերը հաշտվեցին ազատասեր հայերի հետ, նրանք պետք է, հենց թեկուզ ինքնապահպանման համար, կայսրության բնակչության ամենակրթված մասի՝ հայերի հետ խաղաղություն պահպանեին: Իսկ Ձեզ՝ Ձերդ կայսերական վսեմություն, – դիմեցի ես արքայազնին, – Ձեզ խորհուրդ կտայի Պարսկաստան չգնալ, քանի որ Դուք ևս նման վտանգավոր տեսակետներ ունեք հայ ժողովրդի վերաբերյալ: Մի՞թե Պարսկաստանը նույնպես հարյուր հազարավոր հայերի հայրենիքը չէ»:

Հաջորդ առավոտյան արքայազնը խնդրեց ինձ իր հետ ձիավարության դուրս գալ: Այդ ձիավարության ժամանակ նա անդրադարձավ հայերի մասին նախորդ օրը կայացած զրույցին: «Ինքնին հասկանալի է, – ասաց նա,- հայերն իրավունք ունեն ապրել այնտեղ, որտեղ ծնվել են, ինչպես՝ Թուրքիայում, այնպես էլ՝ Պարսկաստանում: Երեկ ես հակառակ տեսակետն արտահայտեցի միայն թուրք մայորին ուրախացնելու համար, որն իր կրթվածության մակարդակով չի փայլում»:

Երկու արքայազներն էլ չհասան Պարսկաստան: Ֆելուջայում՝ դեպի Բաղդադ վերջին կայարանում, նրանց կանգնեցրին: Բաղդադից մի սուրհանդակ եկավ՝ բերելով ռազմական պարետի հրամանն այն մասին, որ արքայազները չէին կարող շարունակել իրենց ճանապարհը, այլ պետք է ետ դառնային: Թե արդյոք այդ արգելքը գերմանացիների հետ համաձայնեցված էր (արդեն մի քանի գերմանական սպաներ կային բաղդադյան ճակատում), ինձ հայտնի չէր: Ես չկարողացա դա ճշտել: Մայոր Նեֆիս բեյը, որը հաջորդ օրը Բաղդադ գնաց և երկու օրից կրկին վերադարձավ, երբևէ հնարավորություն չընձեռեց կռահել, թե որտեղի՞ց էր ստացվել վերադարձի հրամանը: Արքայազների համար դժվար էր այդքան մոտ գտնվելով իրենց հայրենիքին, առանց այնտեղ մուտք գործելու՝ հարկադրված վերադառնալ: Երբ մեկ օր հետո մենք եկած ճանապարհով ետ էինք վերադառնում, արքայազները վստահեցին ինձ իրենց գաղտնիքը: Նրանք փախչելու գաղտնի ծրագիր էին մշակել: Ես պետք է մասնակցեի դրան կամ, առնվազն, օգտակար լինեի դրա իրականացմանը: Նրանք ցանկանում էին, խուսափելով թուրքերին հանդիպելուց և շրջանցելով Բաղդադը, ուղղակի տափաստանի միջով Պարսկաստան հասնել: Բայց արքայազն Սալեհի հետ էր նրա հղի կինը, և այդ պատճառով նա չէր կարող տափաստանի միջով նման զրկալից ճամփորդություն ձեռնարկել: Եթե ես չկարողանայի միանալ արքայազներին պետք է, առնվազն, արքայադստերն ինձ հետ Ուրֆա տանեի, որտեղ նա պետք է իր ծննդաբերությանը սպասեր, հետագայում Պարսկաստան տեղափոխվելու համար: Ծրագիրը կարող էր իրագործվել նաև առանց իմ մասնակցության: Սակայն ես շտապ կերպով տարհամոզեցի արքայազներին: Փաստորեն՝ արքայազները ոչ թե թուր-

քերի, այլ գերմանացիների տնօրինության ներքո էին գտնվում, որի պատճառով ամենաճիշտը հնազանդվելն էր անխուսափելիին: Ես ներքուստ պարտավորված էի զգում այդ խորհուրդը տալ: Արքայազն Սալեհը ողջ ճամփորդության ընթացքում, գրեթե յուրաքանչյուր երեկո գեներալ ֆելդմարշալ Հինդենբուրգի կենացն էր առաջարկում ու շարունակ գոռում էր. «Կեցցե՛ Հինդենբուրգը», և ես պարտավոր էի անընդհատ դա լսել: Դրանից ես հասկացա, որ այդ արևելցին Պարսկաստանում նույնքան լավ հանդես կգար Անտանտի օգտին: Հնազանդվելու վերաբերյալ իմ խորհրդին նրանք ենթարկվեցին, և այդպիսով մենք հասանք կրկին Դեր-Էս-Զոր: Այստեղ արքայազները պետք հետագա ցուցումների սպասեին:

Ես հրաժեշտ տվեցի, քանի որ կատարել էի իմ պարտականությունը և վերադարձա Ուրֆա: Ավելի ուշ ես տեղեկացա, որ արքայազները Կոնիայում ձերբակալվել էին: Թե նրանց հետ ի՞նչ է պատահել, ես չգիտեմ:

3. Բռնագրավումներ

Պատերազմի հենց սկզբում թուրքական սպաների կողմից սկսվեց ամեն ինչ բռնագրավվել: Դա նրանցից շատերի համար փառահեղ ժամանակ էր: Ջորքի գտնվելու վայրում ոչինչ չկար, ինչը սպաների կողմից չբռնագրավվեր այն պատճառաբանությամբ, իբր դա անհրաժեշտ է պատերազմի համար: Տուժածները, որպես ստացական, ստանում էին ձեռագիր գրություններ: Բռնագրավված ունեցվածքի մեծ մասն ուղարկվում էր սպաների սեփական տները: Այդ պատճառով ոչ միայն պատերազմի համար անհրաժեշտ իրերն էին տարվում, այլև այն ամենը, ինչը որևէ կերպ բավականություն էր պատճառում և արժեք ուներ, օրինակ՝ գորգեր, նկարներ և նման շատ այլ իրեր: Այստեղ ես պետք է մի [զավեշտալի] միջադեպ պատմեմ: Մի սպա մի խանութում բռնագրավել էր յոթ պարկ շաքար: Նա բեռնակիր կանչեց և նրան հրամայեց դրանք իր տուն տանել: Երբ սպան երեկոյան տուն եկավ, հարցրեց իր կնոջը՝ արդյոք յոթ պարկ շաքարը բերվե՞լ էր: Կինը պատասխանեց՝ ոչ, միայն վեց պարկ են բերել: Հաջորդ առավոտյան սպան կրկին հանդիպեց բեռնակրին և հարցրեց, թե որտե՞ղ է յոթերորդ պարկը: Վերջինս հեգնանքով պատասխանեց. «Վեցը քեզ, իսկ մեկը ինձ՝ որպես փոխադրման վարձ»:

Արքայազների՝ դեպի Բաղդադ ճամփորդության ժամանակ նույնպես ամեն օր բռնագրավումներ էին կատարվում: Այստեղ, այնուամենայնիվ, խոսքը միայն անհրաժեշտ իրերի մասին էր, բայց յուրաքանչյուր վաճառական գիտեր, որ որպես ստացական տրված թղթի կտորը կարելի էր առանց տատանվելու պատռել, քանի որ հանձնված ապրանքի փոխհատուցում երբեք չէր իրականացվելու:

Պատերազմի առաջին երկու տարում առանձնապես շատ ցորեն և այլ տիպի հացահատիկ էր բռնագրավվում: Հաճախ գյուղացիները պետք է այն անձամբ փոխադրեին մինչև կայարանները: Այնտեղ պահեստների բացակայության պայմաններում այն կուտակվում էր բաց երկնքի տակ: Հետո եկավ ձմեռը, անձրևը լցվեց բաց երկնքի տակ գտնվող պաշարների վրա, հացահատիկը ծլարձակեց, նեխեց և ապականեց ընդարձակ շրջակայքի օդը: Միևնույն ժամանակ ռազմաճակատներում հացի պակաս կար: Պարենի տեղավորման և այն ռազմաճակատի համար գործածելու մասին միայն այնտեղ էր ժամանակին հոգ տարվում, որտեղ գերմանական սպաներ կային:

4. Վատ հեռանկարներ

Արքայազների հետ վերոհիշյալ բաղդադյան ճամփորդության ժամանակ ինձ համար պարզ դարձավ, որ պատերազմը հայ ժողովրդի համար վատ ժամանակներ պետք է բերեր: Երիտթուրքերը նախատեսել էին ոչնչացնել ողջ ժողովրդին: Անկասկած, նրանք դրա համար կօգտագործեին պատերազմական ժամանակը, որի պատճառով թուրքական հողի վրա թշնամական մեծ տերությունների ազդեցությունը մարել էր, կամ նրանք, բացառությամբ Ամերիկայի, ամբողջովին զբաղված էին պատերազմական գործողություններով: Այսպիսով, ոչ ոք Հայկական հարցով զբաղվելու ժամանակ չէր գտնի:

1915 թ. մարտին և ապրիլին Ուրֆայում ժամանակ առ ժամանակ թուրքական հաղթանակների տոնակատարություններ էին տեղի ունենում, հիմնականում՝ մեծ շուքով: Ընդ որում հայերն իրենց բավական սառն էին պահում, ինչը կրկին պետք է որ թուրքերին գրգռեր: Արդեն իսկ որոշ հայեր ձերբակալվել էին, քանի որ նրանք չէին կիսում [թուրքերի] հրճվանքը: Չնայած խոհեմ թուրքերը նույնպես չէին թաքցնում, որ իրենք չէին հավատում նման հաղթանակների, սակայն դրա պատճառով նրանց ոչինչ չպատահեց:

Ոչ միայն թուրք, այլև հայ զինվորների դասալքությունը շարունակվում էր: Այստեղ ես ցանկանում եմ իմ օրագրից մի բնութագրական հատված մեջբերել:

«Փետրվար, 1915: Մի քանի օր առաջ չորս հարյուր նորակոչիկներ, այդ թվում նաև՝ մի խումբ հայեր, մեկնեցին Այնթապ: Նրանցից Այնթապի զորանոց ներկայացան միայն չորս հոգի, որոնք բոլորն էլ հայեր էին: Նրանց ընդունող սպան ծիծաղեց և, այնուամենայնիվ, հրամայեց ազնիվ քառյակին, որ նրանք նույնպես հեռանան»:

Այն ժամանակ Ուրֆայի հայ տղամարդիկ յուրաքանչյուր կիրակի իրենց

մայր տաճարում ժողովներ էին գումարում: Նրանք խոսում էին պատերազմական իրադարձությունների մասին: Ես այս ժողովներում երկու անգամ ելույթ ունեցա:

Այդ բոլոր հանդիպումների ժամանակ հայերը քննարկում էին նաև իրենց ծանր դրությունը: Նրանք ասում էին, որ թուրքերը Բալկանյան պատերազմում չորս փոքր ժողովուրդների կողմից պարտություն էին կրել, և, իրավացիորեն, հարցնում էին, թե այժմ նրանց ինչպե՞ս պետք է հաջողվեր դիմակայել մեծ տերությունների զորքերին: Քաղաքի թուրքերը գրեթե ամեն օր սպառնում էին հայերին: Նրանք բացեիբաց ասում էին. «Վայ ձեզ՝ հայեր, եթե Թուրքիայի թշնամիներին հաջողվի հաղթող իրենց ոտքը դնել թուրքական հողի վրա: Երկրում ոչ մի հայ կենդանի չի մնա, մենք հոգ կտանենք այդ մասին»: Նման իրավիճակում հայ ժողովրդի խնդիրը պետք է լիներ հարկ եղած դեպքում պաշտպանվել կոտորածից, Թուրքիայի պարտության դեպքում այնքան երկար դիմանալ, մինչև Անտանտի զորքերը կհասնեին երկրի խորքերը: Ամենուր, որտեղ հայեր կային, գաղտնաբար այս ուղղությամբ ևս նախապատրաստություններ էին կատարվում: Կարելի՞ է նրանց դրա համար մեղադրել: Սակայն թուրքերը ստանում էին լուրեր այդ նախապատրաստությունների մասին: Շատ հայեր ողջունում էին, երբ իրենց երիտասարդները որպես դասալիք կրկին տուն էին վերադառնում: Վախկոտները, սակայն, քննադատում էին այդ վերադարձը: Չէ որ դրանք պետք է հանգեցնեին խիստ անցանկալի ոստիկանական հետաքննությունների:

Ապրիլյան մի երեկո Ուրֆայի հայկական թաղամասում մեծ իրարանցում էր: Լսել էին, որ հաջորդ առավոտյան պետք է ձերբակալեին հայ ուսուցիչներին: Անմիջապես եկեղեցում մի ժողով գումարվեց: Երիտասարդները դիմադրության կոչ արեցին, բայց ծերերը դրան դեմ էին: Հետո որոշվեց սպասել հետագա զարգացումներին:

Հաջորդ օրը, իրոք, տեղի ունեցավ ուսուցիչների ձերբակալությունը: Այնուհետև կատարվեցին տարբեր տների խուզարկություններ: Որոնում էին զենքեր և գրություններ:

Մի քանի օր անց ժանդարմները ցանկանում էին Գարմուջում՝ Ուրֆայի մերձակայքում գտնվող միակ հայկական գյուղում, ձերբակալել դասալիք հայերին: Վերջիններս փախան դեպի մոտակա մի լեռ, որտեղ դիրքավորվեցին և իրենց հետապնդող ժանդարմներին դիմավորեցին կրակոցներով: Ժանդարմները ստիպված էին մի քանի դիակներ թողնել այնտեղ: Միայն այն բանից հետո, երբ մոտակա քաղաքից օժանդակ ուժեր բերվեցին, նրանք կարողացան ձերբակալել մի քանի դասալիքների:

Այս իրադարձությունը էապես վատացրեց Ուրֆայի հայերի դրությունը: Մայիսի կեսերին Ուրֆայի ամենահեղինակավոր ընտանիքներից տասնութն աքսորվեցին Ռաքքա՝ 150 կիլոմետր դեպի հարավ՝ Եփրա-

տի ափին գտնվող մի փոքր քաղաք: Նրանք դեռ իրավունք ունեին ճամփորդել անձամբ իրենց վարձած սայլերով: Այդպես նրանք անվնաս տեղ հասան: Սակայն արդեն մի քանի օր անց նրանցից տղամարդիկ կրկին Ուրֆա բերվեցին և բանտ նետվեցին: Նրանց հետ միասին հետզհետե նորանոր երևելի մարդիկ ձերբակալվեցին: Այնտեղ նրանք շատ կոտանքների ենթարկվեցին (արևելյան պատժաձևով՝ բարակ ճիպոտներով հարվածներ մերկ ներբաններին): Խոշտանգումները նորից առօրյա դարձան: Իմ ընկերներից մեկը բանտից ինձանից բուժիչ քսուք խնդրեց, քանի որ նա երեք անգամ իրար հաջորդած ճիպոտահարվածներից շատ վերքեր ուներ: Ձերբակալված հայերը պետք է խոստովանեին, թե որտե՞ղ էին պահել իրենց զենքերը, դրանք պետք է հանձնեին: Այժմ յուրաքանչյուր հայ զենք ուներ: Յուրաքանչյուր այլ քաղաքաբնակ ևս զենք ուներ: Չէ որ որևէ մեկն Արևելքում նույնիսկ խաղաղ ժամանակներում չի կարող անզեն մինչև իսկ մոտակա գյուղը գնալ: Համընդհանուր անապահովությունը, որի մասին չի կարելի մոռանալ Արևելքը գնահատելիս, զենք ունենալը յուրաքանչյուր խոհեմ մարդու համար պարտականություն է դարձնում:

1915 թ. ապրիլի վերջին ես հիվանդացա բծավոր տիֆով: Դեռևս կազդուրման շրջանում (ես հազիվ կարողանում էի մի քանի քայլ անել) հայ վարդապետը՝ հայկական համայնքի ղեկավարը, խնդրեց ինձ արագ իրագործել Հալեպ գնալու և այնտեղի եվրոպական հյուպատոսներին հայերի վիճակի մասին տեղեկացնելու՝ իմ մտադրությունը: Հունիսի կեսին ես Հալեպում էի: Այնտեղ ես նախ հանդիպում ունեցա գերմանական հյուպատոսի հետ և խնդրեցի նրան հանուն գերմանացիների բարի համբավի ամեն ջանք գործադրել հայ ժողովրդին սպառնացող կոտորածը կանխելու համար ընդգծելով, որ եթե դա տեղի չունենա, ապա ողջ քաղաքակիրթ աշխարհը Գերմանիային կմեղադրի հայ ժողովրդի սպանդին մեղսակից լինելու համար:

Ես ավստրիական և ամերիկյան հյուպատոսություններում ևս նույն թեմայի շուրջ զրույցներ ունեցա: Հալեպում ես հանդիպեցի նաև բարոն Մաքս ֆոն Օպենհայմին, որն ընկերաբար ողջունեց ինձ: Նրան նույնպես ես գրավոր ներկայացրեցի հայ ժողովրդի վիճակը: Ես գիտեի, որ բարոնը Թուրքիա էր եկել դիվանագիտական հանձնարարությամբ, և ըստ այդմ հույս ունեի, որ իմ քայլն անհետևանք չէր մնա: Թեև բարոնն ինձ տարիներ շարունակ անձամբ ծանոթ էր, բայց ոՔչ որպես հայերի բարեկամ:

Օպենհայմի այդ ժամանակվա առաջադրանքն էր՝ Կենտրոնական տերությունների շահերից ելնելով, տեղեկատվական կենտրոններ ստեղծել թուրքական կայսրության բոլոր մեծ բնակավայրերում: Նա ինձ նաև Ուրֆայի համար մի գումար տվեց, որը ես պետք է առձեռն հանձնեի գերմանացիներին, որպեսզի Ուրֆայում ևս մի տեղեկատվական կենտրոն ստեղծվեր, որտեղ մարդկանց կտրամադրվեին նկարներ, հեռագրեր և թերթեր:

5. Ճակատագրական ժամեր

Հուլիսի սկզբին դեպի Ուրֆա իմ վերադարձի ժամանակ ես ճանապարհին հանդիպեցի հայերի արդեն հոշոտված դիակների, աքսորյալներ, ովքեր ճանապարհին ընկած էին մնացել. հստակ հավաստումն այն բանի, որ խեղճ ժողովրդի մեծագույն զրկանքը սկսվել էր: Ուրֆա գալով՝ ես մեր դեղագործին այլևս չհանդիպեցի: Մեկ օր առաջ ոստիկանները նրան, դեղատնից դուրս բերելով, ձերբակալել էին: Որպես կառավարության խորհրդական՝ այդ մարդը պատերազմի սկզբից ի վեր մեծ մասամբ թուրքական պետության համար էր գործում և դա կարողանում էր անել, քանի որ ես նրան թույլատրել էի դեղատան իր ծառայությամբ զբաղվել օրական ընդամենը մեկ ժամ: Միայն այն պատճառով, որ նա իր մեծ հեռատեսությամբ և բանիմացությամբ մնացել էր պետության տեսադաշտում, բանտում նրան երբեք չէին հարցաքննել, նաև չէին խոշտանգել: Նա մնացել էր սոսկ կալանավորված մինչև օգոստոսի 12-ը, երբ [թուրքական] դանակը նրան գետին տապալեց: Հետագայում ես մի անգամ թուրքերից լսեցի, որ, իբրև թե, նախատեսված հայկական ապստամբության դեպքում նա համարվելու էր Ուրֆայի ժամանակավոր նահանգապետ: Թե որքանո՞վ է սա համապատասխանում իրականությանը, ինձ հայտնի չէ:

Երկու հայտնի հայեր՝ պառլամենտի անդամներ Վարդգեսը և Զոհրապը, այդ օրերին որպես թուրքական կալանավորներ անցան Ուրֆայի մոտով: Նրանք կարողացան ճանապարհը կառքով շարունակել: Այնուհանդերձ Ուրֆայից մեկ ժամվա հեռավորության վրա մահը վրա հասավ՝ ուղեկցող թուրք սպաներից մեկը գնդակահարեց նրանց: Ուրֆայի քաղաքային բժիշկը պետք է գնար այնտեղ և նրանց մահվան վերաբերյալ եզրակացություն տար, որի համաձայն՝ երկուսն էլ մահացել էին տիֆից: Ինչու՞ էին այդ պարագայում նման բժշկական փաստաթղթային ձևակերպումներին նշանակություն տալիս: Ասում էին, որ դրա պատճառը նրանց՝ կյանքի ապահովագրական բարձր գումարներն էին, որոնք կառավարությունը ցանկանում էր յուրացնել:

Ուրֆայում արդեն հունվարից գործող ռազմական դատարանը հուլիսին փոխարինվեց մեկ ուրիշով: Առաջինի անդամները Ուրֆայի թուրքեր էին և այդ պատճառով երիտթուրքերի պահանջների առումով հայերի հանդեպ բավականաչափ անխնա չէին գործում: Նոր նշանակվածները դրսի թուրքեր էին, որոնք ավելի լավ էին անում իրենց գործը:

Ռազմական դատարանը հայերի տներում բազմաթիվ խուզարկությունների ժամանակ գտնված թղթերի ստուգման համար երկու թարգմանիչների կարիք ուներ: Այդ ծառայությանը նշանակվեցին ասորի բողոքական Աղնաթեոսը և ասորական-բողոքական քահանա Եփրեմը: Առաջինը չէր հասկանում ոչ մի եվրոպական լեզու, միայն հայերեն, սակայն երկրորդն

իր մայրենի հայերենից բացի խոսում էր նաև թուրքերեն, անգլերեն և որոշ չափով՝ ֆրանսերեն: Շատ հատկանշական է սակայն այն, որ այս հայ քահանան հարկադրված էր համագործակցել նրանց հետ: Հայ ժողովրդի սպանդի գործընթացում դատավորներին մի հայ է կցվում, որը ստիպված էր համատեղ իրականացնել իր ժողովրդի բնաջնջման կառավարական ծրագիրը. զուտ թուրքական երևույթ: Եփրեմը՝ քահանան, կառավարության կողմից անշուշտ որպես հայ չէր դիտվում: Քանի որ նա ասորական համայնքի քահանա էր, թուրքերը նրան համարում էին ասորի: Սակայն, զգայուն քրիստոնյա լինելով, նա ոստիկանության ղեկավարին խոստովանեց, որ ինքը հայ է: Վերջինս զայրացած ասաց, որ նա այդ մասին պետք է լռի, եթե կյանքը թանկ է իր համար:

Հուլիսին, երբ արդեն գիտեին, որ Ուրֆայի հայերին նույնպես սպասվում է ճակատագրական ժամը, կանանց դրդմամբ մի քանի հայեր եռանդուն քարոզչություն էին վարում, որ իսլամ ընդունելը իրենց կյանքի փրկության միակ հնարավոր ճանապարհն է: Բայց՝ անհաջող: Հայերի ճնշող մեծամասնությունն ավելի նախընտրում էր մահը, քան Մուհամեդի կրոնի ատելի դավանումը:

Արդեն հունիսի վերջին աքսորյալների առաջին քարավանները հյուսիսից՝ Խարբերդից և Էրզրումից, հասել էին Ուրֆա: Այդ դժբախտներից ով կարողանում էր, դեպի անապատներ ճանապարհը շարունակելուց խուսափելու համար թաքնվում էր քաղաքի քրիստոնեական տներում: Նրանք պատմում էին այն սարսափելի ապրումների մասին, որ իրենք մինչ այդ ունեցել էին ճանապարհին: Ամենազարհուրելին այն էր, որ միայն երեխաներ ու կանայք էին գալիս Ուրֆա: Որտե՞ղ էին մնացել տղամարդիկ, որոնք, իհարկե, կային ժողովրդի մեկնումի ժամանակ: Ոչ ոք դա չգիտեր, կամ, ավելի ճիշտ, յուրաքանչյուր ոք դա գիտեր, բայց կարծում էին, թե կկանխեն իրականությունը, եթե բարձրաձայն չխոսեն սարսափելիի մասին: Իրականությունը, սակայն, այն էր, որ կառավարության ստոր, կուրացած կամակատարները տղամարդկանց բաժանել էին կանանցից և Տավրոսի լեռներում՝ Մալաթիայի և Սամսատի միջև, տղամարդկանց զանգվածաբար կոտորել էին: Ողբացյալ կանայք, անպաշտպան մայրեր, անօգնական երեխաներ. երջանիկ պետք է լինեին նրանք, ովքեր հետագա ճանապարհին մահացան կամ սպանվեցին:

Մոտավորապես հուլիսի վերջին սկսվեց նաև հայերի բռնագաղթը Ուրֆայից: Սակայն այժմ այդ աքսորյալները չէին կարող իրենց սայլերը վերցնել, այլ պետք է ոտքով գնային անապատի միջով: Նրանցից ով դեպի հյուսիս՝ Դիարբեքիրի ուղղությամբ քշվեց, հեռու չգնաց. մեծ մասամբ արդեն քաղաքի պարիսպներից նրանց դուրս գալուց հետո վրա հասավ թուրքական դանակը: Ով դեպի տարածքի գլխավոր քաղաքը (Հալեպ) քշվեց, կարող էր այնտեղ շատ թե քիչ ողջ հասնելու հույս փայփայել:

Մինչև օգոստոսի սկիզբը Ուրֆայի հայերի գլխավոր հոգևորականը դեռ լիովին ազատություն էր վայելում: Նա ինձ կանչեց իր մոտ և ներկայացրեց զրկանքի ողջ ահագնությունը: «Ամեն բան կորած է: Իմ ժողովուրդը գտնվում է զոհասեղանին: Ոչ ոք չկա, որ ինձ օգնի: Մենք՝ բոլոր հայերս, մահվան զավակներն ենք: Ինձ նույնպես ընդամենը մի քանի օրվա կյանք է վիճակված»:

Ընկճված մարդն այդ խոսքերն ասաց առատ արցունքների միջից: Նա ինձ աղերսագին խնդրեց այնուամենայնիվ Եվրոպա գնալ և այնտեղ փորձել ինչ-որ բան անել մեռնող ժողովրդի համար: Նա, անշուշտ, կարծում էր, որ եթե եվրոպական տերությունները հայ ժողովրդի սարսափելի վիճակի մասին հավաստի տեղեկություններ ստանային, պետք է որևէ քայլ կատարեին նրա դրության բարելավման համար: Ես էլ էի լրջորեն խորհում նման մի ճամփորդության մասին: Նախ և առաջ ես հայ ժողովրդի ամենահավատարիմ բարեկամի՝ պարոն դր. Լեփսիուսի մոտ կգնայի, քանի որ եթե որևէ մեկը Եվրոպայում ի վիճակի էր այս հարցում ինչ-որ բան անել, ապա այդ նա էր: Այդ պահին ես այդպես էի խորհում: Միայն թե ես որևէ գումար չունեի այդ ճամփորդության համար: Նաև այն, որ եթե անգամ թուրքերն ինձ թույլ տային Եվրոպա մեկնել, ինչը խիստ կասկածելի էր, ես, անկասկած, ուշացած տեղ կհասնեի: Իսկ իրադարձություններն արագորեն զարգանում էին: Եվ հաջորդ ամսվա դեպքերը ցույց տվեցին, որ Ուրֆայում մնալով՝ այդ դժբախտ ժողովրդի մնացորդի համար ես ավելին եմ արել, քան եթե դեպի Եվրոպա մի ճամփորդություն ձեռնարկեի որևէ չնչին բանի հասնելու կամ, ընդհանրապես, ոչնչի չհասնելու հեռանկարով:

Հուլիսյան վերջին օրերին զարհուրելի լուրեր էին տարածվել: Պատմում էին, որ տղամարդիկ և 12 տարեկանից մեծ պատանիները սպանված էին:

Օգոստոսի 10-ին Ուրֆայում հայտնվեցին երկու բարձրաստիճան թուրքեր՝ երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներ Ահմեդը և Խալիլ բեյը: Նրանցից մեկը փոխգեներալիսիմուս Էնվեր փաշայի ազգականն էր: Ասում էին, որ նրանք Կոստանդնուպոլսից ողջ Անատոլիայով շրջում էին ամենուր հայ տղամարդկանց և հասուն տղաներին սպանդի ենթարկելու և դեռ տեղում մնացած կանանց ու երեխաների բռնագաղթը կազմակերպելու համար: Այժմ նաև Ուրֆայի հայերն էին հանձնվել այդ երկու դահիճների ձեռքը: Ուրֆայի խեղճ ժողովուրդը շուտով պետք է դա զգար նույն ձևով, ինչպես մյուս վայրերում: Ուրֆայում երկու երիտթուրքերի առաջին գործն այն բազմաթիվ հայերի աքսորն էր, որոնք դեռ բանտերում էին գտնվում: Ահմեդը և Խալիլ բեյը հանդգնաբար ուշադրություն չէին դարձնում Ուրֆայի իշխանական մարմիններին և այնպես էին վարվում, կարծես իրենք անձամբ պետք է կառավարեին: Քաղաքի հայերը գալիս էին նրանց մոտ և խնդրում բանտերից աքսորվողներին ուղարկել դեպի Հալեպ, այլ ոչ թե դեպի Դիարբեքիր: Մի մեծ գումարի դի-

մաց երկուսն էլ խոստացան նրանց խնդրանքը կատարել: Օգոստոսի 11-ի երեկոյան նրանք որպես վճար ստացան 60.000 ֆրանկ: Հաջորդ առավոտյան, սակայն, ձերբակալվածներին տարան Դիարբեքիրի ճանապարհով, իսկ մեկ օր անց Ուրֆայում արդեն գիտեին, որ նրանցից ոչ ոք այլևս կենդանի չէր:

6. Վերջ աշխատանքային գումարտակներին

Վերջին ամիսների ընթացքում թուրքերին հաջողվել էր քաղաքի հայերից աստիճանաբար մոտ 1000 տղամարդկանց դուրս տանել, որոնք որպես աշխատանքային զինվորներ քաղաքի մոտակայքում օգտագործվում էին ճանապարհաշինության համար: Մի գումարտակ աշխատում էր Կարաքյոփրյուում՝ Ուրֆայից դեպի հյուսիս մի ժամվա հեռավորության վրա, մյուսը՝ Քուդեմայում, Ուրֆայից հինգ ժամվա հեռավորությամբ դեպի հարավ: Մարդիկ եռանդուն կերպով էին աշխատում և արդեն կառուցել էին ճանապարհների զգալի հատվածներ: Երկու երիտթուրքեր հրամայեցին սպանել այդ աշխատանքային գումարտակների անձնակազմին: Սկզբում հերթը Կարաքյոփրյուի գումարտակինն էր: Մի հայ, որը դրան ականատես էր եղել, կարողացել է փրկվել: Ես նրան պատվիրել եմ ինձ հաղորդել իրադարձությունների ընթացքը: Թողնում եմ, որ նա անձամբ պատմի.

«Արդեն շաբաթներ ի վեր ես, իմ մոտավորապես 400 հայրենակիցների հետ, աշխատանքային գումարտակներում աշխատում էինք Քարաքյոփրյուի ճանապարհի վրա: Օգոստոսի 15-ին մեր զինվորներից երկուսն առանց թույլտվության գնացել էին Ուրֆա: Երբ նրանք հաջորդ օրը կրկին երևացին գումարտակում, անմիջապես մեր վրանների մոտ գնդակոծվեցին Կարաքյոփրյուի քուրդ գյուղաբնակների կողմից: Մեկն անմիջապես մահացավ, մյուսը, միայն վիրավորված, կարողացավ փրկվել՝ մտնելով մեր վրանները: Նույն օրվա երեկոյան մեզնից 180-ին անվանականչով հրամայեցին պատրաստ լինել, քանի որ գիշերը պետք է մեկնեինք ճանապարհի մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող մի հատվածը թնդանոթների համար անցանելի դարձնելու համար: Ընթրիքից հետո մեզ հրամայվեց երաժշտությամբ զբաղվել, ինչը մենք պարտավոր էինք հաճախ անել, և ինչն անձամբ մեզ հաճախ ուրախություն էր պատճառում մեր զինվորական կյանքում: Ժամը իններին շեփորով հանգիստ ազդարարվեց: Երկու ժամ անց մենք ճանապարհ ընկանք: Մի սայլում մեզ հետ վերցրել էինք անհրաժեշտ գործիքները: Ճանապարհի շինարարության ժամանակ մեզ մշտապես հսկող մի քանի թուրք ժանդարմները եկան մեզ հետ: Երթից երկու ժամ անց կանգառ հրամայվեց, և մեզ թույլատրվեց ծխել: Մինչ այժմ մենք դեռ ոչ մի պատկերացում չունեինք, թե ինչ պետք է պատահեր մեզ հետ: Սակայն

մենք արդեն վաղուց գիտեինք, որ մեր ժողովրդի վիճակն օրեցօր վատթարանում էր: Չէ որ ամեն օր աշխատանքի ժամանակ տեսնում էինք մեր մոտով անցնող աքսորյալների շարասյուները և բավական հաճախ ստիպված էինք լինում մոտակայքում սպանված հայերի դիակները թաղել: Հազիվ էինք մենք քառորդ ժամ հանգստացել, երբ 40 հեծյալ ժանդարմ, որոնք քաղաքից էին գալիս, մեզ ընդառաջ դուրս եկան: Նրանց հետ կային միմյանց շղթայված 15 հայեր: Ժանդարմները շրջապատեցին մեզ: Հետո մեզ ևս միմյանց կապելու հրաման տրվեց: Այդ պահին մենք հասկացանք, որ ժամը հասել էր: Հայերենով շշնջացի իմ ընկերներին, որ իրենք չպետք է թույլ տան իրենց կապոտել: Սակայն հրացանները մեր աչքերի առջև լիցքավորվել էին, այդ պատճառով նրանք մտածեցին, որ պաշտպանվելն անօգուտ է: Ի վերջո մարդասպանների պարանները չբավականացրեցին: Այդպիսով մեզնից մոտ 60-ը, այդ թվում նաև ես, չկապված մնացինք: Այժմ մենք պետք է շարունակեինք երթը՝ ճանապարհը դեպի մահ: Առավոտյան հասանք Յեդիքույու: Այդ քրդական գյուղում մեզ բաժանեցին տարբեր տների: Ես ու իմ չկապկպված ընկերները մի մեծ բակ եկանք, որտեղ մեզ խստորեն հսկում էին: Կեսօրից առաջ քաղաքից մի քանի թուրքեր եկան և խուզարկեցին մեզ: Նրանք ակնհայտորեն ցանկանում էին մասնակցել գնդակահարությանը: Արդեն հետկեսօր էր, երբ հանկարծ հնչեց գոչյունը՝ ոտքի:

Խիստ հսկողության ներքո մեզ տարան գյուղի ծայրը: Այստեղ կար հագուստների մի կույտ, որոնք մենք ճանաչեցինք, դրանք պատկանում էին մեր ընկերներին: Մեզ հրամայվեց հանել հագուստները: Կարող էինք միայն շապիկը թողնել: Դրանից հետո մեզ արյունոտ պարաններով երկուերկու միմյանց կապեցին: Հազիվ էր դա տեղի ունեցել, երբ երթի հրաման տրվեց: Մեր մի խումբ սպանված ընկերների կույտի մոտով, որոնց մարմինները հոգեվարքում դեռ ցնցվում էին, մի քանի րոպե քայլելուց հետո մեզ առաջնորդեցին դեպի մի ժայռաելուստ: Այստեղ ժանդարմները և այն թուրքերը, որոնք քաղաքից էին մեզ միացել, «պետական դավաճաններ» կոչելով, ծաղր ու ծանակի էին ենթարկում մեզ:

Հետո՝ առաջին երկուսի կապանքները քանդեցին: Այժմ նրանք, մեկը մյուսի հետևից, պետք է ժայռից ցած նետվեին, սակայն մինչ այդ անցնում էին երկար դանակներով զինված երկու ժանդարմների արանքով, որոնցից յուրաքանչյուրը զոհին նաև դանակի մի հարված էր հասցնում: Երբ հերթն ինձ հասավ, ինձ հաջողվեց աննկատ կերպով քանդել պարանը, որով ես կապված էի իմ ընկերոջ հետ, և երբ մեզ երկուսիս հրամայվեց մոտենալ, ես արագ մի մեծ քար վերցրեցի և հարվածեցի մի ժանդարմի կրծքին այնպես, որ նա ընկավ: Ես այլևս չսպասեցի, որ մյուս ժանդարմը կարողանար ինձ խոցել, այլ արագ, առանց վնասվելու ժայռից ցած նետվեցի: Մի գնդակ արձակվեց իմ հետևից, որն ինձ չդիպավ: Առժամանակ ես պաշտպանություն գտա կորնթարդ ժայռի տակ:

Այն բանից հետո, երբ իմ բոլոր 60 ընկերները ժայռից ցած էին նետվել, ժանդարմները և թուրքերը վերևից վայր իջան տեսնելու, թե արդյոք որևէ մեկը կենդանի չէ՞ մնացել այս մահապատժից հետո: Յուրաքանչյուր զոհ ոտքերին կապված պարանով առանձնացվեց կույտից: Կացնահարված-ները և առանձին կրակոցները պետք է հոգ տանեին, որ ոչ ոք չկարողանար մահից խուսափել: Ես պառկած էի դեմքիս վրա և մեռած ձևացա: Երբ ինձ քարշ էին տալիս, ժանդարմներից մեկն ասաց. «Սա կարծես այն շունն է, որը պաշտպանվում էր»: Միաժամանակ ես մի կրակոց ստացա և թիկունքիս վրա հոսող տաք արյուն զգացի: Երբ բոլոր սպանվածները մի կողմ էին տարվել, և դահիճները ցանկանում էին հեռանալ, նրանցից մեկն ասաց, որ զոհերից մեկը դեռ շնչում է: Նույն ակնթարթ ես ծոծրակիս կացնի հարված ստացա, քանի որ խոսքն իմ մասին էր:

Վերջապես մարդասպանների հրոսակախումբը բռնեց վերադարձի ճամփան: Դրանից քիչ անց մի քուրդ երևաց, որը բարձրաձայն կանչում էր. «ԲեդոԲ, ԲեդոԲ»: Բեդոն մեզանից մեկն էր, որը դեռ կենդանի էր և այս կանչի վրա փոքր-ինչ շարժվեց: Քուրդը նրան շշնջյունով ասած, որ նա մի մեծ քարի ետևում թաքնված մնար, ցերեկով նա չէր կարող նրան փրկել: Չնայած Բեդոն ծանր վիրավոր էր, քուրդը, որը նրա գործընկերներից էր, ուզում էր փրկել նրան: Թե արդյոք դա նրան հաջողվե՞լ է, ես չգիտեմ: Այն բանից հետո, երբ քուրդը հեռացել էր այդ վայրից, ես փորձեցի կանգնել: Ի վերջո, այնուամենայնիվ, մեզանից դեռ տասնհինգը կենդանի էին, չնայած բոլորն էլ՝ շատ ծանր վիրավոր, բայց, այնուամենայնիվ, դեռևս շարժունակ: Մենք խորհրդակցեցինք, թե ինչ կարելի էր անել: Ես առաջարկեցի՝ գիշերը քաղաք վերադառնալ: Սակայն մեծ մասը դրա համար այլևս ուժ չուներ: Այդպիսով գիշերը միայն երեք հոգի ճանապարհ ընկանք: Մոտակա մի պարտեզում մենք սեխ ուտելով մի փոքր ամրապնդվեցինք:

Մի քանի ժամվա գիշերային քայլքից հետո մեզ ընդառաջ եկող մարդկային մի հոծ բազմության ձայներ լսեցինք: Մենք ապաստանեցինք մոտակա խաղողի այգում: Ովքե՞ր էին մեզ ընդառաջ եկողները: Մենք ճանաչեցինք նրանց. մեր գումարտակի 200 ընկերներն էին, ովքեր երեկ չէ նախորդ օրը մնացել էին Կարաքյոփրյուում: Նրանք գնում էին նույն ճանապարհով, որով գնացել էինք մենք:

Այդ գիշեր ես այլևս չկարողացա շարունակել ճանապարհը, իմ երկու ուղեկիցների ուժերը նույնպես սպառվել էին: Մենք որոշեցինք թաքնվել խաղողի այգում, վազերի տակ: Միայն հաջորդ գիշեր մենք կարողացանք Ուրֆա հասնել: Դա օգոստոսի 19-ին էր: Փողոցներում մենք սպանվածներ տեսանք: Ուրեմն այստեղ ևս կոտորած էր եղել: Ես երկար ժամանակ ստիպված էի իմ տան առջև կանգնել, ծեծել դուռը ու կանչել: Վերջապես կինս ճանաչեց իմ ձայնը և բացեց»:

Այսքանը պատմեց հայը:

Աշխատանքային մյուս գումարտակը, որն աշխատում էր Քուդեմայում, ավելի լավ ճակատագիր չունեցավ: Նրանց սպանդի օրը օգոստոսի 22-ն էր: Ցավոք, ես հետագայում այլևս այդ գումարտակից ոչ մի հայի չեմ տեսել, չնայած ասում են, որ նրանցից մի քանիսը ևս կարողացել էին փրկվել: Քուդեմայի այդ գումարտակում նաև ասորիներ էին եղել: Նրանցից մեկին ես հանձնարարեցի ինձ պատմել, թե ինչ է այնտեղ կատարվել.

«Երեկոյան,- պատմեց ասորին,- քաղաքից լավ զինված ժանդարմների մի մեծ խումբ էր եկել: Նրանք հրամայեցին, որ հայերն անմիջապես բաժանվեն ասորիներից: Այնուհետև հայերին իրար կապկպեցին և տարան մոտ քառորդ ժամվա հեռավորության վրա գտնվող մի վայր: Քիչ անց բազմաթիվ կրակոցներ լսվեցին: Մենք այդ հեռավորությունից կարողացանք միայն մարդկանց մի մեծ բազմություն տեսնել: Բայց մեզ համար պարզ էր, որ մեր հայ ընկերներն այժմ մորթվում էին: Շրջակա արաբական գյուղերից մենք ձիերով այդ բազմությանը մոտեցող արաբներ էինք տեսնում: Կրակոցների ընթացքում լսեցինք նաև արաբ կանանց ուժգին «լիլիլիլի» գոչյունները: Մենք ճանաչեցինք այդ կանչերը, որովհետև մուսուլմանների շրջանում ընդունված է կռվի ժամանակ այդպիսի կանչեր արձակել: Մուսուլման կանայք սովորություն ունեն այդպես ոգևորել իրենց ամուսիններին քրիստոնյաներին սպանելիս: Որոշ ժամանակ անց մենք դեպի մոտակա լեռները փախչող մարդկանց մի բազմություն տեսանք, որի ուղղությամբ թուրքերը կրակում էին: Կրակոցները դադարեցին միայն այն ժամանակ, երբ ամբողջովին մթնել էր: Երբ ժանդարմները գյուղ վերադարձան, մենք՝ ասորիներս, մտածեցինք, որ այժմ հերթը նաև մեզ կհասնի: Մենք լապտերներ էինք հայթայթել և պետք է կոտորածի վայրի ուղղությամբ գնայինք: Հասնելով այնտեղ՝ մենք հրաման ստացանք մի խումբ դեռ ցնցվող դիակների մեջ մի սպանված թուրք սպայի և երկու, նմանապես սպանված, ժանդարմների գտնել ու նրանց գյուղ բերել: Հաջորդ առավոտյան երեք սպանված թուրքերի դիակները մի սայլի վրա դրեցին և քաղաք տարան: Մենք, սակայն, պետք է սպանված հայերին մի խորը ջրհորի մեջ նետեինք: Նրանց մեջ կային շատերը, որոնք դեռ շնչում էին: Մեկը նույնիսկ դեռ կարողանում էր վազել, նա ինքն իրեն կամավոր նետեց ջրհորը: Երբ բոլոր մեռածներն ու կիսամեռներն ջրհոր էին նետվել, մենք պետք է ջրհորը որմնափակեինք և դրա վրա հող ու մոխիր լցնեինք: Մեզ հսկող ժանդարմներից մենք տեղեկացանք, թե ինչ էր երեկ տեղի ունեցել: Երբ կոտորածը սկսվել էր, և հերթը հասել էր Գարմուշի մի քանի ուժեղ հայերի, նրանք, դեռևս ազատ ձեռքերով, ժանդարմի վրա քարեր էին նետել, որոնք դիպել էին մարդասպանին: Վերջինս վայր էր ընկել: Այդ պահին նրանք նրանից խլել էին դանակը և կտրել իրենց պարանը: Այնուհետև նրանք վերցրել էին նաև ժանդարմի լիցքավորված հրացանը և դրանով սպանել մի սպայի ու երկու ժանդարմների: Հաջորդ ակնթարթին, սակայն, նրանք

մյուս ժանդարմների կողմից սպանվել էին: Մյուս հայերը օգտագործել էին այս անսպասելի միջադեպը, կտրել էին պարանը, որով իրար էին կապվել, և մի ամբողջ խմբով փախել դեպի մոտակա լեռները: Դա այն փախչող խումբն էր, որը մենք հեռվից տեսանք»:

7. Օգոստոսի 19-ը

Օգոստոսի 15-ին թուրք ոստիկանները քաղաքի հայկական թաղամասում տնային խուզարկություններ էին կատարում: Նրանք դասալիք հայերի էին փնտրում: Այդ ժամանակ հանկարծ մի թաքստոցից ոստիկանների վրա կրակեցին: Մի ոստիկան ընկավ, ուրիշ երկուսը փախան և ոտքի հանեցին ոստիկանական բաժանմունքը: Կոստանդնուպոլսից եկած կոմիտեի երկու անդամները հազիվ էին այդ պատահարի մասին լսել, երբ ամբոխին հրամայեցին. «Սպանե՛ք գյավուրներին, էլ ի՞նչ եք դանդաղում»:

Այս կոչը չափազանց պատրաստակամորեն ընդունվեց: Ով զենք չուներ, արագ շտապեց դեպի տուն՝ այն վերցնելու, ով ուներ, անմիջապես մասնակցեց քրիստոնյաների ոչնչացմանը և նշանառության տակ վերցրեց առաջին իսկ մեկին, ում կարող էր հեշտությամբ սպանել: Հիվանդանոցից ես տեսա, թե ինչպես քրդերը շտապում էին քաղաքի իրենց թաղամասը (որը, ինչպես մեր հիվանդանոցը, քաղաքից դուրս էր գտնվում) և մի քանի վայրկյանում սպառազինված՝ վերադառնում տներից ու այնուհետև վազում դեպի շուկա: Դեռ մայրամուտից առաջ պետք է որ հնարավորինս շատ քրիստոնյաներ սպանված լինեին: Սակայն, բարեբախտաբար, առաջին կրակոցները լսելուց անմիջապես հետո հայերի մեծ մասն արդեն իրենց վաճառակետերը շուկայում փակել էին: Մյուսներին բարյացակամ տրամադրված մուսուլմանները համոզում էին արագ տուն գնալ: Ցավոք, սակայն, ոչ բոլորն էին ժամանակին տեղեկացվել իրենց սպառնացող վտանգի մասին: Ոմանք, ովքեր տունդարձի ճանապարհն էին բռնել, պետք է արդեն իսկ այդ հասկացած լինեին: Դա մի սարսափելի մարդորսություն էր, մի զարհուրելի սպանդ:

Դերձակ Գևորգն իր չորս օգնականների հետ շուկայի իր խանութում այնքան էր իր աշխատանքով տարված, որ քրդերի և թուրքերի սարսափելի նախապատրաստությունները չէր նկատել: Նրա աշխատավայրը գտնվում էր շուկայի մի ծայրում: Ոհմակը սկզբում այդտեղ պետք է հասներ: Քիչ անց դահիճներն այնտեղ էին: Նախքան Գևորգը վտանգը իրապես կկարողանար գիտակցել, մի սուր դանակ կտրել էր նրա կոկորդը: Նրա օգնականներից ոչ ոք չկարողացավ փրկվել: Ոչ ոքի մտքով չանցավ գոնե մկրատով պաշտպանվել: Արյան մի հորձանք հոսեց խաղաղ կարի արհեստանոցի շեմքով: Հաջորդ օրը ես փողոցում դեռ տեսնում էի արյան

լճակը: Սպանված հինգ մարմիններն ընկած էին ամբողջովին կողոպտված կրպակում: Այդ օրը նաև շատ ասորիներ մեռան, քանի որ մարդասպանները ասորիների և հայերի միջև տարբերություն չէին դնում. երկուսն էլ քրիստոնյաներ էին, հետևապես՝ «անհավատներ»: Երբ փողոցներում այլևս ոչ մի քրիստոնյա չկար, ամբոխը շտապեց դեպի հայկական թաղամաս: Այդ ընթացքում գիշերը վրա էր հասել: Հայկական տներից մի քանի կրակոցներ լսվեցին: Դրանով այդ օրվա կոտորածն ավարտվեց:

Ուշ երեկոյան ես մնացել էի հիվանդանոցում և չէի գնացել մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող խաղողի այգիները՝ իմ ընտանիքի մոտ, ինչպես սովորաբար անում էի յուրաքանչյուր երեկո. գերմանական միսիոներական հիվանդանոցի հայերն այսօր իմ պաշտպանության ու սփոփանքի կարիքն ունեին:

Միսիոներական հիվանդանոցի մոտ գտնվում էր մի մեծ ամրոցանման տուն, որը պատկանում էր մսագործ Շիկոյի բազմազավակ ընտանիքին: Շիկոն ուներ յոթ չափահաս որդի, որոնցից երկուսը Դիարբեքիրի ուղղությամբ դեպի մահ էին ուղարկվել: Քրդական խուժանն այդ տունը դեռևս այն երեկո էր աչքի տակ առել, երբ շուկայում և քաղաքում իր արյունոտ արհեստով զբաղվելուց հետո վարադառնում էր: Սակայն հարձակվողների առաջ կանգնած էին երկու ուժեղ և ամուր կողպված դարպասները: Ավազակախումբը գիտեր, որ տղամարդկանցից միայն ծեր Շիկոն էր տանը իր, նմանապես, ծեր եղբոր հետ: Քրդերն այնքան բարձր էին գոռգոռում, որ մենք հիվանդանոցում սարսափով լսում էինք նրանց ձայները: Նրանք պահանջում էին [իրենց հանձնել] երկու ծերերին և բացի այդ ուզում էին գիշերը տան բոլոր կանանց բռնաբարել: Նրանք անընդհատ դա էին գոռում՝ մոլեռանդ անեծքներ և լուտանքներ թափելով:

Հենց այդ ժամանակ եկան մեր թախանձագին խնդրանքի հիման վրա նահանգապետի կողմից մեր հիվանդանոցի պաշտպանության համար ուղարկված երկու ժանդարմները: Նրանց հետ պետք է ուրիշ ժանդարմներ ևս եկած լինեին քաղաքի այս թաղամասը: Ես նրանց բոլորին խնդրեցի՝ վերականգնել անդորրը: Դա նրանք արեցին և քշեցին արյան ու բիրտ հաճույքների բավարարման անհագորեն ծարավ բազմությանը:

Հաջորդ առավոտյան ես ծեր Շիկոյին գտա իր տան առաջ մեռած: Նա իրեն զոհել էր յուրայինների համար՝ հուսալով, որ դրանով կփրկի կանանց և երեխաներին: Նրա եղբորը, որը թաքնվել էր, ես ինքս հաջորդ օրը դուրս հանեցի մի նեղ թաքստոցից:

Այժմ, երբ քաղաքում և մեր թաղամասում հանգիստ էր տիրում, ես կարող էի կրկին իմ հարազատների մոտ՝ խաղողի այգիները գնալ: Նրանք այնտեղ, բարեբախտաբար, ոչինչ չէին լսել քաղաքի փողոցներում կատարվող իրադարձությունների մասին: Սակայն հաջորդ առավոտյան, դեռ շատ վաղ, նախքան իմ՝ քաղաք վերադառնալը հարևան խաղողի այգի-

ներից մեկում փոխհրաձգություն սկսվեց: Քաղաքից հեծյալներ էին եկել և որսում էին այն հայերին, ովքեր ապաստան էին գտել այդ այգում: Հետագայում ես լսեցի, որ Կարաքյոփրյուից փախած հայերին էին փնտրում: Նրանց գնդակահարեցին: Կարելի էր պատկերացնել այն հայերի երկյուղը, որոնք իմ այգում էին: Այդ ժամանակ իմ հարազատների մոտ, այգում պաշտպանություն էին փնտրել ու գտել զգալի թվով հայեր: Նրանք բոլորն ինձ աղերսագին խնդրում էին այժմ իրենց չլքել: Բայց ես քաղաքում շտապ անհրաժեշտ էի: Ինչպե՞ս պետք է հիվանդանոցում գտնվողները ստեղծված դրությունից գլուխ հանեին, և ի՞նչ կպատահեր այնտեղ, եթե հայտնի դառնար, որ ես ներկա չեմ:

Մենք նաև նկատեցինք, որ ժանդարմներն այդ փախստականներին սպանելուց հետո կրկին քաղաք վերադարձան, ուստի առայժմ խաղողի այգիներում գտնվող իմ մարդկանց համար այլևս երկյուղելու պատճառ չկար: Երբ ես դրանից հետո հիվանդանոց հասա, այնտեղ գտա Շիկոյի տան բոլոր բնակիչներին: Նրանք բացատրեցին, որ ստիպված են մնալ հիվանդանոցի պաշտպանության ներքո: Ես չկարողացա նրանց կրկին ետ ուղարկել և տեղավորեցի հիվանդանոցում ու իմ սեփական բնակարանում:

Դեռ միջօրեից առաջ ես այցելեցի թուրք նահանգապետին: Շնորհակալություն հայտնեցի նրան այն բանի համար, որ նա հիվանդանոցը պաշտպանելու իմ խնդրանքն այդքան արագ կատարել էր: Բացի այդ, խնդրեցի տևական պաշտպանություն, մինչև դարձյալ հանգիստ ժամանակներ կսկսվեին: Ես դա արեցի երեկվա իրադարձությունների ազդեցության ներքո: Նահանգապետը, նմանապես, ափսոսանք հայտնեց պատահարի համար, բայց ասաց, որ այժմ իրեն հաջողվել է կրկին անդորր հաստատել և կարող է վստահեցնել, որ նման բան այլևս տեղի չի ունենա:

Այդ օրը քաղաքում իրոք հանգիստ էր: Կոտորածը չէր վերսկսվել, բայց չէր կարելի մեղադրել վախեցած քրիստոնյաներին այն բանի համար, որ նրանցից ոչ ոք այդ և դրան հաջորդող օրը տանից դուրս չեկավ: Երեկոյան ես իմ կնոջ հետ այցելեցի նաև ասորական թաղամաս, այնտեղի իմ ընկերներին մխիթարելու համար: Մենք ստիպված էինք, սակայն, դիակների վրայով քայլել: Նեխահոտն արդեն սկսել էր տարածվել փողոցներում: Չնայած թուրքերը քրիստոնյաներից պահանջեցին մեռածներին թաղել, բայց նրանցից ոչ ոք չհամարձակվեց դուրս գալ: Ի վերջո թուրքերն իրենք ստիպված եղան հավաքել դիակները: Դրանք պարաններով, բերանքսիվայր քաշ էին տրվում փողոցներով և թաղվում մի ընդհանուր գերեզմանոցում:

Կարելի էր ենթադրել, որ հայկական թաղամասում դեռ որոշ վիրավորներ կային, որոնք չէին համարձակվում տանից դուրս գալ: Երրորդ օրը մեր կլինիկայում երևացին վիրավորված հայ կանայք: Վիրավորված տղամարդիկ, սակայն, եկան միայն շատ օրեր անց:

Կոտորածի օրը թուրքական արհեստագործական դպրոցում աշխատող

դերձակ վարպետ Հակոբը նույնպես փողոցում ընկավ երիտթուրք Ահմեդ բեյի ձեռքը: Հակոբն ընկավ նրա ոտքերը և խնդրեց ողորմել իրեն: Բեյը հանեց իր ատրճանակը և ասելով. «Սա ողորմություն է քեզ համար, հայ շուն», - նրան գնդակահարեց:

Մեր դեղատան օգնականը, որն օգոստոսի 19-ին, հարձակումից մի փոքր առաջ գնացել էր փոստ, ետ չէր վերադարձել: Մենք ստիպված էինք ենթադրել, որ նա զոհվել է, բայց հաջորդ առավոտ նա կրկին հայտնվեց: Թուրքը, որը նրան թաքցրել էր իր տանը, նրան անձամբ բերեց:

Հաջորդ օրերին մեր տներում գտնվող հայերից ոչ ոքի հնարավոր չէր համոզել, որ դուրս գային, չնայած կառավարությունը հայտարարել էր, որ հայերին ոչինչ չի պատահի: Այդ պատճառով ես ինքս պետք է անհրաժեշտ գնումները կատարեի կամ դա հանձնարարեի մուսուլմաններին:

Պետք է ասել, որ Ուրֆայում, ինչպես թուրքական կայսրությունում համարյա ամենուր, արհեստը գրեթե բացառապես հայերի ձեռքում էր գտնվում: Ուրֆայի կառավարությանը դժվարությամբ հաջողվեց, գոնե հաջորդ օրերին հաց ունենալու համար, հայ հացթուխներին իրենց տներից և թաքստոցներից դուրս բերել: Հաջորդ շաբաթներին հացի յուրաքանչյուր կրպակի առջև հայ հացթուխներին պաշտպանելու համար մի ժանդարմ միշտ հսկողություն էր կատարում: Այլ մասնագիտություններ ունեցող հայերը, ովքեր հարկադրված չէին անպայման դուրս գալ, շաբաթներ շարունակ չերևացին փողոցում:

8. Հյուսիսից տեղահանվածները

Հյուսիսից՝ Սվասի, Էրզրումի և Մամուրեթ ուլ Ազիզի վիլայեթներից եկող հարյուր հազարավոր դժբախտ աքսորյալների համար Ուրֆան դարձել էր տարանցիկ կետ դեպի Միջագետքի անապատները: Այդ շարասյուները շարունակ ավելի տխուր և հուսալքված վիճակում էին հասնում Ուրֆա: Տեղահանվածների մեջ այլևս տղամարդիկ չկային, քարավանները բաղկացած էին միայն կանանցից և չորսից տասներկու տարեկան երեխաներից: Աննկարագրելի էին ճամբարներից փախչել կարողացած և մեզ մոտ կամ հայկական թաղամասում ապաստանած մարդկանց տեղեկությունները. դրանք պատկերվում էին քեզ իրենց զարհուրելի նողկալիությամբ: Հազարավոր էին, ըստ հանգամանքների, միաժամանակ ճանապարհ ընկած մարդիկ, բայց այդ հազարավորներից միայն փոքր խմբեր էին հասնում Ուրֆա: Եվ դա վերաբերում էր բոլոր քարավաններին: Աքսորյալների յուրաքանչյուր շարասյուն մեզ տեղեկություններ էր բերում այնպիսի եղելությունների մասին, որոնք հաճախ իրենց հրեշավորությամբ չէին տեղավորվում ուղեղում:

Այդ իրադարձությունները պետք է որ ի չիք դարձնեին Ուրֆայի հայերի վերջին հույսը, թե իրենք անձամբ կարող են անվնաս մնալ: Գիշերները նրանք իրենց տներում գաղտնի հավաքույթներ էին կազմակերպում՝ իրենց անհուսալի դրության վերաբերյալ միմյանց հետ խորհրդակցելու համար: Ինչպես խեղդվողն է փորձում ծղոտից կառչել, այդպես էլ այդ ահաբեկվածները, որպես խաբուսիկ փրկակար օղակ, վերջին հույսը դեռ կապում էին Անտանտի զորքերի հետ: Դրանք, նրանց կարծիքով, միակն էին, որ կարող էին փրկություն բերել: Քննարկվում էր, թե ինչ կարելի էր անել, բայց երբեք որոշում չկայացվեց: Ի՞նչ էին կարող նրանք անել: Ինքնապաշտպանության մասին խոսք լինել չէր կարող: Երիտասարդների արյունն արդեն իսկ հեղվել էր: Հատկապես օգոստոսի 19-ը ավելի քան 100 տղամարդու կյանք էր խլել, դրան գումարվում էին ոչնչացված աշխատանքային երկու գումարտակները: Ժամանակ առ ժամանակ դրսից մի դասալիք էր հայտնվում: Այդ դասալիքներն իրենց հայրենակիցներին շարունակ հորդորում էին ընդդիմանալ տեղահանությանը, եթե դա տեղի ունենար: Աքսորի եղանակները ցույց տալու համար ես այստեղ կկամենայի ներկայացնել իրադարձություններն այնպես, ինչպես դրանք ինձ պատմել են այն կանայք, որոնք հետագայում մեզ մոտ ծառայության էին անցել: Նրանց տեղեկությունները, իմ համոզմամբ, լիովին ճշմարիտ են:

1. *Վարդար* [Վարդեր, Վարդիթեր] *Կասանջյանը* (Ադիամանից) *պատմում է.*

«Մեր բոլոր տղամարդիկ արդեն հեռացվել էին և, ինչպես մենք տեղեկացել էինք, սպանվել, երբ մեզ՝ կանանց ու երեխաներին տեղահանման հրաման տրվեց: Դրանից հետո կանանց մի մեծ խումբ գնաց նահանգապետի մոտ՝ նրան խնդրելու, որ նա իրենց չտեղահաներ, այլ հրամայեր հենց տեղում սպանել: Մենք ցանկանում էինք, որպես գթության մի ձև, գոնե մահվան այդ եղանակը հայցել, միայն թե այդ «գթությունը» չցուցաբերվեց: Մենք ստիպված էինք ճանապարհ ընկնել:

Մեր Ադիաման քաղաքից մինչև Եփրատ՝ Սամսատի մոտ, հնարավոր է հասնել տասը ժամում: Մեզ դիտավորյալ այնչափ այս ու այն կողմ էին տարել, որ մարդկանց մեր քարավանն այդ ճանապարհն անցավ տասն օրում: Մեր երիտասարդ կանանցից ու աղջիկներից շատերը Եփրատի ճանապարհին արդեն կորել էին: Առաջին երկու գիշերները մեզ չէին չարչարում, բայց դրանից հետո մեզ ամեն գիշեր պարտադրում էին իրենց տալ երիտասարդ աղջիկներ, որոնք հաջորդ առավոտ վերադառնում էին պատվազրկված: Մի անգամ համարձակվեցին այդ հեշտասերներին աղջիկների փոխարեն երիտասարդ կանանց տալ: Հաջորդ առավոտ մայրերը, որոնք իրենց թույլ էին տվել կատարել այդ «խաբեությունը», գնդակահարվեցին:

Քրոջս տասներկու տարեկան դստերը փրկելու նպատակով ես սևացրեցի նրա դեմքը՝ նրան անճանաչելի դարձնելու համար, մի ծծկեր երեխայի տվեցի նրան գրկելու: Այդպիսով հաջողվեց մոլորեցնել ոստիկաններին և քրդերին, որոնք շրջապատում էին մեզ, մինչև հասանք Ուրֆա: Նրանք քրոջս դստերը համարում էին երիտասարդ կին: Երբ մենք հասանք Ուրֆա, նրա ձեռքին միայն ծծկեր երեխան էր. մյուսները տանջանքներից և սովից մահացել էին:

Եփրատի մոտ մենք հարկադրված էինք շատ օրեր մնալ: Այստեղ վերցրեցին մեր փողերը և պատվազրկեցին մեզ: Ով չկարողացավ փող տալ, նրան նետեցին գետը: Մի կնոջ (որից հույս ունեին փող կորզել) իրանից պարան կապեցին և նետեցին ջուրը: Որոշ ժամանակ անց նրան դարձյալ դուրս հանեցին և հարցրին, թե այժմ արդյոք ցանկանում է քսակը բացել: Սակայն նա այլևս գումար չուներ: Նրան դարձյալ կապված վիճակում ջուրը նետեցին: Այդժամ նրան հաջողվեց արձակել պարանը և կամովի խորասուզվել հոսանքի մեջ: Ի վերջո քարավանի սենդամթերքները սպառվեցին: Միայն վաշխառուական գներով էինք դեռ կարողանում քրդերից ինչոր ուտելիք ձեռք բերել: Սամսատից մինչև Ուրֆա ճանապարհը նույնպես հնարավոր էր 10 ժամում անցնել, բայց մեզանից ութ օր պահանջվեց դրա համար: Ադիամանից դուրս գալուց մենք 2000 հոգի էինք, Ուրֆա հասանք միայն 400 հոգով: Այդ 400-ից համարյա բոլորը հիվանդ էին կամ սովից մահամերձ:

Ուրֆայում ես ազգականներ ունեի: Ուզում էի փախչել նրանց մոտ: Այդ պատճառով ես հարմար պահի էի սպասում քարավանից հեռանալու համար: Դա ինձ հաջողվեց, բայց ճանապարհին ինձ մի թուրք բռնեց ու ցանկանում էր ինձ մոտակա մի քարանձավ քարշ տալ: Վախով համակված՝ ես հանեցի մոտիս վերջին քսակը և տվեցի այդ անառակին՝ ասելով, որ դրա մեջ 50 ոսկի կա: Զարմացած դրանից՝ նա ինձ բաց թողեց, և ես ետ փախա դեպի շարասյուն: Դրա մեջ, սակայն, միայն 50 քառորդ մեջիդիեներ (արծաթե ֆրանկներ) կային: Հաջորդ օրերից մեկում ես պետք է մահացածների թաղեի, և այդ ժամանակ ինձ հաջողվեց փախչել Գերմանական առաքելություն:

Այնուհանդերձ, երբ հետագայում պետք է տեղահանվեին հիվանդանոցում գտնվող մարդիկ, ես ստիպված եղա կրկին դեգերել: Մինչև Առկջեկալե հասնելը առաքելական հաստատություններից հանված բոլոր կանանց և երեխաներին լավ էին վերաբերվում: Շատերի համար շուտով տիֆը դարձավ գթասիրտ փրկիչ: Ով, սակայն, նրա զոհը չէր դարձել, ստիպված էր շարունակել դեգերել: Ով ճանապարհին հիվանդանում էր, մնում էր ճամփեզրին պառկած: Ոչ ոք հոգ չէր տանում նրա մասին:

Ես նույնպես ստիպված եղա Ռաքքա գնալ: Սոսկալի էր այդ ճամփորդությունը: Ուտելու, խմելու ոչինչ չկար: Միայն շատ օրեր անց մենք հեռվից հեռու տեսանք Ռաքքա քաղաքը: Մենք հույս ունեինք, որ այնտեղ

կկարողանանք մեզ գետը նետել: Միայն թե հենց քաղաքի առջև հանկարծ հայտարարվեց, որ մենք կարող էինք դարձյալ վերադառնալ Ուրֆա, որ սուլթանը գթացել էր մեզ: Կրկին մի վերջին հույս ծագեց մեր՝ մահու չափ նվաղած սրտերում: Միայն քչերը կրկին հասան Առկջեկալե: Այնտեղ ես հիվանդացա: Մյուսները հասան մինչև Ուրֆայի մոտակայքը, բայց երբ հեռվում երևաց քաղաքը, նրանք ստիպված եղան դարձյալ Ռաքքա վերադառնալ: Ջարհուրելի էր դա: Երբ ես հիվանդության մեջ կրկին ուշքի եկա, գտնվում էի մի արաբի տանը: Ես շատ լավ էի խնամվում, և երբ ի վիճակի եղա կրկին մի քանի քայլ անել, արաբը վերցրեց ինձ և մի ավանակի վրա նստեցրած՝ ետ բերեց Ուրֆայի հիվանդանոցը»:

2. *Ակմաստ Թամասյանը պատմում է.*

«1915 թվականի կոտորածների ժամանակ իմ ծնողները հարկադրված էին Դևիրիկից տեղափոխվել Սվաս: Այնտեղ մենք կարողացանք մի ամերիկացի միսիոներուհու՝ օրիորդ Բեվերի պաշտպանության ներքո ապրել: Մայրս կարևորում էր լավ դպրոցական կրթությունը, ուստի իր բոլոր յոթ երեխաներին ուղարկեց առաքելության դպրոց: Ես ուսուցչուհու՝ իմ կրթությունը ստացա Խարբերդի ամերիկացիների մոտ: Իմ միակ եղբայրը դարձավ դեղագործ: Մեր բոլոր ազգականների հետ միասին մենք մի մեծ ընտանիք էինք: Բոլորս ստիպված եղանք մեր հազարավոր հայրենակիցների հետ անցնել աքսորի սարսափելի ճանապարհը: Ճամփորդության առաջին երկու օրերը բավական լավ անցան, մեզ ուղեկցում էին ամերիկյան միսիոներները: Սակայն նրանք կառավարության կողմից ետ ուղարկվեցին: Հազիվ էին նրանք մեզ լքել, երբ սկսվեցին մեր ծանր տառապանքները: Առաջինն այն էր, որ մեր տղամարդկանց խլեցին մեզնից: Մեր աչքերի առաջ նրանց սկզբում սարսափելի կերպով խոշտանգեցին, իսկ այնուհետև (հաճախ շատ դանդաղ կերպով) սպանեցին: Հազարավոր կանանց և երեխաների նետեցին Կիրկ Գյոլ գետը: Դրանից հետո անցանք լեռների միջով, քայլելը խիստ դժվար էր: Ալևս երբեք մեզ որևէ գյուղի մոտով չտարան: Օրեր շարունակ մենք չէինք ստանում ոչ հաց, ոչ ջուր, սակայն մարդկային ամենամեծ կորուստը մենք ունեցանք Եփրատի մոտ՝ Սամսատի մոտակայքում: Այստեղ ավելի քան 10.000 մարդ հանձնվեց ալիքներին: Գետի մյուս ափին մենք պետք է մեկ շաբաթ սպասեինք: Այստեղ կենդանի մնացածներիս ողջ գումարը վերցրին և պատվազրկեցին մեր աղջիկներին: Մութ ու խավար էր կապել նույնիսկ ամենաբարեպաշտ հոգուն: Քանի դեռ որևէ մեկը որոշ գումար ուներ, կարող էր իր պատիվը փրկել, բայց երբ գումարը սպառվել էր, դա այլևս հնարավոր չէր անել:

Հագուստը փոխելու կամ լվացվելու անհնարինության հետևանքով տարածվեցին կեղտն ու գարշահոտությունը: Մեզանից շատերն ունեին նաև թրի կամ դանակի պատճառած վերքեր, որոնք անհնար էր խնամել:

Ուստի հետագայում այդ դժբախտների մարմնի վրա երևացին սողացող որդեր: Այդ թշվառ մարդկանց այլևս անհնար էր նայել: Սակայն, ի վերջո, մեզ պատեց մի անասելի բթություն, որի հետևանքով մեզ վրա ոչինչ այլևս տպավորություն չէր գործում:

Երբ մեզ վերջապես շարունակեցին քշել, ստիպված էինք մեկ շաբաթ շարունակ դեգերել մեռած, նեխող մարմինների միջով: Վերջապես մենք հասանք մի լեռան, ուր մեզ քրդերի մի մեծ բազմություն շրջապատեց: Նրանք խլեցին մեր բոլոր հագուստները: Քույրս չկարողացավ սարը բարձրանալ, նա լիովին ուժասպառ էր ու մահամերձ: Ուստի նա խնդրեց ինձ իրեն մի մահակով սպանել, որպեսզի կրկին չընկներ դահիճների ձեռքը: Մազերի միջից նա հանեց իր վերջին դրամը և տվեց մորս, բայց մի քուրդ տեսել էր դա և հաջորդ պահին այն խլեց մորից: Դա մեր՝ գրեթե վերջին դրամն էր: Մենք ստիպված էինք իմ քրոջը թողնել այնտեղ՝ մեկընդմիշտ բաժանվելով նրանից: Հասնելով լեռան մյուս կողմը՝ եղբորս կինը ծննդաբերեց: Նույնիսկ հագուստի մի ծվեն չկար, որով կկարողանայինք բարուրել նորածնին. մենք ինքներս այլևս մեր հագին շոր չունեինք:

Հետագա ճանապարհին մենք անցանք մի ջրհորի մոտով, որը լի էր մարդկանց նեխող մարմիններով: Երբ մենք հասանք հաջորդ ջրհորին, մեզ նետեցին դրա մեջ, բայց հատակին մեծ թվով մեռածներ կային, նաև՝ որոշ քանակությամբ ջուր, ուստի վայր նետվածներից ոչ բոլորը մահացան: Վերևից քարեր էին նետում. ում դիպչում էր, դա փրկություն էր նրա համար: Ցավոք ինձ ոչ մի քար չդիպավ: Քույրերիցս մեկը նույնպես կենդանի մնաց այդ դժոխքում: Ամբողջ գիշեր մենք մնացինք սարսափելի գարշահոտ ջրհորում: Հազար անգամ մահ էինք տենչում: Երբ հաջորդ առավոտ այլևս ոչ ոք չհայտնվեց, որ հորի մեջ քարեր նետելու «գթասիրտ» գործը շարունակեր, մենք սկսեցինք խորհել, թե ինչ կարելի էր անել: Հնարավոր փրկության և տառապանքների նոր ճանապարհի համար մենք որոշ գումար գտանք մեռածների մոտ: Մենք գիտեինք, որ այն հիմնականում պահվում էր մազերի մեջ: Ուստի մենք հավաքեցինք թուրքական մի քանի ֆունտ, որոնք, երբ վերևում ևս մի անգամ մի քրդի գլուխ երևաց, զրնգացրինք: Քուրդը հասկացավ: Նա մեզ երկուսիս հանեց, վերցրեց գումարը որպես վարձ, և մենք ժամանակավորապես դուրս պրծանք դժոխքից: Ի՜նչ ագահությամբ էինք մենք կլանում թարմ օդը:

Երեք օր թափառում էինք սարերում: Մի գիշեր ես կորցրի քրոջս: Թե ինչ է պատահել նրան, ես չգիտեմ: Այդժամ ես ամբողջովին միայնակ մնացի: Ու՞ր պետք է գնայի: Վերջապես ես մի գառնարածի տեսա, խնդրեցի նրան ցույց տալ մոտակա քաղաք տանող ճանապարհը: Նա, սակայն, ասաց, որ այնտեղ ոչ մի քաղաք չկա, բայց այդտեղից ոչ հեռու ձգվում է աքսորի ճանապարհը: Նա ինձ ցույց տվեց ուղղությունը: Շուտով ես իրոք կրկին հասա աքսորյալներին: Դրանք իմ համերկրացիների խմբեր էին, որոնք

հավաքվել էին այդտեղ՝ Մահմեդ Խան կոչվող վայրում: Իմ ազգականներից ոչ ոք, սակայն, չկար նրանց մեջ: Այստեղից մի երևելի մահմեդական վերցրեց ինձ և իր հետ տարավ Ուրֆա: Նրա անունը Մահմեդ Խալիլ էր, և նա քաղաքի ամենահարուստ մարդկանցից մեկն էր: Ես, սակայն, ծանր հիվանդ էի, երբ տեղ հասա: Քանի որ դրությունս չէր բարելավվում, նա ինձ ուղարկեց առաքելության հիվանդանոց: Այնտեղ տեղ չլինելու պատճառով ես գնացի ասորական եկեղեցու բակը, որտեղ ուրիշ թշվառներ ևս ինձ նման տենչանքով մահվան էին սպասում: Վերջապես մի կին ասաց ինձ, որ ես պետք է Կյունցլերների մոտ գնամ, որոնք օգնում են բոլոր հայերին: Ես ճամփա ընկա: Մինչև պարոն Կյունցլերի տունը քառորդ ժամվա ճանապարհ էր, բայց սաստիկ թուլացած վիճակում ես ամբողջ երեք ժամ ծախսեցի դրա վրա: Տենդի մեջ ես հասա այդ տանը, ստացա հագուստ, պաշտպանություն, օգնություն և դեղորայք: Դրանով իմ թշվառությունը հիմնականում ավարտվեց: Հետզհետե ես ուշքի էի գալիս, իսկ երբ զինադադարից հետո պարոն Կյունցլերը մի որբանոց բացեց, ես այնտեղ դարձա իմ ժողովրդի չնչին մնացորդի ուսուցչուհին»:

3. *Վեհսա Բեդրոսյանի ապրումները.*

«1915 թվականի հուլիսի 10-ն էր, երբ ես մոտավորապես 2000 տղամարդկանց, կանանց և երեխաների հետ ստիպված եղա լքել իմ հայրենի Խարբերդը: Ամուսինս ապրում էր Ամերիկայում: Ես կարողացա որոշ չափով գումար, հագուստ և նաև՝ ավանակի վրա բարձած անկողին հետս վերցնել: Երկու դստերս՝ 10 և 12 տարեկան, ստիպված էին ինձ հետ գալ: Առաջին օրերին շրջակայքում բնակվող թուրքերը կամ մեզ ուղեկցող ոստիկանները մեզ որևէ չարիք չպատճառեցին: Մալաթիայի մոտ կանգառ արվեց: Երբ Էրզրումից և Սվասից եկող աքսորյալների շարասյուները միացան մեզ, շարունակեցինք ճանապարհը, բայց ոչ դեպի Մալաթիա, ինչպես հույս ունեինք, այլ դեպի հարավ՝ Տավրոսի բարձրաբերձ լեռները: Հաճախ մենք ստիպված էինք չորեքթաթ ժայռերը մագլցել: Այդ ընթացքում սաստիկ զրկանքներից շատ երեխաներ և ծերեր զոհվեցին: Մեռածներին թաղելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Նրանք պառկած էին մնում այնտեղ, որտեղ ընկնում էին՝ դառնալով ցանկալի ավար վայրի գազանների համար: Մեր բեռը մենք վաղուց դեն էինք նետել, քանի որ մեզ ստիպել էին հետ ուղարկել ավանակին, որին մեզ հետ վերցրել էինք ճանապարհ ընկնելիս: Բարձրադիր հովտում, որը գտնվում է Մալաթիայի և Ադիամանի միջև, մեզ կողոպտեցին շրջակայքի քրդերը: Նրանք հեռացրեցին մեզնից մեր տղամարդկանց, նրանց մի փոքր այն կողմ տարան ու սպանեցին: Մենք արդեն այն վիճակում էինք, որ նույնպես հաճույքով կմեռնեինք, եթե միայն իմանայինք, թե ինչ էր կատարվելու մեր երեխաների հետ: Սամսատ տանող մնացած ճանապարհին մեր երիտասարդ կանանց ու աղջիկների մեծ մասն անհետացավ: Շրջակայքի քրդերը վերցնում էին իրենց դուր եկած կանանց և աղջիկներին:

Գետից այն կողմ՝ Ուրֆայի տարածքում մեր տառապանքները գագաթնակետին հասան: Մենք երբեք ջուր չէինք ստանում առանց դրա համար ոսկի վճարելու: Հրացանակոթերով մեզ քշում էին ջրհորների մոտից: Մի մեծ աղբյուրի մոտ, որտեղ մենք մի քանի օր հանգստանում էինք, ամբողջությամբ զրկվեցինք մեր դրամական միջոցներից ու զարդեղենից: Բազում նավթամաններ [Արևելքում՝ նավթի տեղափոխմանը ծառայող հայտնի տարողություններ], լի ոսկով և զարդերով, ընկան ավազակների ձեռքը: Երբ մեզանից խլելու այլևս ոչինչ չմնաց, մեզ քշեցին քարքարոտ մի անապատ: Այնտեղ մեզ մեծ թվով քրդեր շրջապատեցին: Նրանք մեզ մերկացրին և հանված շորերից վերցրին այն ամենը, ինչ դեռ որոշակի արժեք էր ներկայացնում: Այդ մերկացման ընթացքում պարզվեց, որ մեր մեջ կային նաև մի քանի դեռահաս տղաներ՝ աղջկա շորեր հագած: Նրանք ակնթարթորեն քառատվեցին: Այդժամ քրդերը քշեցին մեզ՝ մոտ 2000 կանանց և աղջիկների մերկ բազմությանը, մի նեղ վայր, և այդտեղ սկսվեց ամենասոսկալին: Չորս կողմից մեզ գնդակոծում էին: Մի սարսափելի հրմշտոց առաջացավ: Ով եզրում էր կանգնած, գնդակահարվեց, ով մնաց հրմշտոցի մեջ՝ խեղդվեց: Ես ինքս, դուրս գալով անշնչացած մարմինների տակից, խուսափեցի մահից: Անասելի ջանքերով կարողացա նաև երկու աղջիկներիս քաշելով դուրս բերել ինձ մոտ՝ այդ բարձր տեղը: Նրանց մարմիններն ամբողջովին կապտել էին: Երբ քրդերը հեռացան մեզնից, միայն մի քանի հարյուրն էին դեռ կենդանի մնացել: Ժանդարմները, որոնք կարող էին շարունակել մեզ քշել, նույնպես չէին երևում, ուստի մենք մնացինք գետնին նստած՝ յուրաքանչյուրն անհամբերությամբ սպասելով իր վերջին ժամին: Հաջորդ օրը մենք ստիպված էին ճամփա ընկնել, քանի որ նեխահոտն անտանելի էր: Երկու երեխաներս գիշեր-ցերեկ թուլացած ձայնով աղերսում էին. «մայրիկ, հաց, մայրիկ, հաց»: Երբ ճանապարհին մի քանի քուրդ ձիավորներ հանդիպեցին, ես խնդրեցի նրանց երկու աղջիկներիս իրենց հետ վերցնել՝ ասելով, որ նրանք Աստծուց հետո նրանց էին պատկանում: Քրդերը նրանց վերցրեցին իրենց հետ: Թե նրանց հետ ինչ է կատարվել, ես չգիտեմ, նրանց ես այլևս չտեսա: Նրանց հեռանալու ժամանակ ես այլևս չէի կարող լաց լինել, արցունքներս արդեն սպառվել էին: Ես միայն մի բան էի փափագում՝ շուտ մեռնել: Մահն այլևս չէր կարող ինձնից հեռու լինել: Ի վերջո մենք ջուր խնդրելու համար մտանք մի քրդական գյուղ: Չնայած մենք ամբողջովին մերկ էինք, գյուղի քրդերը նախ դրամ պահանջեցին մեզնից: Երբ նրանք տեսան, որ մեզնից վերցնելու ոչինչ չկար, մեզ հեռու քշեցին ջրի մոտից: Ես ցանկացա մի կեղտոտ ջրափոսից խմել, բայց մինչ դա կկարողանայի անել, թրի հարված ստացա ձեռքիս: Առանց ծարավներս հագեցնելու մենք ստիպված էինք շարունակել թափառումը:

Միջագետքի օգոստոսյան արևն այրում էր մեր մերկ մարմինները: Հերկված հողում մենք ձեռքերով փոսեր էին փորում, որոնցում պատսպարվում էինք միջօրեի արևից՝ ծածկելով մեզ հողով: Մենք ստիպված էինք այդ փոսերը նաև գիշերներն օգտագործել, քանի որ շատ ցուրտ էր լինում, և հողը մեզ պաշտպանում էր ցրտից: Մարմիններիս ծանր այրվածքներով վերջապես հասանք մի քրիստոնյա գյուղ Ուրֆայի մերձակայքում: Այնտեղ մենք ստացանք հաց, ջուր և նաև՝ մի քանի հագուստ: Ինձ բաժին հասավ մի կարճաթևք մանկական վերնաշապիկ, որով ես 16-օրյա մերկությունից հետո կարողացա իմ մարմինը, անշուշտ ամենախղճուկ կերպով, ծածկել: Հետզհետե այդ գյուղում հավաքվեցին մոտ 200 կանայք՝ մնացորդն այն 6000 մարդկանցից, որոնց հետ միասին մենք ճանապարհ էինք ընկել դեպի Մալաթիա:

Մեր մնալն այդ գյուղում կարճ տևեց: Ժանդարմները եկան և կրկին մեզ խմբովի քշեցին: Նույն օրը մենք հասանք Ուրֆայից այն կողմ գտնվող աքսորյալների մի ճամբար: Հաջորդ առավոտ այդ ճամբար եկան խարբերդցիներ, որոնք դեռ նախորդ խմբաքանակների հետ եկել էին Ուրֆա: Նրանք ցանկանում էին տեսնել, թե ովքեր էին նոր եկածները: Ես, ինչպես մեզնից շատերը, ցանկացած մարդու համար անճանաչելի էի դարձել: Որոնողների մեջ, սակայն, ես ճանաչեցի առանձին խարբերդցի մարդկանց, որոնց հայտնեցի իմ անունը: Ինձ խորհուրդ տվեցին փախչել, բայց դա հնարավոր էր միայն կաշառքի միջոցով: Ես մի կնոջից պարտքով մեկ ոսկե ֆունտ վերցրի, որը երեկոյան տվեցի պահակին և դրա շնորհիվ ազատվեցի: Սակայն ու՞ր պետք է հիմա գնայի: Ես շատ էի ուզում գերմանական հիվանդանոց գնալ, բայց չգտա այն: Մի թուրք բռնեց ինձ և քարշ տվեց իր տուն: Շուտով, սակայն, ես ծանր հիվանդացա: Այդ ժամանակ այդ թուրքն անձամբ ինձ բերեց առաքելության հիվանդանոց: Անտեղ ես կարողացա կրկին կազդուրվել: Ուրֆայի բնակչության հետ տեղահանվելուց ես խուսափեցի միայն այն բանի շնորհիվ, որ այն օրը, երբ ոստիկանությունը բոլոր հայերին դուրս էր բերում հիվանդանոցից, ես ուժեղ տենդի մեջ պառկած էի: Հետագայում ես պարոն Կյունցլերի տանը դարձա խոհարարուհի:

Մանկական վերնաշապիկը, որով կարողացա իմ մերկությունը ծածկել, ես պահել եմ և այն կպահպանեմ մասունքի նման՝ ամուսնուս ցույց տալու համար, եթե կարողանամ նրան կրկին տեսնել»:[7]

[7] Այդ կինը 1919 թվականի օգոստոսին Հալեպից ինձ տեղեկացրեց, որ իր ամուսինը մահացել էր Ամերիկայում: Երկու աղջիկների՝ մեր որոնումները մինչ այժմ արդյունք չեն տվել:

9. Անդորր՝ փոթորկից առաջ

Օգոստոսի 19-ից հետո շատ մարդիկ Ուրֆայում բնակվող եվրոպացիների տներում էին ապաստան որոնում: Անհնար էր ապաստան տրամադրելու բազում խնդրանքները հաշվի առնել: Մենք նաև ստիպված էինք ինքներս մեզ ասել, որ երբ Ուրֆայի հայերի տեղահանման ժամը գար, հազիվ թե կառավարությունը կանգ կառներ եվրոպացիների դռների առաջ: Այնուամենայնիվ ապաստան հայցողներին այն տրամադրվում էր, որչափ որ տարածքը բավականացնում էր որևէ կերպ տեղավորվելու համար: Ապաստան հայցողներն իրենք պետք է հոգ տանեին իրենց սննդի համար:

Ուրֆայում կար մի գորգի գործարան, որը պատկանում էր Գերմանական արևելյան առևտրական և արդյունաբերական ընկերությանը:[8] 1895 թվականի հայկական կոտորածներից հետո պարոն դոկտոր Լեփսիուսն այդ գործարանը Հարցում գտնվող Ֆրիզդորֆից տեղափոխեց Ուրֆա և տարիների ընթացքում ընդարձակեց: Հարյուրավոր այրիներ զրկանքի այն սկզբնական շրջանում կարողացան այս գորգարդյունաբերության միջոցով հոգալ իրենց և իրենց երեխաների ապրուստը: Այդ գործարանը ստիպված էր պատերազմի հենց սկզբից դադարեցնել աշխատանքները, քանի որ արտահանումն անհնար դարձավ: Գործարանի սրահներում շատ տեղ կար, որտեղ հետագայում շուրջ 1000 հոգի կարողացան տեղավորվել: Շատերն իրենց հետ նաև իրենց սեփականությունից որոշ թանկարժեք իրեր էին բերել՝ առանց դրանք այնտեղ հասնելիս գրանցելու: Այնտեղ ապաստան գտածների մեջ կային նաև տղամարդիկ: Նրանք գիտեին, թե ինչ էր իրենց սպասվում:

Սեպտեմբերի կեսին Ուրֆայի նահանգապետին իմ մի այցելության ժամանակ նա ինձ ասաց, որ հայերն այլևս չէին ցանկանում իրենց աշխատանքին անցնել, փոխարենը պարզվել էր, որ շատ հայեր բարիկադավորվել էին իրենց տներում: Այդքանով իսկ՝ հայերն, անկասկած, իրենց հանդուգն պահվածքով այլևս չէին կարող որևէ գթություն ակնկալել:

Թուրքական տներում հիվանդներին այցելություններ կատարելու ժամանակ ես հաճախ զգում էի, թե իրադրությունը որքան լարված էր դարձել: Շատ թուրքեր ինձ ասում էին, որ հայերին անխնա կերպով կկոտորեն:

Հյուսիսից աքսորը շարունակվում էր: Մի անգամ հարյուրավոր կանայք մերկ վիճակում եկան Ուրֆա: Աքսորյալների մեջ ընդհանրապես տղամարդիկ չէին երևում:

Եթե որևէ մեկն այդ ժամանակ հարկադրված էր լինում շրջել երկրով, ապա ամենուրեք հանդիպում էր մարդկային դիերի, որոնք խառնիխուռն ընկած էին տարբեր վայրերում: Եթե նույնիսկ մերթ ընդ մերթ այդ սպան-

[8] Նստավայրը Պուռսդամն է:

վածները հավաքվում և կիտվում էին, ապա դա բավարար չէր, քանի որ վայրի կենդանիները կարողանում էին դիակները կրկին ցիրուցան անել: Հանդիպում էին նաև արյունով ներկված վայրեր, ուր մարդիկ էին սպանվել: Դա մի աննկարագրելի թշվառություն էր, մի զրկանք, որի նմանը ես նույնիսկ այստեղ՝ խրոնիկական կարիքի այս երկրում, երբեք չէի տեսել: Եվ այդուհանդերձ Ուրֆայի համար վատթարագույնը դեռ չէր սկսվել: Բոլորին պարզ էր, որ ամենասարսափելին դեռ առջևում է, և դա գալիքից խուսափելու բացարձակ անկարողության հաշմող զգացումով էր համակել մեզ:

Բազարում՝ քաղաքի շուկայում, որը առևտրի ու անցուդարձի գլխավոր վայրն էր, այլևս ոչ մի հայ չէր հայտնվում: Ո՞վ կարող էր գիտենալ, թե երբ էր պայթելու ռումբը: Դիմադրություն ցույց տալու համար հայերին պակասում էին նախ և առաջ զենքն ու զինամթերքը: Հավանաբար յուրաքանչյուր տանը քիչ թե շատ լավ զենք կար, բայց ժամանակակից հրացանները քիչ էին: Այդժամ մի սառնասիրտ, արի հայ, որն ի վերջո պետք է դառնար դիմադրության ոգին, օգտվել էր փոթորկից առաջ տիրող խաղաղությունից գավառային կենտրոն՝ Հալեպ գնալու համար: Այնտեղ գնել էր զինամթերք և բերել Ուրֆա: Դրա համար նա հագել էր թուրքական սպայի, իսկ իր մի քանի ընկերներին հագցրել՝ թուրք զինվորի համազգեստ, տվել նրանց մահմեդական անուններ և նրանց ու Հալեպում ձեռք բերված զենքի ու զինամթերքի հետ միասին ճանապարհ ընկել: Նրանք հիմնականում անցնում էին գյուղերով՝ խուսափելով փոքր քաղաքներից: Մինչև մայրամուտ քարավանն Ուրֆա հասավ: Ով, այնուամենայնիվ, տեսնում էր այդ տեղաշարժը, ոչինչ չէր կասկածում: Չէ որ պատերազմի այդ օրերին այդպիսի շատ խմբեր էին տեղաշարժվում երկրում: Միայն թե առաջնորդը՝ Մկրտիչը, պետք է քաղաք մուտք գործելու համար օգտագործեր արևի մայրամուտին անմիջապես նախորդող ժամանակը, երբ քաղաքի բնակչությունը փողոցներում չի գտնվում, այլ տներում ճաշակում է իր ընթրիքը:

Փոթորկին նախորդող այդ օրերին արհեստավորների թվում ամենից շատ պետք է աշխատեին դարբինները: Ձեռքի նռնակներ պատրաստելը նրանց գործն էր:

10. Մահվան երկյուղը

Սեպտեմբերի 29-ի գիշերը հայկական թաղամասում հնչեցին առաջին կրակոցները: Հաջորդ առավոտ ես իմացա, որ տներից մեկում մարդիկ գինարբուք էին կազմակերպել, և գիշերը մի քանի գինովցածներ զվարճանալու համար կրակոցներ էին արձակել: Մոտավորապես կեսօրին եկավ ոստիկանությունը հրաձգության պատճառները քննելու համար: Նրան այդ բանին դրդել էր հայկական կողմը, քանի որ բոլորը գիտեին, որ առանձին

անբարեխիղճ հայրենակիցների վարմունքն արդեն իսկ շատ նեղ դրության մեջ գտնվող ողջ ժողովրդի համար մի նոր վտանգ էր ներկայացնում, և որ նման անբարեխիղճներից պետք էր անխնա կերպով ազատվել: Այն տունը, որտեղից կրակել էին, ոստիկանությունը գտավ փակված: Երբ նրանք փորձում էին ոչ շատ բարձր հարթ տանիքի վրայով տուն մտնել, դիմավորվեցին կրակոցներով և ստիպված նահանջեցին: Այժմ, բնականաբար, լրացուցիչ ուժեր բերելու անհրաժեշտությամբ, այդ աննշան դեպքը դարձավ թուրքական իշխանությունների մի կարևոր և պետական նշանակության ակցիայի առարկա:

Կեսօր էր, երբ ես ցանկանում էի մեքենայով քաղաք մեկնել՝ հիվանդ ամերիկացի միսիոներ Լեսլիին քաղաքից դուրս հանելու համար: Նրա դռան առջև արդեն կանգնած էր մի ժամապահ, որը յուրաքանչյուրին, այդ թվում նաև ինձ, արգելում էր ներս մտնել, այնպես որ ես չէի կարող տեղափոխել հիվանդին: Երբ ոստիկանությունն օգնական ուժերի հետ հայտնվեց, նրանց դարձյալ դիմավորեցին կրակոցներով, որոնք, լավ նշանառությամբ, հիմնականում մահացու էին: Ոստիկանությունը ստիպված էր մեծ կորուստներ կրելով՝ հեռանալ: Քաղաքի հայկական մասից գնդակահարում էին յուրաքանչյուր մուսուլմանի, որը հայտնվում էր տեսադաշտում: Գիշերը թուրքերը փողոցներում բարիկադներ կանգնեցրեցին և այդպիսով բաժանեցին հայկական թաղամասը թուրքականից: Հայերը զբաղեցրել էին իրենց թաղամասի եզրագծի բոլոր կարևոր հայկական տները: Այստեղից յուրաքանչյուր թուրք, քուրդ կամ արաբ, որը հայտնվում էր տեսադաշտում, նրանց համար ցանկալի թիրախ էր:

Գրգռված թուրքերը սկզբում ոչինչ չէին կարողանում անել հայերի դեմ: Սակայն մուսուլմանների ֆանատիզմը լիովին պետք է բորբոքեր այն հանգամանքը, որ ոչ մի մոլլա, ինչպես ընդունված է՝ աղոթքի կոչելու համար, չէր կարող բարձրանալ իրենց մինարեթի վրա, այլապես հայերի դիպուկ գնդակը կզրկեր նրան կյանքից: Այսուհանդերձ հայերը լոկ պաշտպանողական վարքագիծ էին ցուցաբերում: Մի քանի օր ուժգին փոխհրաձգություն էր տեղի ունենում, հատկապես՝ գիշերները: Երրորդ օրը մուսուլմանական թաղամասում, հենց այն ժամանակ, երբ ես գնում էի մի մահմեդական հիվանդի մոտ, հանկարծակի խուճապ սկսվեց: «Գյավուրները գալիս են, գյավուրները գալիս են»՝ թնդում էր բոլոր փողոցներում: Վաճառականները հապճեպ փակեցին իրենց խանութները և փախան իրենց տները: Ուրիշները հրացաններով փողոց դուրս եկան: Ի վերջո, սակայն, բնավ ոչինչ չպատահեց: Ըստ երևույթին ինչ-որ տեղ փողոցում մի քանի զինված հայերի էին տեսել:

Այդ օրերին Ուրֆայում ոչ մի թուրք զինվոր չկար: Ոստիկանները քաղաքից դուրս զբաղված էին աքսորյալների քարավանները կողոպտելով և նրանց չարչարելով: Այդ պատճառով կառավարությունը հեռագրով Հա-

լեպից օգնություն խնդրեց: Այնտեղից եկավ մի գեներալ՝ զինվորների մի զորամասով: Անհնազանդ հայերի դեմ համատեղ գործելու համար հավաքագրվեցին նաև շրջակայքի քրդերը: Երբ այդ քրդերի մի մեծ հեծյալ բազմություն օրը ցերեկով փորձեց քաղաք մտնել, նրանք հայերի կողմից դիմավորվեցին կրակոցներով: Շրջանցիկ երկար ճանապարհներով նրանք ի վերջո մտան քաղաք, ընդ որում գնդակոծության գոտում գտնվող դաշտի մի կարճ հատված նրանք ստիպված էին քառատրոփով անցնել: Իմ տնից մենք հետևում էինք փոխհրաձգությանը: Ձիավորներից մեկն ընկավ. մի դիպուկ կրակոցով նա տապալվեց ձիու վրայից: Դրանից մեկ ժամ անց վիրավորին մի ավանակի վրա դրած՝ տեղափոխեցին մեր տան մոտով: Քրդական հրոսակները ոչինչ չկարողացան անել ամրացված հայկական թաղամասի դեմ: Յուրաքանչյուրը, ով որևէ կերպ տեսանելի էր դառնում, պետք է զոհ դառնար ակնդետ հետևող հայերի կրակոցներին: Թուրքական հետևակը նույնպես, որը եկավ պաշարման երրորդ օրը, չկարողացավ ընդդիմանալ դիրքավորված հայերին: Նրանք ստիպված էին ծանր հրետանի բերել:

11. Գերմանական արդյունաբերական տարածքի գրավումը

Արդեն հիշատակված գորգի գործարանն իր պահեստներով և մանածագործական, ներկարարական ու ձեռագործական արտադրամասերով գտնվում էր երկու թշնամական թաղամասերի սահմանին: Այդ մեծ շինություններն իշխում էին քաղաքի մուսուլմանական ողջ թաղի վրա: Այդ պատճառով շենքերի այս համալիրի գրավումը հակամարտող երկու կողմերի համար էլ կարևոր նշանակություն պետք է ունենար: Հատկանշական է, որ հայերը նույնպես սկզբում մտադիր էին գրավել գործարանը, որի տանիքներից հեշտությամբ կարող էր գնդակոծվել ամբողջ մուսուլմանական թաղամասը: Բացի այդ, գործարանի սրահներում գտնվում էին նրանց՝ հազարից ավելի հայրենակիցները: Գործարանի ղեկավարը՝ պարոն Էքարտը, տեղեկացվել էր հայերի մտադրության մասին: Նա ինչ պետք է աներ: Պետք է թողներ, որ գրավումը հանգիստ կատարվեր: Դրանով նա այդ գործարանը չէր մատնի ավերակման: Հարկ էր, այնուամենայնիվ, ենթադրել, որ թուրքերին վերջիվերջո կհաջողվեր հաղթել հայերին: Ենթադրվող ռմբակոծությունը պետք է նաև շենքերին վնասեր: Բացի այդ, անհանգստության տեղիք էր տալիս նաև կողոպուտի հնարավորությունը, ընդ որում այդ դեպքում գերմանական և հայկական սեփականության տարբերակման մասին խոսք լինել չէր կարող: Ուստի պարոն Էքարտը ծանր սրտով վճռեց թուրքական կառավարությանը խնդրել գրավել գործարանի տարածքը, նախքան հայերը կգային նույնն անելու:

Սակայն գործարանն անմիջապես գրավելու փոխարեն թուրք գեներալը խոստացավ դա անել հաջորդ առավոտ: Գործարանի սրահներում ապաստան գտած հայերը պարոն Էքարտի կրտսեր եղբորից տեղեկացվեցին հանձնման մտադրության մասին: Այս լուրը նրանց շարքերում իսկական խուճապ առաջացրեց: Մեծամասնությունը չէր ցանկանում անպաշտպան կերպով թուրքերի ձեռքն ընկնել: Այդ պատճառով այդ գիշեր նրանց մեծ մասը դուրս եկավ պատուհանից և փախավ հայկական թաղամաս: Թե ինչո՞ւ, սակայն, հայերը նաև այժմ, երբ տեղեկացել էին, որ թուրքերը գրավելու էին այդ տարածքը, իրենց հերթին այն գրավելու համար ոչինչ չձեռնարկեցին, ես երբեք չհասկացա: Հաջորդ առավոտ թուրքական գեներալը գրավեց գերմանական կառույցը: Մոտ 400 հոգի՝ մեծ մասամբ կանայք և երեխաներ, ներկայացվեցին որպես գործարանի աշխատողներ: Գեներալը հրամայեց նրանց տեղափոխել քաղաքի առջև գտնվող գերմանական որբանոցը: Յոթ տղամարդիկ, նաև՝ գերմանական գործարանի և գերմանական որբանոցի աշխատակիցները բանտ նետվեցին: Գերմանացի պարոն Էքարտին խոստացան, որ նրանց հետ ոչ մի վատ բան չի պատահի: Չնայած պարոն Էքարտը խնդրեց իրեն թույլ տալ նրանց իր սեփական տանը տեղավորել, բայց թուրք գեներալը մերժեց: Նա, անշուշտ, ուրիշ դիտավորություններ ուներ՝ կապված այդ տղամարդկանց հետ. սկզբում նրանք պետք է հարցաքննվեին պարզելու համար՝ իրոք անմեղսակից էին, ինչպես պնդում էր պարոն Էքարտը:

Նույն օրը Ուրֆա հասան սպասված հրանոթները: Դեռ ցերեկը կամենում էին դրանք քաղաք բերել, բայց հայերն աչալուրջ էին: Քանի որ ճանապարհը 500 մետրի չափով կրակի գծում էր գտնվում, թուրքերը ստիպված էին հրանոթները ճանապարհի կեսին թողնել: Հրանոթների անձնակազմերն անմիջապես փախուստի դիմեցին: Միայն մութն ընկնելուց հետո հնարավոր եղավ սպանդի այդ գործիքները քաղաք բերել: Սկսվեց մի սարսափելի դղրդյուն: Մի քանի խիզախ և փորձառու հայեր դուրս էին եկել առևանգելու հրանոթների փակաղակները: Դա, սակայն, նրանց չհաջողվեց: Չնայած կեսժամյա ուժգին կրակոցներին, որոնք տեղի էին ունենում մեր տնից մոտ 300 մետր հեռավորության վրա, այդ փոխհրաձգության ժամանակ կարծես ոչ ոք չսպանվեց: Թուրքական ռումբերը մեծ մասամբ հասնում էին միայն ճանապարհի ողջ երկարությամբ ուղղահայաց կանգնած մուսուլմանական գերեզմանաքարերին:

12. Ամերիկյան առաքելական հասատությունը



Հայկական թաղամասի ամենաբարձր կետում գտնվում էր միմյանց հետ կապված մի շարք շինություններից բաղկացած Ամերիկյան առաքելական

հաստատությունը: Այդտեղից դեռ նախքան պաշարման սկսվելը առանձնապես ուժգին գնդակոծություն էր կատարվում: Ըստ այդմ կասկածից վեր էր, որ հայերը նաև շենքերի այդ համալիրն էին գրավել ու վերահսկում: Սակայն հաստատության ղեկավարը՝ ամերիկացի պարոն Լեսլին, անձամբ այնտեղ էր: Բացի այդ, հայկական թաղամասում բնակվում էին նաև մի շարք այսպես կոչված «անբարեհույս» եվրոպացի քաղաքացիական անձինք, որոնք, պետք էր ենթադրել, հենց սկզբում ամերիկյան շենք էին փախել: Այդ եվրոպացիների և ամերիկացու վիճակն, իրոք, նախանձելի չէր, հատկապես հիմա, երբ պետք է սկսվեր ռմբակոծությունը: Պարոն Լեսլին կարողացել էր նահանգապետին մի նամակ ուղարկել: Նա այն նետել էր մուսուլմանական թաղամաս, որտեղից այն հասել էր նահանգապետին: Այդ նամակում Լեսլին «անբարեհույսների» հետ միասին ազատություն էր հայցում: Նամակն ստանալուց հետո գեներալը հրամայեց ինձ կանչել: Քանի որ ես պարոն Լեսլիի ընկերն եմ, ասաց նա, ուրեմն պետք է փորձեմ նրան և ներկալված քաղաքացիական անձանց ազատել: Այդ նպատակով նա կարգադրել էր, որ չկրակեն ոչ ոքի վրա, ով, ամերիկյան հաստատությունից դուրս գալով, կլքեր թաղամասը:

Ես առաջարկեցի, որ գեներալն ինձ թույլատրեր հայկական թաղամաս գնալ և այդ մարդկանց դուրս բերել: Սակայն այս՝ փոքր-ինչ հապճեպ և անկշռադատ կերպով արված առաջարկը հավանություն չգտավ: Գեներալն ասաց, որ քանի որ ես շվեյցարացի եմ, նա չի ցանկանում ստանձնել նման փորձի ձեռնարկման պատասխանատվությունը: Ուստի ես առաջարկեցի պարոն Լեսլիին մի նամակ ուղարկել, ինչը թույլատրվեց: Ես անմիջապես գրեցի և խնդրեցի ընկերոջս ներկալվածների հետ լքել ամերիկյան շենքը և գնալ ու սպասել մատնանշված փողոցում:

Այդ նամակով ես անցա բարիկադների այն կողմը: Ես երկար ու բարդրածայն մի հայկական անուն էի կանչում: Վերջապես տներից մեկից եկավ պատասխան. ով եմ ես: Ես հայտնեցի իմ անունը՝ Յակոբ էֆենդին: Հարց տվողին ես խնդրեցի գալ բարիկադի մոտ նրան մի նամակ փոխանցելու համար: Ասացի, որ նա չպետք է երկյուղեր, նրան ոչինչ չէր պատահի: Սակայն հայն առաջարկեց, որ ես գնամ թաղամաս, քանի որ ինձ նույնպես ոչինչ չէր պատահի: Վերջապես մի դռնից երևաց մի դեռահաս տղա և ինձ մեկ անգամ ևս առաջարկեց գալ: Ես հանձնարարեցի նրան մի կոնկրետ տուն գնալ, որտեղ ես քարին կապված մի նամակ կնետեի, որը նա պետք է հանձներ ամերիկյան քարոզիչ պարոն Լեսլիին:

Երբ, սակայն, ավելի քան երեք ժամվա ընթացքում պարոն Լեսլին չհայտնվեց, ես նորից գնացի բարիկադների մոտ և ձայնեցի: Դա կրկին բավականին երկար շարունակվեց: Վերջապես մեկը բղավեց, որ Լեսլիի պատասխանը գրված էր իր տան վրա:

Հեռադիտակով և ոստիկանական հսկողության ներքո ես այժմ բարձրացա քաղաքի առջև գտնվող մի բլուրի վրա, որտեղից կարող էի տեսնել ամերիկյան շինությունները: Մի պատի վրա մեծ տառերով գրված էր. «Մենք հաճույքով կուզենայինք գալ, բայց մեզ թույլ չեն տալիս»: Նույն երեկո ամերիկյան հաստատությունը երեք կողմից թնդանոթներով գնդակոծվեց:

13. Դիմադրության անկումը

Օրեր շարունակվող ռմբակոծությունից հետո ծայրամասում գտնվող ամրացված տները պետք է գրավվեին: Քանի որ, ըստ այդմ, պետք է հաշվի առնվեր, որ մեծ թվով վիրավորներ կլինեին, ես, որպես Գերմանական առաքելության հիվանդանոցի ղեկավար, հրաման ստացա բոլոր հիվանդներին անմիջապես հիվանդանոցից հեռացնել և մահճակալներն ազատ պահել վիրավորների համար: Դրանից դեռ մի քանի օր առաջ թուրքերը վտարել էին քաղաքային հիվանդանոցում գտնվող հիվանդ հայերին, քանի որ այլևս տեղին չէր համարվում օգնել խռովարարների հայրենակիցներին: Այդ՝ դուրս բերված հիվանդներից շատերն ուղարկվել էին ինձ մոտ: Ես կատարեցի թուրքական կողմի պահանջը՝ զբաղեցրի Շիկոյի մեծ տունը և այնտեղ պառկեցրի իմ բոլոր հիվանդներին: Անհրաժեշտ մահճակալները ես վերցրեցի գորգարդյունաբերության գործարանի տարածքից, որտեղ հետապնդվող հայերը ստիպված էին եղել շատ մահճակալներ թողնել:

Առաջին գրոհով հնարավոր չեղավ ամրացված տները գրավել: Գրոհողներն ամենուրեք ստիպված էին մեծ կորուստներով ետ քաշվել: Ցավոք հարձակման ժամանակ նաև մի քանի քրիստոնյաներ մահացան՝ ասորի աշխատանքային զինվորները, որոնք ուղարկվել էին կացիններով դռները կոտրելու: Գրոհից հետո բուժման համար մեծ թվով վիրավոր թուրքեր եկան մեր հիվանդանոց: Այդ վիրավորներից մեկը պատմում էր, որ իրենք 23 հոգով հարձակվել էին մի հայկական տան վրա, բայց արդեն մի քանի րոպե անց ստիպված էին եղել ձեռնունայն նահանջել: Բազում մահացածներից բացի բոլորը, բացառությամբ հինգի, վիրավորվել էին: Ձեռքի նռնակները, որոնք նետում էին հայերը, հարձակվողներին մեծ վնաս էին պատճառել:

Հավանաբար հայերը կարող էին ամիսներ շարունակ դիմանալ: Նրանք բավականաչափ սնունդ ունեին: Այն, որ թուրքերը հենց սկզբից նրանց ջուրը կտրեցին, վնաս չէր պատճառում, քանի որ համարյա յուրաքանչյուր տուն բացի ջրմուղից ուներ նաև ջրհոր: 9 սանտիմետրանոց արկերը մեծ քարե շինություններին զգալի վնաս չէին պատճառում: Մեծ տրամաչափի հրանոթներ չկային: Հրկիզող արկերը սակավ վառելիք էին գտնում տներում, որոնցում փայտեղենը քիչ էր կամ ընդհանրապես չկար: Նույնիսկ

երբ մի տուն կամ սենյակ իրոք բռնկվում էր, ապա դրանով էլ շատ բանի հասնել չէր հաջողվում:

Կասկածից դուրս է, որ որոշակի միասնականության ցուցաբերելու դեպքում հայերը կարող էին ամիսներ շարունակ հեռու պահել թուրքերին, բայց հայերի վաղեմի դժբախտությունը՝ նրանց անմիաբանությունը, դարձավ նրանց ճակատագիրը և թուրքերի օգնականը: Կարդա այս՝ այդքան քաղաքակիրթ ազգի պատմությունը: Երբեք չի եղել բացարձակ միասնականություն: Շվեյցարացիների նշանաբանը՝ «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի», նրանք չգիտեն:

Մենք արդեն հիշատակել ենք ղեկավարի՝ Մկրտչի մասին, որը մնում էր դիմադրության ոգին: Երբ Մկրտիչը պաշարման տասնհինգերորդ օրը եկեղեցում մի խորհրդակցության ժամանակ ընկավ արկի բեկորից, տղամարդկանց, կանանց և երեխաների մի մեծ բազմություն համառորեն պնդում էր անձնատուր լինել: Չնայած հայ բողոքական քահանան՝ Ամերիկայում աստվածաբանական կրթություն ստացած մի անձնավորություն, դեռ փորձում էր նախ բանակցել թուրքերի հետ և այդ նպատակով մի քանի կնոջ մի սպիտակ դրոշակով ուղարկել էր գեներալի մոտ, բայց վերջինս պահանջել էր անվերապահ կապիտուլյացիա: Հայերն այժմ այլևս գթություն չէին կարող հուսալ: Տղամարդկանց ստույգ մահ էր սպասվում: Նմանապես որոշակի էր նաև կանանց ու երեխաների աքսորը: Ինչո՞ւ, ուրեմն, հիմա մինչև վերջ չկռվել: Մեծ թվով կանայք և երիտասարդ աղջիկներ նույնպես անձնատուր լինելու մասին չէին ցանկանում լսել: Նրանք գերադասում էին կռվելով մեռնել, քան պատվազրկվել և սովամահ լինել: Սակայն նրանք չկարողացան խանգարել հանձնվելուն, որ տեղի ունեցավ տասնվեցերորդ օրը: Վերը նշված հոգևորականն ահաբեկվածներին աղաչում էր՝ չհանձնվել: Նրա խոսքերն ուղեկցվում էին այն պնդումով, որ ռուսներն արդեն Դիարբեքիրում էին, Ուրֆայից ընդամենը երկու օրվա հեռավորության վրա:

14. Դիմադրության դադարեցումը

Հոկտեմբերի 16-ի առաջին կեսին տեղի ունեցավ թուրքերին հանձնվելը: Կանայք և երեխաները, հրամանի համաձայն, պետք է շարվեին որոշակի փողոցներում, առանց ձեռքում որևէ բան ունենալու: Ով ձեռքին որևէ բան ունենար, անմիջապես կգնդակահարվեր, այդպիսին էր գեներալի հրամանը: Անձնատուր լինելու ժամանակ տղամարդիկ, ձեռքերը վեր բարձրացրած, պետք է ուրիշ վայրում կանգնեին: Ես հույս ունեի, որ պարոն Լեսլին և իր ընկերները առաջինը կհայտնվեին, և գնացի ոստիկանություն՝ հնարավորության դեպքում նրանց տեսնելու և նրանց հետ խոսելու համար:

Այնտեղ տանող ճանապարհին ես հանդիպեցի կանանց և երեխաների մի շատ երկար շարասյան: Ա՜խ, դա սարսափելի էր, սոսկալի էր, հուսահատեցուցիչ՝ տեսնել այդ բոլոր երկյուղած, հուսահատ, ինձ լավ ծանոթ դեմքերը և նրանց դիմագծերի մեջ կարդալ հուսահատության անապավեն արտահայտությունը: Հիմա նրանք ավելի, քան երբևէ նախկինում, մահվան զոհեր էին: Ձեռքերը վեր պարզած՝ նրանք ինձ ձայնում էին. «Օ՜, եղբայր Յակոբ, փրկիր մեզ, փրկիր մեզ»: Սակայն ինչ կարող էի ես նրանց համար անել: Ոչինչ: Ես ինքս հուսահատված էի, քանի որ նրանց փրկելու ոչ մի հնարավորություն չկար: Կանանց և երեխաներին սկզբում երեք մեծ շինությունների մեջ փակեցին: Այնտեղ նրանք պետք է սպասեին: Տղամարդկանց երկու մասի բաժանեցին. կարևոր դեմքերին տարան բանտերը, մյուսներին, որոնց հեղափոխականներ չէին համարում, տարան մզկիթների բակերը, որտեղ նրանց խիստ կերպով հսկում էին:

Պարոն Լեսլիին և ձերբակալվածներին, ինչպես նաև նրա հայ աշխատակիցներին ես հանդիպեցի ոստիկանատանը: Լավ հարաբերությունների շնորհիվ, որ ես միշտ ունեցել եմ ոստիկանության հետ, հնարավորություն ունեցա կարճատև խոսել պարոն Լեսլիի հետ: Նա ինձ մի քիչ փող տվեց, որն ուներ իր մոտ: Հազիվ էի ես դա գրպանս դրել, երբ հայտնվեց մի ոստիկան և պահանջեց, որ ես իմ գրպանի պարունակությունը ցույց տամ իրեն, ինչը ես անմիջապես արեցի: Նա կարծում էր, թե պարոն Լեսլին ինձ ատրճանակ էր տվել: Նկատելով, որ առանձնապես ուրախ չէին իմ ներկայությամբ, ես հեռացա: Կառավարության շենքի առջև մի մեծ ամբոխ կար: Հենց նոր երկար, ծածանվող մազերով մի ռուսի էին բերել: Նա ձերբակալված անձ էր, ապրում էր հայկական թաղամասում, և նրան այնտեղ էին գտել: Նա չէր կարողանում քայլել ու խոսել և ավանակի վրա էր բերվել այնտեղ: Այժմ նա մեկնված պառկել էր ոտիկանատան փոքրիկ հրապարակում: Ժանդարմները նրան ոտքերով հարվածում էին: Ես առաջին իսկ պահին ի դեմս նրա մի ծանր հիվանդի տեսա, որը պատկերացում չուներ, թե ինչ էր կատարվում իր շուրջը, և այդ պատճառով միջամտեցի: Դրանից հետո ժանդարմները նրան հանգիստ թողեցին: Հիվանդին հիվանդանոց տեղափոխելու մասին ոստիկանական կոմիսարին ուղղված իմ խնդրանքը բավարարվեց, միայն թե, արդեն գտնվելով մահամերձ վիճակում, նա այլևս այնտեղ չհասավ: Այդ ժամանակ ես փորձեցի գնալ քաղաքի խորքերը, քանի որ պետք է քաղաքի մահմեդական թաղամասում հիվանդների այցելեի: Փողոցներում, սակայն, սոսկալի իրարանցում էր տիրում: Տեսարանները, որոնց ստիպված էի ականատես լինել, սարսափելի էին: Տարբեր կողմերից զինվորների ուղեկցությամբ ծանոթ հայերի էին բերում, որոնց ետևից վայրագ անեծքներ էին ուղղվում, ու, միաժամանակ, քարեր էին նետվում: Ես ավելի ճիշտ համարեցի վերադառնալ հիվանդանոց: Հենց այդ ժամանակ թուրք զինվորներն այնտեղ մի 17 տարեկան աղջկա էին

բերել: Նրա որովայնը խոցված էր հրազենի գնդակով: Քանի որ նա չէր ցանկացել անձնատուր լինել, նրա դեմ միջոցներ էին ձեռնարկել: Թե ինչու զինվորներն աղջկան վերջնականապես սպանելու փոխարեն նրան նախ մեզ մոտ էին քարշ տվել, ես չհասկացա: Ըստ երևույթին աղջիկն իր քաջությամբ նրանց հիացմունք էր պատճառել. նա նաև շատ գեղեցիկ էր: Սակայն նա, բարեբախտաբար, շուտով մահացավ և ազատվեց հետագա տանջանքներից:

Երբ արդեն երեկո էր, իսկ պարոն Լեսլին ոստիկանությունից դեռ չէր վերադարձել, ես, որոշ պարեն վերցնելով, գնացի այնտեղ: Ինչպես և ենթադրում էի՝ նա բանտում էր: Մեծ ջանքերով՝ երաշխավորությամբ, որ ես նրան թույլ չեմ տա փախչել, ինձ հաջողվեց կալանքից ազատել նրան և իմ տուն տանել: Տուն գնալիս մենք անցանք մզկիթի դիմաց գտնվող մի հրապարակով, որը շրջափակված էր զինվորներով: Նրանք մեզ հրամայեցին անմիջապես հեռանալ: Հազիվ էինք հասել 200 մետր հեռավորության վրա գտնվող իմ տանը, երբ մզկիթի հրապարակում մի խումբ հայեր գնդակահարվեցին: Կրակոցներ էին լսվում նաև այլ կողմերից: Պարզ էր՝ Ուրֆայի հայերի կոտորածը սկսվել էր:

15. Հակոբը

Մարդկանց այդ սպանդը, սկսվելով մայրամուտին նախորդող ժամերին, շարունակվում էր մի քանի օր: Մեռածներին, որպես կանոն, գցում էին ընդհանուր գերեզմանների մեջ: Մեր խաղողի այգու ճանապարհին գտնվող մի փոքրիկ տարածքում նույնպես մարդկանց սպանեցին և դիակները թեթևակի ծածկեցին հողով: Հետագայում գարնան հորդառատ անձրևները դուրս հանեցին կիսանեխած դիակների մի մասը: Ավելի ուշ ներքևում՝ հովտում, ամենուրեք կարելի էր ջրի բերած մարդկային ոսկորներ տեսնել:

Զանգվածային այդ կոտորածների ժամանակ, մի օր երեկոյան ժամը տասին իմ դուռը թակեցին: Ես արդեն պառկել էի անկողնում: Դռան ապակու միջով, գիշերային մթության մեջ ես մարդկային մի կերպարանք տեսա, որը մերկ էր: Բացեցի դուռը: Իմ առջև մի արնաշաղախ մարդ էր կանգնած. «Օ, Յակոբ էֆենդի, Աստծու սիրույն, խղճա ինձ, մի փոքր տեղ տուր ինձ, որտեղ կարող եմ մեռնել»: Դա հիվանդանոցի բեռնակիր, ցրտից դողացող Հակոբն էր: Նրա ողջ դեմքը վերքերով էր ծածկված: Ես կարիք չունեի նրան հարցնելու՝ ինչ էր պատահել: Կասկածից դուրս էր, որ նա այդ երեկո մեր տան անմիջական մոտակայքում մահվան գիրկն ուղարկվածներից մեկն էր, որը Աստծո կամքով խուսափել էր մահից: Նրան կարծելով մեռած՝ թողել էին ընկած, բայց նա միայն ծանր վիրավորվել և ուշագնաց էր եղել: Ի՞նչ պետք է ես անեի: Այդ պահին, իրոք, չգիտեի: Հենց այդ նույն

օրը թուրք գեներալն ինձ սպառնացել էր, որ եթե ես հետագայում էլ հայերին խնամեմ, նա ինձ հետ կվարվեր նույն կերպ, ինչպես հայերի հետ: Խեղճին ես մի փոքրիկ սենյակ տարա և ծածկոցով ծածկեցի: Այնուհետև ետ շտապեցի ննջարան, որտեղ իմ վախեցած կինն արդեն ինձ էր սպասում: Հավատացեք, եթե ասեմ, որ այդ օրերին, երբ օդում ամենուրեք գնդակներ էին սուլում, և բոլոր անկյուններում մահն էր դարանակալել, կանայք մշտապես խորը տագնապ էին ապրում, երբ ամուսինը նույնիսկ միայն ոտքը դռնից դուրս էր դնում: Այս անգամ, սակայն, երբ ես այդպես շփոթված էի, կինս էր, որ ինձ դարձյալ ուշքի բերեց: «Խեղճը վիրավոր է, իսկ բժիշկը պատերազմի ժամանակ պետք է հոգ տանի բոլորի մասին՝ բարեկամների, ինչպես նաև՝ թշնամիների: Այս մարդը բարեկամ չէ: Պարզապես քո պարտքն է նրան հիվանդանոց ընդունել»: Նա իրավացի էր: Ուստի ես հագնվեցի և խեղճին տարա մեր տնից բավականին հեռու գտնվող հիվանդանոց: Այնտեղ մենք վիրակապեցինք նրա բազմաթիվ վերքերը: Նա կրկին ապաքինվեց:

16. Թուրքական խոստումները

Մենք՝ եվրոպացիներս, բոլոր կանանց, որոնց թուրքերը տարել էին երեք իջևանատները, ինչպես նաև բանտում գտնվող տղամարդկանց ամեն օր մի քիչ ուտելիք էինք տանում: Այն յոթ տղամարդիկ, որոնց գործարանի շենքից էին տարել և գեներալի հրամանով բանտ նետել, իրենց ուտելիքը նույնպես մեզնից էին ստանում: Ընդհանուր անձնատրման ժամանակ, սակայն, այդ յոթը տեղափոխվեցին այսպես կոչված պետրոլիում-իջևանատունը, որը քաղաքից դուրս էր գտնվում: Այնտեղ նույնպես կարողանում էինք նրանց սնունդ ուղարկել: Մենք այդ մարդկանց հետ, սակայն, չէինք կարող տեսակցել: Մի առավոտ ես անձամբ տարա սնունդը: Այդ առիթով ինձ հաջողվեց նրանց բոլորի հետ տեսակցել և խոսել: Սարսափելի տեսք ունեին նրանք, հազիվ ճանաչելի: Նրանք պատմեցին, որ իրենց հաճախակի տանջում էին՝ ոտքերին ճիպոտի հարվածներ հասցնելով: Քահանան՝ մեր որբերի խնամակալը, ինձ ցույց տվեց իր խիստ ուռած ձեռքը, որի վրա մեծ թարախապալար էր առաջացել: Ահա այսպես էր վարվում թուրք գեներալն այն մարդկանց հետ, որոնց մասին նա գերմանական գործարանի ղեկավարին խոստացել էր, որ նրանց հետ ոչինչ չի պատահի: Հետդարձի ճանապարհին ես փորձեցի այցելել գեներալին. արտահերթ ընդունվեցի և խնդրեցի նրան մեր որբերի խնամակալին, որը պետք է վիրահատվեր, ինձ հանձնել, որպեսզի նրան տանեի հիվանդանոց. չէ՞ որ նա խոստացել էր այդ մարդկանց խնայել:

Նա, սակայն, հարձակվեց ինձ վրա. «Ի՞նչ, Դուք համարձակվել եք այդ

դավաճանների հետ շփվել: Ո՞վ է Ձեզ դրա համար թույլտվություն տվել: Եթե մեկ անգամ էլ անեք դա, ես Ձեզ նույն վերաբերմունքին կարժանացնեմ, ինչպես այդ մարդկանց: Ես հիմա հրաման կարձակեմ, որ Ձեզ հնարավորություն չտրվի նրանց նորից այցելել»:

Այդ մարդու խոսքերը, որի քմահաճույքին էր մատնվել Ուրֆայի բնակչությունը, հուսադրող չէին: Դա նաև վերջին առավոտն էր, որն ապրեցին այդ յոթը: Օրվա երկրորդ կեսին նրանց բոլորին ռազմադաշտային դատարանի վճռով գնդակահարեցին մի բլրի վրա: Գեներալը հարկ չհամարեց անգամ այդ մասին տեղեկացնել պարոն Էքարտին: Վերջինս կատարված մահապատժի մասին տեղեկացավ մի թուրք բժշկից, որը հաճախ լինում էր պարոն Էքարտի գերմանական հաստատությունում: Բժիշկը հանդես էր եկել որպես դիազննող և զոհերի՝ նրա կողմից կատարված նկարագրությունից գերմանացին կարողացավ եզրակացնել, որ նրանք իր այն յոթ աշխատողներն էին, որոնց համար նա խոստում էր ստացել թուրք գեներալից և որի հանդեպ վստահություն տածելու հարցում որևէ տարակույս չէր ունեցել:

17. Պարոն Լեսլիի մահը

Ամերիկյան միսիոներ Ֆ. Հ. Լեսլին իմ լավագույն ընկերն էր: Նա երիտասարդ միսիոներ էր, Թուրքիա՝ Ուրֆա էր եկել միայն երեք տարի առաջ: Մենք երկուսս միմյանց ամեն բանում շատ լավ էինք հասկանում: Ես հաճախ կարողանում էի իմ փորձառությամբ և գիտելիքներով օգնել նրան: Դրա փոխարեն երբ ես գարնանը բծավոր տիֆով ծանր հիվանդացած՝ պառկած էի, նա եղել էր իմ կնոջ ամենահավատարիմ օգնականը: Նա այդ ժամանակ սեփական նախաձեռնությամբ, երբ մեր հայկական բժիշկը չէր կարողացել հասկանալ իմ վիճակը, հայտնի միսիոներական բժիշկ դր. Շեպարդին Այնթապից ինձ մոտ էր բերել: Մեր միջև միայն մեկ կետում տարաձայնություն կար՝ մեր քաղաքական կողմնորոշումները տարբեր էին. ես գերմանացիների բարեկամն էի, նա՝ Անտանտի: Սակայն դրա համար մենք երբեք միմյանց չհակադրվեցինք: Եվ ինչո՞ւ պիտի հակադրվեինք:

Քանի որ նրա երիտասարդ կինն առաջին ծննդաբերությանն էր սպասում, նա կնոջը գարնանը Այնթապ ուղարկեց, այնտեղ մի միսիոներ բժշկուհի կար: Այսպիսով նա պետք է միայնակ ապրեր այն բոլոր սարսափները, որոնք Ուրֆայում տեղի ունեցան: Աշխատանքի ժամանակ միայն հայ օգնականները կանգնեցին նրա կողքին: Հունիսին մոտավորապես 500 քաղաքացիական ներկալված անձինք եկան Ուրֆա: Հալեպի ամերիկյան հյուպատոսն այդ բոլոր մարդկանց հոգսը հանձնարարեց պարոն Լեսլիին: Մի ահռելի աշխատանք: Բարեբախտաբար նրան երկու օգնականներ կցվեցին, բայց դրանով հանդերձ չափազանց մեծ էր նրա գերծանրաբեռնվածությունը: Ես հուլիսի սկզբին Հալեպից նրան բերեցի հյուպատոսության ցուցանակը և դրոշակը, որոնք ինձ տվեց ամերիկյան հյուպատոսը: Նամակում, որը հյուպատոսը տվեց ինձ պարոն Լեսլիին հանձնելու համար, ասված էր, որ պրն. Լեսլին նշանակված է ամերիկյան հյուպատոսական գործակալ, և որ Բարձր Դուռը Ուրֆայի կառավարությանն այդ մասին արդեն տվել էր անհրաժեշտ ցուցումները: Պրն. Լեսլին պետք է արդեն հաջորդ կիրակի դրոշը պարզեր:

Հաջորդ կիրակի վաղ առավոտյան իրոք ամերիկյան շենքի վրա ծածանվեց աստղազարդ դրոշակը, իսկ դռան վրա կախված էր հյուպատոսության ցուցանակը: Այնուհանդերձ այդ շքեղությունը երկար չտևեց: Կեսօրին մոտ հայտնվեց ոստիկանությունը և պրն. Լեսլիից պահանջեց անմիջապես վայր իջեցնել դրոշը, քանի որ այն կանգնեցնելու թույլտվություն գոյություն չուներ: Ոչինչ չէր մնում անել, քան՝ ենթարկվել:

Այդ օրերին Ուրֆայով մի ձերբակալված ամերիկացի էր տեղափոխվել, միսիոներ բժիշկ դր. Սմիթը՝ Դիարբեքիրից: Այդ պարոնը Դիարբեքիրում հայերի աքսորի դեմ իր միջամտությամբ ակներևաբար իրեն անհաճո անձ էր դարձրել, ինչի պատճառով թուրքերը նրան դեպի Բեյրութ՝ ծովափ տեղափոխեցին: Մի պահ միայն պարոն Լեսլին կարողացավ ոստիկանության ներկայությամբ խոսել ձերբակալվածի հետ:

Արդեն մայիսին մեծ ցնցում ապրելուց հետո պարոն Լեսլին կորցրել էր իր հանգիստը: 1915 թ. մարտին Ուրֆայում երկու ամերիկացիներ էին հայտնվել: Հալեպի ամերիկյան հյուպատոսի ցանկությամբ պարոն Լեսլին մի բաց փոստային բացիկով հայտնել էր հյուպատոսին հյուրերի ժամանման և մեկնման մասին: Մայիսին հյուպատոսը գրեց նրան, որ նա միայն այդ բացիկի պատճենն էր ստացել, բնօրինակը փոստը պահել էր:

Օգոստոսի սկզբին Ուրֆա եկավ ամերիկյան փոխհյուպատոսը: Ես արդեն հույս ունեի, որ այժմ պարոն Լեսլիի համար ավելի հեշտ կլինի: Օգոստոսի 19-ի կոտորածից հետո, սակայն, փոխհյուպատոսը կրկին Հալեպ տեղափոխվեց՝ աշխատանքի ողջ ծանրությունը դարձյալ թողնելով միայն պրն. Լեսլիի վրա:

Սեպտեմբերին պարոն Լեսլին արդեն ցույց էր տալիս ախտանշաններ, որոնք հետապնդման մտագարության էին հանգեցնում: Այդ պատճառով ես նրան ստիպեցի Այնթապ գնալ այնտեղ այդ ընթացքում ծնված իր զավակին և նրա երիտասարդ մայրիկին կրկին տեսնելու համար: Նա իմ խորհրդով հրաժարվել էր ներկալվածների հետ աշխատանքից: Ինձ մեծ դժվարությամբ հաջողվեց դա նրան համոզել: Քանի որ ես մտադիր էի որբանոցում օրական ընդունելության միայն մեկ ժամ ունենալ, նրա ցանկությամբ որբանոցի դրամարկղի պարունակությունը տարա իմ տուն, որտեղ այն ինձ ավելի պաշտպանված էր թվում: Ընկերոջս, սակայն, ես ստիպված էի խոստանալ ուղեկցել մինչև Այնթապ, քանի որ նա վախենում էր, որ

ճանապարհին թուրքերն իրեն կսպանեին: Թեև իմ ուղեկցությունն իրոք ավելորդ չէր, սակայն ես մտածում էի, որ երբ մենք հեռանանք Ուրֆայից, այդ խեղճն արդեն հանգստացած կլինի, և ես կկարողանամ կրկին արագ Ուրֆա վերադառնալ ու թողնել, որ նա միայնակ շարունակի ճանապարհը: Ինչպես արդեն ասացի, սեպտեմբերի 30-ին ես այդ հիվանդ մարդուն ցանկացա քաղաքից դուրս տանել: Ցավոք դա ինձ արդեն չհաջողվեց. դարպասների մոտ գտնվող պահակակետում դա մեզ արգելվեց:

Այդուհանդերձ դրանից հետո ես ևս մեկ անգամ առանց սայլի, ոտքով շրջանցեցի այն բարձունքը, որի վրա ամերիկյան միսիոներական հաստատությունն էր գտնվում, այցելեցի նրան: Ես խնդրեցի նրան իմ ուղեկցությամբ հեռանալ: Միայն թե հիմա պրն. Լեսլին այլևս հեռանալու մասին ոչինչ չէր ցանկանում լսել:

«Դու չես հասկանում: Արդեն սկսվում է, հարցը վերաբերում է միասին ապրելուն կամ միասին մեռնելուն: Մի՞թե ես կարող եմ, մի՞թե ես իրավունք ունեմ այժմ իմ որբերին միայնակ թողնել: Դու դա կանե՞ր: Ո՛չ, դու նույնպես այդ չէիր անի: Ինչո՞ւ ես ուրեմն դու դա ինձնից պահանջում: Ես կապրեմ կամ կմեռնեմ նրանց հետ»:

Անշուշտ, ես կարող էի նրան հասկանալ, բայց չէ՞ որ նա հիվանդ էր: Այնուամենայնիվ ես ստիպված էի հրաժարվել անհնարինն անելուց: Դրանից հետո ես 16 օր այլևս չտեսա այդ խիզախ մարդուն:

Այդ օրերին Հալեպի ամերիկյան հյուպատոսը հեռագրեց ինձ, թե արդյոք ես չէ՞ի ցանկանա ստանձնել ներկալվածների համար կատարվող աշխատանքը: Անհրաժեշտ օգնական ուժերը չէին պակասի ինձ: Ես երկար մտածելու կարիք չունեի, քանի որ դա անհնար էր: Բավական էր հենց այն, որ պարոն Լեսլին արդեն այդ աշխատանքի զոհն էր դարձել: Ընդհանրապես ինչպե՞ս կարող էր պրն. Էդելմանը՝ փոխհյուպատոսը, որն այնուամենայնիվ օգոստոսի սկզբին Ուրֆայում էր, կրկին հեռանալ քաղաքից: Արդյոք նրա պարտականությունը չէ՞ր մնալ և անձամբ հունի մեջ գցել այդ աշխատանքը: Ի՞նչ ուներ նա անելու Հալեպում, որտեղ մի հյուպատոս արդեն կար: Ես այդ ժամանակ նրան, իրավացի թե հանիրավի, երկչոտության մեջ էի մեղադրում: Գետինը նրա համար շատ էր շիկացել, և նա արագ տեղափոխվել էր Հալեպ, որտեղ իր համար ավելի անվտանգ էր, քան Ուրֆայի կախարդական հովտում: Եվ հակիրճ հեռագրեցի. «Imposible» (Անհնար է):

Հասկանալի էր, որ պաշարման 16 օրերը պարոն Լեսլիի նյարդերն ավելի ծանրաբեռնեցին: Երբ ես նրան ոստիկանությունում կրկին տեսա, սարսափեցի նրա մոլորված հայացքից, չնայած նման բան ես առաջ էլ էի տեսել: Ինչպես արդեն ասվել է, հայերի անձնատուր լինելուց մի քանի օր հետո Լեսլին իմ հյուրն էր: Ես համոզելու ողջ հմտությունս գործադրեցի, հազար հիմնավորում բերեցի վանելու համար նրա երկյուղը, թե թուրքերն իրեն կկախեն: Եթե ես կարողանա՞յի նրան անմիջապես Այնթապ ուղարկել... Դա,

սակայն, հնարավոր չէր, որովհետև այժմ նա, այնուամենայնիվ, թուրքերի բանտարկյալն էր՝ ամեն օր նա պետք է գնար թուրքական ռազմական դատարան: Եթե առավոտյան նա որոշ չափով հանգստացած էր դուրս գալիս, ապա ամեն անգամ կրկին վերադառնում էր լիովին կոտրված:

Մի անգամ կեսօրից հետո էր, երբ ինձ կանչեցին ռազմական դատարան: Ես պետք է որպես վկա ներկա լինեի հայկական գույքի հանձնմանը, որը գտնվում էր պարոն Լեսլիի մոտ: Այստեղ թուրքերի ձեռքն ընկավ մոտ 2000 ոսկե ֆունտ և մոտավորապես նույն արժեքի զարդեղեն: Հանձնման ժամանակ ես տեսա, թե ինչպես ոսկին հաշվող մի սպա մի ոսկյա կտոր հրեց այն գորգի տակ, որի վրա մենք նստած էինք: Հազիվ էինք, սակայն, մենք ավարտել հաշվելը, երբ գեներալը ներս մտավ և տեսավ այդ շողացող ոսկու կտորը: Այժմ դա նույնպես պետք է դրվեր պարկի մեջ, որն այնուհետև կնքվեց:

Երեկոյան Լեսլիի հետ տուն գալով՝ ես կրկին գործադրեցի իմ ողջ հռետորական արվեստն այդ կոտրված մարդուն արիություն ներշնչելու համար: Իրեն վստահված այդ ամբողջ թանկարժեք հայկական ունեցվածքի հանձնման հետևանքով էր նա այսօր այդքան ճնշվել:

Հոկտեմբեր ամսի վերջին մի երեկո պրն. Լեսլին ինձանից ստրիխնին խնդրեց այն պատճառաբանությամբ, որ ինքը չի ուզում, որ թուրքերն իրեն կախեն: Միայն երկար համոզելուց հետո, որի ընթացքում ես նրան հիշեցրեցի իր երիտասարդ կնոջ ու երեխայի մասին և մատնանշեցի իր միսիոների կոչումը, որը չէր համատեղվում նման մտքերի հետ, ինձ հաջողվեց նրան կրկին որոշ չափով հանգստացնել: Առավել ևս, որ կախաղան բարձրացվելու մտքով անհանգստանալու որևէ հիմք չկար: Պրն. Լեսլիի դեմ ռազմական դատարանի հետաքննության ընթացքում ես մշտապես տեղյակ էի գործերի ընթացքին, որովհետև ռազմական դատարանում մի ընկեր ունեի: Նա ինձ ասում էր, որ պրն. Լեսլիին չէին կարող որևէ վնաս պատճառել:

Հոկտեմբերի 30-ին պարոն Լեսլին կրկին սովորականի պես եղել էր ռազմական դատարանում: Արդեն օրեր շարունակ դատարանը տանջում էր նրան մի դրամապահարանի բանալու պատճառով, որը նա, որպես հայկական ունեցվածք, նույնպես ստիպված էր եղել հանձնել թուրքերին: Հարցմանը, թե արդյոք նրա՞մ մոտ է բանալին, նա տվել էր անորոշ պատասխան, որ այլևս չի հիշում: Նա հանձնեց բոլոր բանալիները, որոնք իր մոտ ուներ, բայց ոչ մեկը չհամապատասխանեց: Սակայն քանի որ, այդ դրամապահարանը ամենահարուստ հայ վաճառականին էր պատկանում, կառավարությունը ձգտում էր շուտափույթ պարզել, թե որքա՞ն գումար կար դրա մեջ: Այդ պատճառով էին նրան անդադար չարչարում:

Ահա այդ առավոտ դժբախտությունը կամենում էր, որ ձիերի շուկայում մի կախաղան պատրաստվեր, որից արդեն կեսօրից հետո մի խումբ հայեր պետք է կախվեին: Պրն. Լեսլին իր տուն վերադառնալիս ստիպված

էր անցնել այդ կախաղանի մոտով: Ըստ երևույթին դա խեղճին վերջին հարվածը հասցրեց: Դեռ նախքան նա իմ տանը կհասներ, իմ իննամյա որդին նրան տեսավ փողոցում վայր ընկնելիս: Նա անմիջապես կանչեց մորը, որը արագ շտապեց այնտեղ: Հավանաբար պրն. Լեսլին նրան դեռ ճանաչել էր, քանի որ նա այնպես էր նայել նրան, կարծես ինչ-որ բան էր կամեցել ասել, բայց նույն պահին կորցրել էր գիտակցությունը: Նրա բերանից կարբոլի ուժեղ հոտ էր գալիս, կզակն այրված էր այդ թթվով: Կինս գիտակցությունը կորցրածին մի տղամարդու օգնությամբ արագ հիվանդանոց բերեց, որտեղ մենք անմիջապես քացախի լուծույթով ողողեցինք նրա ստամոքսը: Այնուհանդերձ նա նորից գիտակցության չեկավ, և կես ժամ անց իմ ընկերը դադարեց շնչել: Ոստիկանությանը տեղեկացրեցինք այդ մասին: Ոստիկանը ներկայացավ ռազմական դատարանի մի անդամի հետ: Պրն. Լեսլիի գրպանում գտնվեց հետևյալ գրությունը անգլերեն լեզվով, որը ես այստեղ թարգմանաբար հաղորդում եմ .

«Սրանով ես ցանկանում եմ տեղեկացնել, որ իմ մահվան մեջ իմ ընկերներ պարոն Էքարտը և առանձնապես պարոն Կյունցլերը որևէ մեղք չունեն: Թույնը ես անձամբ եմ վերցրել իմ որբանոցի դեղատնից:

Ուրֆա, 30, հոկտեմբերի, 1915թ:

Ֆրենսիս Հ. Լեսլի»:

Դժբախտություններով լի այդ օրերին դա ինձ համար մի նոր, իսկապես ամենածանր հարվածն էր: Նա ինձ համար սիրելի ընկեր էր եղել, եղբայր՝ իսկական իմաստով: Այժմ նա դարձել էր իր ժամանակի զոհը, իսկ ես պետք է նրանից երկար ապրեի: Իմ աղոթքները չէին կարողացել նրան փրկել: Նա չափազանց փխրուն էր այդ դաժան երկրի համար:

Երիտասարդ կնոջը ես պետք է դեպքի մասին հայտնեի: Ինչպե՞ս կտաներ նա հարվածը: Նա, որն այժմ իր երեք տարեկան դստրիկի հետ միայնակ մնաց:

Հոկտեմբերի 30-ին կեսօրից հետո Լեսլին պետք է հողին հանձնվեր: Բողոքական գերեզմանատանը ես նրա համար գերեզման էի փորել տվել: Բոլոր եվրոպացիները, նաև շատ ներկայվածներ եկան նրա համեստ հուղարկավորությանը: Դրա սկսվելուց քիչ առաջ մի ոստիկան եկավ և արգելեց ինձ մահացածին թաղել գերեզմանոցում, քանի որ այն այժմ կառավարության սեփականությունն էր: Իմ առարկությունը կառավարությանը ոչ մի արդյունք չտվեց: Գեներալը, որը նաև նահանգապետն էր, հետևյալ կերպ պատասխանեց. «Սա ինչ հանդգնություն է: Դուք պետք է պարզապես ենթարկվեք մեր հրամանին: Կարծում եք, որ Ձեր՝ այստեղ հայտնվելը կարող է փոխել հրամանը»:

Ինձ ոչինչ չէր մնում անել, քան քաղաքից դուրս քարքարոտ անապատում շտապ մի նոր գերեզման փորել տալ և իմ ընկերոջ աճյունն ամփոփել այնտեղ:

18. Ռազմական դատարանի հարցաքննությունները

Այս օրերին ես պետք է ռազմական դատարանի մի հետաքննության մասնակցեի: Երբ հունիսին հիվանդանոցից տարան մեր դեղագործին և կալանավորեցին, նրա եղբայր Արմենակը նույնպես պետք է նրա ետևից բանտ տարվեր: Քանի որ, սակայն, նա այդ օրերին թոքային ծանր հիվանդությամբ պառկած էր գերմանական հիվանդանոցում, առժամանակ հրաժարվեցին նրան ձերբակալելուց: Ամռան ընթացքում նա արդեն առողջացել էր: Քանի որ այդ ընթացքում քաղաքում իրադրությունը հայերի համար օրեցօր աննպաստ էր դառնում, ես նրան պահեցի հիվանդանոցում, չնայած նա իրականում այլևս դրա կարիքը չուներ: Ձերբակալված հայերի ցուցմունքները եղել էին ի վնաս Արմենակի, այնպես որ մի առավոտ ոստիկանությունն ուզում էր նրան ձերբակալել, քանի որ պարզվել է, որ այդ մարդն ապստամբության բոնկման գիշերը փախել էր հիվանդանոցից և ապստամբությանը մասնակցելու համար գնացել էր քաղաքի հայկական թաղամաս: Ավագ քույրն այդ փախուստի մասին ինձ չէր տեղեկացրել: Այդպիսով ես անգիտության մեջ էի: Այդ դեպքը դատարանում ինձ խիստ անախորժ դրության մեջ դրեց: Այնուամենայնիվ ես արդեն շատ երկար էի գտնվում Թուրքիայում, որպեսզի նման բաների պատճառով չափազանց շատ անհանգստանայի. իմ կաշին ավելի հաստ էր, քան իմ մահացած ընկեր Լեսլիինը:

Արմենակը նրանցից մեկն էր, ով անձնատուր լինելու ժամանակ չէր հանձնվել: Երբ պարոն Էքարտը հայերի անձնատուր լինելուց չորս օր անց ամերիկյան հաստատություն էր գնում, հանկարծ այս Արմենակը մի թաքստոցից դուրս էր եկել, ընկել նրա ոտքերը և օգնություն խնդրել: Պարոն Էքարտը սարսափել էր, երբ մի զինվոր, որը տեսել էր Արմենակին, գերմանացիների աչքի առաջ մի գնդակով նրան գետին էր տապալել:

Ռազմական դատարանի հարցաքննությունները հետագայում պարզել էին, որ Տեր-Գարեգինը՝ մի հայ վարդապետ, եվրոպացիների մոտ էր թաքնվում: Այդ պատճառով ես կրկին դատարան կանչվեցի: Այն հարցին՝ արդյոք ես Տեր-Գարեգինին ինձ մոտ եմ պահում, ես հերքողական պատասխան տվեցի: Մյուս հարցին, սակայն, թե արդյոք նա գերմանացիների կամ դանիուի օրիորդ Եփփեի մոտ է գտնվում, ես պատասխանեցի, որ դա ինձ հայտնի չէ: Դրանից հետո գերմանացի սպան՝ թուրքական ծառայության մեջ գտնվող գեներալ կոմս Վոլֆսկելի աղյուտանտը, պետք է պարոն Էքարտին, օրիորդ Եփփեին և ինձ գեներալի հրամանով հարցաքններ և մեզ ստիպեր երդվել, որ մենք չգիտենք, թե որտեղ է գտնվում Տեր-Գարեգինը: Երդումը մենք կարողացանք փոխարինել ազնիվ խոսքով՝ հայտնելով, որ չգիտենք, թե որտեղ է ներկայումս գտնվում Տեր-Գարեգինը:

Այս բանակցություններից քառորդ ժամ անց կոմս Վոլֆսկելը մեկնեց

Հալեպ: Նա հիվանդ ձևացավ: Իրականում երբ նա տեսավ, թե ինչ եղանակով էին գործում հայերի դեմ՝ առանց մեղավոր կամ անմեղ լինելը հաշվի առնելու, Ուրֆայում տիրող իրավիճակը, որի մեջ նա ներգրավված էր իր ծառայողական պարտականությունների բերումով, նրան անհաճո էր դարձել: Հաջորդ օրն, այնուամենայնիվ, օրիորդ Եփփեի տանը ևս մեկ խուզարկություն կատարվեց: Այդ տնային խուզարկության ժամանակ ոստիկանությունը պետք է հայտնաբերեր այն բազմաթիվ մարդկանց, որոնք դեռ օրիորդ Եփփեի տանն էին գտնվում, և որոնք, իհարկե, բոլորը հայեր էին: Հաջորդ օրը անձամբ եկավ նաև դատարանի նախագահը և գրանցեց այն բոլոր հայերի անունները, ովքեր դեռ մեր տներում էին:

19. Աքսորը

Միայն այն բանից հետո, երբ տղամարդիկ մզկիթների բակերում և բանտերում լրիվ ոչնչացվել էին, պետք է սկսվեր կանանց և երեխաների աքսորը: Նրանց հոգեկան տառապանքն այդ ընթացքում բարձրակետին էր հասել: Հնարավոր չէ այդ ամենը բառերով արտահայտել: Իմ կինը, որն ամեն օր գնում էր այդ ճամբարները, աննկարագրելի բաների էր ականատես լինում: Առաջին օրերին ես ամեն օր դեռ պաշարման ժամանակ վիրավորվածներին օգնելու համար այցելում էի այդ ճամբարները: Երբ ես մի անգամ կրկին այնտեղ հացով երևացի, կանայք ձայնեցին ինձ. «Դու հա՞ց ես բերում մեզ: Մե՞զ, մահվան զավակների՞ս: ՈՉ, հաց մի բեր մեզ, այլ թույն, շատ թույն: Ախ, թույլ մի տուր, որ մենք աքսորվենք, հոգ տար, որ կարողանանք այստեղ մեռնել: Դու հասկանում ես, թե ինչ է նշանակում անապատ քշվել»:

Ուրիշ կանայք ինձ թույնի սրվակներ էին ցույց տալիս և ուզում էին իմանալ, թե դրանից որքան ընդունեն: Նրանք չէին ուզում չափազանց շատ ընդունել, որպեսզի եղած թույնը հնարավորինս շատերին բավականացներ:

Ու էլի... կանայք իրենց նորածինների հետ: Կաթի աղբյուրները վաղուց ցամաքել էին, այլ սնունդ չկար: Միայն քիչ թվով մայրեր քաջություն ունեցան ջուրը նետել իրենց երեխաներին, որպեսզի նրանք արագ կերպով փրկվեին: Այդպես շարված էին նրանք բակում, շարք առ շարք: Այնտեղ նրանք ճչում էին այնքան երկար, որքան կարողանում էին: Երբ ճիչը դադարում էր, նրանք դեռ մի պահ ծանր հևում էին, մինչև մահը վրա էր հասնում ու ազատագրում նրանց: Ջրի հոսանքը առավոտյան լի էր դիակներով՝ կանայք և կույսեր, ովքեր ուզում էին այս կերպ խուսափել աքսորից: Ի վերջո կառավարությունը այդ հնարավորությունից ևս զրկեց նրանց:

Իսկ մահվան դատապարտվածների աքսորը... Որևէ գրիչ կարո՞ղ է նման որևէ բան նկարագրել: Կանայք չեն ուզում դուրս գալ փողոց: Ժանդարմները մտրակի հարվածներով նրանց դուրս են քշում: Դրսում՝ փողոցում, մի կին իրեն վայր է նետում: Նա այլևս չի ուզում վեր կենալ: Ժանդարմը պետք է նրան տեղում սպանի: Նա սվինով խոցում է նրան. կինը դեռևս չի ուզում վեր կենալ, կրկին խոցվում է, բայց ոչ այնպես, որ մեռնի, մնում է վիրավորված: Արյունը հոսում է վերքերից: Ի վերջո նա, այնուամենայնիվ, վեր է կենում ու գնում: Կինը խելագարվել է: Նա վազում է բաց մազերով, երգում և ծիծաղում է:

Այնտեղ մի այլ կին փորձում է փախչել մի կողմնակի նրբանցքով: Մի ժանդարմ նկատել է նրան, գնում է նրա հետևից: Մի կրակոց, նա ազատված է, նա ավելի բախտավոր է, քան նրա քույրերը:

Քաղաքի առջև կանգնած են շատ մահմեդականներ: Որոշ հայուհիներ իրենց ճանաչել են տալիս, մահմեդականները նրանց վերցնում են և անհետանում նրանց հետ:

Ահա մի հայ վաճառականի տասչորսամյա աղջիկն է փախչում: Մի թուրք ընկել էր նրա ետևից, բռնում է նրան: Սակայն աղջիկը դիմադրում է. նա ավելի հաճույքով ուզում է անապատում մեռնել, քան մուսուլմանի տուն գալ: Մի ժանդարմ է մոտենում, նա չի ուզում օգնել թուրքին, բայց այդ պահին թուրքի ձեռքում մի ոսկեդրամ է առկայծում: Ժանդարմը պատրաստակամ է: Դիմադրող աղջիկն անհետանում է թուրքի հետ: Նրան հարեմում տխուր ճակատագիր է սպասվում:

Թե բոլոր այդ դժբախտների հետ ճանապարհին ինչ է պատահել, ես արդեն ասել եմ: Կասկած չկար, որ Ուրֆայի բոլոր բնակիչները (դա ծրագիր և ցանկություն էր) պետք է անապատում մեռնեին: Այդ պատճառով նրանց այնքան երկար էին այս ու այն կողմ տանում, մինչև այլ վայր տեղափոխելու համար ոչ մեկը չէր մնում:

Մինչև աքսորի ավարտը մեր տներից միևնույն օրը և միևնույն ժամին տարան մեր բոլոր հովանավորյալներին, չնայած մենք դեռ շարունակում էինք հույս փայփայել, որ նրանց մեզ [մոտ] կթողնեն: Մարդիկ նախ դուրս հանվեցին, և այդ ընթացքում մեզ մոտ ևս մեկ անգամ խուզարկություն կատարվեց: Քանի որ ես կարծում էի, թե իմ բոլոր պաշտպանյալները դրսում էին, առանց որևէ բան կռահելու խուզարկություն կատարող ոստիկանների ներկայությամբ բացեցի մի հագուստի պահարանի դուռը, և ահա՛, մի երիտասարդ հայուհի դուրս ցատկեց: Նա ինքն էլ ստիպված էր ծիծաղել: Իհարկե, նրան ևս պիտի տանեին:

Իմ իննամյա որդին դրսում լաց լինելով՝ ոստիկաններից խնդրում էր չտանել իր «տատիկին»: Նա համբուրում էր ոստիկանության պետի ձեռքը, որը ևս հուզվել էր: Բայց դա ոչնչով չօգնեց՝ ծեր կինը պետք է նրանց հետ գնար: Ո՞վ էր այդ տատիկը: Նա 65-ամյա մի ծեր կին էր, այրի կին, որն արդեն տասնվեց տարի մեզ մոտ էր ծառայում: Իմ ընտանիքի անդամների համար, սակայն, նա ավելին էր, քան սպասուհին: Նա համարվում էր

և նաև իրեն զգում էր որպես երեխաների տատիկ: Հաջորդ առավոտյան իմ կինը գոնե այդ ծեր կնոջ մնալու համար թույլտվություն ձեռք բերելու նպատակով ևս մեկ անգամ գնաց պարետի մոտ: Պարետը, որն արդեն ճամբարներից ընտրել էր ամենագեղեցիկ աղջիկներին, որոնց նա չէր կամեցել անձամբ իր համար պահել, այլ նվիրել էր սպաներին, պատասխանեց իմ կնոջը. «Տուր ինձ նրա դստերը, և դու կարող ես նրան տանել»: Դուստրը նույնպես դրսում՝ ճամբարում էր: Սակայն իմ կինն այդ հարցում չէր կարող որոշում կայացնել:

Երբ կանայք գնում էին, ես նրանց մխիթարեցի՝ ասելով, որ նրանք տարվում էին միայն ոստիկանությանը ներկայացվելու համար և արդեն հաջորդ օրը կկարողանային կրկին վերադառնալ: Սակայն ծեր Մարիամը՝ բարի «տատիկը», ասաց. "Oghlum, daha gelmem!" (Որդի՛ս, ես այլևս չեմ վերադառնա): Նա թուրքերին ավելի լավ էր ճանաչում:

Մեր տներից դուրս բերված այդ բոլոր մարդիկ, խոսքը կանանց և երեխաներին մասին է, պետք է աքսորվեին: Իսկ մի խումբ տղամարդիկ, որոնցից շատերին պարոն Էքարտն էր պահել, չսպանվեցին ինչպես մյուսները, այլև ուղարկվեցին Հալեպ, որտեղ նրանք պետք է զինվորներ դառնային:

Ծեր Մարիամը, սակայն, գիշերը կրկին վերադարձավ: Նա իրավունք էր ստացել այլ կանանց հետ միասին մի սայլ վարձել: Ոսկին օգնել էր, և կաշառված սայլապանը քաղաքի մոտակայքում նրանց կրկին վայր էր իջեցրել: Մարիամն իր դստեր հետ կեսօրից առաջ դարձյալ հայտնվեց իմ տանը: Սակայն հազիվ էին նրանք տուն մտել, երբ ոստիկանը կրկին եկավ նրանց հետևից: Կանայք փախան դեպի հետևի դուռը և փորձեցին մոտակա այգու տնակում թաքնվել: Քանի որ, սակայն, ոստիկանը տեսել էր նրանց մեր տուն մտնելիս, սկզբում նա խուզարկեց տունը, հետո մոտակա այգին և գտավ նրանց: Երրորդ անգամ նրանք չվերադարձան:

20. Անախորժություններ

Այդ օրերին գեներալը նաև մի այցելություն կատարեց մեր գերմանական հիվանդանոց: Նա կտրականապես տեղեկություններ պահանջեց առանձին հիվանդների հիվանդությունների և անունների մասին: Ակնհայտորեն նա լսել էր, որ այն դեռ լի էր հիվանդներով, որոնց թվում, անշուշտ, նաև հայեր կային: Եվ ահա նա հայկական թաղամասի վրա գրոհելու ժամանակ վիրավորված մահմեդական այցելուների կողքին տեսավ պառկած հայերին, որոնք վիրավորվել էին օգոստոսի 19-ին: Ես ստիպված եղա նրան պատմել, թե ինչպես էր Հակոբը, որը պետք է սպանվեր, հիվանդանոց վերադարձել: Գեներալն այցելեց նաև իմ կողմից կահավորված օժանդակ հիվանդանոցը: Հետդարձի ճամփին նա արտաքուստ սիրալիր

կերպով շնորհակալություն հայտնեց ինձ այն մեծ աշխատանքի համար, որը ես անում էի բազմաթիվ հիվանդների համար: Նա քննադատելի համարեց միայն այն, որ երկու հիվանդանոցներում մահմեդականներին և հայերին կողք-կողքի էի պառկեցրել:

Նրա այցը երկու վատ հետևանքներ ունեցավ: Հենց նույն երեկո նահանգապետն ինձ մի հրաման ուղարկեց, որ ես անմիջապես ազատեմ օժանդակ հիվանդանոցը, քանի որ կառավարությունն ինքն էր ուզում այդ շինությունը հիվանդանոցի վերածել: Արդեն գիշեր էր, և այդ պատճառով անհնար էր իսկույնևեթ սկսել շինության դատարկումը: Ես գնացի նահանգապետի մոտ և խնդրեցի դա հետաձգել մինչև առավոտ, բայց նա այդ մասին ոչինչ չէր ուզում լսել: Ես խոստացա նրան, որ առավոտյան ժամը 7-ին բանալին նրան կհանձնեմ: Նա, ի վերջո, դժկամությամբ համաձայնեց իմ այդ առաջարկին:

Վաղ առավոտյան ես հոգ տարա տեղափոխման մասին: Շատ մահմեդական հիվանդներ կարող էին դուրս գրվել, և դրա շնորհիվ մի փոքր տեղ ազատվեց: Ես ստիպված եղա նաև մի քանի հիվանդների ժամանակավորապես նկուղում տեղավորել: Այնուամենայնիվ ժամը 7-ին բանալին հանձնելու՝ իմ խոստումն իրականացվեց: Թուրքերը, սակայն, միայն շաբաթներ անց իրենց առաջին այցելուներին պառկեցրին այդ շինության մեջ, որը ես ստիպված էի եղել այդպես արագ ազատել:

Գեներալի այցի երկրորդ հետևանքն այն էր, որ հաջորդ առավոտյան մեր հիվանդանոցի վերահսկողությունն այդ ժամանակ իրականացնող քաղաքային բժշկի ուղեկցությամբ այցելեցին թուրքական ռազմական բժիշկներ: Հազիվ էին բժիշկները հեռացել, երբ հայտնվեցին ոստիկանները և տարան արական սեռի բոլոր հայ հիվանդներին, բոլոր նրանց, ովքեր ի վիճակի էին քայլել: Նրանց թվում, ինչպես քիչ առաջ հիշատակվեց, գտնվում էր նաև Հակոբը, որն այնուհետև երկրորդ անգամ կրկին չվերադարձավ, քանի որ դահիճներն իրենց գործն այդ անգամ ավելի հիմնավոր էին արել:

21. Մխիթարիչը

Քանի որ օգոստոսի 19-ից հետո կառավարությունը հասկացել էր, որ առանց հայերի անհնար էր յոլա գնալ, այժմ մի փոքր բացառություն արվեց: Մի քանի հացթուխներ և դարբիններ պետք է Ուրֆայում թողնվեին: Մեր հայ բժշկին նույնպես թույլատրվեց մնալ, անշուշտ, միայն այն բանից հետո, երբ ռազմական դատարանի հետաքննությունն ինչպես նրա անձի, այնպես էլ նրա բոլոր գրառումների առնչությամբ կասկածելի ոչինչ չէր հայտնաբերել: Այստեղ բոլոր նրանք, ովքեր սկզբնապես մնացին, մի քանի օր անց պետք է աքսորվեին: Հավանական է, որ մի նոր հրաման

էր ստացվել, ըստ որի՝ բոլոր հայերը պետք է աքսորվեին: Մնաց միայն մեր բժիշկը, քանի որ նա այդ ժամանակ բծավոր տիֆով էր հիվանդացել և անգիտակից վիճակում պառկած էր:

Համաճարակը սկսվել էր դեռևս Ուրֆայի պաշարման ժամանակ: Այն սոսկալի չափերով տարածվեց աքսորյալների ճամբարներում և մահ որոնող հազարավոր աքսորյալների համար մեծ մխիթարիչ դարձավ: Ովքեր դրանով վարակվել էին, մեծ մասամբ արդեն երկրորդ օրը կորցնում էին գիտակցությունը, և նրանք, ովքեր, ինչպես աքսորյալները, չէին խնամվում, առանց նորից գիտակցության գալու մի քանի օրից մահանում էին: Բոլորը, ովքեր ճանապարհին այդ «փրկչին» բաժին դարձան, մնացին ճամփեզրին ընկած, մինչև որ մահը նրանց ազատություն բերեց: Մեր Մարիամին նույնպես վիճակված էր լոկ երկու օր քայլել, այնուհետև նա հիվանդացավ և մահացավ:

Համաճարակը, սակայն, կանգ չառավ մահմեդականների դռների առջև: Եթե այն մխիթարիչ էր աքսորյալների համար, ապա նրանց հետապնդողների համար, ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքներում, դարձավ անողոք թշնամի: Չկար որևէ տուն, որտեղ այդ համաճարակը մուտք չգործեր, որևէ տուն, որից այս հիվանդությանը զոհ դարձածներ դուրս չբերվեին: Ահռելի պետք է եղած լինի այս հիվանդության զոհերի թիվը, քանի որ այն հետզհետե տարածվեց ողջ թուրքական կայսրությանում: Հարանի դաշտավայրում ամբողջությամբ ոչնչացան մի քանի գյուղեր, նաև՝ երեխաներ:

22. Թուրքական որբանոցը

Արժանի է հիշատակման նաև այն, թե ինչպես մի անգամ թուրքերը «գթասրտության» մի զգացում ցուցաբերեցին: Երբ ճամբարներում, որտեղ կուտակվել էին հայ կանայք և երեխաները, անհամար ծնողազուրկ փոքրիկ երեխաները լաց էին լինում և ճչում, կառավարությունը որոշեց բացել մի թուրքական որբանոց: Վերցվեցին այս որբերից մոտ հազարը: Քանի որ ոչ մի մահմեդական կին չէր համաձայնում նման աշխատանք կատարել, խնամակալուհիներ նշանակեցին հայուհիների: Այդ կերպ, գոնե, փոքրաթիվ հայուհիներ կարողացան մնալ Ուրֆայում: Հավաքեցին նաև ծծկեր երեխաներին: Նրանց համար պետք էր ստնտուներ ունենալ: Ուրֆայի կանանց մեջ շատերը կային, որոնց ծծկեր երեխաները մահացել էին, և այդ պատճառով նրանք կարող էին այդ ծառայությունը կատարել: Երբ ստնտուներ պահանջվեցին, կրկնվեց այն, ինչ պատահեց Մովսեսի՝ Եգիպտոսում ափ դուրս գալու ժամանակ: Մայրերն իրենց ծծկեր երեխաներին մի կողմ թողեցին, որպեսզի նրանց վերցնեն: Հետո եկավ մի թուրք, որը երեխաներին որբանոց տարավ և տեղեկացավ ստնտուների մասին:

Այդ ծառայությունը հանձն առնելու համար հայտնվեցին ծծկեր երեխաների [բազմաթիվ] մայրեր: Այդ որբանոցում, սակայն, շուտով մեծ մահացություն սկսվեց: Հավաքված մոտ1000 որբերից կես տարի տարի անց հազիվ միայն 200-ն էին կենդանի մնացել: Բոլոր քրիստոնյա երեխաներին տվեցին մահմեդական անուններ: Հետագայում համեմատաբար մեծ տարիքի երեխաներին իսլամական հավատ ուսուցանեցին: Երբ 1917-18 թթ. ձմռանը մի սարսափելի սով սկսվեց, մեծ թվով երեխաներ կրկին հեռացվեցին որբանոցից: Միայն նա, ով հույս էր ներշնչում, որ իրենից լավ մահմեդական դուրս կգար, կարողացավ մնալ և, այնուհետև, տեղավորվեց դեռ նախապատերազմյան շրջանից գոյություն ունեցող արհեստագործական դպրոցում:

Կառավարության համար պետք է որ շատ դժվար լիներ, երբ նա 1918 թ. դեկտեմբերին ստիպված եղավ հայ ժողովրդի այս մնացորդին (նրանք մոտ 20 հոգի էին) դարձյալ ազատ արձակել: Այնուհետև նրանք բոլորը եկան մեր որբանոցը, որի հիմնադրման մասին ավելի ուշ կխոսվի:

23. Մատնիչները

Ինչպես յուրաքանչյուր ժողովրդի մեջ կան վատ անձինք, այդպես նաև՝ հայերի մեջ: Այդ օրերին, երբ մահն իր զոհին էր փնտրում, Ուրֆայում նույնպես կային քիչ թվով տղամարդիկ և կանայք, ովքեր համաձայնում էին իրենց եղբայրներին մատնել: Դա կարող է ընկալելի լինել, եթե նկատի առնենք, որ Ուրֆայի հայ բնակչության մեծագույն մասը հավանություն չէր տվել ապստամբությանը և, կամա թե ակամա, ստիպված էր ամեն ինչ համբերատար տանել: Մատնելու միջոցով նրանք ցանկանում էին իրենց ազգակիցներից վրեժ լուծել, չնայած մեծ մասի մոտ, անշուշտ, որոշիչ դեր էր խաղում ոչ թե վրեժխնդրությունը, այլ միայն՝ երկյուղը սեփական կյանքի համար: Հոկտեմբերի 16-ին չհանձնված հայերից նրանք, ովքեր չէին ուզում զենքը ձեռքին մահվան դեմքին նայել, ստիպված էին եղել թաքնվել: Խորը ջրհորները, գաղտնի նկուղները և փողոցային ջրանցքները հաճախ նրանց համար դժվարամատչելի թաքստոցներ էին հանդիսանում: Նման թաքստոցների մասին մատնությամբ մոտ ութ տղամարդ և կին փրկեցին իրենց ողորմելի կյանքը: Նրանց թույլատրվեց մնալ Ուրֆայում, բայց նրանք պետք է նաև ընդունեին մուսուլմանական հավատը, ինչն այդպիսի արարածների համար, անշուշտ, դժվար չի եղել:

Այդ մատնիչներից մեկը վատ ճակատագիր ունեցավ: Նա պնդում էր, որ մի ջրհորում հայեր կան: Սակայն նրա կանչը, որ դուրս գան, քանի որ ոչ ոքի հետ ոչինչ չի պատահի, ներքևից ոչ մի պատասխան չստացավ: Ոստիկանությունը, սակայն, կարգադրեց, որ նա իջնի ջրհորի մեջ: Մի պարանով

նրան իջեցրին ջրհորը: Ներքև հասնելով՝ նա սարսափելի գոռաց: Նրան կրկին արագ ետ քաշեցին: Նա ամբողջությամբ խոցոտված էր դանակի հարվածներով: Դրանից հետո ջրհորը որմնաշարվեց, և այնտեղ թաքնված հայերը կենդանի թաղվեցին: Ի դեպ, թուրքերն այդ կերպ վարվել են շատ ջրհորների հետ, որտեղ, նրանց կարծիքով, թաքնված հայեր են եղել:

24. Տարբեր թաքստոցներ

Այնուամենայնիվ բնաջնջումն այնքան արագ տեղի չունեցավ, ինչպես մտադրվել էին, և շատ շաբաթներ պահանջվեցին, մինչև ամբողջ Ուրֆան հայերից մաքրվեց: Շուրջ 15.000 մարդ վտարելը, նրանց սպանելը կամ աքսորելն ակնհայտորեն հեշտ գործ չէր: Միայն նոյեմբեր ամսի վերջին հանդարտություն տիրեց: Ժամանակ առ ժամանակ նորից կրակոցներ էին լսվում՝ ինչ-որ տեղ թալանով զբաղված զինվորները կրկին մի հայի էին թաքստոցից հանել և սպանել:

Քաղաքի շատ հայեր մահմեդականների մեջ բարեկամներ ունեին: Վերջիններից բոլորը չէին այն աստիճան անգութ, որ կառավարության նման այդպիսի անհավատալի ցինիզմով մասնակից լինեին ժողովրդի բնաջնջմանը: Աքսորյալների ճամբարներից նույնպես ամեն օր հայ կանայք ու երեխաներ էին անհետանում, որոնք չէին սպանվում: Նրանք ապաստան էին գտնում մարդկայնորեն խորհող նման մուսուլման բարեկամների մոտ: Բացի այդ, որպես կանոն յուրաքանչյուր մահմեդական [իրավունք ուներ] տանել ճամբարների այդ դժբախտ կանանցից և աղջիկներից նրանց, ովքեր իրեն դուր էին գալիս: Չնայած՝ այդ բոլոր հայուհիները, մուսուլմանական տուն մտնելով, մահմեդական անուններ էին ընդունել, այնուամենայնիվ դա դեռ չէր նշանակում, որ նրանք հարկադրվում էին նաև մահմեդական դառնալ: Կառավարությունը, որը գիտեր փախուստի այդ եղանակի մասին, ի վերջո հանգեց այն մտքին, թե հայ ժողովրդից չափազանց շատ մարդիկ են այդ կերպ կենդանի մնում, որի պատճառով նա, ի վերջո, վերջ տվեց դրան՝ հայտարարելով, որ յուրաքանչյուրը, ով իր մոտ հայի կընդունի, իրեն ևս կենթարկի նրանց նման աքսորվելու վտանգին: Ուրֆայի քրիստոնյա ասորիները և կաթոլիկները, որոնք, փոքրաթիվ լինելով հանդերձ, հայուհիներին ապաստան էին տալիս, ինքնին հասկանալի է՝ արդեն ենթարկվեցին թուրքական այս հրամանին, հենց թեկուզ այն պատճառով, որ իրենք, որպես փոքրամասնություն, ապրում էին մահմեդականների մեջ:

Թուրքերից միայն մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ էին այդ հրամանին հետևում: Քաղաքում և քաղաքից դուրս ապրող թուրք, քուրդ և արաբ բնակիչների մեծ մասը չէր կատարում կառավարության այդ հրահանգը: Ռազմական դատարանը քաղաքի գլխավոր դատավորից ևս

պահանջել էր հանձնել իր մոտ գտնվող հայ քրիստոնյաներին: Այս մարդուն 1915 թ. հուլիսին որպես տույժ Երզնկայից Ուրֆա էին տեղափոխել, որովհետև նա այնտեղ բողոքել էր հայերի արտաքսման դեմ: Նրա նախագահությամբ այդ դժբախտ օրերին Ուրֆայում մի հավաք գումարվեց, որի ժամանակ նա ընդդիմացել էր հայկական սարսափների դեմ: Նա իր տանը մի խումբ հայուհիների էր պատսպարել: Գեներալն այդ ժողովից հետո հրամայեց կանչել նրան և ասաց. «Ո՞վ ես դու, որ համարձակվում ես գործել կենտրոնական իշխանության դեմ և այդ հավաքներում հանդես գալ հայերի հանդեպ մեղմ վերաբերմունքի օգտին և մինչև իսկ, հակառակ իմ հրամանին, հայուհիներին թաքցնել քո տանը: Եթե դա չդադարի, ապա դու կտեսնես, որ մենք ուժ ունենք քեզ խելքի բերելու»:

Գեներալն անառարկելի կերպով ակնարկեց, որ գլխավոր դատավորը հեռանա: Ընդ որում նշենք, որ գլխավոր դատավորը, որպես «քադի», քաղաքի երկրորդ բարձրաստիճան պաշտոնյան էր:

Հազիվ էր նա տուն հասել, երբ հայտնվեց ոստիկանությունը, գեներալի հրամանով հանդերձ, ու ձերբակալեց հայուհիներին: Այսուհանդերձ մի քանի օր անց նա կրկին իր տանը փախստականների էր պատսպարել: Մահմեդականների մեջ ես ավելի ազնիվ մեկին, քան այդ «քադին» էր, չեմ ճանաչել: Ես Մուհամեդի ոչ մի հետևորդի հետ անձնապես այնքան չեմ մերձեցել, ինչպես նրա հետ: Մենք հետագայում միմյանցից բաժանվեցինք ինչպես լավագույն ընկերներ, այո՛, ինչպես եղբայրներ:

Ֆրանցիսկյան մի առաքելություն նույնպես տասնամյակներ ի վեր իր նստավայրն ուներ Ուրֆայում: Այն վանահայրերը, որոնք ֆրանսիական ծագում ունեին, պատերազմի հենց սկզբում լքեցին Ուրֆան: Մյուս վանահայրերը, որոնք օսմանյան հպատակներ էին, մնացին: Վերջիններս հանդգնել էին մի հայ կաթոլիկ քահանայի իրենց մոտ թաքցնել. վտանգավոր մի արարք: Մինչև 1916 թ. ձմեռը վանահայրերն իրենց ձեռնարկում հաջողակ էին: Հետո, սակայն, կառավարությանը հաջողվեց, կրկին վերոհիշյալ մատնիչների միջոցով, տեղեկանալ այդ քահանայի մասին: Նրան գտան կաթոլիկական եկեղեցում պատարագ մատուցելիս: Որպես պատիժ՝ բոլոր վանահայրերը ձերբակալվեցին և, քանի որ այդ ժամանակ Ուրֆայում այլևս ռազմական դատարան չկար, ուղարկվեցին Ադանայի բանտը: Այնտեղ մեկը մահացավ բծավոր տիֆից: Միայն զինադադարից հետո նրանք ազատվեցին: Հայ կաթոլիկ քահանային, սակայն, նրա ներման լուրը հասնելուց մեկ օր առաջ Ադանայում կախեցին:

Ինչպես արդեն հիշատակվել է, միսիոներուհի օրիորդ Եփփեն՝ Գերմանական արևելյան առաքելության ծառայության մեջ գտնվող դանիուհին, նույնպես հանդգնել էր յոթ տղամարդկանց թաքցնել: Բախտը նրան ավելի ժպտաց, քան վանահայրերին: Չնայած երեք անգամ կատարված հիմնավոր խուզարկություններին, ոստիկանությունն այդ յոթ տղամարդկանց

չգտավ: Անշուշտ, մշտական հուզումները փրկարարուհուն չափազանց շատ տառապանք էին պատճառել, և գրեթե վեց ամիս նա պառկած մնաց նյարդերի հիվանդության պատճառով. դա այդ սարսափելի օրերի հետևանքներից մեկն էր միայն:

1916 թ. ամռանը, մեր տան վերջին խուզարկության ժամանակ ոստիկանությունը ձերբակալեց մեր արաբ ծառային, որպեսզի նրան ստիպի ցուցմունք տալ: Նրանք սարսափելի ծեծեցին նրան, բայց այդ քաջը չհայտնեց այն փաստերը, որոնց մասին նա լիովին տեղյակ էր: Նա նույնպես մահմեդական էր: Խորին հարգանք՝ նման հավատարմությանը:

25. Լուծարման հանձնաժողովը

1915 թ. դեկտեմբերի սկզբին իր գործունեությունը սկսեց մի լուծարման հանձնաժողով (Ուրֆայում՝ առաջինը): Նրա [գործունեությունը] սկսվեց հայկական ունեցվածքի (որչափ որ այն չէր յուրացվել կողոպուտով զբաղվող զինվորների և քաղաքի խուժանի կողմից) վաճառքից: Հայերի խանութները, տները, այգիները և կալվածքները պետք է դատարկվեին կամ հանձնվեին կառավարման: Այդ աշխատանքի համար երկու տարվա ժամանակ էր պահանջվում. այդ ընթացքում մեկը մյուսի ետևից տարբեր հանձնաժողովներ պաշտոնավարեցին: Երբ մի հանձնաժողովն արդեն հայերի ունեցվածքով բավականաչափ հարստացել էր, փոխարինվում էր այլ պաշտոնյաներով, որոնք շարունակում էին նախորդների գործը՝ սպանվածների և աքսորվածների ունեցվածքի նկատմամբ նույն ընչաքաղցությամբ:

Ռազմական դատարանի արդեն հիշատակված թարգմանիչն այդ հանձնաժողովներում ծառայում էր որպես գրագիր: Նա ինձ պատմեց, թե ինչպես էր տեղի ունեցել հայկական խանութների ապրանքների վաճառքը: Նախքան աճուրդը սկսվելը լավագույնը և ամենաարժեքավորը նախապես տարվել էին հանձնաժողովի թուրք անդամների սեփական տները:

Մի արաբ տիրացել էր մի ադամանդե զարդի, որն, անկասկած, խլվել էր մի հայուհուց: Նա այն ցույց տվեց մի հարուստ թուրքի: Վերջինս առաջարկեց նրան մի քանի ֆունտ դրա համար, սակայն արաբը ցանկացավ նախ խորհրդակցել մի ադամանդագործի հետ: Թուրքն անհապաղ գնաց ադամանդագործի խանութ և առևտրականին հայտնեց ադամանդի մասին: Նա նրան առևտուր առաջարկեց, որին ադամանդագործը համաձայնեց: Թուրքը վճարեց զարդավաճառին 13 ֆունտ և, երբ արաբը երևաց, հեռացավ: Ադամանդագործն արաբից զարդը գնեց 13 ֆունտով: Երբ ավելի ուշ թուրքը կրկին երևաց զարդավաճառի մոտ զարդը տեսնելու համար, զարդավաճառը հանեց 13 ֆունտ իր դրամարկղից և վերադարձրեց թուրքին՝ ասելով, որ առքը չէր կայացել: Թուրքը աղմուկ բարձրացրեց, բանը

հասավ վեճի, ի վերջո՝ միջամտեց ոստիկանությունը: Վերջինս, երբ զարդը տեսավ, բռնագրավեց այն հիմնավորմամբ, որ դա հայկական ունեցվածք է և այդ պատճառով կառավարությանն է պատկանում:

Ես ավելի ուշ հավաստի տեղեկություններ ստացա և անառարկելիորեն պարզեցի, որ այդ թանկագին զարդը երբեք հանձնաժողովի ձեռքը չի ընկել: Վստահաբար նա մի նոր տեր էր գտել, նախքան կարող էր դրվել «պետական պաշտպանության» ներքո: Կարելի է ենթադրել, որ ոստիկանության պետը և հանձնաժողովի նախագահը այն բաժանել էին միմյանց մեջև:

26. Բրիտանական փսիխոզ

Բծավոր տիֆը, որի տարածման մասին մենք այս էջերում արդեն բազմիցս հիշատակել ենք, հոգ էր տանում, որ իրենով վարակվածները մեծ մասամբ արդեն երկրորդ օրը կորցնեն գիտակցությունը: Այնուհանդերձ, հիվանդի հոգին ամբողջ հիվանդության ընթացքում, որը 15-ից 17 օր է տևում, թեկուզ նրա անգիտակից վիճակում, մշտապես զբաղված է: Այնպես, ինչպես բարեպաշտը նարկոզի ազդեցության տակ գտնվելիս չի հայհոյում, այլ աղոթում է, կամ կովարարը չի աղոթում, այլ հայհոյում է, այդպես է նաև տիֆի դեպքում: Այն, ինչ ապրում է մարդու հոգում, միանշանակորեն կենդանի է մնում նաև տիֆի պատճառած թմբիրի ժամանակ: Երբ ճգնաժամը սկսվելուց հետո հիվանդն այնուհետև դարձյալ դանդաղ կերպով նորմալ գիտակցության է գալիս, նա հավատում է անգիտակից վիճակում իր երևակայության ծնած՝ դեռևս կենդանի պատկերների իրական գոյությանը: Այդպես ես ինքս չէի կարողանում հավատալ, որ խաղաղությունը դեռ չէր հաստատվել, քանի որ հիվանդ վիճակում տեսել էի, թե ինչպես էր այն հանդիսավոր կերպով ստորագրվում: Հետագայում ես իմ՝ տիֆով հիվանդների մեջ մի զտարյուն անգլիացի ունեի: Երբ մի առավոտ հիվանդանոցում իմ ամենօրյա շրջայցն էի կատարում, նա կրկին թույլ գիտակցության էր եկել: Շողացող դեմքով նա հարցրեց ինձ.« "O dear, do you not hear?» («Դուք չե՞ք լսում»): «Ի՞նչ է պատահել»,- հարցրեցի ես: "All the bells in the whole world are wringing" (Աշխարհի բոլոր զանգերը հնչում են),- պատասխանեց նա և առանց ինձ թույլ տալու, որ հարց տամ, բացականչեց իր դեռ թույլ ձայնով. "Thanks God, the whole world is now English!" (Փառք Աստծո, այժմ ամբողջ աշխարհը անգլիական է դարձել): Նրա համար նույնպես պատերազմն ավարտվել էր, բայց ամբողջ աշխարհը անգլիական էր դարձել: Այդ ազնիվ միսիոների հիվանդ ուղեղից հրապարակ նետվեց համաշխարհային իմպերիալիզմի մեծ անգլիական գաղափարը:

Այսօր, երբ ես սա գրում եմ, համաշխարհային պատերազմն իրոք ավարտված է: Մենք չպե՞տք է ընդունենք, որ իրադրությունը գրեթե այն-

պիսին է դարձել, ինչպես այդ հիվանդն էր տեսել: Թե արդյոք, սակայն, աշխարհում բոլորը կկամենան դրա համար Աստծուն շնորհակալություն հայտնել, դեռևս հարց է մնում:

27. Բժիշկ առանց դիպլոմի



1915 թ. նոյեմբերից, երբ մեր գերմանական միսիոներական հիվանդանոցի հայ բժիշկը հիվանդացել էր, ամբողջ աշխատանքը ծանրացել էր միայն ինձ վրա: Անշուշտ, դեռ պատերազմի սկզբից աշխատանքի մեծագույն մասն իմ ուսերին էր, քանի որ հայ բժիշկն ամեն օր զբաղված էր ռազմաբժշկական աշխատանքներով: Ուրֆայի քաղաքային բժիշկը՝ մի հրեա, իմ խնդրանքով ստանձնել էր մեր հիվանդանոցի վերահսկողությունը, ինչի համար ես նրան վարձատրում էի: Քանի դեռ Ուրֆայում որևէ դիպլոմավորված բժիշկ կար, ես չէի կարող անարգել կերպով բժշկական գործունեություն վարել, քանի որ համապատասխան վկայական չունեի: Հրեան հաճույքով վերցրեց ոսկին [վարձատրությունը], բայց ինձ չօգնեց: Նա թույլ տվեց ինձ ազատ տեր ու տնօրեն լինել: Այդ ժամանակվա իրավիճակում դա ևս վատ չէր: Նա խնդրեց ինձ հիվանդանոցի և քաղաքի հիվանդների համար հնարավորինս անել, ամբողջովին վստահում էր իմ գիտելիքներին և, թերևս, նաև ոգևորված չէր այն պահանջներից, որոնք մտնում էին նրա պարտականությունների մեջ: Տիֆի համաճարակի ժամանակ ես պետք է հաղթահարեի մի աշխատանք, որը գրեթե վեր էր մեկ մարդու ուժերից: Անհրաժեշտ էր հոգ տանել ոչ միայն մեր 25 մահճակալանոց հիվանդանոցի համար, որը, սակայն, մեծ մասամբ 40 հիվանդ էր ընդունում, այլև՝ այցելել քաղաքի հիվանդներին: Հազվադեպ չէին այն օրերը, երբ ես քաղաքում 100-ից ավելի այցեր էի կատարում: Դրա հետ մեկտեղ մի քանի շաբաթ շարունակ իմ կինը և որդին տիֆով հիվանդ վիճակում պառկած էին տանը:

Եթե նույնիսկ հիվանդությանը դեղամիջոցներով անհնար էր հաղթել, այնուամենայնիվ անհրաժեշտ էր կատարել հոգատար զննումներ: Այդպես հաճախ մեծ դժբախտություններ կարող են կանխվել: Շատերը, որոնց մարմնի մեռած մասերը հիվանդությունից հետո անհրաժեշտ էր հեռացնել, միայն այն պատճառով էին այդ տառապանքին ենթարկվում, որովհետև բացակայել էր ճշգրիտ բժշկական զննումը: Որտեղ կար նպատակային խնամք և ճիշտ ղեկավարում, նման բան երբեք տեղի չունեցավ: 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մայիսը ես 2000-ից ավելի հիվանդների համար կարողացա օգնական և շատերին՝ մխիթարող լինել:

28. Գերմանական միսիոներական հիվանդանոցի փակումը

1916 թ. մայիսյան առաջին օրերին հրեա քաղաքային բժիշկը, որի ձևական հովանավորության ներքո ես պետք է իրականացնեի վերոնշյալ աշխատանքը, պետք է Մոսուլ տեղափոխվեր: Նա դեռևս Ուրֆայում էր, բայց իր պաշտոնն արդեն զիջել էր նոր եկած մի առողջապահության տեսուչի՝ մի նենգ թուրքի: Ես գնացի վերջինիս մոտ նրան խնդրելու, որ ստանձնի մեր հիվանդանոցի վերահսկողությունը, ինչպես դա արել էր նախկին քաղաքային բժիշկը: Ես նրան տանը չհանդիպեցի և ուզում էի կեսօրից հետո կրկին գնալ նրա մոտ, երբ նա ինքը եկավ ինձ մոտ: Նա հայտնվեց կեսօրին և պահանջեց ցույց տալ իմ՝ բժշկի վկայականը, որի հիման վրա ես բժշկական գործունեություն էի իրականացնում: Քանի որ ես նման ոչինչ չունեի, ոչինչ չկարողացա նրան ցույց տալ: Ես խնդրեցի նրան ստանձնել հիվանդանոցի ղեկավարումը, քանի որ 60.000 բնակիչներ ունեցող մեծ քաղաքը չէր կարող առանց բժշկի և հիվանդանոցի մնալ: Բայց նա չուզեց այդ մասին ոչինչ լսել, կնքել տվեց վիրահատարանը և դեղատունը, այցելեց հիվանդանոց և այնուհետև ինձ հրամայեց մինչև երեկո այնտեղից բոլոր հիվանդներին դուրս հանել:

Որքան էլ այդ վարքագիծն ինձ խորը վիշտ պատճառեց, քանի որ ինձ համար միանգամայն պարզ էր, որ այդ մարդն անձամբ խեղճ հիվանդների համար քիչ բան կամ, ընդհանրապես, ոչինչ չէր անելու, այնուհանդերձ ինձ հույժ անհրաժեշտ էր ֆիզիկապես քիչ հանգստանալ: Իմ՝ ընդհանրապես ամուր օրգանիզմը, չէր կարող տևականորեն դիմանալ աշխատանքի այդ հսկայական ծանրաբեռնվածությանը:

Հուլիսին պետք է մի գերմանացի մայոր գերմանացի ավագ լեյտենանտի հետ Ուրֆա գար: Դեռ նախքան նրանց գալը ես գնացի նահանգապետի մոտ և նրան առաջարկեցի մեր հիվանդանոցը տրամադրել հիվանդ զինվորներին: Եթե հիվանդանոցը բռնագրավվելու էր, ապա դա ավելի նախընտրելի տարբերակ էր, դրանով ես կանխում էի հիվանդանոցի հարկադիր հանձնումը: Իմ առաջարկն ընդունվեց, միայն թե դեղատունը և վիրահատարանը դրանով դեռ չկնիքազերծվեցին:

Գերմանացի մայորի ժամանումից հետո շուտով ինձ հրամայվեց ազատել դր. Ֆիշերի՝ գերմանական կլինիկայի՝ իր հայրենիք Շվեյցարիա վերադարձած և ռազմական ծառայության անցած գլխավոր բժշկի սեփական տունը, որովհետև թուրքերը ցանկանում էին դա որպես հիվանդանոց օգտագործել: Անմիջապես ես գնացի գերմանացի մայորի մոտ, որն իջևանել էր ֆրանցիսկյանների մոտ, և խնդրեցի նրան տեղափոխվել բնակության համար իրեն արժանավայել միակ՝ դր. Ֆիշերի տունը, որը շքեղ դիրք ուներ և անհամեմատ ավելի նպաստավոր էր բնակության համար, քան նրա

այժմյան բնակարանը: Իմ առաջարկն ընդունվեց: Նա ինձ հետ նաև մի զինվոր ուղարկեց, որ հսկի տունը, և երբ մի քանի ժամ անց թուրքերը եկան ու ցանկանում էին տունը զբաղեցնել, այն արդեն գրավվել էր: Դա ինձ համար բարեհաջող լուծում էր, քանի որ հետագայում օրիորդ Եփփեն՝ դանիացի հիվանդ միսիոներուհին, իր յոթ թաքնվածների հետ, որոնք դեռ պետք է շարունակ բարեխոհ պաշտպանության ներքո լինեին (չէ որ դրանից միայն մի քանի օր առաջ էր խուզարկություն տեղի ունեցել), պատսպարվեց այնտեղ, և մյուս կողմից՝ գեղեցիկ ու մաքուր տունն այդ կերպ զերծ մնաց թուրքական աղբանոց դառնալուց: Որևէ արտասովոր բան չկար նրանում, որ նաև մեր գլխավոր բժշկի շարժական գույքն էր օգտագործվում: Իսկ ինչ կլիներ, եթե թուրքերը կարողանային այնտեղ տեղավորվել:

Այդպիսով՝ [այդ տանը] բնակություն հաստատեց մայորը, որն այն ժամանակ, ցավոք, հիվանդ էր: Նա տառապում էր դեղնախտով: Չնայած նա սեփական տեղացի ռազմական բժիշկներ ուներ, այնուամենայնիվ ցանկացավ, որ ես բուժեմ իրեն: Քանի որ նա հիմա իմ հիվանդը դարձավ, ես պետք է նրա համար ժամանակ առ ժամանակ դեղատնից դեղորայք բերեի: [Այդ իսկ պատճառով] մայորի հրամանով դեղատունը շարունակ կնիքազերծվում էր, բայց հետո կրկին կնքվում՝ առողջապահության տեսուչի կողմից: Ես, սակայն, միշտ կարողանում էի կնիքազերծման ժամանակ նաև մեր գերմանական գաղութի համար անհրաժեշտ ուրիշ դեղամիջոցներ վերցնել և, խոստովանում եմ, դա ինձ մեծապես օգնեց:

Մայորի հիվանդությունը համառում էր, բայց, ի վերջո, նա կրկին լիովին կազդուրվեց: Երբ նա առաջին անգամ դուրս եկավ, գնաց դեղատուն և այնտեղ կանչված առողջապահության աշխատակցի միջոցով հանել տվեց դեղատան և վիրահատարանի կնիքն այն հիմնավորմամբ, որ հնարավոր չէ հիվանդանոց ունենալ առանց դեղատան և վիրահատարանի:

Երբ, սակայն, 1917 օգոստոսին մայորը կրկին հեռացավ, և այդ ընթացքում առողջապահության մի նոր տեսուչ էր ժամանել Ուրֆա, վերջինս նորից կնքել տվեց դեղատունը և վիրահատարանը: Քանի որ ես այդ ժամանակ այնտեղ էի, աննկատ կերպով բացեցի պատուհանի ապակին, այնպես որ հետագայում ես հեշտությամբ, առանց ստիպված լինելու անցնել դռնով, կարողանում էի դեղատուն մտնել դեղորայք դուրս հանելու համար: Անշուշտ սրանք չգրված միջոցներ են, ըստ որոնց այդօրինակ վարվելակերպով հարկադրված ես գործել Թուրքիայում: Թուրքական անխոհեմության դեմ ժամանակին կիրառվող խորամանկություններով հակադրվել կարողանալը, սակայն, նաև հոգեբանական որոշ դրական դեր էր կատարում:

Նախկին հայ բժիշկը հետագայում վերադարձավ կալանքից, բայց պետք է աշխատեր իբրև սպա և, որպես այդպիսին, դարձյալ իրավունք չուներ ոչ թուրքական, հետևապես նաև գերմանական հաստատությունում ծառայել: Նա, այնուհանդերձ, ցանկանում էր գումար վաստակել, և ես աշ-

խատում էի նրա հետ միասին: Կլինիկան, դեղատունը և վիրահատարանը ես հետզհետե տեղավորեցի դր. Ֆիշերի տանը: Իմ աշխատանքով ես պատերազմական այդ ժամանակաշրջանում, քանի որ միսիոներական գանձարկղի դրամական հատկացումներն ավելի հազվադեպ էին դարձել, որոշ դրամական մուտքեր ունեցա: Ինձ հաջողվեց նաև մշտապես հնչուն դրամով վարձատրել մեր բոլոր հիվանդապահուհիներին, որոնք երկու տարի շարունակ հիվանդանոցում միայն թուրքական զինվորների պետք է խնամեին և պետության կողմից ոչ մի վարձատրություն չէին ստացել:

Իմ աշխատանքը հարյուրավոր հիվանդների համար մեծ նշանակություն ունեցավ հատկապես 1917 թ. աշնանը, երբ երկրով մեկ աչքի մի չարորակ բորբոքում տարածվեց: Հայ բժիշկը ո՛չ տրամադրություն, ո՛չ էլ ժամանակ ուներ հիվանդների բազմությամբ զբաղվելու: Այդպիսով ես հոգ էի տանում նաև այդ խեղճերի բուժման համար: Քանի որ [բժշկի] օգնական էի համարվում, առողջապահության տեսուչը չէր կարողանում ինձ մոտենալ: Ի դեպ, ես ակնաբուժության աշխատանքն ինքնուրույն կերպով վարում էի իմ եվրոպացի ղեկավարների և, ի վերջո, նաև դր. Ֆիշերի ներկայության ժամանակ: Այդ իսկ պատճառով այն ժամանակ Ուրֆայում ոչ ոք չկար, որն այդ ճյուղում ավելի մեծ փորձ ունենար, քան ես:

29. Վերջին աքսորյալները

Երիտթուրքերի համար, որոնք ծրագրել էին հայերի աքսորը և պլանավորված բնաջնջումը, հեշտ գործ չէր միլիոնանոց ժողովրդին ոչնչացնելը: Աքսորը տևեց մի ամբողջ տարի: Վերջին աքսորյալները 1916 թ. հունիսին եկան Ուրֆա: Այդ քարավանում ամենաարտասովորն այն էր, որ այն, ի տարբերություն մյուս բոլորի, համալրված էր գլխավորապես երիտասարդ տղամարդկանցով: Ինչո՞ւ էր դա այդպես եղել: Պատերազմի ընթացքում Բաղդադի երկաթուղու ինժեներներն արագացված տեմպերով էին աշխատում երկաթգծի կառուցման վրա: Չէ որ այն թուրքերի ու նրանց դաշնակիցների համար կենսական հարց էր: Թուրքիայում, սակայն, առանց հայերի, ինչպես Եվրոպայում՝ առանց իտալացիների, հնարավոր չէր հաջողությամբ երկաթուղի կառուցել: Հայերն էին այն աշխատող ձեռքերը, որոնք կարող էին ցանկացած մեծ աշխատանք կատարել: Նաև այնպիսի պաշտոնները, որոնցում երկաթուղու շինարարության ժամանակ պետք է վստահելի անձինք լինեին, գրեթե բացառապես, հայերն էին վարում: Անհնար էր մտածել, թե հաշվետարը կարող է մահմեդական լինել: Երբ, ահա, 1915 թ. ամռանը նաև այդ ջանասեր աշխատողները պետք է տեղահանվեին, երկաթուղու ինժեներները՝ գերմանացիները և շվեյցարացիները, ամբողջ ուժով ընդդիմանում էին դրան: Այդ պարոններից մեկն ինձ պատմեց,

որ իրենք ստիպված էին գրեթե մի ամբողջ տարի շարունակ պայքարել այդ աշխատողներին ևս ոչնչացնելու՝ թուրքական ծրագրի դեմ: Ի վերջո 1916 թ. հունիսին նրանք այնուամենայնիվ հարկադրված եղան մի քանի հազար աշխատողների ազատել: Դրանք էին ահա, այն տղամարդիկ, ովքեր [աքսորի] վերջում անցնում էին Ուրֆայով: Նրանք այլևս հեռու չէին գնալու: Վերանշեհիրում վրա հասավ նրանց ճակատագիրը, նույնը, որը դրանից առաջ բաժին էր ընկել իրենց հարյուր հազարավոր եղբայրներին: Նրանք բոլորը դաշույններով սպանվեցին:

Դեր-էս-Զորում՝ Եփրատի ափին գտնվող փոքր վայրում, Հայաստանի և Անատոլիայի բոլոր վայրերից եկած հայերի մնացորդների մի մեծ համակենտրոնացման ճամբար կար: Նրանք մոտ 60.000 կլինեին, մեծ մասը՝ միմիայն թափառող կմախքներ: Սովը այլանդակել էր նրանց կերպարանքը. մարդկային շատ քիչ բան էր մնացել: Նրանք ստիպված էին աղբակույտերում քաղցած շների հետ կռվել հացի մի կտորի կամ այլ ուտելիքի համար: Այո, պատահում էր, որ նրանք միմյանց համարյա սպանում էին վարունգի կեղևի կամ նման մի այլ բանի համար: Նահանգապետը հասկացավ, որ այդ դժբախտները, որոնց ճամբարին ոչ ոք չէր համարձակվում մոտենալ, քանի որ նրանցից սարսափելի գարշահոտ էր գալիս, այլևս պիտանի չէին կյանքի համար, բայց, անշուշտ, համաճարակի մշտական օջախ էին ներկայացնում: Այդ պատճառով նա առանց երկար մտածելու հրամայեց ոչնչացնել նրանց: Փոքր խմբերով նրանց քաղաքից դուրս էին բերում, սպանում և հետո նետում էին Եփրատի հոսանքի մեջ, որպեսզի նրանց թաղելու հոգսից ազատվեին:

Տարիներ շարունակվող սպանդից և սովամահությունից հետո, ի վերջո, մուսուլմանների տներում թաքնված հայերի մոտ վերջապես վերադարձավ իրենց կյանքի մի փոքր ավելի ապահովության հույսը: Թուլացել էր իշխանության ձեռքը, որը նման սոսկալի հարվածներ էր հասցրել իր հպատակներին: Ավելի լավ ըմբռնում էր ի հայտ եկել: Ամեն դեպքում՝ հայերի մինչ այդ օրենքից դուրս լինելը դադարել էր, եթե նույնիսկ դեռ շարունակ էին ունենում բազմաթիվ բռնաբարությունները, անարգումները, պղծումները, հատկապես նաև՝ տղաների:

30. Կարապետ Քարտաշճյանի ճակատագիրը

Ահա ևս մի առանձին օրինակ: Երբ հայերի համար վատ ժամանակներ էին մոտենում, Կարապետ Քարտաշճյանը՝ Ուրֆայի մի հարուստ վաճառական, դիմեց ինձ և թախանձագին խնդրեց, որ իրեն իր ընտանիքի հետ ընդունեմ իմ տանը: Չնայած ինձ դուր չեկավ, որ նա ինձ դրա համար փող էր առաջարկում, բայց ես չկարողացա ընդդիմանալ նրա սրտառուչ

խնդրանքներին և ընդունեցի նրան: Մի կամավոր փոխհատուցում, մտածում էի ես, նա կարող էր գալիք ժամանակներում մուծել հիվանդանոցի դրամարկղ:

Այժմ, երբ հայերն իրենց վերջին հուսահատ կռիվն էին մղում, Կարապետն ինձ ասաց, որ ցանկանում էր հեռանալ իմ տանից, քանի որ նրան այստեղ վստահաբար կձերբակալեին: Նա կարող էր արաբների մոտ գնալ, ուր արդեն իսկ ապաստան էին գտել որոշ հայեր: Հետապնդողներն ամենից լավ նրանց մոտ էին թաքնված մնում: Ուստի Կարապետը լքեց իմ տունը և հեռացավ քրդերի մոտ, որոնց նա ճանաչում էր և որոնց, կարծում էր, կարող էր վստահել իր կյանքը: Կինն ու երեխաները, սակայն, մնացին ինձ մոտ, մինչև որ նրանք իմ տանը գտնվող մյուսների հետ ձերբակալվեցին ոստիկանության կողմից: Ի վերջո [Կարապետի] կինն իր մի փոքր որդու հետ հայտնվեց Դեր-էս-Զորում: Այնտեղից ես հաճախ լուրեր էի ստանում նրանից: Մի օր, սակայն, Կարապետը կրկին հայտնվեց ինձ մոտ. հենց այն ժամանակ, երբ թուրքերը փնտրում էին յուրաքանչյուր թաքնված հայի: Որպես քուրդ Մահմեդի՝ ես նրան պառկեցրի հիվանդանոցի մահճակալներից մեկին: Այնտեղ նա, առժամանակ, ամենաապահով վիճակում էր, քանի որ դրանից քիչ առաջ մյուս հայերը դուրս էին բերվել հիվանդանոցից:

Երբ նա, առողջ լինելով հանդերձ, արդեն շաբաթներ շարունակ մնացել էր հիվանդանոցում, ես խնդրեցի նրան, որ կրկին հեռանար, լավագույն դեպքում՝ դարձյալ քրդերի մոտ, որոնք նրան մինչ այդ ապաստան էին տվել: Նա հեռացավ: Ամիսներ անց նա կրկին եկավ քաղաք, որտեղ ներկայացավ նահանգապետին: Նա վերջինիս պատմեց, թե ինչպես էր մինչ այդ կենդանի մնացել և նրա հայեցողությանը թողեց իր վերաբերյալ որոշում կայացնել, քանի որ նա մինչ այդ ամեն օր մահացու վտանգի մեջ էր եղել և այլևս երկար չէր կարող տանել այդ թվացյալ կյանքը: Պաշտոնյան նրան ազատ արձակեց, չնայած նա պետք է ժամանակավորապես իր մուսուլմանական անունը պահպաներ:

Իմ միջոցով Կարապետը տեղեկացավ, որ կինն ու մեկ երեխան դեռևս ողջ էին Դեր-էս-Զորում: Նա ցանկանում էր գտնել նրանց, բայց ես նրան համառորեն ետ էի համոզում այդ մտքից: Ես գիտեի, որ նրա կինը գտնվում էր մի հեղինակավոր մահմեդականի մոտ, որի աղախինն էր դարձել, և, համեմատաբար, անվտանգության մեջ էր: Այդուհանդերձ սերն ավելի զորեղ է, քան փաստարկները: Կարապետը նահանգապետից ստացավ զինվորական պաշտպանություն ճանապարհորդության համար: Այդպես նա հաջողությամբ հասավ Դեր-էս-Զոր: Այնտեղ էլ նա գտավ իր մահը:

Զինադադարից հետո նրա կինը երեխայի հետ վերադարձավ Ուրֆա: Մահմեդականը, որի մոտ նա ծառայում էր, նրան չէր հանձնել իշխանություններին:

31. Քրդերի աքսորը

Հավանաբար ոչ մի եվրոպական թերթ չի տեղեկացրել այն մասին, որ նույն երիտթուրքերը, որոնք ուզում էին ոչնչացնել հայերին, իրենց տներից վտարեցին նաև իրենց հավատակիցներին՝ քրդերին, որոնք բնակվում էին բուն բարձրադիր Հայաստանում: Դա, ինչպես հայերի պարագայում, տեղի ունեցավ նույն պատրվակով, իբր նրանք ոչ վստահելի տարրեր էին, և այդ պատճառով վտանգ կար, որ կանցնեն ռուսների կողմը: Թե իրենք՝ քրդերն, ինչ չափով էին այդպիսի կարծիքի առիթ տվել, ես չեմ կարող ասել: Գիտեմ միայն, որ ես աքսորյալների մեջ նաև քուրդ բարձրաստիճան սպաներ գիտեի, ովքեր պատերազմի սկզբում ռազմի դաշտում արիաբար կռվել էին ռուսների դեմ և որոնք հիմա թուրքերի վերաբերմունքը որպես ծայրահեղ ապերախտություն էին ընկալում:

1916 թ. ձմռանը տեղի ունեցավ Ճապաղջրի, Բալուի, Մուշի, այնուհետև՝ Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների քրդերի տեղահանումը: Մոտավորապես շուրջ 300.000 քրդեր հարկադրված էին ոտքով դեպի հարավ տեղահանվել: Սկզբում նրանք տեղավորվեցին Վերին Միջագետքում, հատկապես՝ Ուրֆայի շրջանում, սակայն նաև՝ դեպի արևմուտք, Այնթափի և Մարաշի շրջաններում: 1917 թ. ամռանը սկսվեց նրանց հետագա տեղահանումը դեպի Կոնիայի բարձրավանդակ: Երիտթուրքերի դիտավորությունն էր քրդական այդ տարրերին այլևս թույլ չտալ իրենց բնօրրանը վերադառնալ: Նրանք պետք է Ներքին Անատոլիայում հետզհետե թրքանային: Աքսորման ընթացքում այդ քրդերի հանդեպ վերաբերմունքը էապես տարբերվում էր հայերի հանդեպ եղած վերաբերմունքից: Ճանապարհին նրանց ոչ մի վատ բան չպատահեց, ոչ ոք իրավունք չուներ նրանց տանջել: Սակայն ամենասարսափելին այն էր, որ աքսորն իրականացվեց ձմեռվա կեսին: Երբ քրդերի մի քարավան երեկոյան հասնում էր թուրքական մի գյուղ, բնակիչները վախից նրանց առաջ արագորեն փակում էին իրենց տան դռները: Այդպիսով խեղճերը ստիպված էին ձմեռային գիշերն անցկացնել դրսում՝ անձրևի և ձյան տակ:

Հաջորդ առավոտ գյուղի բնակիչները ստիպված էին ընդհանուր գերեզմաններ փորել սառածների համար: Ի վերջո Միջագետք հասնողների տառապանքները ևս երկար ժամանակ դեռ չէին ավարտվում: Քաղաքներում, որտեղ նրանք տեղավորվում էին կիսաքանդ հայկական թաղամասերում, և որտեղ կառավարությունը, հաց բաժանելով, փորձում էր մեղմել զրկանքը, սկզբում վիճակը դեռ տանելի էր: Այլ էր, սակայն, գյուղերում, որտեղ տեղի բնակչությունը քրդերի հանդեպ միայն վախ էր տածում և իր պաշարները, որոնք մեծ մասամբ արդեն վերջանում էին, վախվորած թաքցնում էր: Այդ ժամանակ նաև այս դժբախտ աքսորյալների համար սով սկսվեց: Քանի որ կառավարությունը հայերին օգնելու իմ գործունեությանը անբարյացակամորեն, շատ դեպքերում թշնամաբար էր վերաբերվում ու նաև՝ քանի որ քրդերի սարսափելի զրկանքները, որոնք, այդուհանդերձ, մեր եղբայրներն են, խորապես հուզում էին ինձ, ես 1916 թ. դեկտեմբերին մեկնեցի Հալեպ: Ես ուզում էի այնտեղի հյուպատոսներին օգնության աշխատանքի մղել: Նմանատիպ մի ձեռնարկումից ես ակնկալում էի նաև դրական փոփոխություն՝ հայերին օգնելու առիթով առաջացած աննպաստ իրադրության հաղթահարման համար: Իմ հանդուգն խնդրանքը խիստ բարեկամաբար ընդունվեց ինչպես գերմանական, այնպես էլ ամերիկյան հյուպատոսների կողմից: Վերադարձի ճանապարհին, այդ շրջանում օգնության կարիք ունեցողների քանակի վերաբերյալ պատկերացում կազմելու համար, ես անցա նաև Սուրուջի և Հարանի հարթավայրերի գյուղերով և գտա այդպիսի մոտ 30.000 մարդու, մինչդեռ ամեն օր հյուսիսից նորանոր աքսորյալներ էին գալիս:

Արդեն դեկտեմբերի վերջին ես ստացա հյուպատոսների դրական պատասխանը, և շուտով ամերիկյան հյուպատոսարանից հայտնվեց նաև ոմն պարոն Բ., 150.000 ֆրանկով: Գերմանական հյուպատոսը նույնպես ինձ 300 լիրա (7000 ֆրանկ) ուղարկեց: Իմ առաջարկը՝ տարբեր վայրերում ցորեն և գարի գնելու մասին, որոնք ես այնուհետև ուզում էի սովյալներին բաժանել, ընդունվեց: Հունվարին և փետրվարին ես իմ հավատարիմ մարդկանցից մի քանիսի միջոցով շատ գյուղերում հաց բաժանեցի: Դա հեշտ աշխատանք չէր: Շատ անգամներ ես անձամբ էի գնում այդ գյուղերը կարգ ու կանոնը հսկելու համար:

Մի գյուղում պարզվեց, որ գնված ցորենը չէր համապատասխանում պայմանագրով հաստատագրված որակին: Ես խնդրեցի սովյալներին գնալ մեկ ուրիշ՝ չորս ժամվա հեռավորության վրա գտնվող գյուղ, որտեղ մենք մի լեփ-լեցուն պահեստ ունեինք: Սակայն մի մեծ ողբ սկսվեց: Կիսամերկ, խոր ընկած ակնախոռոչներով մարդիկ ոտքերս ընկան՝ աղաչելով, որ նրանց տայի այդ թեկուզև փչացած ցորենը: Նրանք հաճույքով կուտեին այն: Ես ստիպված էի նրանց ճնշմանը տեղի տալ: Այնուամենայնիվ ես այդ փչացած ցորենի նմուշն ինձ հետ տարա քաղաք, որտեղ այն ցույց տվեցի վաճառողին և որպես հատուցում ևս մեկ տոննա ավելի լավ ցորեն ձեռք բերեցի:

Գնված ցորենը չափազանց շուտ սպառվեց, բայց մինչ այդ գարունը եկավ, և լավ բերք էր սպասվում: Գյուղերում քրդերը, խոտ ուտելով, քաղցած էին ապրում, բայց երբ բերքահավաքի ժամանակը հասավ, աշխատող ձեռքերի անհրաժեշտություն առաջացավ, որից [քրդերն] ավելի լավ էին գլուխ հանում, քան արաբները: Նրանք կարողանում էին օգնել հավաքել բերքը: Սակայն 1917/18 թթ. ձմեռը նոր զրկանքներ բերեց: Չնայած լավ բերքին, սարսափելի սով էր տիրում, որին զոհ գնացին գրեթե բոլոր աքսորված քրդերը:

Երիտթուրքերի՝ [այլազգիների] բնաջնջման ծրագրի մեջ ներառնվել էին ոչ միայն հայերը և քրդերը, այլ նաև՝ արաբները: Վերջիններիս թիվը նույնպես սարսափելի կոտորածների միջոցով պետք է զգալիորեն կրճատվեր: Միայն թե այդ ծրագիրը չկարողացան իրագործել, քանի որ արաբները հեշտությամբ չէին հանձնվում: Նաև հայտնի էր, որ նրանց թիկունքում անգլիացիներն էին կանգնած: Ոստիկանության մի սպա ինձ ասաց, որ հաղթական պատերազմից հետո թուրքերն արաբների հետ հաշվեհարդար կտեսնեն, և որ ինքը մեծ բավականություն էր ապրում [հենց թեկուզ] այն մտքից, որ կկարողանար մասնակցել նրանց կոտորածին:

32. Ռաքքա



Եփրատի մոտ, Ուրֆայից հարավ և Դեր-էս-Զորից վերև գտնվող Ռաքքա փոքր քաղաքը դարձավ աքսորյալ հայերի մեծ ճամբար: Ժամանակ առ ժամանակ այդ խեղճերը Հալեպից օգնություն էին ստանում ամերիկյան հյուպատոսությունում աշխատող մի գերմանացու միջոցով: Երբ, սակայն, հետագայում այդ պարոնն ինքն էլ զորակոչվեց, ինձ խնդրեցին հնարավորինս ավելի հաճախ օգնություն ցուցաբերել այդ դժբախտներին:

Առաջին անգամ ես այնտեղ գնացի 1917 թ. ապրիլին: Այդ ժամանակ այնտեղ դեռ 6000 հայ կար: Նրանց վիճակն անմխիթար էր: Նրանք, անշուշտ, շարժման ազատություն ունեին, բայց չունեին աշխատանք: Մինչ կբաժանեի ինձ հետ տարած դրամը, ես ներկայացա նահանգապետին և նրանից հայերին օգնելու թույլտվություն խնդրեցի: Նա դեմ չէր դրան: Ես երկու օրում ավարտեցի իմ առաջադրանքը և, այնուհետև, արագ տուն վերադարձա:

Նույն տարվա օգոստոսին ես երկրորդ անգամ գնացի այնտեղ: Ես կրկին այցելեցի սիրալիր նահանգապետին: Այս անգամ ևս նա առարկելու ոչինչ չուներ: Ես պետք է անարգել բաժանեի օգնությունը Ռաքքայի՝ թվով արդեն իսկ էապես նվազած հայերի շրջանում: Հազիվ էի ես հեռացել նահանգապետի մոտից և իջևանել Կեսարիայից (Փոքր Ասիայում) այստեղ աքսորված մի բողոքական քահանայի տանը, երբ ոմն Ալի էֆենդի հյուրընկալողի տանն այցելեց ինձ: Նա ինձ ներկայացավ որպես Ամերիկյան մատուտակամշակման ընկերության աշխատակից: Նա հնդիկ մահմեդական էր, որը վարժ անգլերեն էր խոսում, և միայն թուրքական կառավարության հետ իր մոտ հարաբերություններին պետք է երախտապարտ լիներ, որ այլ բրիտանական հպատակների նման որևէ տեղ չէր ուղարկվել:

Ալի էֆենդին ինձ խնդրեց հյուրընկալվել իր տանը: Ես, սակայն, դրա նվազագույն իսկ ցանկությունը չունեի, չունեի նաև արդեն իսկ զբաղեցրած հյուրընկալ տունը, որքան էլ այն աղքատ լիներ, կրկին լքելով անքաղաքավարություն ցուցաբերելու որևէ շարժառիթ: Դա վրդովեցրեց Ալիին: Նա հապճեպ հրաժեշտ տվեց: Քահանան ասաց ինձ, որ այդ պարոնը նախկինում էլ է խառնվել Հալեպից եկող օգնության փողերի բաժանման գործին: Մարդիկ շշունջով ասում էին, որ նա այդ գումարների մի զգալի մասը տվել է իր թուրք ընկերներին՝ պաշտոնյաներին, որոնց հետ լավ հարաբերությունների մեջ էր, և որոնք նրան փոխադարձ ծառայություն էին մատուցում՝ թույլատրելով, որ նա՝ բրիտանական հպատակը, մնար նույն այդ քաղաքում, որտեղ նա աշխատել էր դեռ պատերազմից առաջ: Ես պետք է վճարեի իմ մերժման համար:

Ալիի հեռանալուց քիչ անց մի ժանդարմ մտավ սենյակ և հետաքրքրվեց մի օտարականով, որն, իբրև թե, եկել էր Ուրֆայից: Այդ պարոնը պետք է անհապաղ գնար ոստիկանական պարետի մոտ: Քահանան իրավացի էր, որ դրանում տեսնում էր Ալի էֆենդիի դերը: Թե ինչ էր ուզում ինձնից պարետը, ինձ հայտնի չէր, բայց գնալով նրա մոտ՝ ես շուտով դա պետք է հասկանայի:

Թուրք պարոնն սկզբում ինձ ընդունեց հանրահայտ թուրքական սիրալիրությամբ: Սուրճ մատուցվեց, և սկզբում զրուցեցինք աշխարհի ընդհանուր դրության մասին: Այնուհետև, սակայն, այդ պարոնը հարցրեց իմ անունը, թե որտեղից էի ես, քանի՞ և ո՞ր լեզուների էի տիրապետում և ինչ նպատակով էի եկել Ռաքքա: Ես հայտնեցի, որ իրեն հավանաբար հայտնի էր, որ ես Ուրֆայից եմ եկել և արդեն մի անգամ եղել եմ այստեղ, որտեղ, նահանգապետի թույլտվությամբ, կարիքավոր հայերին դրամ եմ բաժանել: Նաև այժմ դարձյալ գալով՝ ես դրա համար արդեն իսկ կրկին ստացել եմ նահանգապետի թույլտվությունը: Նրա հաջորդ հարցին, թե արդյոք ես «ալիբի»՝ անձնագիր ունե՞մ, ես պատասխանեցի, որ չունեմ, քանի որ յուրաքանչյուր ոք կարող է առանց դրա նույն վիլայեթում ճանապարհորդել: Այդժամ այդ պարոնը վերաբերմունքը փոխեց: «Լսե՛ք, քանի որ Դուք «ալիբի» չունեք, ես չեմ ընդունում Ձեզ: Ես կարող եմ մտածել, որ Դուք լրտես եք: Առանց զինվորական պահակախմբի Դուք Ուրֆայից այստեղ եք եկել մեր հանդեպ ոչ բարեկամաբար տրամադրված արաբների տարածքով: Բացի այդ, Դուք տիրապետում եք մեր թշնամիների լեզուներին՝ անգլերենին, ֆրանսերենին և արաբերենին: Այդ պատճառով Դուք Ռաքքայում կմնաք, մինչև «ալիբին» կբերեն: Որպեսզի Դուք հասկանաք, որ ես կատակ չեմ անում, այժմ մի ծառայողի կուղարկեմ, որ նա ինձ մոտ բերի Ձեր ձիու լծասարքը, և Դուք չեք կարողանա ետ վերադառնալ»:

Այդպիսով ես դարձել էի նրա բանտարկյալը: Լա՜վ պատմություն է: Այդուհանդերձ ես սկզբում այդ պատմությունը լուրջ չընդունեցի: Չնայած արդեն երեկոյան ժամը ինն էր, ես գնացի նահանգապետի մոտ, որին արթնացնել տվեցի՝ այդ պատմության մասին տեղեկացնելու համար: Ես ասացի, որ միայն նրա որոշումները կընդունեմ և նրան խնդրեցի հոգ տանել, որ պարետը

հրաժարվեր իր մտադրությունից: Սակայն նա ինձ խորհուրդ տվեց առժամանակ թողնել, որ գործն իր հունով ընթանար: Նա չէր կարող ռազմական պարետների դեմ որևէ բան ձեռնարկել, քանի որ պատերազմ էր:

Ես կրկին գնացի իմ հյուրընկալողի տուն և կրկին այնտեղ տեսա Ալի էֆենդիին, որը տեղյակ էր պարետի հետ իմ խոսակցությունը: Ալի էֆենդին ինձ հասկացնել տվեց, թե խոսքն իրականում մի քանի ոսկեդրամների մասին էր, որոնք ես նրան պետք է տայի «վագրին հանդարտեցնելու համար»: Ես վրդովմունքով մերժեցի այդ լկտի պահանջը, քանի որ օգնության փողերն ինձ դրա համար չէին տրվել:

Միայն թե՝ գիշերվա ընթացքում ես կշռադատեցի իրավիճակը: Եթե ես հիմա այստեղ ավելի երկար մնայի, կինս անշուշտ կանհանգստանար: Չէ որ ես նրան խոստացել էի, որ հինգ-վեց օր անց դարձյալ Ուրֆայում կլինեմ: Եթե մինչ այդ չվերադառնայի, ապա նա կկարծեր, թե ավազակների ձեռքն եմ ընկել: Հեռագիրն առկա հանգամանքներում չէր կարող տեղ հասնել, իսկ արաբական այն շրջանը, որի միջով ես ստիպված էի անցնել, ինչպես հայտնի էր շատ անապահով էր, և ոմանք արդեն ավազակների ձեռքն էին ընկել: Այստեղ գալու ճանապարհին էլ մոտ կես ժամ շարունակ մեր դրությունը բավական անախորժ էր: Մենք հանգստանում էինք մի փոքրիկ գետակի մոտ: Այդ ժամանակ հորիզոնում, բավական մեծ հեռավորության վրա ձիավորների մի խումբ երևաց, որոնք իրենց շուրջն էին դիտում՝ տեսնելու, թե արդյոք հարմար ավար չէր երևում: Հենց որ նրանք մեզ նկատեցին, մեկն առանձնացավ խմբից և դեպի մեզ սլացավ: Իմ կառապանն ուզեց անմիջապես ճանապարհի ընկնել, բայց դա ինչո՞վ կօգներ: Այդ ժամանակ խումբը կհասներ մեզ և, անշուշտ, կկողոպտեր: Ես հրամայեցի հանգիստ սպասել: Երբ մեզ արաբից միայն խորը գետակն էր բաժանում, նա մեզ ողջունեց: Մենք նրան նույնպես ողջույնով պատասխանեցինք, և ես նրան փորձեցի հյուրասիրել մի տապակած հավի բուդով, որը ջրի վրայով նետեցի նրան: Նա այն կերավ: Դրանից հետո նա հետաքրքրվեց, թե որտեղի՞ց էինք գալիս և ո՞ւր էինք գնում: Ես ասացի նրան, որ գնում էի Ռաքքա՝ հայերին օգնելու համար, որոնց հետ թուրքերն այդքան վատ են վարվում: Այդ ժամանակ նա ձեռքով նշան արեց հեռվում գտնվող իր ընկերներին, հայհոյեց թուրքերին և հրաժեշտ տալով՝ հեռացավ: Վտանգն անցել էր, շուտով բոլոր ձիավորներն անհետացել էին:

Այսպիսով, Ռաքքայում ես հաջորդ առավոտ արդեն համաձայն էի Ալիին, երբ նա դարձյալ գար, հասկացնել, որ իմ գործն այստեղ ավարտելուց հետո պարետին մի քանի ոսկեդրամ կտամ:

Այդ դրամը հետագայում ես հույս ունեի վերադարձնել, քանի որ մտադիր էի Ուրֆայում իմ ազդեցության շնորհիվ վերջ դնել պարետի «արհեստին»: Դեռ Ուրֆայում էր գտնվում գերմանացի մայորը, որն, անշուշտ, ինձ կաջակցեր կորզված գումարը ետ բերելու հարցում:

Ալի էֆենդին հաջորդ առավոտ կրկին հայտնվեց: Ինձ մոտից նա գնաց պարետի մոտ: Գործը հաջող ավարտելու համար ես պետք է երևի միանգամից նրա հետ գումարն ուղարկեի: Ես, սակայն, չափազանց անփորձ էի այդ ասպարեզում: Շատ չանցած Ալի էֆենդին կրկին հայտնվեց և հայտնեց, որ արդեն չափազանց ուշ էր՝ պարետն արդեն հեռագրել էր Ուրֆա, ուստի պետք էր այնտեղից պատասխանի սպասել:

Երկու օրում ես բաժանեցի դրամական օգնությունը և արդեն կարող էի ճանապարհ ընկնել, եթե միայն ձիու լծասարքն ունենայի: Փորձեցի մեկ այլ ճանապարհ գտնել: Այստեղ պարսիկ արքայազների հետ իմ կատարած այցելության օրերից ես ծանոթ էին Ռաքքայի քաղիի հետ: Ես գնացի նրա մոտ և խնդրեցի, որ եթե ցանկանում էր իմ ընկերը լինել, փորձեր օգնել ինձ: Քաղին ինձ խնդրեց, որ ես ազնվորեն [ամեն ինչ] ասեմ: «Երբ դու առաջին անգամ այստեղ էիր, - ասաց նա, - նահանգապետին փող տվե՞լ ես և որքա՞ն: Քո վերադարձից հետո այստեղ, մասնավորապես, լուրեր էին շրջում, որ դու նրան մեծ գումար ես տվել: Այս անգամ ոստիկանապետը նույնպես ցանկանում էր որևէ բան ստանալ»:

Սա լույս էր սփռում խնդրի վրա: Քաղին անասելի զարմացած էր, երբ ես նրան ասացի, որ ես ոչ միայն ոչ մի կաշառք չեմ տվել, այլև, որ նահանգապետն ինքը նման ցանկություն չէր հայտնել: Այդ պարոնն ավելի լավն էր, քան նրա մասին մտածում էին ժողովուրդը և քաղին:

Հինգերորդ օրվա երկրորդ կեսին ես ետ ստացա ձիու լծասարքը: Անմիջապես ճանապարհ ընկա և ավազակների վտանգավոր շրջանն անցա գիշերով:

1917 թ. ամռանը նահանգապետը շատ հայերի՝ կանանց, տղամարդկանց և երեխաների, Ռաքքայից Ուրֆա բերեց ճանապարհաշինության համար: Նրանք, այնուամենայնիվ, դա պետք է որպես իրենց վիճակի բարելավում ընդունեին, այդ իսկ պատճառով Ուրֆա բերվեցին միայն նրանք, ովքեր համաձայնել էին մահմեդական անուն կրել: Մեծամասնությունը կանայք և երեխաներ էին: Որպես վարձատրություն՝ նրանք միայն օրապահիկ հաց էին ստանում: Հաջորդ ձմռանն էլ նրանք միայն վրանների տակ էին կարողացել ապրել: Ցրտեր էին սկսվել, այնինչ նրանցից միայն քչերը դեռ հագուստ ունեին: Սուրուջի հարթավայրում ամբողջովին մերկ կանայք ստիպված էին լինում ամեն անգամ շրջվել, երբ տղամարդ էր անցնում: Ինձ համար մեծ ուրախություն էր, որ ինձ թույլ տրվեց այդ մերկ [տառապյալներին] Ուրֆայի մեր մարդկանց կողմից պատրաստված հագուստներ փոխանցել:

33. Փրկարարական աշխատանքներ

Մահաբեր աքսորների ավարտից հետո սկսվել էր վտարված կանանց և երեխաների դանդաղ ետադարձ հոսք դեպի մոտակա քաղաքները: Գյուղերում, որտեղ նրանք մահմեդական բնակիչների մոտ ապաստան էին գտել և խուսափել մահից, 1916 թվականի աշնանից հացն արդեն սկսեց չբավարարել: Նրանց նաև սպառնում էին բարոյական բնույթի վտանգներ, հատկապես արաբների մոտ, որտեղ բազմակնությունն ավելի տարածված է, քան թուրքերի և քրդերի մոտ: Երիտասարդ կանայք և 10 տարեկանից մեծ աղջիկները արաբների հետ ամուսնանալու դեպքում պետք է կրոնափոխ լինեին: Ով կարողանում էր, փորձում էր խուսափել ամուսնությունից: Քաղաքներում նրանք հույս ունեին ավելի ապահով լինել, ինչը, սակայն, միշտ չէ, որ հաջողվում էր: Որպես կանոն՝ նրանց դրությունը, ովքեր գյուղերում արաբական տներ էին ընկնում, ավելի բարվոք էր, քան նրանցը, ովքեր քաղաքներում առևանգվում էին թուրքերի կողմից: Հատկապես թուրք սպաները աղջիկների վաճառքի ժամանակ անհավատալի ու անասելի ստորություններ էին անում: Իսկ թե հարյուրավոր, նույնիսկ հազարավոր հայ տղաների հետ ինչ անառակ ոճրագործություններ էին կատարվում, հնարավոր չէ պատկերացնել:

1916 թ. հուլիսից մեր հիմնական խնդիրը մեր քաղաքում հայտնվող բոլոր կանանց և երեխաներին աջակցություն ցուցաբերելն էր: Ցավոք, այն ժամանակ դեռ անհնար էր մտածել կրկին քրիստոնեական որբանոց բացելու մասին: Հայերին ոչնչացնել ցանկացող կառավարությունը երբեք չէր համաձայնի դրան: Ամեն դեպքում նման նախաձեռնությամբ չպետք է հանդես գային հենց եվրոպացիները, որոնց առանց այդ էլ պատերազմի հաղթական ավարտից հետո Թուրքիայում այլևս չէին հանդուրժելու: Ուստի սկզբում մենք ի վիճակի էինք Ուրֆա եկող բոլոր օգնության կարիք ունեցողներին միայն սնունդի համար փոքրիկ գումարներ հատկացնել: Այլ կարիքները նրանք պետք է ինքնուրույն հոգային: Կանանց համար չկար աշխատանքի պակաս, եթե նույնիսկ այդ աշխատանքը շահավետ չէր, և երեխաներն աշխատում էին նրանց հետ: Շուկան լի էր փոքրիկ տղաներով, որոնք վաճառում էին հնարավոր ամեն բան: Հայերը համառ և աշխատասեր ժողովուրդ են: Ցուրաքանչյուր ոք այդ օրերին կարող էր վերստին համոզվել դրանում:

Որպեսզի ես վերահսկողություն ունենայի, գրանցվեցին այն երեխաների անունները, տարիքը և ծննդավայրը, որոնց ես կարող էի ամենամյա օգնություն ցույց տալ: Դա պետք է արվեր, քանի որ կանայք ու երեխաները շարունակ փորձում էին կրկնակի գրանցում ունենալ՝ հնարավորության դեպքում կրկնակի ամսավճար ստանալու համար: Ո՞վ կարող էր մեղադրել նրանց: Չէ որ բավական քիչ էր այն, ինչ ես նրանց կարողանում էի տալ:

Որոշ հայ աղջիկներ, որոնց սպառնում էր մահմեդականների հետ

ամուսնությունը, փախան իմ կնոջ մոտ: Եղել են դեպքեր, երբ թուրքի առաջին կինն ինքն է վտանգի մեջ գտնվող աղջկան օգնել, որ փախչի: Նրա համար իր համատեղումը մի երկրորդ և այն էլ՝ քրիստոնյա կնոջ հետ խիստ անցանկալի էր: Այդպիսի աղջիկները, երբ իմ կնոջ պաշտպանության տակ էին անցնում, այլևս չէին վերադարձվում: Երբ, այնուհետև, նրանց նախկին տերերն այցելում էին կնոջս (կարիք չկար երկար հարց ու փորձ անել, թե այդ երեխաներն ուր էին փախել), նա դուռը չէր բացում: Եթե նույնիսկ այդ մարդիկ օրեր շարունակ տան շուրջը պահակ կանգնեցնեին, դա նրանց օգուտ տալ չէր կարող. մեկից երեք օր հետո աղջիկները ծպտվում էին արաբական կամ քրդական զգեստներով և մուսուլման ընկերուհիների միջոցով, որպիսիք իմ կինը միշտ ունեցել է, Հալեպ էին տարվում:

1917 թ. նա համարձակվեց, ոստիկանությունից խնամքով թաքցնելով, երկու փոքր տուն վարձել և դրանք լցնել որբ երեխաներով: Երբ, այնուհետև, ոստիկանությունն ինձ հարցնում էր՝ արդյոք ես որևէ տեղ որբանոց չունե՞ի, ես ինձ անտեղյակ էի ձևացնում, իսկ իմ կնոջը, պատշաճությունից ելնելով, չէին կարող հարցաքննել: Դրա հետ մեկտեղ, անշուշտ, չի կարելի մոռանալ, որ ես բժշկի և հիվանդախնամողի՝ իմ երկարամյա աշխատանքի բերումով կառավարությունում և ոստիկանությունում ընկերներ ունեի: Մոտ 1-1,3 միլիոն ֆրանկով, որ տարիների ընթացքում Շվեյցարիայից, Գերմանիայից և Ամերիկայից վստահվել էր ինձ, ես կարողացա հարյուրավոր հայ երեխաների և կանանց փրկել:

Ես խոսեցի կնոջս մահմեդական ընկերուհիների մասին: Նրանց մեջ կային ազնվահոգի անձինք, ինչպես օրինակ մի արաբ կին, որը մի կույր տղամարդու և չորս երեխաների իր տանն էր պահում, և ինքը պետք է վաստակեր նրանց ապրուստի գումարը: Այդ բարի կինը չէր կարող ճանապարհին ընկած հայ ծծկեր երեխաներին իր տուն չտանել, չնայած նա ամենևին հնարավորություն չունեցավ գոնե մեկին փրկելու բերկրանքն ապրել: Երեք անգամ նա փորձել էր դա անել, և, այդուհանդերձ, ամեն անգամ երեխաները շաբաթներ կամ ամիսներ անց մահանում էին:

Քադիի նման շատ մահմեդականներ ևս կային, որոնք, զուտ մարդկային կարեկցությունից դրդված, փրկել են հայերին: Մի թուրք այրի իր մոտ թաքցրել էր մի քանի հայուհիների և նրանցից նույնիսկ չէր պահանջել մահմեդական անուններ ընդունել: Քաղաքում, անշուշտ, ոչ մի մահմեդական չհամարձակվեց տղամարդկանց թաքցնել: Դրան հակառակ գյուղերում շատերը կային, որոնք նաև հայ տղամարդկանց կյանքն են փրկել: Այստեղ, մեծ մասամբ, հաշվենկատությունն էր դեր խաղում: Մի ազդեցիկ աղա ինձ ասաց, որ նա այդքան հիմար չէր, որ սպաներ հայ տղամարդկանց, քանի որ հետո ինչ պետք է աներ առանց նրանց: Նրանք կատարում էին նրա ողջ աշխատանքը և հոգ էին տանում, որ նրա հարստությունն ավելանար:

Ուրֆայի քաղին ստիպված էր կրել ծաղրական մականուն, քանի որ նա անընդհատ փորձում էր մեղմել հայերի զրկանքները: Նրան անվանում էին «Ermini Papasy» (հայ քահանա):

34. Սովը



Ուրֆայի իշխանությունները պարտավոր էին իրենց շրջանից բանակին հանձնել միայն 5 հազար տոննա հացահատիկ: Դա 1917 թվականի աշնան միջին չափերի բերքի համեմատությամբ այնքան էլ շատ չէր: Միայն Ուրֆայի շրջակայքը՝ հացահատիկի համար գերազանց մի տարածք, կարող էր դա ապահովել, սակայն ցորենը գտնվում էր խոշոր հողատերերի ձեռքում: Սկզբում կառավարությունը ստացավ իր սովորական տասանորդը կամ ընդհանուր բերքի մեկ ութերորդ մասը, և այն էլ՝ անվճար: Պակասող մասը պետք է գնվեր: Գինը սահմանեց կառավարությունը, բայց սեփականատերերի կարծիքով այն չափազանց ցածր էր: Հետևանքը եղավ այն, որ հարուստ գյուղացիներն իրենց ցորենն ամբարում էին հողի մեջ: Կառավարությունը գյուղերն էր ուղարկում բանիմաց ծառայողների, որոնք հատնաբերեցին հողի մեջ գտնվող որոշ ամբարներ: Այդ ժամանակ որոշ հողատերեր այլևս չէին համարձակվում վաճառել իրենց թաքցրած ցորենը, ուստի ցորենի գինն ահռելի կերպով բարձրացավ: 1917 թ. աշնանը կալատնից հնարավոր էր 12 ֆրանկ մետաղադրամով մեկ մալտեր (թիմին) վերցնել, սակայն ձմռան ընթացքում նույն քանակի համար անհրաժեշտ էր վճարել 80 ֆրանկ մետաղադրամ, որը փոխարժեքով կազմում էր 400-500 ֆրանկ: Ով աշնանն իր՝ ամբողջ տարվա ցորենի պաշարը ձեռք էր բերել, ինչպես ընդհանրապես ընդունված էր, ձմռանն ուներ իր հացը, իսկ ով դա չէր կարողացել անել, ինչպես օրինակ աքսորյալները, ստիպված էր սովամահ լինել: Այդ ժամանակ քաղաքում դեռ ապրում էին քուրդ վտարանդիները: Սովին ամենասարսափելի տուրքը նրանք էին վճարում: Սովամահ եղածներին փողոցներում և հայերի կիսավեր տներում, որտեղ նրանք բնակություն էին հաստատել, շաբաթներ շարունակ հավաքում էին: Կային օրեր, երբ 70-ից ավել մեռածներ էին թաղվում: Սարսափելի էր այդ ամբողջ թշվառությունը տեսնելը և օգնել չկարողանալը: Այստեղ՝ աղբակույտի վրա պառկած էր մի մուրացկան, որը հացի չորուկի համար պայքարում էր շների հետ: Մի քանի ժամ անց նա ընկած էր նույն տեղում՝ մահը ազատագրել էր նրան: Այնտեղ՝ փողոցներով թափառում է ներս ընկած աչքերով, ամբողջովին մերկ մի աղջիկ, նրա դեմքի ծամածռությունները վկայում են, որ խելագարվել է: Ընդամենը մի քանի օր, և մահը նրան կազատագրի: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո քաղաքի փողոցներով թափառում է մուրացկանների մի մեծ բազմություն՝ թակելով բոլոր դռները և

ամեն տեղ կրկնելով միշտ նույն բառերը. «Heiran, Kurban, Allahin Chatyrj uejuen, bir partscha ekmek werin!» (Խղճացեք, մատաղ լինեմ քեզ, Աստծո սիրուն, մի կտոր հաց տվեք): Նույնիսկ գիշերն այդ սովյալները չէին հեռանում դռներից, և հազիվ էր առավոտը բացվում, երբ նորից հնչում էր նույն երգը նրանց բերանից, ովքեր կարողացել էին լուսացնել գիշերը: Մյուսները մահացած ընկած էին այն դռան առաջ, որտեղ երեկոյան վերջին անգամ հաց էին աղերսել: Կառավարության կողմից վարձվել էին մարդիկ, ովքեր ամեն առավոտ հավաքում էին մեռածներին: Հայ ժողովրդի կենդանի մնացած մնացորդի համար բնորոշ էր, որ Ուրֆայում այդ սովի ձմռանը համեմատաբար քիչ հայեր սովամահ եղան: Դրա համար նրանք պարտական էին իրենց ժրաջանությանը: Նրանք ցանկանում էին և կարողանում էին աշխատել: Աքսորյալ քրդերը, սակայն, մեծ մասամբ չէին կարողանում աշխատել: Իրենց բնակավայրերից վտարվելուց հետո, եթե նույնիսկ սով էլ չլիներ, նրանց մահն էր սպասում: Նրանք չէին կարողանում, ինչպես հայերը, իրենց գոյությունը անհրաժեշտ դարձնել ուրիշների համար:

Այն ժամանակ քաղին զուր էր քարոզում թուրքերին, որ նրանք լքված քուրդ երեխաներին և կանանց իրենց տները տանեին, չէ որ նրանք այդքան հայերի ապաստան էին տրամադրել: Քաղին ինձ ասում էր, որ, փաստորեն ոչ ոք չէր ենթարկվում իր խոսքերին: Նա ինքը փորձել էր երկու քրդուհիների ընդունել իր տանը, որոնք գողեր դուրս եկան և, բացի այդ, սարսափելի անմաքուր էին: Որքան տարբեր էր դա նրանից, երբ որևէ հայ կին էր ապաստան ստանում: Որտեղ նրանց տեղավորում են, այնտեղ կարգ ու կանոն է, մաքրություն, և նրանց հովանավորները նրանց կողմից լավ խնամվում ու սպասարկվում են: Նույնիսկ փոքրիկ հայ տղան ցանկանում է աշխատել և կարողանում է իրեն անհրաժեշտ դարձնել: Մեկը՝ թուրքական հիվանդանոցում ծառայող գլխավոր շտաբի բժիշկը, սրտին մոտ ընդունեց քաղիի քարոզը: Այնտեղի հիվանդապահուհիները, ինչպես թուրքական կայսրությունում ամենուր, համարյա բացառապես հայուհիներ էին: Բժիշկը մի օր աշխատանքից ազատեց այդ բոլոր հայուհիներին և քրդուհիների ընդունեց: Մեր հիվանդանոցում նույնպես, որտեղ այն ժամանակ բուժքույրերը նրան էին ենթարկվում, նա ցանկանում էր նույնն անել, չնայած ոչ թե նա, այլ մենք էինք այնտեղ բուժքույրերին աշխատանքի ընդունել: Սակայն ես միջամտեցի և կանխեցի նրանց վտարումը: Ի՞նչ ցույց տվեց փորձն այդ քուրդ հիվանդապահուհիների դեպքում: Հիվանդ զինվորներին խնամելու համար նրանք օրական ստանում էին միայն մի փոքր կտոր սև հաց. չափազանց քիչ՝ ապրելու և չափազանց շատ՝ մեռնելու համար: Նրանք բացարձակապես ոչ մի պատկերացում չունեին խնամքի մասին: Շուտով հիվանդանոցում ամենուր ահավոր գարշահոտություն էր տիրում: Այն ամենը, ինչ այդ քրդուհիները կարողանում էին անել, դա իրենց տնեցիներին հիվանդանոցային սպիտակեղեն հագցնելն էր: Ինչպես զինվորների, այնպես

էլ հիվանդանոցի համար մեծ հաջողություն էր, որ գլխավոր շտաբի այդ բժիշկը շուտով Ուրֆայից մեկնեց, իսկ ետ բերված հայ բուժքույրերը կարողացան կրկին կարգ ու կանոն հաստատել:

35. Էլիասը՝ կառապանը



Այն օրերին, երբ Ուրֆայի կանայք սպասում էին իրենց տեղահանությանը, կառապան Էլիասին, որն ալբանացի մահմեդական էր, միացավ իր ծանոթ հայուհիներից մեկը: Նա համոզեց նրան, որ քանի որ ինքն ամուրի էր, և իր ամուսինը պատերազմում զոհվել էր, ամուսնանալ իր հետ: Էլիասը համաձայնվեց, քանի որ որպես մահմեդական՝ նա միայն մեծաքանակ դրամով կարող էր իր համար կին գնել, իսկ այժմ առանց գումարի կին էր ձեռք բերում: Նաև երկու փոքրիկ երեխաներին, որոնց հայուհին իր հետ բերեց, նա ընդունեց և սիրով էր վերաբերվում նրանց: Քաղդիի միջոցով նա օրինականացրեց ամուսնությունը և շատ երջանիկ ապրում էր հայուհու հետ:

1918 թվին, սակայն, կնոջ առաջին ամուսինը հանկարծակի կրկին հայտնվեց: Պատերազմի սկզբում նա գերի էր ընկել ռուսների մոտ և հիմա վերադարձել էր: Այժմ նա գտավ իր կնոջը որպես Էլիասի կողակցի: Նա տեսավ նաև իր երեխաներին, որոնք ճանաչեցին նրան: Ամենայն հանդարտությամբ նա խնդրեց Էլիասին վերադարձնել իր կնոջը, բայց Էլիասը չէր կամենում: Նա չէր ցանկանում հրաժարվել այդպիսի երջանիկ կյանքից: Այնուհանդերձ հայը հարցը ներկայացնում է քաղդիին: Վերջինիս համար պարզ էր, որ այստեղ նոր որոշում պետք է կայացվեր: Միայն թե գործն այդքան էլ հեշտ չէր: Եթե ամուսնությունը, ինչպես այդ ժամանակվա նման շատ ուրիշ ամուսնություններ, անօրինական լիներ, իրավիճակն այլ կլիներ:

Դատավորն իր մոտ կանչեց երկու տղամարդկանց, կնոջն ու երեխաներին և ասաց. «Էլիաս, պարզ է, այս կինը պատկանում է քեզ: Եվ եթե նա ասած չլիներ, որ իր ամուսինը մահացել է, ապա դու, անկասկած, նրան կնության չէիր վերցնի: Այդ դեպքում ես նույնպես ամուսնությունն օրինականացրած չէի լինի: Միայն թե նայիր այս երեխաներին, թե ինչպես են նրանք փարվել իրենց իսկական հորը: Եվ կինն էլ միայն իր մեծ զրկանքի մեջ է քեզ ասել, որի իր ամուսինը զոհվել է, քանի որ այլապես մահվան գիրկը կուղարկվեր: Քանի որ նա ինքը, թեև քեզ նույնպես սիրում է, կուզենար իր առաջին ամուսնու մոտ վերադառնալ, ես քեզ խորհուրդ կտայի վերադարձնել նրան: Աստված կօրհնի քեզ դրա համար»:

Էլիասը դատավորի այս խոսքերին արցունքոտ աչքերով պատասխանեց. «Ես այս կնոջ հետ մի քանի շատ երջանիկ տարիներ եմ ապրել, նրա երեխաներին այնպես եմ սիրել, ասես նրանք իմ սեփական միսն ու արյունը լինեին: Քանի որ ես օրինական կերպով եմ նրա հետ ամուսնացել, գիտեմ,

որ քրիստոնյան նրան ինձնից երբեք չի կարող օրինական ճանապարհով վերցնել: Միայն թե ես հասկանում եմ, որ ավելի լավ կլինի, որ նրան վերադարձնեմ իր առաջին ամուսնուն: Թող նա նրա հետ դեռ երկար երջանիկ և խաղաղ ապրի»:

36. Մարտիրոսը



Հիվանդների մեջ, որոնց ոստիկանությունը հայերին հիվանդանոցից դուրս բերելու ժամանակ չէր տարել, կար Մարտիրոս անունով մի հայ պատանի: Տասը տարեկանում նա գերմանական որբանոցից որպես հիվանդ եկել էր մեր հիվանդանոցը: Մի անբուժելի հիվանդություն գամել էր նրան անկողնուն: Նա մնում էր հիվանդանոցում նաև այն դեպքում, երբ այն օգտագործվում էր որպես թուրքական զինվորական հիվանդանոց, միայն թե այդ ժամանակ նրա խնամքը, ինչպես առաջ, մեր միջոցով էր իրականացվում: Այդ երիտասարդը ոչ մեկին չէր կարող խանգարել, քանի որ ապրում էր իր առանձին փոքրիկ սենյակում:

1918 թ. ամռանը, սակայն, թուրքական գլխավոր շտաբի վերոհիշյալ բժիշկը տեղափոխվեց մեր հիվանդանոց: Նրան հայ Մարտիրոսը սարսափ էր պատճառում: Իր օգնականի միջոցով նա ինձ տեղեկացրեց, որ այդ հիվանդը պետք է հեռացվեր հիվանդանոցից, բայց ես այդ չարեցի: Այդ ժամանակ նա հրամայեց հիվանդին, որն իր ցամաքած ձեռքերից բացի մարմնի ոչ մի անդամ չէր կարողանում շարժել, իր մահճակալի հետ միասին դուրս հանել: Այն բանից հետո, երբ նա, ի ամոթ բժշկի, երկու օր մնացել էր դրսում, ես ստիպված եղա հոգ տանել նրա մասին և նրան տեղավորեցի մեկ այլ տան մեջ:

Մարտիրոսը դարձավ հասուն երիտասարդ, որն իր ցավը հիացմունքի արժանի համբերությամբ էր տանում և նույնիսկ որոշ հիվանդների համար օրինակ էր դարձել: Նախկին հիվանդները, նաև մահմեդականները, հաճախ այցելում էին նրան: Քանի որ նա պարանոցն էլ չէր կարողանում շարժել, շատ հաճախ ձեռքին մի փոքրիկ հայելի էր պահում, որի միջոցով դեռ հեռվից տեսնում էր, թե ով էր մտնում հիվանդանոց և դուրս գալիս: Երկու անգամ գիշերով գողեր ներխուժեցին հիվանդանոց, և նա էր, որ նկատեց դա, աղմուկ բարձրացրեց, այնպես որ մենք կարողացանք քշել գողերին:

Այս Մարտիրոսը հայի իսկական տեսակ է: Չնայած շարժվելու իր անկարողությանը, անցած տարում նա 2000 ֆրանկ է վաստակել: Նա գործարքներ էր կատարում: Դեռահաս տղաների միջոցով նա մշտապես տեղեկանում էր շուկայում կատարվող իրադարձությունների մասին: Եթե ինչ-որ բան էժան էր, նա գնել էր տալիս, երբ այն նորից թանկանում էր,

վաճառքի էր հանում: Եթե մեկն ուզում էր ինչ-որ բան էժան գնով առնել, բավական էր, որ միայն Մարտիրոսին ասեր, որն էլ իր միջնորդության համար միայն չնչին տոկոս էր վերցնում: Ահա այսպես է նա վաստակել այդ 2000 ֆրանկը: Երբ ես 1919 թ. գարնանն անգլիացիների հանձնարարությամբ աղքատների համար պետք է ցորեն գնեի, հիվանդ Մարտիրոսի միջոցով հնարավոր եղավ լավ և էժան գնում կատարել:

37. Գերմանա-թուրքական և թուրք-գերմանական...

Ես արդեն պատմել եմ, որ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո թուրքական և գերմանական յուրաքանչյուր հաղթանակ տոնվում էր: Ուրֆա քաղաքը տղաների մի նվագախումբ ուներ, որն այդ առթիվ թեև բավականին խղճուկ կերպով, բայց՝ ջանասիրաբար նվագում էր: Գերմանական զինակցության հանդեպ վերաբերմունքն այն կերպ էր արտահայտվում, որ երաժշտության այդ մեղեդիները նաև մեր հիվանդանոցում պետք է լսելի լինեին: Առաջին հերթին, իհարկե. «Գերմանիա, Գերմանիա՝ ամենից վեր»:

Անկեղծ ասած, այդ մեծարումներն այնքան էլ իմ սրտով չէին: Այդ ժամանակ ես մտաբերում էի մի դեպք, որը դեռ 1915 թ. գարնանն էր տեղի ունեցել: Կինս զբոսնում էր Ուրֆայի այգիներից մեկում: Նա, ընդհանրապես, համարվում էր գերմանուհի, քանի որ այնտեղի բնակչությունը մեզ՝ շվեյցարացիներիս, գերմանացի էր համարում: Նրան ընդառաջ է գալիս մի քրդուհի և, բռունցքը սեղմելով, ասում է. «Ե՞րբ պետք է վերջապես ժամը գա, երբ մենք կկարողանանք նաև ձեզնից՝ գերմանացիներիցդ, վրեժ լուծել այն ցավի համար, որ հիմա դուք պատճառում եք մեզ: Մենք ձեզ համար ստիպված ենք մեր տղաներին տալ, իսկ նրանք երբեք չեն վերադառնա»:

Ուրֆայում մի քանի թուրքեր կային, որոնք ամեն գնով ցանկանում էին գերմաներեն սովորել: Ես ստիպված էի նրանց գոնե լեզվի այբուբենը սովորեցնել: Այդ աշխատանքի ընթացքում ինձ կրկին անգամ տեսանելի եղավ այն, ինչն արդեն գիտեի, որ թուրքը պիտանի չէ լուրջ աշխատանքի համար: Նրանցից միայն մեկը որոշ ընկալում ցուցաբերեց և ճանապարհ ընկավ՝ հնարավորության դեպքում Գերմանիա մեկնելու համար: Նա հասավ մինչև Կոստանդնուպոլիս: Այնտեղից նա մի քանի ամիս անց, քանի որ այդ ընթացքում պատերազմն ավարտվել էր, վերադարձավ Ուրֆա, իհարկե՝ առանց գերմաներեն սովորած լինելու:

Բուն թուրքերի շրջանում լայն տարածում գտած շարժում էր պանթուրքիզմը: Այդ կարգի ազգայնականներից շատերը չէին թաքցնում, որ հաղթանակով ավարտված պատերազմից հետո նրանք այնպես կանեն,

որ թուրքական հողի վրա ոչ մի օտարազգի, նաև գերմանացի չմնա: Թող թուրքերից որևէ մեկը չնեղանա, եթե հիշի մի գերմանացի սպայի խոսքը, որը կիսալուսնի երկրում մի գինարբուքի ժամանակ գերմանա-թուրքական բարեկամությունը փորձում էր ամրապնդել հետևյալ բառերով. «Պատերազմի ընթացքում մենք Թուրքիայի բարեկամը պետք է լինենք՝ պատերազմից հետո նրանց մեզ ծառայեցնելու համար»:

Մենք չենք կարող պնդել, թե հիմա Անտանտը, երբ նա հաղթանակել է, բացառում է այդ «ծառայեցում» կոչվածը: «Փոքր ազգերի ազատագրում» գեղեցիկ խոսքերի ետևում իրականում թաքնված է մերկ, սառը էգոիզմը, որի՝ թեև մշտապես շղարշված, սակայն խորապես ամրակայված դիտավորությունը նույնն է, ինչ գերմանացի սպայինը՝ «ծառայեցնել»:

38. Գերմանացիներն Ուրֆայում

Մենք արդեն բազմիցս խոսել ենք Ուրֆայում գտնվող գերմանացիների մասին, բայց արդարացի կլինի նրանց ևս մի քանի խոսք նվիրել: Արդեն բազմիցս հիշատակված պարոն Ֆրանց Էքարտը՝ գորգարդյունաբերության տնօրենը և հայ երեխաների գերմանական որբանոցի ղեկավարը, կարողացավ պատերազմի ընթացքում երախտավոր աշխատանք կատարել: Պատերազմի սկզբում նա իր ելույթներում հայերին կոչ էր անում լավ կշռադատված վարքագիծ ցուցաբերել, [քանզի] միայն քաղաքական խոհեմությունն էր կարող նրանց հնարավորություն ընձեռնել շրջանցելու վտանգավոր խութերը, որոնք ստեղծել էր պատերազմը նրանց համար: Նրա ելույթները, ցավոք, նույնքան քիչ էին ներգործում, որքան իմ՝ արդեն հիշատակված խորհուրդներն ու խնդրանքները:

1916-17 թթ. ձմռանը պարոն Էքարտը կարողացավ հարյուրավոր [ընչազուրկներին] հագուստ տրամադրել, որն իր գործարանում թողել էին աքսորված հայերը: 1917-18 թթ. ձմռանը, սովի ժամանակ նա, որպես թուրքական զինվորական հանդերձանքի հաստատության ղեկավար, կարողացավ բազում հայուհիների ապահովել աշխատանքով և փրկել նրանց սովամահությունից: Սակայն հետագայում Ուրֆա եկած, Անտանտին կողմ տրամադրված հայերը պարոն Էքարտի հանդեպ, որպես գերմանացու, բարյացակամ չէին: Նրանք նրան նույնիսկ մեղադրում էին հայկական ունեցվածքի հափշտակման մեջ, մի մեղադրանք, որից չի խուսափել այդ երկրում մնացած ոչ մի եվրոպացի կամ ամերիկացի:

Միայն թուրքական բանակի քայքայման ժամանակ պարոն Էքարտին հաջողվեց իր ընտանիքի հետ հեռանալ Ուրֆայից: Նրանք հաջողությամբ հասան Կոստանդնուպոլիս: Այնտեղ երեխաներից մի քանիսը հիվանդացան, այնպես որ դեպի Գերմանիա վերադարձը զգալիորեն հետաձգվեց:

Երբ ընտանիքը վերջապես նավ էր բարձրացել, նրա գլխավորին վերջին պահին շոգենավից իջեցրին: Անտանտի հանձնաժողովի կարգադրությամբ նա, այլ գերմանացիների հետ, ձերբակալվեց Պրինկիպո կղզում: Կինը և երեխաները ստիպված էին միայնակ շարունակել ճանապարհը: 1919 թ. մարտին Էքարտը փախավ գերությունից և թուրք-բուլղարական սահմանի վրա ինչ-որ մի սահմանային պահակակետում գնդակահարվեց:

Նրա կրտսեր եղբայրը՝ պարոն Բրունո Էքարտը, նույնպես պատերազմի առաջին երկու տարիներին Ուրֆայում էր գտնվում: Նա գիտեր, որ գործարանի ջրհորում երեք հայեր էին թաքնվել: Չնայած գործարանում շաբաթներ շարունակ մեծ թվով թուրքական զինվորներ կային, նա հայերին մատակարարում էր ապրելու համար ամենաանհրաժեշտը: Հետագայում նա նրանց օգնեց նաև փախչել և ազատվել:

Արդեն նշվել է, որ մի մայոր և մի ավագ լեյտենանտ Ուրֆայում մեկ տարի շարունակ թուրքական նորակոչիկների էին վարժեցնում: Այդ երկու պարոնները մի անգամ սպայական մի փոքրիկ հրաձգությամբ բնակչությանը մի իսկական բավականություն (թե՞ սարսափ) պատճառեցին: Հրաձգային վարժանքներն արդեն իսկ անսովոր էին, և հիմա՝ այդ զորավարժանքը: Բազմիցս կազմակերպվում էին զորքերի՝ ջահերով գիշերային երթեր, որոնք նույնպես անսովոր էին Ուրֆայում: Սովորաբար միշտ կեղտոտ փողոցները մայորի հրամանով մաքրվեցին: Եթե մայորն ավելի երկար մնար Ուրֆայում, քաղաքը պրուսական հանրահայտ տեսք ձեռք կբերեր, անկասկած՝ ոչ ի վնաս քաղաքի:

Երբ այդ սպաները հեռացել էին Ուրֆայից, եկավ մի փոքրահասակ գերմանացի ֆելդֆեբել իր ավտոշարասյունով՝ տասը գերմանացի զինվորներով: Նրանք պետք է Ուրֆայից ցորեն տեղափոխեին: Այդ օրերին ցորենի գինը, ինչպես արդեն նշվել է, անհավատալի չափով բարձրացել էր: Երբ այդ գերմանական զինվորներն Ուրֆայում էին գտնվում, գերմանացիների երեխաների, նաև ինձ համար գեղեցիկ ժամանակներ էին: Զինվորները ելումուտ ունեին մեր տներում: Շատ երգեր էին հնչում, իսկ անձրևների ժամանակ, երբ բեռնատարները հնարավոր չէր օգտագործել, մեր երեխաները երբեք ուրախ խաղընկերների պակաս չէին զգում:

Ձմեռային մի օր, երբ անձրևն ու ձյունը մտրակում էին պատուհանները, իմ տուն մտավ լիովին թրջված և սառած մի գերմանացի սպա: Կինս նրան չոր հագուստ տվեց և, այնուհետև, նստեցրեց տաք վառարանի կողքին: Պարոնը սկսեց անհագորեն ծխել իր ծխամորճը: Ջերմությունը, չոր հագուստը, հարմարավետ սենյակը, դրա հետ մեկտեղ իր ծխամորճը դրդեցին նրան մոռանալ, որ ինքը Թուրքիայի խորքում էր: Երբ ես ցերեկը աշխատանքից տուն եկա, նա ներկայացավ ինձ որպես թուրքական ծառայության մեջ գտնվող, գլխավոր շտաբի բժիշկ դոկտոր Ֆուրման՝ գինեկոլոգ Քյոլնից, որը նախքան պատերազմն այնտեղի՝ կանանց հիվանդանոցի

ղեկավարն էր: Մենք ուրախ էինք, որ ձմեռային եղանակը հյուրին թույլ չէր տա շուտ հեռանալ:

1918 թ. ամռանն Ուրֆա եկավ վերջին գերմանական զինվորը: Ես կլինիկայում էի: Մի հայուհի հայտնեց ինձ, որ ջրաղացում ինձ սպասում էր մի գերմանացի զինվոր, որը ցանկանում էր շտապ խոսել ինձ հետ: Ջրաղացը գտնվում էր կլինիկայի ետևում: Ու՞մ հանդիպեցի այնտեղ: Իմ առջև լիակատար հուսահատության մեջ կանգնած էր ավտոշարասյան մի զինվոր, որը նախկինում եղել էր Ուրֆայում: Շվարցվալդցի Հուբերը դասալքել և եկել էր այստեղ: Ես պետք է նրան ընդունեի: Նրան ժամանակավորապես իմ խաղողի այգին ուղարկեցի, որտեղ կինս ու երեխաներն էին, քանի որ ես պետք է աշխատանքս շարունակեի: Երկու ժամից հայտնվեց կինս՝ խիստ վրդովված վիճակում: «Մենք չենք կարող դասալիք ընդունել,- ասաց նա,- դա մեզ համար շատ ծանր կացություն կստեղծի»: Ես պետք է նրան ետ ուղարկեի: Այդուհանդերձ դրությունն այդքան էլ վտանգավոր չէր: Որպես շվեյցարացի՝ ես ունեի գործողությունների ազատություն: Մեկ այլ գերմանացի հյուրի՝ Բրեդեմանի հետ խորհրդակցելուց հետո մենք որոշեցինք Հուբերին առժամանակ խաղողի այգում թողնել: Այնտեղ նա նախ և առաջ պետք է կազդուրվեր, քանի որ լիովին հյուծված էր: Խաղողի այգում 14-օրյա հանգիստը արիություն ներշնչեց վիատվածին, որը շատ ուրիշների նման «կշտացել» էր սարսափելի պատերազմից: Հետո ես համոզեցի նրան կրկին միանալ իր շարասյանը: Ինձնից ստանալով Հալեպի գլխավոր շտաբի բժշկին՝ արդեն հիշատակված հյուրին ուղղված մի նամակ, Հուբերը հեռացավ: Գլխավոր շտաբի բժիշկը նույնպես մի քանի օր պահեց նրան, որից հետո միայն դասալիքը վերադարձավ իր շարասյուն, որտեղ նա առանց պատժի կարողացավ կրկին ծառայության անցնել: Ցավոք՝ նա մի քանի օր անց հիվանդացավ արևադարձային մալարիայով, ետ ուղարկվեց բժշկի մոտ և ևս մի քանի օր անց՝ մահացավ: Միայն այդ ձևով նա ընդմիշտ ազատվեց զինվորական ծառայությունից:

Այն ընդունելության համար, որ ես ցուցաբերել էի իր ճանապարհից շեղված այդ զինվորին և այն սիրալիր վերաբերմունքի համար, որը մենք դրսևորել էինք այլ գերմանացի զինվորների հանդեպ, գլխավոր շտաբի բժիշկը ցանկանում էր ինձ ներկայացնել «Պատերազմում օգնություն ցուցաբերելու համար» պատվավոր խաչով պարգևատրման: Ես խնդրեցի նրան չանել դա, քանի որ մենք միայն մեր սովորական պարտքն ենք կատարել, ինչը նույն կերպ կանեինք նաև Գերմանիայի թշնամիների համար:

Այստեղ, վերջապես, պետք է հիշատակել նաև մեկ ուրիշ գերմանացի սպայի մասին, չնայած նա թուր, անգամ՝ համազգեստ չէր կրում: Մենք նրան անվանում էինք «մորեխների գեներալ»: Նա երկար ժամանակ հյուրընկալվել էր մեր տանը: Նրա հետ էր նաև իր սիրալիր կինը: Այդ պարոնը, հենց ինքը՝ վերոհիշյալ փիլիսոփայության դոկտոր Բրեդեմանը, Մի-

ջագետքում օգտակար գործունեություն էր ծավալել: Մարդկանց միլիոնավոր թշնամիների էր նա ոչնչացրել: Այն ժամանակից, ինչ ես Արևելքում էի, ամեն տարի տեսնում էի, թե ինչպես էին այդ վնասատուները բազմիցս մարդկանց զրկում իրենց հանապազօրյա հացից, քանի որ ահռելի ավերածություններ էին կատարում ցորենի դաշտերում: Սակայն այն ժամանակից, ինչ այդ «գեներալը» սկսել էր հետևողականորեն նեղել նրանց, «մորեխային պատուհասը» զգալիորեն նվազել էր: Նրա նպատակային պայքարի ևս մեկ տարի, և մորեխները, որպես Միջագետքի մեծ չարիք, կդադարեին գոյություն ունենալ: Այդուհանդերձ՝ այդ «գեներալը» նույնպես ստիպված էր նահանջել և գնալ իր գերմանական հայրենիքը: Այն, ինչ թուրքական կառավարությունը տասնյակ տարիների աշխատանքի և միլիոնների ծախսման միջոցով չկարողացավ անել մորեխների ոչնչացման համար, երեք գերմանացիներ, որոնք գործում էին Անատոլիայում, Սիրիայում և Միջագետքում, կարող էին անել երեք տարվա ընթացքում:

39. Դրամանիշերը

Թուրքիան դրամանիշերն առաջին անգամ շրջանառության մեջ դրել էր վերջին թուրք-ռուսական պատերազմի ժամանակ՝ 1877 թվին: Սակայն օսմանյան ժողովուրդը վստահություն չուներ թղթյա այդ դրամանիշերի արժեքի հանդեպ: Դրա փոխարժեքը շարունակ ավելի էր նվազում, մինչև որ պատերազմից հետո մի դրամանիշի արժեքը ոսկու արժեքի միայն մեկ վեցերորդ մասն էր կազմում: Դրան հետևեց պետության ֆինանսական սնանկացումը: Կառավարությունն անխտիր բոլոր դրամանիշերը արժեզրկված հայտարարեց, և երկիրը դարձյալ վերադարձավ իր սիրելի մետաղադրամներին: Կային վաճառականներ, որոնք այն ժամանակ իրենց սենյակները դրամանիշերով էին պաստառապատում:

Համաշխարհային պատերազմը դրամանիշը կրկին կյանքի կոչեց: Սկզբում խիստ հրահանգների շնորհիվ թղթե դրամը հաստատուն էր մնում: Դա 1916 թ. ապրիլին էր: Բոլոր ոսկեդրամները պետք է հանձնվեին պետությանը, բայց ոչ ոք դա չէր անում: Այդուհանդերձ ոսկին արագ դուրս եկավ շրջանառությունից: Ուրֆայում մի հարուստ թուրք, որը չէր ցանկանում որպես վճարման միջոց դրամանիշեր ընդունել, աքսորվեց Կոնիա: Այլ վայրերից նույնպես որոշ ընդդիմացողներ աքսորվեցին: Այն, որ ոստիկանությունը հանկարծակի ներխուժում էր խանութներ, բացում չհրկիզվող գանձարկղերը, այնտեղ գտնվող ոսկին վերցնում և փոխանակում դրամանիշերով, չնպաստեց դրամանիշերի արժեքի բարձրացմանը: Ոսկեդրամները շարունակում էին գաղտնի շրջանառվել: Ի վերջո, կառավարությունը նաև այդ հարցում սխալվեց: Արդեն մի քանի ամիս անց դրամանիշն արժեզրկվեց, բայց ոսկին շրջանառվում էր ինչպես առաջ: Բանկերին, այնուամենայնիվ, արգելվում էր վճարումները կամ գործարքները ոսկով կատարել: Որքան ավելի էր պատերազմը երկարում, այնքան ավելի էր արժեզրկվում դրամանիշը, և որքան մոտ էր երկրի սահմանը, այնքան ավելի ցածր էր նրա գինը: Կոստանդնուպոլսում այն տևականորեն ավելի բարձր էր, քան գավառներում, և վերջիններում էլ՝ ամենուր տարբեր: Դրա հետևանքով մեծ գումարներ էին չարաշահվում: Վաճառականը Հալեպում ոսկու դիմաց դրամանիշեր էր գնում՝ մեկ ոսկու համար ստանալով վեց դրամանիշ, ապա դրանք վաճառում՝ Կոստանդնուպոլսում, երեքը կամ չորսը՝ մեկ ոսկե ֆունտով: Նույնիսկ զինադադարից հետո, երբ բրիտանացիներն արդեն զբաղեցրել էին Մոսուլն ու Հալեպը, թուրքական դրամանիշը Մոսուլում շատ ավելի ցածր արժեք ուներ, քան Հալեպում: Մի հրեա վաճառական 120.000 ֆրանկի դրամանիշեր գնեց, ապա 1200 ֆրանկ վճարելով՝ սավառնակով Հալեպ թռավ և այնտեղ վաճառեց իր թղթադրամները՝ ստանալով 150.000 ֆրանկի շահույթ:

Ուրֆայի համար անսովոր էր, որ, երբ սկսվել էր բրիտանական նվաճումը, թուրքական դրամանիշերի արժեքը բարձրացավ: Ապագան ցույց կտա՝ արդյոք վաճառականները կրկին իրենց սենյակները թղթադրամներով կպաստառապատեն, թե՝ ոչ: Արաբներն արդեն պատերազմի ընթացքում հոգ էին տարել, որ այդ վիճակում չհայտնվեին: Դե նրանք այնպիսի սենյակներ էլ չունեն, որոնք պաստառի կարիք ունենան:

Ես ցանկանում էի մի արաբից մեկ լիտր թթվասեր գնել և ասացի նրան, որ դրա համար կվճարեմ 200 դրամանիշ: Սակայն նա մատնացույց արեց իր լայնարձակ վերարկուն՝ ասելով. «Եթե դու անգամ վերարկուս դրամանիշերով լցնես, ես քեզ դրա դիմաց կաթ չեմ տա, բայց եթե դու ինձ մեկ մետալիկ (5 ֆրանկանոց մետաղադրամ) տաս, դու կստանաս այնքան կաթ, որքան ցանկանաս»:

Թուրքիայում, հատկապես Պաղեստինյան ճակատում գտնվող գերմանացի սպաները նույնպես շուտով տեսան, որ արժեթղթերով ոչինչ հնարավոր չէ ձեռք բերել: Այդ պատճառով հետագայում Բեռլինում հատվեցին թուրքական ոսկե ու նաև՝ արծաթե դրամներ, ու դրանք միլիոններով բերվեցին Թուրքիա: Իսկ ոսկին այսօր հենց Գերմանիայում որքան անհրաժեշտ կլիներ:

40. Սենդամթերքի գները

Միջագետքը դեռևս պատերազմի երկրորդ տարում այն երկրամասերի թվին էր պատկանում, որտեղ սենդամթերքը դեռ էժան էր: 1915 թ. աշնանը մեկ կիլե՝ (160 կգ) ցորենի համար վճարվում էր 10 ֆրանկ: 1918 թ.

գարնանը, սակայն, նույն քանակի ցորենի գինը հասավ 3200 ֆրանկի, եթե վճարվում էր դրամանիշերով, իսկ եթե կարողանում էին ոսկով վճարել՝ ապա այն ձեռք էր բերվում 650 ֆրանկով: Դեպի Բաղդադ իմ ճանապարհորդության ժամանակ ես չորս ձուն գնում էի մեկ մետալիկով՝ (5 պֆենինգով), բայց անցյալ տարի հունվարին անհրաժեշտ էր մեկ հատի համար 2,25 ֆրանկ վճարել: Մեկ օկա, (1225 գրամ) միսը նույնպես պատերազմի առաջին տարում դեռ 60 պֆենինգով կարելի էր ձեռք բերել, բայց հետո այն պետք է գնվեր 16 ֆրանկով: Եթե մեկ օկա կարագը նորմալ ժամանակներում կարելի էր 3 ֆրանկով գնել, նրա գինը հասավ 50 ֆրանկի: Անհավանական կերպով թանկացել էր նաև նավթը: Թիթեղյա մեկ տակառի համար, որը 18 լիտր է տանում և սովորաբար կարելի էր գնել 5 ֆրանկով, հետագայում պետք է 2000 ֆրանկ վճարվեր: Բոլոր ներմուծվող ապրանքները միջին հաշվով շատ ավելի թանկացան, քան՝ տեղականները: Դա նաև հասկանալի է, քանի որ ներմուծումը ամբողջովին դադարեցվել էր: Միայն այն բանից հետո, երբ Բաղդադն ընկավ, հնարավոր դարձավ այնտեղից մաքսանենգ ճանապարհով դարձյալ ապրանքներ բերել Ուրֆա, եթե նույնիսկ՝ դեռ չափազանց բարձր գներով: Առանձնապես թանկացավ բամբակե բարակ գործվածքը, որն անհրաժեշտ էր մահացածներին պատանքելու համար: Պատճառը դրա պահանջարկի մեծացումն էր, քանի որ համաճարակներն ահռելի հունձ էին անում: Շատ մարդիկ ստիպված էին իրենց հանգուցյալներին առանց պատանքի հողին հանձնել:

41. Լուսաբաց

Աքսորյալ հայերի մնացորդները ստիպված էին երկար սպասել ավելի լավ ժամանակների: Քանի դեռ շարունակվում էր պատերազմը, հույս չկար, թե նրանք դարձյալ կվերադառնան հայրենիք, կամ նույնիսկ այնտեղ, որտեղ գտնվում էին կկարողանան ազատ տեղաշարժվել: Սակայն ինչպես ամեն բան իր ժամանակն ունի, պատերազմը նույնպես ի վերջո պետք է ավարտվեր:

Մենք Ուրֆայում զարմանում էինք, թե ինչպես էին թուրքական ճակատները դեռ դիմանում: Ուրֆայում վիստում էին դասալիքները, որոնցից շատերը բազմիցս դասալքել, կրկին բռնվել, սակայն միշտ գտել էին հետ գալու ճանապարհը: Ուստի մենք ամենևին չզարմացանք, երբ 1918 թ. սեպտեմբերին հայտնի դարձավ Նաբլուսի և Նազարեթի անկումը, որոնց շուտով պետք է հաջորդեր նաև Դամասկոսը: Այդ ժամանակ ես Հալեպում էի ու շտապ վերադարձա Ուրֆա, քանի որ անգլիացիները շուտով կարող էին նաև Հալեպում հայտնվել: Տեղեկությունները, որոնք ես բերեցի Ուրֆա, այնտեղի գերմանացիներին պետք է դրդեին հեռանալ: Պարոն դոկ-

տոր Բրեդեմանն ու իր կինն անմիջապես ճանապարհ ընկան, ժամանակին հասան Հալեպ և այնտեղից՝ Կոստանդնուպոլիս:

Ուրֆայում զինադադարի կնքումից հետո թուրքերի շրջանում հակագերմանական տրամադրություն ի հայտ եկավ: Ես արդեն լսել էի, որ թուրքերը ցանկանում էին բռնագրավել գերմանական գորգագործարանը և մեր հիվանդանոցը: Այդ երկու հաստատություններն էլ այն ժամանակ գտնվում էին իմ իրավասության ներքո, քանի որ առաջինը պարոն Էքարտը մեկնելիս հանձնել էր ինձ, իսկ երկրորդը՝ հիվանդանոցը, ես զինադադարից առաջ էի ետ ստացել: Գործարանում թուրքերը ցանկանում էին արհեստագործական դպրոցը տեղավորել: Այն մինչ այդ գտնվում էր ամերիկյան հաստատությունում, որը նույնպես զինադադարի ժամանակ պետք է վերադարձվեր ինձ՝ որպես ամերիկյան հաստատության ներկայացուցչի: Սակայն բարեբախտաբար թուրքերը վերջին պահին մի ավելի լավ ելք գտան: Նրանք ցանկանում էին իրենց դպրոցը մի այնպիսի շենք տեղափոխել, որտեղից որոշ ժամանակ անց չէին վտարվի: Մեր հիվանդանոցը ես հռչակեցի շվեյցարական հաստատություն, քանի որ այն գրանցված էր որպես մի շվեյցարացու սեփականություն: Շինությունների խնդրում ևս կարողացա բարեհաջող կերպով հաղթահարել փորձությունները: Թուրք խաժամուժ ամբոխն ըստ ամենայնի հայհոյում էր գերմանացիներին: Անշուշտ կային ավելի ազնիվ անձինք, ովքեր չէին կարող միանգամից բարեկամից վերածվել թշնամու:

Հազիվ էր Անտանտը Կոստանդնուպոլիս մտել, երբ գավառներից մեկ այլ քամի փչեց: Հրամաններ եկան այն մասին, որ բոլոր հայերը, ովքեր գտնվում էին մահմեդականների տներում, պետք է ազատ արձակվեին, նույնիսկ այն հայ կանայք, ովքեր ամուսնացած էին մահմեդականների հետ:

Ազատ արձակվեցին նաև այն բոլոր հայ զինվորները, որոնք պատերազմի սկզբից ի վեր որպես հավատարիմ օսմանացիներ գտնվում էին ռազմի դաշտում, նրանց թվում՝ Ուրֆայից մեկնածներից պատերազմը վերապրած մոտ 200 հոգի: Առայժմ, սակայն, նրանց մեծ մասը Հալեպում էր մնացել, քանի որ Ուրֆան դեռ շատ անապահով [քաղաք] էր նրանց համար: Միայն այն բանից հետո, երբ բրիտանացիները գրավեցին Ուրֆան, նրանք բոլորը համարձակվեցին վերադառնալ Աբրահամի քաղաքը, որտեղ, սակայն, նրանք իրենց հարազատներից այլևս ոչ ոքի չգտան: Չքացել էր նաև նրանց ողջ ունեցվածքը:

Շատ լավ էր, որ ամերիկյան շենքերը կրկին իմ ենթակայության տակ էին անցել: Չնայած դրանք ինձ լիովին դատարկ վիճակում հանձնվեցին, այնուհանդերձ կարող էին որպես որբանոց օգտագործվել: Ռմբակոծության պատճառած ավերածությունները ես 1916 թ. կարողացել էի վերացնել:

Թուրքերը չէին շտապում հանձնել իրենց տներում գտնվող հայերին: Միայն նրանց էին դուրս հանում փողոց, ովքեր հիվանդ և տկար էին: Այդպիսիներն այնուհետև գալիս էին մեզ մոտ, և մենք նրանց բոլորին տեղավորում էինք որբանոցում: Ուրիշները, որոնք լսել էին, որ իրենք ազատ են, փախչում էին մեզ մոտ, ընդ որում մենք տարբեր բաների էինք ականատես լինում: Երբ մի այդպիսի հայուհի էր գալիս, որն աղջիկ ժամանակ մի թուրքի տուն էր ընկել, միանգամայն հասկանալի էր, որ նա հայտնվում էր իր բոլոր զարդերով և հաճախ՝ շատ գեղեցիկ հագուստներով: Նրա ետևից գալիս էին թուրքերը, որոնք նրան նվիրել էին այդ իրերը և պահանջում էին վերադարձնել դրանք: Կինը փախչում էր մեզ մոտ, իսկ իր ծծկեր երեխային, որին այլևս չէր ցանկանում տեսնել, թողնում էր թուրքերի մոտ: Այնուհետև գալիս էր երեխայի հայրը, բերում ծծկերին և խնդրում, որ մենք հոգ տանեինք, որ փախած մայրը շարունակեր կուրծք տալ: Մայրը, սակայն, ընդդիմանում էր դրան, քանի որ գիտեր, որ երեխան, ի վերջո, պատկանելու է թուրքին:

Շուտով ես հասկացա, որ չեմ կարող որբանոցը, որտեղ ինքս չէի ապրում, թողնել առանց պաշտոնական պահպանության: Այդ պատճառով ես նահանգապետից մի ժանդարմ խնդրեցի, որը մեզ ազատում էր հաճախ շատ պահանջկոտ մահմեդականներից:

Երբեմն թուրքական տներից հայերին դուրս բերելը շատ դժվար էր լինում: Միայն տկարներով հայ ազգը չէր կարող վերականգնվել: Այդ պատճառով մենք ցանկանում էինք հնարավորինս շատ առողջ մարդկանց դուրս բերել թուրքերի տներից: Եթե մենք տեղեկանում էինք մի հայ երեխայի կամ կնոջ անվան կամ նրա գտնվելու վայրի մասին, կարող էինք ոստիկանությանը տեղյակ պահել և խնդրել, որ նրանց մեզ մոտ բերեն, ինչն այնուհետև մեծ մասամբ կատարվում էր: Մեզ համար, սակայն, հաճախ պարզ չէր՝ արդյոք տվյալ անձը նույնպես կամենու՞մ էր լքել թուրքական տունը: Երեխաների դեպքում կարճ դատավարություն էր տեղի ունենում: Նրանք կարող էին ընդդիմանալ, կարող էին նաև գոռալ. «Ես գյավուր չեմ, այլ մահմեդական», բայց պարզապես բերվում էին ոստիկանության կողմից: Այդպիսի երեխաները մեծ մասամբ արդեն մի քանի օր անց որբանոցում երջանիկ և ուրախ էին: Այլ էր, սակայն, երբ մի հայուհի էր բերվում, որը դա չէր ցանկանում: Այնուհետև նա փորձում էր փախչել որբանոցից: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ նրանցից շատերը մուսուլմանական տներում վատ չէին ապրում, ունեին առատ սնունդ, լավ հագուստներ և անկողին: Նրանց բերելու ժամանակ նրանցից վերցվում էին լավագույն զգեստները, իսկ որբանոցում ոչ միայն սննդի, այլև հագուստների և մահճակալների պակաս կար: Հաճախ մենք երեք կամ չորս հոգու համար միայն մի անկողին ունեինք: Ջինադարարի կնքմամբ սպառվեցին մեր գումարները, քանի որ այլևս ոչ մի բանկ գումար չէր տրամադրում: Այդ պատճառով ես

սկզբում վերցրեցի գորգագործարանի գանձարկղի պատկառելի պարունակությունը, ապա մեկնեցի Հալեպ՝ բրիտանացիներից դրամ խնդրելու համար: Միայն թե նրանք ինձ սպասել տվեցին: Սկզբում նրանք պետք է իմանային, թե ո՞վ էի ես:

Թուրքական ամենահարուստ տներից մեկում մի կրթված և շատ գեղեցիկ հայ աղջիկ ամուսնացել էր մի խուլուհամր թուրքի հետ: Այդ աղջկա [ճակատագրի առիթով] հետաքրքրվում էին Շվեյցարիայում, և հետաքրքրություն էր տարվում: Մենք գիտեինք, որ նա դժբախտ ճակատագիր ուներ, ուստի չէինք ուզում նրան թողնել բախտի քմահաճույքին: Չնայած մենք շարունակ տեղեկացնում էինք ոստիկանությանը, նրան չէին բերում մեզ մոտ: Թուրքն իր հարստության շնորհիվ ավելի ուժեղ էր, քան ոստիկանությունը:

Մի օր ինձ մոտ եկավ մի ազնվատոհմ թրքուհի՝ մի բարձրաստիճան պաշտոնյայի կինը: Նա արցունքներն աչքերին մեզ խնդրում էր ոստիկանության միջոցով Սվասից մի հայ կնոջ պահանջել, քանզի իր ամուսինը լիովին անտեսում է իրեն և ամբողջությամբ նվիրվել է միայն այդ հայուհուն: Ինքն իր ամուսնուն երեք կայտառ երեխաներ է պարգևել, սակայն ամուսինը՝ մի բարեսիրտ մարդ, լիովին խելքահան է արվել այդ «պոռնիկի» կողմից: Թրքուհին ընկավ ոտքերս և խնդրեց ազատել իրեն այդ «պոռնիկից»: Այնուհանդերձ հայուհին, որին մենք ճանաչում էինք, չէր կարող այդքան վատը լինել: Նա, ակնհայտորեն, նախընտրել էր շատերի պես փողոցում հայտնվելու փոխարեն մնալ թուրքի մոտ: Թուրքերը, որոնց հայ կանայք մեզ մոտ էին գալիս, ժամանակ առ ժամանակ փորձում էին նրանց մեղադրել գողության մեջ: Մեկը 1000 պիաստր, մյուսը երկու և ավելի հազար պիաստր պետք է տնից վերցրած լինեին: Նրանք հույս ունեին նման մեղադրանքների միջոցով դարձյալ տիրանալ այդ կանանց: Իրականում այդ կանայք գողեր չէին: Նրանց հավատարմությունը հայտնի է Արևելքում: Սակայն հենց այն պատճառով, որ նրանք այդքան լավն էին, թուրքերը հաճախ ամեն ինչ անում էին նրանց ետ ստանալու համար:

Որ կառավարությունը լրջորեն էր վերաբերվում հայուհիներին ազատելու խնդրին, հավաստում է հետևյալ արտառոց իրողությունը: Երբ արդեն հրաման էր արձակել, որ հայուհիներին այլևս չէր կարելի նեղություն պատճառել, և բոլորը պետք է ազատ արձակվեն, մի թուրք հանցանք գործեց մի աղջկա հանդեպ, որն արդեն երեք տարի իր տանն աղախին էր, և որին նա մինչ այդ հանգիստ էր թողնում: Աղջկան հաջողվում է փախչել: Նա բողոք ներկայացրեց բռնաբարողի դեմ: Նահանգապետի հրամանով թուրքը պետք է աղջկան 100 ոսկի ֆունտ վճարեր, որը համարժեք էր 2300 ֆրանկի:

Մեր որբանոցում օրեցօր ավելացող երեխաների և կանանց բազմության համար ես այլևս դրամ չունեի: Անգլիացիները Ծննդյան տոներին ինձ

դրամական միջոցներ ուղարկելու՝ իրենց խոստումը չկատարեցին: Ուստի՝ փետրվարի վերջին ես կնոջս ուղարկեցի Հալեպ, որպեսզի նա անգլիացիներին համառորեն հիշեցներ իրենց խոստման մասին: Վերջապես նրան հաջողվեց օգնություն ստանալ: Ես ինձ հաճախ հարց եմ տվել, թե ինչո՞ւ անգլիացիներն ինձ այդքան սպասել տվեցին, այն դեպքում, երբ Հալեպում տեղի կարիքավոր հայերի համար նրանց կողմից մեծ գումարներ էին ծախսվում: Ես, անշուշտ, իրավացիորեն ենթադրում եմ, որ դա պայմանավորված էր զրպարտությամբ: Ծննդյան տոներից փոքր-ինչ առաջ մեր հայ օգնական բժիշկը, որը նախկինում մեր հիվանդանոցում էր աշխատում և Ուրֆայում այլևս իրեն անվտանգ չէր զգում, այնտեղից փախչելով՝ հասավ Հալեպ: Այդ պարոնը պետք է ինձ վարկաբեկած լիներ անգլիացիների մոտ: Նա, ինչպես շատ հայեր, բավական վատ էր վերաբերում այն բանին, որ ես պատերազմի ողջ ընթացքում չէի թաքցնում գերմանացիների հանդեպ իմ համակրանքը: Նրանց կարծիքով, սակայն, գերմանացիների բարեկամը հայերի թշնամին էր, եթե նույնիսկ նա այդքան շատ բան էր անում այդ դժբախտ ժողովրդի համար: Այն մասին, սակայն, որ ես իմ տանն ապաստան էի տրամադրել նաև չորս ֆրանսիացիների և մեկ անգլիացու, որոնք ներկայլված էին Ուրֆայում, այդ բժիշկը չէր ասել: Հայերի այդ հոգեբանությունը միանգամայն հասկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ թուրքերը շարունակ մատնանշում էին, թե [գերմանական] կայսրն է կարգադրել հայ ժողովրդի աքսորումը:

1919 թ. մարտին Ուրֆայում հայտնվեց ամերիկյան մի հանձնաժողով, որը պետք է քննություն կատարեր հայերի կարիքների, ինչպես և՝ մինչ այդ իրագործված օգնության աշխատանքների վերաբերյալ: Այդ պարոններն իջևանեցին մեր տանը: Ես նրանց ներկայացրեցի նաև իմ հաշվապահական գրքերը, ընդ որում ես մեծ բավականություն ապրեցի, որ նրանք իմ աշխատանքը բարձր գովեստի արժանացրին և հարկ համարեցին ասել, որ կայսրությունում օգնության աշխատանքներով զբաղվող ոչ ոք, իրենց կարծիքով, դրամն այնպես նպատակային չէր օգտագործել, ինչպես ես: Հազիվ էին այդ պարոնները նորից Հալեպ հասել, երբ անգլիացիներն ինձ դրամ ուղարկեցին՝ առանց իմ կողմից նրանց այդ մասին խնդրելու: Համապատասխան ատյանում այժմ գիտեին, թե ում հետ գործ ունեն:

42. Ավերված թաղամասը

Քաղաքի հայկական թաղամասը 1915 թ. նոյեմբերին լիովին թալանվել էր: Միաժամանակ շատ տներ այրվել և փուլ էին եկել: Քանի որ տանիքները մեծ մասամբ հարթ էին՝ կավով և խճով պատրաստված, ուստի անձրևային շրջանը սկսվելուց անմիջապես հետո նորոգման կարիք ունեին: Ում տանիքը չէր նորոգվում, շուտով քանդվում էր: Ուստի հենց առաջին ձմռանը շատ տանիքներ փլվեցին: Նաև պատերից մեծ մասամբ միայն առանձին հատվածներ էին կանգուն մնացել: Այն տները, որոնք դեռ որոշ չափով պատշաճ վիճակում էին, շուտով նոր բնակիչներ ունեցան ի դեմս այն քրդերի, որոնք որպես վտարանդիներ Ուրֆա էին եկել: Նրանք ամենևին շահագրգռված չէին տները վերանորոգել, քանի որ կարծում էին, որ շուտով դարձյալ վերադառնալու էին իրենց հայրենիքը: Ուստի՝ մինչև իսկ գողանում էին փայտի և մետաղի յուրաքանչյուր կտոր՝ եղած ամեն բան, հանում էին գերանները: Նրանց ինչ հոգ, որ տունը փուլ էր գալիս: Այդպիսով համարյա ամբողջ թաղամասը հայտնվեց փլատակների մեջ: 2300 տներից հազիվ 50-ն էին որոշ չափով գործածելի մնացել: Դրանք մեծ մասամբ այն տներն էին, որոնք սահմանակցում էին թուրքական թաղամասին և ռմբակոծությունից անմիջապես հետո զբաղեցվել էին տեղի թուրքերի կողմից:

Բարի քաղին օգնում էր հայերին, որքան կարող էր: Նա առաջարկել էր կենդանի մնացած հայերին վերադարձնել հայկական գույքը, որչափ որ այն դեռ առկա էր, բայց նահանգապետն ընդդիմացավ: Ուստի քաղին հիմնականում միայն ժամանակ առ ժամանակ էր կարողանում, որչափ որ օրենքով հնարավոր էր, օգնություն ցուցաբերել: Այն, որ որոշ հայեր այժմ փորձում էին այլ ժառանգորդների բացակայության պարագայում տիրանալ նաև անհետացած քեռու տանը կամ այգուն, արդարացի էր: Նահանգապետը ոչ մի գնով չէր ցանկանում ողջ գույքը պարզապես փոխանցել Հայկական ազգային կոմիտեին, այն իրավասուներին վերադարձնելու համար:

Մեր որբանոցում շուտով տեղի պակասությունն իրեն զգացնել տվեց: Ուստի ես խնդրեցի վերադարձնել քաղաքի առջև գտնվող հայկական եկեղեցին, որը մինչև վերջերս ծառայում էր որպես թուրքական անկելանոց: Ես հույս ունեի, որ կկարողանամ այն անմիջապես ստանալ: Դեռ մի քանի ամիս առաջ ես եղել էի այնտեղ և ուրախացել, որ դռներն ու պատուհանները դեռ տեղում էին: Սակայն, երբ այժմ ինձ տարան այնտեղ, որպեսզի ես կամ հայերը, որոնց ես ներկայացնում էի, նրան տիրանայինք, ես սարսափեցի: Այլևս ոչ մի պատուհան, ոչ մի դուռ չկար: Ամբողջ փայտյա մասը թալանվել էր, և որպես դրա հետևանք՝ շատ տեղերում քարե պատերը փուլ էին եկել: Այդ շինությունն անմիջապես զբաղեցնելու փոխարեն ես այժմ ստիպված էի նախ ամենաանհրաժեշտ նորոգումներ կատարել տալ: Փայտի և ապակու բացակայության պատճառով դռներն ու պատուհանները ժամանակավորապես հնարավոր չէր տեղադրել, բայց գարունը մոտենում էր, և այդ պայմաններում էլ կարելի էր այդտեղ երեխաներին տեղավորել: Ամերիկացիներն ուզում էին իմ պահանջի հիման վրա ոչ միայն այդ շինության, այլև ամբողջ թաղամասի համար ապակին և փայտը Ամերիկայից ուղարկել: Այսպիսով մենք հույս ունեինք մինչև հաջորդ ձմեռ ինչ-որ բանի հասնել:

1919 թ. մարտին մենք եկեղեցին բնակեցրինք հայ երեխաներով, քանզի մենք չէինք կարող մեծ որբանոցում կանանց և երեխաներին միասին բնակեցնել: Մուսուլմանական տներում տարիներ շարունակ ապրելուց մարդիկ այնքան շատ էին այլասերվել, որ բաժանումը հույժ անհրաժեշտ դարձավ: Մեզ հանձնված կանանց մեջ կային նաև այնպիսիները, որոնք սպասում էին իրենց շուտափույթ ծննդաբերությանը:

Այդ օրերին մեծաքանակ դրամի պակասի հետ զուգահեռ մեզ, հիմնականում, տան օգնական ուժերն էին պակասում: Ես պետք է այդ բոլոր մարդկանց ոչ միայն վերահսկեի, այլև՝ աշխատանքի վարժեցնեի: Ուրֆայի ֆրանցիսկյան միանձնության կանայք սիրով ընդառաջեցին օգնության իմ խնդրանքին: Մենք կարողացանք նրանց մոտ ուղարկել հարյուր կին և մի քանի երեխա, որոնք նրանց մոտ անմիջապես սկսեցին զբաղվել օգտակար ձեռքի աշխատանքով:

Շուտով եռանդագին աշխատանք սկսվեց նաև մեր մանածագործարանում: Նախկինում այդ արհեստով Ուրֆայում միայն տղամարդիկ էին զբաղվում, բայց զրկանքներով առատ վերջին տարիներին նաև կանայք սովորեցին այդ գործը: Մեր կոշկակարանոցը նույնպես արագ գործարկվեց: Ֆրանցիսկյանները նույնպես կազմակերպեցին նման մի բան, և դրա հետ մեկտեղ՝ նաև մի ատաղձագործական արհեստանոց:

Բողոքական եկեղեցու կառույցը, որը մենք, չնայած առանց դռների և պատուհանների, ետ ստացանք, վերածեցինք դպրոցի: Ալմաստը, որի տարագրման պատմությունը ես արդեն պատմել եմ, նշանակվեց ավագ ուսուցչուհի: Դժվար աշխատանք էր բոլոր վայրիացած երեխաներին կրկին դպրոցին և կանոնավոր կյանքին վարժեցնելը: Թուրքերից նրանք ծուլություն էին սովորել և դրան նրանք նույնքան լավ էին տիրապետում, ինչպես իրենց ուսուցիչները: Մուսուլմանական տներում անցկացրած երեք-չորս տարիները չէին կարող ընկալունակ հայերի համար անհետևանք լինել, և ես վախենում եմ, որ այդ բացասական ազդեցությունը դեռ երկար կտևի:

43. Զանգերի զոդանջները և այլ բաներ

Բողոքական եկեղեցին ռմբակոծությունից հետո որոշ չափով կանգուն էր մնացել: Միայն զանգակատունն էր զանգի հետ փուլ եկել: Արկից վնասվել էր նաև գմբեթներից մեկը, սակայն այդ բաց անցքը փակել էին հենց իրենք՝ թուրքերը, երբ նրանք եկեղեցին օգտագործում էին որպես զորանոց իրենց նորակոչիկների համար: Ամբողջ շարժական գույքը պատուհանների և դռների հետ միասին կողոպտվել էր: Եթե զանգն այդքան ծանր չլիներ, անկասկած այն չորս տարի տիղմի մեջ ընկած չէին թողնի: Միայն լեզվակը և զանգակալի երկաթյա մասերն էին գողացվել: Հայկական մեծ մայր տաճարն ավելի վատ վիճակում էր: Ռմբակոծության հետևանքով [շինության] որոշ անկյուններ լիովին քանդվել էին: Իհարկե եկեղեցում նույնպես շարժական ոչինչ չէր մնացել, փայտյա բոլոր իրերը, նույնիսկ քարե սալերով սալարկված հատակը և մեծ, հարթ տանիքի քարե սալերը գողացվել էին: Ուրֆայում ներկայումս մնացած հայերի համար հնարավոր չի լինի մայր տաճարը կրկին կարգի բերել, և ես վախենում եմ, որ պատմական այդ հուշարձանը շուտով կվերածվի սոսկ փլատակների կույտի:

Քանի որ մենք 1919 թ. փետրվարից բողոքական եկեղեցում կրկին կարող էինք ժամերգություն կատարել, ես կարևոր էի համարում, որ շուտով զանգը նույնպես դարձյալ իր ղողանջները տարածեր քաղաքի վրա: Ասորիները և կաթոլիկները, որոնք նույնպես փոքր զանգեր ունեին, 1915 թ. աշնանից թուրքերի հանդեպ տածած երկյուղից այլևս չէին համարձակվում հնչեցնել դրանք:

Ես պատվիրեցի մի փայտե զանգակալ պատրաստել և զանգը վեր բարձրացնել: Մարտի առաջին կիրակի օրն այն պետք է իր ձայնն առաջին անգամ կրկին հնչեցներ: Մենք բոլոր հայկական տները տեղեկություն էինք ուղարկել այդ մասին, իրազեկել էինք նաև դեռ մուսուլմանական տներում գտնվող քրիստոնյաներին: Այսպիսով, կիրակի օրը առավոտյան մի հոծ՝ մոտ 2000 հոգիանոց բազմություն էր հավաքվել: Ես երեխայի նման ուրախանում էի այն պահի համար, երբ զանգը քրիստոնյա ազգի բոլոր դաժան տանջողներին կծանուցեր՝ հայերը վերածնվել են, նրանք ապրում են և կրկին հավաքվում են Աստծո տանը:

Հայ ազգային կոմիտեի ցանկությամբ զանգն առաջին անգամ կրկին հնչեցնելու արտոնությունը պետք է աճուրդի դրվեր: Ամենաշատ գումարն առաջարկողը՝ դեղագործի տղան, որն ուրախությամբ 200 ֆրանկ վճարեց, իրավունք ստացավ տանիքի վրա բարձրանալ և երկաթե մեծ մուրճով հնչեցնել զանգը: Երբ զանգի առաջին ղողանջները քաղաքի վրա տարածվեցին, լեփ-լեցուն եկեղեցում լաց ու կոծ սկսվեց. դրանք ուրախության և ցավի արցունքներ էին: Չկար մեկը, որը խորապես հուզված չլիներ:

Ի՞նչ վնաս կարող էին պատճառել թշնամաբար տրամադրված մահմեդականների՝ այդ պահին տեղացող անեծքները: Ուրֆայի քրիստոնյաները նույնպես ապրելու են և, եթե Աստված կամենա, շուտով՝ առանց Մահմեդի սրից վախենալու, և ես հույս ունեմ՝ (ի սեր Արևելքի)՝ իրենց Տիրոջ և Ուսուցչի ճշմարիտ ըմբռնումով:

Երկու օր հետո հայկական ազգային տոնն էր: Հայերը ցանկանում էին այն եկեղեցում տոնել: Դա հիշարժան օր էր: Բոլորը ցնծում էին, երբ ընթերցվեցին Փարիզում գտնվող հայկական պատվիրակության հեռագրերը: Բոլորն արդեն իրենց համարում էին ազատ Հայաստանի տերը: «Հայաստան ծնվեց, Հայաստան ծնվեց», այսպես էին գոչում տանջվածներն ու հալածվածները միասնական, տենչալից հույսով և աննկարագրելի ցնծու-

թյամբ: «Փառք Աստծո»-ն կրկին ու կրկին հնչում էր մեծ սրահում: Ես նրանց հետ ուրախանում էի, ինձ հուզված էի զգում, չնայած ցնծությունն ինձ դեռ վաղաժամ էր թվում: Հասկանալի էր, որ երիտթուրքերի սրից ազատվելու անգամ չնչին հեռանկարն անմարդկային դաժանություններից տառապած այդ [մարդկանցից] յուրաքանչյուրի սիրտը պետք է ուրախությամբ լցներ: Չնայած ես հայ չեմ, բայց անցած 20 տարիների ընթացքում նրանց հետ տառապել և սգացել եմ: Մինթե չպետք է նրանց հետ ուրախանայի:

Հաջորդ օրը Հալեպից հայեր եկան Ուրֆա: Լուրը, որ նրանք բերեցին, քարացրեց բոլոր հայերի սրտերը, որոնք մեկ օր առաջ ուրախությունից ցնծում էին: Հալեպում բրիտանական կայազորի աչքի առջև մի քանի օր առաջ մոտ 100 հայեր կրկին սպանդի էին ենթարկվել թուրքերի կողմից: Սպանդն ուրեմն դեռ չէր ավարտվել: Եթե այնտեղ անգլիացիների աչքի առջև ջարդը հնարավոր էր, ապա ինչ չէր կարող տեղի ունենալ Ուրֆայում, ուր անգլիացիներն անգամ չէին էլ եկել:

Հաջորդ կիրակի ես ջանացի հանգստացնել եկեղեցում հավաքվածներին: Քանի որ ազգային տոնի ժամանակ ես խոսել էի արշալույսի և արևի մասին, որոնք նոր-նոր ծագում էին հայ ժողովրդի համար, ուստի այժմ ստիպված էի ասել, որ բնության մեջ նույնպես փոթորիկից հետո, երբ արևը հիասքանչ փառահեղությամբ դուրս է գալիս, շատ հաճախ արևի առաջ կրկին ամպեր են հայտնվում: Սակայն, ի վերջո, չէ որ արևն է հաղթում և քշում ամպերը: Այս անգամ ևս այդպես կլինի: Ամպերը գալիս են և ցանկանում են մեզ համոզել, թե արև չկա, մինչդեռ նա այստեղ է: Մենք, այնուամենայնիվ, կարող ենք և ուզում ենք ուրախանալ: Հայաստանը կվերածնվի: Փառք Աստծո:

44. Դավաճանի մահը

1918 թ. դեկտեմբերի 31-ին Ուրֆայում հայտնվեց առաջին բրիտանացի սպան: Նա իջևանել էր մի թուրքի տանը և ոչ թե, ինչպես դեռ պատերազմից առաջ ընդունված էր, մեր եվրոպական տներից մեկում: Ես այցելեցի նրան և առաջարկեցի իմ տուն տեղափոխվել: Քանի որ նա ցանկանում էր հայերի ղեկավարների հետ հանդիպել, դա արդեն իսկ բավարար առիթ էր իմ տունը տեղափոխվելու համար: Հայերը նրա ետևից չէին գնա թուրքի տուն: Ուստի նա ընդունեց իմ հրավերը:

Հայերի առաջնորդները (այդ ժամանակ նրանք Ուրֆայում այդպես էին ընկալվում) շատ չէին. քահանա Եփրեմը, ում մասին հաճախ է խոսվել, դեղագործ Գարեգինը, որը կոտորածների ժամանակ Հալեպում էր և ավելի ուշ Ուրֆա եկավ, այնուհետև բանտ նետվեց, այնտեղ հարկադրված եղավ մահմեդական անուն ընդունել, բայց, ի վերջո, ետ ստացավ իր ազատությունը: Երրորդը Մինաս էֆենդին էր, որն ամբողջ պատերազմի ընթացքում թուրքական բանակում հրահանգիչ սպա էր եղել: Չնայած նա եկվոր էր, չէր պատկանում Ուրֆայի հայերի թվին, բայց զինադադարից ի վեր քաղաքում որոշակի դերակատարում ուներ: Բրիտանացի սպան նշված անձանց կոչ արեց ետ պահանջել թուրքերի կողմից կողոպտված՝ իրենց գույքը: Բացի այդ, նրանք պետք է թույլ չտային, որ թուրքերը, նույնիսկ եթե դա լիներ կառավարությունը, քանդված հայկական տներից շարունակեին քարեր տանել:

Բրիտանացի սպան, որը գնդապետ էր, հայերի համար բարձրաձայն ընթերցեց թուրքական նահանգապետի համար նախատեսված մի նոտա, որով վերջինիս կոչ էր արվում հայերի մնացորդներին ըստ ամենայնի օգնել, հոգ տանել, որ վերադարձվեր նրանց գույքը: Հայերի դեմ ուղղված յուրաքանչյուր սպառնալիք նրա կողմից պետք է խստագույնս պատժվեր: Առաջնորդները, սակայն, այդ նոտայի մասին չպետք է տեղեկացվեին: Սպան միաժամանակ նրանց կոչ արեց հետևել, որ նահանգապետը գործեր իր այդ հրամանի համաձայն: Այն հարցին, թե ինչո՞ւ անգլիացիները նաև Ուրֆան չեն գրավում, մայորը[9] պատասխանեց, որ դրա համար նախ և առաջ պետք է մի հիմնավոր պատճառ լիներ:

Երրորդ օրը գնդապետը կրկին մեկնեց: Դարձ էր, որ անգլիացիներն առիթ էին փնտրում Ուրֆա գալու համար: Այդ առիթը պետք է շուտով ներկայանար:

1919 թ. հունվարի 7-ի առավոտյան հայկական կիսաքանդ եկեղեցում մի սպանված մարդ գտնվեց: Դա Մահմեդ Շուքրին էր՝ հայ դավաճաններից մեկը, որոնց մասին մենք արդեն խոսել ենք: Թուրքերն անմիջապես ոստիկանական հետաքննություն սկսեցին, որի ժամանակ մի շարք հայեր, այդ թվում նաև Մինաս էֆենդին, բանտ նետվեցին: Հայերը փորձում էին մեղքը բարդել թուրքերի վրա, թուրքերն, ընդհակառակը, կարծում էին, որ սպանողները միայն հայերը կարող էին լինել: Պատմությունը մեծ աղմուկ բարձրացրեց, և շատ հոգիներ բորբոքվեցին, այնպես որ ես նպատակահարմար գտա մի կարճ հաղորդագրություն ուղարկել այն ժամանակ Ուրֆայից 60 կիլոմետր հեռավորության վրա գտնվող անգլիացիներին:

Մի քանի օր անց գնդապետը նորից հայտնվեց և անմիջապես իջևանեց իմ տանը: Իմ հաղորդագրությունը նա չէր ստացել, փոխարենը՝ ստացել էր հայկական հաղորդագրությունը: Ես նրան ներկայացրեցի իմ հաղորդագրության պատճենը: Դրան ծանոթանալուց անմիջապես հետո նա ասաց. «Այսպիսին է ուրեմն գործը: Սա միանգամայն այլ կերպ է հնչում, քան հայկական հաղորդագրությունը»:

Գնդապետի համար պարզ էր, որ գործը հայերի կողմից էր հրահրվել:

[9] Ակնհայտորեն սխալմամբ է սպան այստեղ մայոր անվանվում, քանի որ հաճախակի նշվում է, որ նա գնդապետ էր (Ծանոթ. թարգմ)::

Ոչ թե թուրքերը, այլ միայն հայերը կարող էին սպանած լինել իրենց ժողովրդի դավաճանին, որին, ի միջի այլոց, խղճալ պետք չէր: Սակայն հայերի երազած՝ անգլիացիների կողմից [Ուրֆայի] գրավումը տեղի չունեցավ, և նրանք՝ [հայերը,] գրավման ձգձգման մեջ ինձ էին մեղավոր համարում: Ինձ համար մի բան հստակ էր, որ եթե ես անգլիացիներին պետք է Ուրֆա կանչեի, դրա համար պետք է մի շարժառիթ առկա լիներ, որը հետագայում հիմնավորված դուրս գար:

45. Ալի Իսհան փաշան



Հունվարին Նիսիբինից Ուրֆա եկան թուրքական զորամասեր: Ջինադարի պայմանագրի համաձայն՝ դրանք պետք է զորացրվեին, մասամբ՝ ետ քաշվեին Անատոլիայի խորքը: Զորամասերի հետ էր նաև Մոսուլի նախկին ճակատի գլխավոր հրամանատարը՝ Ալի Իսհան փաշան: Ակնհայտորեն նա ցանկանում էր Ուրֆայի պաշտոնյաներին ցույց տալ, թե ինչի են ունակ իր հետ բերած ժամանակակից հրանոթները, քանի որ մի երեկո նա մոտակա լեռան ուղղությամբ 30 արկ արձակեց: Սարսափելի դղրդյուն էր: Արկերի հարվածների տեսքից կարելի էր պատկերացում կազմել դրանց սարսափելի ուժի մասին:

Հրաձգությունը Ուրֆայի բնակչության մեջ մեծ իրարանցում առաջացրեց: Հաջորդ առավոտ ոչ միայն հայերը, այլև թուրքերը անգլիացիներին զեկույց ուղարկեցին: Ես նույնպես գտնում էի, որ պարտավոր էի նույնն անել, քանի որ, իսկապես, նման հրաձգությունը ժամանակավրեպ էր:

Ալի Իսհան փաշան հաջորդ օրն իսկ իր զորամասերի հետ մեկնեց դեպի հյուսիս, բայց հրաձգությունն, այնուամենայնիվ, նրան գերության դատապարտեց: Բրիտանացիների հրամանով նա Դիարբեքիրի մոտ կալանավորվեց կենտրոնական իշխանությունների կողմից:

46. Բրիտանացիների ժամանումը

Հալեպի փետրվարյան կոտորածից հետո Ուրֆայում կրկին բազմաթիվ չարագուշակ լուրեր էին շրջում՝ ուղղված հայերի դեմ, որոնք դրանց պատճառով օրեցօր ավելի մեծ անհանգստություն էին ապրում: [Մեզնից անկախ՝] մեր կողմից իրականացվող փրկարարական աշխատանքը նույնպես ակամա նպաստում էր դրան: Այն, որ այդ աշխատանքն առանձնապես չարամիտ թուրքերին պետք է գրգռեր, մենք կարող էինք հասկանալ, քանի որ դեռ կենդանի մնացած հայերը նրանց համար աշխատուժ էին, որն օգտագործվում էր ստրկական ծառայություններում: Իսկ հիմա այդ

ստրուկները պետք է իրենցից խլվեին: Այդ պատճառով մենք չզարմացանք, երբ մի առավոտ մի քրիստոնյա կին եկավ և կնոջս պատմեց, որ թուրքական ակումբում, որը կազմված էր քաղաքի ամենահարուստ և ամենաերևելի մահմեդականներից, որոշում էր կայացվել սպանել ինձ ու դեղագործ Գարեգինին: Եթե մենք երկուսս մեկուսացվեինք, նրանք կարող էին հայերին, որոնց իրենց ունեցվածքն էին համարում, իրենց պահել: Այլևս ոչ ոք չէր համարձակվի հայուհիներին դուրս բերել թուրքական տներից:

Երբ ես իմացա այդ մտադրության մասին, այն սկզբում իմ ժպիտը հարուցեց, քանի որ ինչ վերաբերում էր իմ անձին, բնակչության բոլոր խավերի՝ ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյաների՝ արդեն իսկ իմ հանդեպ ցուցաբերվող նվիրվածության շնորհիվ ես ինձ մահափորձերից քիչ թե շատ ապահով էի զգում: Եթե ակումբը նաև իմ անձի մասին որոշում է կայացրել, ապա դա ինձ համար կարող էր միայն թույլ նախազգուշացում լինել:

Դրանից երկու օր անց, գիշերը դռան թակոցն արթնացրեց դեղագործին. այցելուները իբր թե պետք է շտապ դեղորայք վերցնեին: Գարեգինը թեթևակի հագնվեց և դեպի դուռը տանող աստիճաններով իջավ ներքև: Նա արդեն մի քանի աստիճան իջել էր, երբ նրան հանկարծ կասկածներ համակեցին: Այդպես նա մի պահ մնաց կանգնած: Հենց այդ պահին տան առջև հնչեցին ատրճանակի հինգ կրակոց: Պարզ էր, որ դռան ետևում սրիկաները ցանկանում էին «գյավուրին» վախեցնել, եթե՝ ոչ ավելի վատ բան:

Հաջորդ առավոտ Գարեգինը սովորականի պես զբաղված էր իր դեղատանը (այն այլ վայրում էր գտնվում): Այդ ժամանակ եկավ նրա փոքր եղբայրը և տեղեկացրեց, որ տան դռան վրա գնդակի հինգ նոր անցքեր են հայտվել, և որ հանդիպակաց պատից կարելի էր որոշել կրակոցների թիրախները: Պարզ էր, որ գնդակները նախատեսված էին հայի համար: Եթե նա աստիճանների վրա կանգ չառներ, հազիվ թե կենդանի մնար: Կարծես Աստծո հրաշքով նա խուսափել էր մահափորձից:

Ինձ հարցաքննության կանչեցին: Ես գիտակցում էի, որ այժմ պետք է Ուրֆա կանչեի բրիտանացիներին: Առանց այդ էլ, ըստ իս, անգլիական կողմը կարծես միայն դրան էր սպասում: Գալով տուն՝ ես պատվիրեցի թամբել իմ ձին, այնուհետև նստեցի գրամեքենայի մոտ և կարճ գրեցի. «Մեզ շտապ հարկավոր են բրիտանացի ներկայացուցիչներ, քանի որ հայերի կյանքը վտանգված է»:

Արաբը, որին ես այդ տեղեկության հետ ուղարկեցի բրիտանացիների կայանատեղի, իմ փառահեղ ձիով 60 կիլոմետրը հաղթահարեց 4 ժամում: Հաջորդ առավոտյան զինվորներով լցված երեք ավտոմեքենաների ուղեկցությամբ հայտնվեց մի գնդապետ, որը հանգրվանեց ինձ մոտ: Սպան գնեց նաև դեղագործի տան հրաձգության հետքերը: Մյուս առավոտ զինվորները սպայի հետ անհետացել էին: Հազիվ էին թուրքերը նրանց մեկնելու լուրն

առել, երբ չարամիտների մոտ ցնծություն սկսվեց: Նրանք քաղաքում լուրեր էին տարածում, որ բրիտանացիները վախեցան թուրքերից ու այդ պատճառով հեռացան, և այժմ հանգիստ հնարավոր էր հայերի վերջը տալ:

Հայերը, սակայն, որոնք անգլիացիների գալու ժամանակ հանգիստ շունչ էին քաշել և շնորհակալությամբ այցելում էին ինձ, սարսափած գալիս էին ինձ մոտ և մեղադրում, որ ես բաց էի թողել զինվորներին: Այնուհանդերձ ես գիտեի ավելին: Նրանք միայն պետք է հանգստանային, ասում էի նրանց, հաջորդ առավոտյան նրանք ծիծաղելու են: Եվս երեք օր անցավ, մինչև եկավ նշանակալից պահը: Երրորդ օրը ես աշխատում էի կլինիկայում: Մոտավորապես ժամը 10-ին հայտնվեց մի թուրք ոստիկան և տեղեկացրեց, որ ես անհապաղ պետք է գնայի նահանգապետի մոտ: Բայց ես ցանկանում էի նախ ավարտել աշխատանքս: Ի վերջո՝ պատերազմի տարիներին ինձ բավական շատ էին կանչել ոստիկանություն, որպեսզի ես այժմ փութով նրանց հետևեի:

Ոստիկանը, սակայն, պնդում էր: Նա գաղտնաբար ինձ ասաց, որ օտարներ էին եկել, և որ նահանգապետն իմ կարիքն ուներ՝ որպես թարգմանչի: Իմ մտքով անցավ, որ նրանք կարող էին անգլիացիները լինել, ուստի փոխեցի հանդերձանքս և հետևեցի ոստիկանին: Մերայի (կառավարության շենքի) առջև մի ավտոմեքենա էր կանգնած: Ես մտա ընդունելության սրահ: Նահանգապետի կողքին նստած էին երկու անգլիացի սպաներ, որոնք ինձ ջերմորեն ողջունեցին: Հետևեց մի քանի րոպե տևող մի հիշարժան խոսակցություն, որն այստեղ հարկ է ներկայացնել:

«Դուք խոսու՞մ եք անգլերեն»,- հարցրեց ինձ սպաներից մեկը՝ մի փոխգնդապետ:

«Այո, մի քիչ»,- պատասխանեցի ես:

«Լավ, այդ դեպքում խնդրում եմ Ձեզ, քանի որ ես ինձ հետ թարգմանիչ չունեմ, ինձ համար թարգմանիչ դառնալ: Հարցրեք թուրքին՝ արդյոք նա տեղեկություն չի՞ ստացել իմ գալու մասին»:

Վալին. «Անշուշտ, ես ստացել եմ Ձեր հեռագիրը»:

Անգլիացին. «Ինչու՞ Դուք ինձ ընդառաջ չեկաք»:

Թուրքի պատասխանն արդեն իսկ վեհերոտ հնչեց:

«Հեռագրում չէր նշվում, որ Դուք ինձ սպասելու եք»:

Անգլիացին. «Գրողի ծոցը գնաք, որ որպես բրիտանացիների բարեկամ և որպես Ուրֆայի նահանգապետ Ձեր պարտականությունը չեք կատարել և ինձ ընդառաջ չեք եկել»:

Այս անգլիական պատասխանը, որը, խոստովանում եմ, ես մի փոքր մեղմացված թարգմանեցի, այնուամենայնիվ թուրքի վրա ուժեղ ազդեցություն գործեց: Բրիտանացին, սակայն, ոչ մի պատասխան չէր ակնկալում, նա շարունակեց հարցնել. «Ի՞նչ պատրաստություն եք տեսել իմ սպաներին և 800 զինվորներին տեղավորելու համար»:

«Ես չէի ուզում Ձեզանից առաջ ընկնել: Տեղի պակաս չի լինի: Սպաների համար շվեյցարացու տունն ազատ է, իսկ զինվորների համար Ձեր տրամադրության տակ կա մի դատարկ զորանոց»:

«Հրամայեք ինձ տանել այնտեղ: Դուք կմնաք այստեղ: Դիտելուց հետո ես Ձեզ կներկայացնեմ իմ հրամանները»:

Այսպես կոպիտ խոսելով՝ սպան վեր կացավ: Ինձ խնդրեց ուղեկցել իրեն: Մենք նստեցինք ավտոմեքենան, մեր ետևից վազում էին թուրք ոստիկանները: Ջնեցինք զորանոցը: Բրիտանացին, սակայն, կնճռոտեց քիթը: Այդ զորանոցը նա չէր կարող ոչ մի զինվոր բերել: Այնուհետև նա ինձնից խորհուրդ հարցրեց: Ինձ համար պարզ էր. քանի որ նահանգապետը տեղեկություն էր տվել շվեյցարացու տան մասին, ապա բրիտանացիներն այն, անկասկած, կվերցնեին: Այն պատկանում էր հեռացած բժիշկ դոկտոր Ֆիշերին: Արդար վրեժի մոլուցքով համակված՝ ես պատասխանեցի. «Վերցրեք թուրքական հիվանդանոցը, այն դատարկ է, հոյակապ դիրք ունի և ընդարձակ է»:

Կրկին նստեցինք ավտոմեքենա և գնացինք թուրքական հիվանդանոց: Կարճ զննումից հետո սպան նահանգապետին հղեց իր առաջին հրամանը: Այն հետևյալն էր. «Թուրքական հիվանդանոցն անմիջապես զբաղեցվում է իմ զորամասերի կողմից, պահանջում եմ այն անհապաղ հանձնել»:

«Որտե՞ղ է գտնվում շվեյցարացու տունը»,- [հարցրեց նա]:

Քանի որ տունը մոտ էր, այն տեսնելու համար ոտքով գնացինք: Այստեղ նույնպես բրիտանացին անմիջապես վճիռ կայացրեց: Ուրֆայում, անշուշտ, ավելի գեղեցիկ տուն չկար: Այն բավականին դատարկ էր, ես այնտեղ միայն կլինիկան, դեղատունը և վիրահատարանն էի տեղավորել, որոնք, քանի որ բրիտանացիներն այժմ այստեղ էին, կարող էի առանց թուրքերին հարցնելու կրկին մեր հիվանդանոց տեղափոխել: Կնիքներն առանց այդ էլ արդեն ընկել էին, ինձ մնում էր միայն բացել դուռը: Այդ ընթացքում ժամանեցին հնդիկներից կազմված զորամասերը, նաև նրանց հետ մի մեծ գումակ, մի քանի զրահամեքենաներ՝ անգլիացի զինվորներով:

Դա երջանկություն էր հայ ժողովրդի՝ այդ քաղաքում գտնվող հայերի մնացորդների համար: Քաղաքի մյուս քրիստոնյաները նույնպես ուրախությամբ ընդունեցին բրիտանացիների մուտքը: Մահվան՝ պարբերաբար կրկնվող երկյուղը, որի մեջ նրանք այդքան երկար ապրել էին, կարող էր վերջանալ: Դա 1919 թ. մարտի 24-ն էր: Ասորիներն ու կաթոլիկները գալիս և շնորհակալություն էին հայտնում ինձ:

Բրիտանացիների շնորհիվ էր, որ շուտով Ուրֆայի երեք թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ նահանգապետը, ոստիկանապետը և քաղաքագլուխը հեռացվեցին իրենց պաշտոններից: Առաջինը ձերբակալվեց և ուղարկվեց Կոստանդնուպոլիս: Դրա համար հիմք հանդիսացան հայկական սարսափները: Երբ աքսորը սկսվեց, այդ պարոնը Բայբուրդ քաղաքում նա-

հանգապետ էր: Նա հրամայել էր ոչ միայն բոլոր հայ տղամարդկանց, այլև բոլոր կանանց և երեխաներին քաղաքի մոտերքում կոտորել: Այդ արարքից հետո այդ պաշտոնյան տեղափոխվեց Արդանե Մադեն քաղաքը, որտեղ մինչ այդ նախորդ նահանգապետը միշտ չէ, որ կատարել էր հայերին ոչընչացնելու հրահանգները, և դրա համար նրան, որպես պատիժ, այլ վայր էին տեղափոխել: Նոր տիրակալն այդտեղ նույնպես բոլոր հայերին, ներառյալ կանանց և երեխաներին, քաղաքի առաջ սպանել էր տվել: Հետագայում այդ պետքական պաշտոնյան տեղափոխվել էր Ուրֆա: Այժմ բրիտանացիները կարողացան նրան հենց թուրքերի միջոցով վնասազերծել:

Երբ քաղին ինձ պատմում էր այդ նահանգապետի սարսափելի արարքների մասին, ես ինձ հաճախ հարց էի տալիս՝ արդյո՞ք նա ավելի լավ չէր վարվում, քան մյուս նահանգապետերը, որոնք աքսորում էին կանանց և երեխաներին: Մի՞թե որոշ տեղերում կանայք նահանգապետերին չէին խնդրում ոչ թե աքսորել իրենց, այլ հենց տեղում սպանել: Որքա՜ն անասելի ահավոր էր եղել այդ խեղճերի վիճակը աքսորի ճանապարհներին... Անարգանքի, ստրկության կյանքը կամ սովամահությունը նրանց ստույգ և զարհուրելի ճակատագիրն էր: Եվ, այդուհանդերձ, եթե բոլոր նահանգապետերն այնպես վարված լինեին, ինչպես սա, ապա այսօր մեկ և կես միլիոն հայերից, որոնք ստիպված էին լքել իրենց տունը, երկու-երեք հարյուր հազարը դեռ կենդանի չէին լինի:

Մայիսին էր, երբ Ուրֆա քաղաքի քրիստոնյա բնակիչների մեջ հանկարծակի կրկին խուճապ առաջացավ: Շատերը շտապ փակեցին իրենց վաճառատեղերը շուկայում և փախան տուն: Մի կին խուճապահար եկավ ինձ մոտ՝ կլինիկա և բողոքեց, որ կառավարությունը մահմեդականներին հրացաններ էր բաժանում: Ես նրան չհավատացի և խիստ կերպով կնոջը պատվիրեցի հեռանալ: Նա այնուհանդերձ չէր հեռանում, մինչև ես նրան չասացի. «Այդ կարգի հարցերով ես այլևս չեմ զբաղվում, գնա բրիտանացիների մոտ»:

Կինը գնաց և արագ ընդունվելու համար ասաց, որ իմ կողմից է ուղարկվել: Հաջորդ առավոտ ես քրիստոնյա բոլոր երևելի մարդկանց հետ կանչվեցի բրիտանացի պարետի մոտ: Մենք պետք է ասենք, թե որտեղից էր առաջացել այդ խուճապը: Սակայն ես արդեն մոռացել էի, որ մեկ օր առաջ այն հայուհին եկել էր ինձ մոտ, և ես նրան ասել էի. «... գնա բրիտանացիների մոտ»: Պարետը մեզ տարավ թուրք նահանգապետի մոտ, որին նա արդեն հրամայել էր մանրամասն հետաքննություն սկսել: Վերջինս արդեն ճշտել էր պատճառը. թուրքական կառավարությունը քաղաքից դուրս գտնվող մի տնից հրացաններ էր տեղափոխել: Վախեցած մարդիկ պետք է, որ տեսած լինեին դա, որը հենց խուճապ էր առաջացրել:

47. Մի վերջին անհաջող խարդավանք

Անգլիացիների հետ գրեթե միաժամանակ Ուրֆա էր ժամանել նաև մի թուրք պաշտոնյա՝ առողջապահության մի տեսուչ: Այն բանից հետո, երբ 1918 թ. դեկտեմբերին հայ բժիշկը փախել էր Հալեպ, քաղաքն այլ դիպլոմավորված բժիշկ չուներ, բացի մի թուրքից, որը մեծ մասամբ արդեն վաղ առավոտյան հարբած, ճոճվելով թափառում էր քաղաքի փողոցներով: Նա, սակայն, մի լավ կողմ ուներ, այն, որ ինձ համար դժվարություններ չէր հարուցում: Նա երբեք որևէ հիվանդի չէր այցելում: Այդպիսով ես կարողանում էի իմ գիտելիքները բժշկական պրակտիկայում լիովին օգտագործել: Առեղի ծավալի աշխատանք կար, որը ես պետք է հաղթահարեի: Մուսուլմանների տներից եկած հայերի մեծ մասը բժշկի կարիք ուներ: [Նման օգնության կարիք ունեին] նաև մեծ թվով մահմեդականներ: 1919 թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ես կլինիկայում ոչ պակաս 2000 հիվանդ էի բուժել: Միաժամանակ ևս 200 հիվանդ պառկած էին հիվանդանոցում: Անհրաժեշտ էր եղել շուրջ հարյուր վիրահատություն կատարել, որոնց թվում մի քանիսը՝ բավական բարդ: Կառավարությունը նույնպես ինձ հիվանդներ էր ուղարկել: Դրանից զատ ես պետք է աշխատեի նաև որպես թուրքական արհեստագործական դպրոցի բժիշկ: Եվ երբ Ուրֆայում մի քանի հարյուրանոց հեծելազորը որոշ ժամանակ բժիշկ չուներ, ստիպված էի նաև նրանց օգտակար լինել: Թող ընթերցողն իմ այս փաստարկումներն այնպես չմեկնաբանի, թե ես ուզում եմ պարծենալ նրանով, ինչն Աստծո օգնությամբ կարողացել եմ կատարել: Ես միայն կամենում եմ ցույց տալ, թե ինձնից որքան բան էր պահանջվում:

Որ առողջապահության նոր տեսուչն ինձ համար դժվարություններ կհարուցեր, քանի որ ես դիպլոմ չունեի, սպասելի էր. նրա համար չէր կարող գաղտնի մնալ, թե ո՞վ էր վերջին ամիսներին Ուրֆայում բժշկական սպասարկում իրականացնող անձը, իսկ ինձ նա դրա համար ամեն դեպքում շնորհակալություն չէր հայտնի: Կանխազգալով, որ այժմ ինձ վրա նորից ճնշում էր գործադրվելու, ես դիմեցի օկուպացիոն զորամասերի հետ ժամանած հնդիկ բժշկին: Իմ խնդրանքը՝ ստանձնել մեր շվեյցարական հիվանդանոցի գլխավոր վերահսկողությունը, նա ընդունեց: Նա նաև աշխատանքային որոշ ժամեր հիվանդանոցում էր անցկացնում: Մենք միասին եռանդուն աշխատում էինք: Մի քանի օր անց ես, իրոք, թուրքական առողջապահական տեսուչից մի գրավոր ծանուցում ստացա, ըստ որի՝ եթե ամեն ինչ այնպես լիներ, ինչպես ինքը լսել էր, այսինքն, որ ես դիպլոմ չունեի, ապա պարտավոր էի անմիջապես փակել դեղատունն ու կլինիկան: Քաղաքի բրիտանացի պարետը, սակայն, որին ես ցույց տվեցի գրությունը, ինձ ասաց, որ ես պետք է հանգիստ շարունակեի իմ աշխատանքը և չպատասխանեի:

14 օր հետո մեր հիվանդանոցում արյան վարակի պատճառով մի քուրդ մահացավ: Մահից տասն օր առաջ ես հնդիկ բժշկի ներկայությամբ վիրահատել էի այդ քրդին: Նրա մահից երկու օր անց ես դատական քննիչի կողմից ծանուցագիր ստացա: Թուրքական առողջապահական խորհուրդն ինձ մեղադրել էր՝ հայտնելով, որ մեր հիվանդանոցում վիրահատության ժամանակ անփութության հետևանքով մի քուրդ է մահացել: Նա պահանջում էր դատական հետաքննություն կատարել, քանի որ վիրահատողը դիպլոմ չուներ: Այնուհանդերձ ես այժմ հանգիստ էի, կարող էի հենվել հնդիկ բժշկի վրա: Իմ ցուցմունքի հիման վրա դատական քննիչը դիմեց անգլիացի պարետին, իսկ նա հնդիկ բժշկի միջոցով պատասխանեց, որ Կյունցլերն այդ վիրահատությունը կատարել է նրա ներկայությամբ, և որ հիվանդը մահացել է ոչ թե վիրահատության հետևանքով այլ՝ արյան վարակի: Առողջապահության տեսուչին բնութագրելու համար պետք է նաև ավելացնել, որ նա մեռածին չէր զննել: Նա իր մեղադրանքը ներկայացրել էր միայն ասեկոսների հիման վրա:

48. Օգնական արշավախմբի ժամանումը

Անգլիացիներից ընդամենը մի քանի օր անց Ուրֆա եկան նաև ամերիկյան Կարմիր խաչի առաքելությանը պատկանող չորս ամերիկացիներ՝ երեք կին և մեկ տղամարդ: Մենք կարողացանք նրանց հանձնել ամերիկյան հաստատությունը՝ 500 որբերով և այրիներով: Արշավախումբն իր հետ բերեց այն ամենը, ինչ մենք այլևս չունեինք՝ նոր ուժեր (մեր ուժերը սպառման եզրին էին), դրամ, հագուստ և օգնության այլ միջոցներ, նույնիսկ՝ մի բեռնատար ավտոմոբիլ: Մի հույժ անհրաժեշտ և նոր շունչ մտցրեց փրկարար աշխատանքներում: Մեր ձեռնարկած արտադրական գործունեությունն ընդարձակվեց, դպրոցները նույնպես ավելի լավ կահավորվեցին և ընդարձակվեցին:

Իմ կինը և ես թեթև շունչ քաշեցինք: Ծանրությունը, որը մենք 1916 թվից ի վեր միայնակ կրում էինք, վերցվեց մեր ուսերից: Օրեցօր ավելացող հայերի օգնության գործը ստանձնեցին բրիտանացիները: Նրանք, սկզբում դեռևս մեր օգնությամբ, սովյալներին հաց ու նաև ամենաանհրաժեշտ կարիքները հոգալու համար որոշ գումար էին բաժանում: Ամիսներ առաջ մենք տեղեկացել էինք, որ երկար ժամանակ Ուրֆայում լավագույնս գործունեություն ծավալած և սիրված բժիշկ պարոն դր. Ֆիշերն ու իր կինը կրկին վերադառնալու էին: Միայն թե անցնում էր ամիս ամսի ետևից, իսկ նա չէր երևում: Անձնագրային և ճանապարհորդական դժվարությունները շարունակ ձգձգում էին Շվեյցարիայից նրա մեկնումը: Ես մտադիր էի, հենց որ նա Ուրֆա հասներ, իմ ընտանիքի հետ Շվեյցարիա մեկնել՝ մեկ անգամ ևս հայրենիքի օդը շնչելու համար:

Վերջապես եկավ նրա ժամանման ուրախալի պահը: Այդ խիզախ մարդիկ իրենց երեխաներին թողել էին Բազելում, որպեսզի բժշկի կինը նույնպես կարողանար իր ողջ ուժը նվիրաբերել օգնության աշխատանքներին: Այժմ պետք է աշխատանքը մեր հիվանդանոցում կրկին լիառագաստ ընթանար՝ նաև հաշվի առնելով թուրքական օրենքների պահանջները: Բժշկի ժամանման պատճառած ուրախությունը քաղաքում թե գյուղում, քրիստոնյաների թե մահմեդականների մոտ համընդհանուր էր: Ամենաշատը՝ սակայն, իմ կյանքի հավատարիմ ուղեկցուհու և իմ ուրախությունն էր, քանի որ եկել էր մեր փրկության ժամը:

49. Մի օդաչու՝ Ուրֆայի վրա

1919 թ. մայիսին քաղաքից դուրս պետք է մի մեծ քարքարոտ դաշտ մաքրվեր: Այդ աշխատանքի կազմակերպումը բրիտանացիները հանձնարարեցին իմ կնոջը: Նա աշխատանքի դուրս բերեց հարյուրավոր հայուհիների և այդպիսով կարողացավ նրանց աշխատավարձ տալ: Հրապարակի վրա պետք է իջներ առաջին օդանավն Ուրֆայում:

Երկու շաբաթ անց վրա հասավ կարևոր պահը՝ ինքնաթիռի ժամանումը: Այն հպարտորեն թռչում էր հին Եդեսիայի վրայով: Բոլորն ապշած դուրս էին թափվել կամ կտուրներն էին բարձրացել: «Ալլահ» բացականչություններ էին լսվում մահմեդականների բերանից: Իսկ երբ ինքնաթիռից նաև կրակոցներ լսվեցին, հավանաբար բոլոր նրանք, ում խիղճը մաքուր չէր, սարսափեցին: Բոլոր քրիստոնյաները, սակայն, գերագույն հանգստություն էին ապրում:

50. Հաշվարկային հոգսեր

Հարկ է հիշատակել նաև մեր աշխատանքի հաշվարկային հոգսերի մասին ևս: Դրանք պետք եղածից ավելի հյուծեցին իմ մտավոր ուժերը: Աշխատանքը, ինչպես նկատում է ընթերցողը, հետզհետե շատ բազմակողմանի էր դարձել: Իմ հաշվապահական գրքերն իրենցից ներկայացնում էին հաշվարկների մի մեծ սյունակ, որում գրանցվում էին պատերազմի ընթացքում իմ ձեռքով անցած միլիոնները: Հիվանդանոցը, ամերիկյան առաքելությունը, հայերի և քրդերի համար կատարվող փրկարար աշխատանքները, 1916 թ. գարնանից մինչև 1918 թ. բանտարկված քաղաքացիական անձանց օգնության ուղղությամբ կատարված մեր գործունեությունը, այդ ամբողջը պահանջում էր լարված հաշվետարություն: Դրա հետ մեկտեղ նաև իմ տնային մեծ տնտեսությունը. չէ որ հետզհետե իմ տունը կարծեք

մի շեյխի տուն լիներ, որի մոտ, առանձնապես ճաշի ժամին, շատ սովալուկ երեխաներ էին հայտնվում:

Ես, սակայն, ամբողջ օրն այնպես զբաղված էի լինում, որ հաշվելու ժամանակ չէր մնում: Դա պետք է միշտ երեկոյան արվեր, երբ արդեն շատ հոգնած էի, և հասկանալի էր, որ այդ պատճառով երբեմն հաշվարկները չէին ուզում համընկնել: Երբ ես այնուհետև գիշերն արթնանում էի, և քունը փախչում էր իմ աչքերից, վեր էի կենում ու սկսում հաշվել: Այդ ժամերին որոշ չճշգրտված բաներ էին պարզվում: Շատ դեպքերում դրամարկղում, երբ ես այն ստուգում էի, չափազանց քիչ գումար էր լինում: Դա հասկանալի էր, քանի որ կատարված ծախսերը, եթե նույնիսկ դրանք մեծ մասամբ փոքր ծախսեր էին, բազմաթիվ էին: Հաճախ ես նախանձում էի թուրքական հիվանդանոցի աշխատակիցներին, որտեղ անցուդարձը հազիվ թե ավելի մեծ լիներ քան մեզ մոտ, բայց այնտեղ նշանակված էին մի հատուկ կառավարիչ ու հաճախ նաև՝ մի հատուկ գանձապահ:

Իմ բոլոր ծախսերը կատարվում էին իմ ընդհանուր դրամարկղից: Ինձ թվում էր, թե 1917 թ. վերջից իմ դրամարկղում մի չափազանց մեծ գումար կար: Չնայած այդ ողջ փնտրտուքին, չհաջողվեց սխալը հայտնաբերել: Ելքերի մեջ ինչ-որ գումար պետք է մոռացված լիներ: Իմ հաշվետվություններ ը ես շատ տեղեր պետք է ուղարկեի՝ Շվեյցարիա, Ամերիկա, Գերմանիա: Այնտեղից, սակայն, մեծ մասամբ ինձ ոչ մի ստացական չէր վերադարձվում: Իմ՝ Շվեյցարիա մեկնելուց փոքր ինչ առաջ ես Բազելի մի բանկից ստացա գումարների մի ընդհանուր ցուցակ, որոնք Շվեյցարիայից 1916 թվից ի վեր ինձ էին ուղարկել: Այդ ցուցակի ստուգման ժամանակ (կրկին գիշեր էր, իմ ընտանիքի բոլոր անդամներն անկողնում էին) ես մի գումար հայտնաբերեցի, որն իմ գրքերում չէր նշվել: Հիմա, սակայն, հանկարծ չափազանց քիչ փող կար դրամարկղում, մի նշանակալից գումար բացակայում էր: Ի՞նչ անել: Արդեն երկու տարի էր, ինչ հարաճուն թանկացման հետևանքով իմ աշխատավարձն այլևս չէր բավականացնում: 1917 թվից իմ կինը մի փոքր գումար էր տնտեսել, որը նա ստացել էր օգնության գործում իր կատարած աշխատանքի համար՝ այն խնամքով թաքցնելով իմ աչքից: Նա մտածում էր, որ երբ պատերազմի ավարտին մենք Շվեյցարիա վերադառնանք, այդ ժամանակ լավ կլինի, եթե մենք որոշ տնտեսած գումար ունենանք: Ես, սակայն, հաճախ նրա ներկայությամբ հաշվարկներ կատարելիս ասում էի, որ այդ գումարը պետք է տար ինձ տնային տնտեսություն վարելու համար, քանի որ, իրոք, իմ աշխատավարձը չէր բավականացնում ընտանիքի ապրուստի համար: Բացի այդ, նա պահել էր մեր տնային որոշ իրերի վաճառքից ստացված դրամը: Այժմ ինձ համար պարզ էր, դրամարկղի ճեղքվածքը պետք է փակվեր այն գումարով, որն այդ բարի հոգին այդքան ջանադրաբար խնայել էր: Բայց պետք էր դիվանագիտորեն մոտենալ թե ինչպես և երբ դա պահանջել: Հաջորդ օրը (կարծում եմ՝ ինձ կհասկանաք)

ինձ համար իրոք հաճելի օր չէր: Բարեբախտաբար ես լիովին կլանվել էի օրվա աշխատանքով, բայց երեկոյան պետք է այդ փողն ունենայի: Իմ կինն ուշադիր լսեց իմ բացատրությունները: Նա նույնպես հասկացավ, որ պետք է բաժանվեր խնայված դրամից, բայց դա հեշտ չեղավ: Նա այն բերեց ինձ և հակիրճ ասաց. «Դու ուզում ես իմ վերնաշապիկը ևս վաճառել: Դու կարո՞ղ ես այն ունենալ»: Ո՞վ կկամենա նրան կշտամբել այն բանի համար, որ նա այդ պահին քիչ դառնացել էր: Այնուամենայնիվ, մենք մեր ամուսնության ընթացքում մշտապես մի փորձված միջոց ենք ունեցել, որը հեշտացնում էր մեր հաշտեցումը: Առանց համատեղ երեկոյան աղոթքի մենք երբեք չենք պառկում քնելու, և քանի որ ոխ ունենալով՝ չես կարող աղոթել, մենք մինչ այդ դրան վերջ էինք տալիս: Փորձված է:

51. Շրջահայաց մահմեդականները

Մեզնից՝ մարդկանցից յուրաքանչյուրը, իր մտորումների ժամանակ շատ հաճախ կանգնում է «ինչո՞ւ» հարցականի առջև: Նույնքան հաճախ էլ բացակայում է դրա պատասխանը՝ «որովհետև»-ը: Նաև այն ժամանակ, երբ մտածում ես հայ ժողովրդի կրած անասելի զրկանքի մասին, դու քեզ հարց ես տալիս՝ ինչո՞ւ: Հարց ես տալիս՝ կարծելով թե քեզ կհաջողվի մի բավարար պատասխան ստանալ: Ես ուզում եմ հետևյալ դեպքը պատմել, որովհետև ինձ թվում է, որ դրա մեջ, թերևս, պատասխանի նման ինչ-որ բան կա:

Իմ՝ Եվրոպա մեկնելուց մի քանի օր առաջ քաղաքից երկու թուրքեր եկան ինձ մոտ: Որքան ես հասկացա նրանց տեսքից, նրանք արհեստավորներ էին, այսինքն՝ հասարակ մարդիկ: Նրանք ինձ հարցրին. «Դու հավատու՞մ ես, որ այժմ Ուրֆայում գտնվող անգլիացիները մեզ կպաշտպանեն թուրքական կառավարության միջամտություններից, եթե մենք վաղը քրիստոնյա դառնանք»:

Ես ստիպված էի նրանց պատասխանել, որ՝ չգիտեմ, բայց կփորձեմ պարզել: Այնուամենայնիվ նրանք նախ պետք է ինձ ասեն, թե ինչ պատճառով են ցանկանում քրիստոնյա դառնալ:

«Դու հենց նա ես, ով մեզանից խլում է մեզ հետ ամուսնացած կանանց: Այդ կանայք մեզ սովորեցրել են մի այնպիսի ընտանեկան կյանքի, որի նմանը մենք մինչ այդ երբեք չէինք տեսել: Նրանք մեզ համար բարձրաձայն կարդացել են «Աստվածաշնչից», վարել են մեր տնային տնտեսությունն այնպես, որ մենք ապշել ենք: Նրանք մեզ այնքան սիրելի են դարձել, որ անկարող ենք նրանց թողնել: Ավելի շուտ՝ մենք մեր հին հավատքը կթողնենք: Եվ դու պետք է գիտենաս, որ միայն մենք՝ երկուսս չենք այս կարծիքին. մոտ 50 ուրիշ տղամարդիկ ևս, որոնք մեզ այստեղ են ուղարկել,

պատրաստ են քրիստոնեական կրոնն ընդունել, որպեսզի ստիպված չլինեն զրկվել քրիստոնյա կանանց հետ իրենց նոր կյանքից: Բայց քանի որ թուրքական կառավարությունը, հենց որ մենք մեր հավատքը փոխենք, մեզ բանտ կնետի, մենք ուզում ենք նախ ճշտել՝ արդյոք անգլիացիները կմիջնորդե՞ն մեր ազատման համար»:

Երկու օր անց այդ տղամարդիկ եկան պատասխանի ետևից: Ցավոք, ես պետք է նրանց ասեի, որ բրիտանացի պարետը հայտարարել էր, որ իրենք նման հարցերին չեն միջամտի: Ես չէի կարող վշտացած ինձ հարց տվողներին չասել, որ հայերը, չնայած սոսկալի աքսորից ու մահից խուսափելու համար կարող էին իրենց քրիստոնեական հավատը փոխել մահմեդականով, սակայն նրանք գերադասել են մահը և այլ սարսափելի բաներ. «Եթե Դուք նույնպես այդպիսի ուժ հանդես բերեք, հավանաբար կտառապեք, բայց նաև՝ տառապանքով վարձատրված հաղթողներ կդառնաք»:

52. Հրաժեշտ

Համաշխարհային պատերազմի ընթացքում իմ ունեցած ապրումների նկարագրությունն ամբողջական չէր լինի, եթե ես գրի չառնեի իմ հրաժեշտը Ուրֆային: Եվ այդուհանդերձ, իմ գրիչը ընդդիմանում է դա անել: Սակայն քանի որ ես իմ բոլոր գրառումներում հենվել եմ լոկ փաստերի վրա, ապա պետք է, այնուամենայնիվ, իմ հրաժեշտը նույնպես հիշատակեմ, եթե նույնիսկ այն իմ կնոջը և ինձ որոշ անհանգիստ ժամեր է պատճառել:

Մայրաքաղաքում կրկին վերակենդանացած Հայ ազգային կոմիտեի աշխատանքը կայանում էր նրանում, որ տուն վերադարձող զինվորներին օգներ աշխատանք գտնել և նաև՝ հետևեր, որ որբերն ու այրիները, որքան դա դեռ հնարավոր էր, տեր դառնային իրենց նախկին ունեցվածքին: 1918 թ. դեկտեմբերին այդ կոմիտեի մի անդամ եկավ Ուրֆա՝ այստեղ նույնպես մի կազմակերպություն կյանքի կոչելու համար: Հայ կանայք այդ մարդու առջև ինձ մեղադրանք ներկայացրեցին: Այդ կանանց՝ Գերմանիայից՝ Խաչատրյան անվամբ մի ազգականից երբեմն-երբեմն իմ միջոցով փող էր վճարվել: Քանի որ, սակայն, բանկն այդ գումարն ինձ դրամանիշերով էր փոխանցում, ես ի վիճակի չէի գումարը ոսկով վճարել: Այդ գումարները, սակայն, նախկինում՝ մի ժամանակ, երբ Թուրքիայում դրամանիշերը դեռ գոյություն չունեին, իմ կողմից Խաչատրյանին ուղարկվել էին ոսկու տարադրամով:

Ի միջի այլոց, միայն ինձ չէ, որ հայերն այդ դրամային գործարքների պատճառով անվանարկել էին: Դեռ պատերազմի սկզբում երկրում գտնվող ամերիկացիները կարող էին նման բաներ պատմել: Մի ժամանակ, երբ դրամանիշերը դեռ գոյություն չունեին, նրանց դրամ է հանձնվել, որը հետագայում պահվել է բանկում: Ահա, երբ դրամանիշերի փոխարժեքն ի հայտ եկավ, բանկն այլևս իրավունք չուներ ոսկով վճարել: Նա այն պետք է հանձներ պետությանը: Դրամանիշերը, սակայն, օրեցօր կորցնում էին իրենց արժեքը: Այժմ եկան հայերն ու պահանջեցին իրենց գումարը: Նրանք ուզում էին այն կրկին միայն ոսկով ունենալ, մինչդեռ նրանց լավագույն դեպքում հնարավոր էր միայն «անարժեք» բանկնոտներով վճարվել:

(Հայկական ազգային կոմիտեի) Հալեպից ժամանած անդամն ինձանից պատասխան պահանջեց: Նա, սակայն, խոհեմ մարդ էր և կատարելապես հասկացավ հարցի էությունը: Այդ կանանց հետ կապված դրամական գործը, սակայն, ուներ մեկ ուրիշ կողմ ևս: Ես պետք է այդ մասին քիչ ավելի հանգամանալի պատմեմ:

Պատերազմը սկսվելուց մի քանի օր առաջ Խաչատրյան անունով մի հայ էր Գերմանիայից եկել Ուրֆա: Նա ուզում էր իր մորը տանել Գերմանիա, որտեղ նրա մի եղբայրը, որպես ատամնաբույժ, լավ աշխատանք ուներ: Քանի որ պատերազմ բռնկվեց, նա այլևս չկարողացավ Ուրֆայից հեռանալ: Երբ, այնուհետև, 1915 թ. գարնանը հայերի վիճակն արդեն իսկապես անմխիթար էր դարձել, Խաչատրյանը խնդրեց ինձ իրեն նշանակել հիվանդանոցի սպասավոր: Քանի որ նա, որպես գերմաներենի գիտակ, հաճախ եղել էր իմ տանը, ես կատարեցի նրա խնդրանքը: Ահա, երբ 1915 թ. հոկտեմբերին մեր հիվանդանոցից բոլոր հայերը տարագրվեցին, Խաչատրյանը նույնպես ստիպված էր նրանց հետ գնալ: Նա սակայն չսպանվեց, այլ Հալեպի ճանապարհին գտնվող մի զորանոց ուղարկվեց: Այնտեղից նա ինձ մի երկտող գրեց, որ ես, այնուամենայնիվ, իր կողմից մեր բժշկի մոտ թողած 135 ոսկե ֆունտը վերցնեմ և հնարավորության դեպքում հեռագրի ձևով նրան ուղարկեմ, քանի որ նա դրանով ուզում էր իրեն զինվորական ծառայությունից փրկագնել: Բժիշկը, սակայն, բծավոր տիֆով հիվանդանալով, արդեն անգիտակից վիճակում պառկած էր, և հնարավոր չէր նրան գումարի մասին հարցնել: Բայց դրա անհրաժեշտությունը չկար էլ, որովհետև ես երբ դրանից մի քանի օր առաջ աշխատում էի խորհրդատվական սենյակում և ուզում էի երբեք չկողպվող գզրոցից դեղատոմսի թուղթ վերցնել, դրա մեջ գտա մի փոքր քսակ 135 ոսկեդրամներով, իսկ քսակի վրա թանաքով նշված էր «Խաչատրյան» անունը: Ինձ համար պարզ էր, որ այդ գումարը պատկանում էր իմ ընկերոջը: Թե ինչպես էր նա գումարն այդ գզրոցում դրել, ես չգիտեմ: Աքսորը այնքան հանկարծակի էր տեղի ունեցել, որ նա, անշուշտ, անձամբ այն հապճեպորեն գզրոցն էր գցել: Այդպիսով ես հեռագրեցի նրան, որ ներկայանա իմ բանկը ու նաև հեռագրեցի բանկ, որ Խաչատրյանի գալուն պես նրան 135 թուրքական ֆունտ վճարեն: Խաչատրյանը, սակայն, դրամը չէր վերցրել: Երկու շաբաթ անց ես իմացա պատճառը. այդ ընթացքում նա բծավոր տիֆից մահացել էր: Այդպիսով, գումարը մնաց բանկում: Ես գրություն ուղարկեցի Գերմանիա, որ գտնեն մահացածի եղբորը:

1916 թ. փետրվարին էր, երբ իմ բանկն ինձ տեղեկացրեց, որ վերջապես գտել է եղբոր հետքը, քանի որ հենց վերջերս ինչ-որ մեկը, ներկայանալով, ակնարկել է այդ գումարի մասին: Բայց նա, ըստ երևույթին, գումարն այնքան մեծ չէր պատկերացրել, ինչպես ես տեղեկացրել էի նրան: Բանկի ցուցումով Խաչատրյանը պետք է անձամբ գար և փողը ստանար, բայց ասել էին, որ նա դեռ հիվանդ է (նա, սակայն, այդ ժամանակ վաղուց մահացած էր):

Դրանից հետո շուտով Ուրֆա եկավ բժշկի մի ազգական: Նա ինձ մոտ ուղարկեց իր եղբորը՝ մի խորամանկ փաստաբանի: Երբ հարցրեցի նրան, թե ինչ է ուզում, նա ինձ ասաց. «Դուք պետք է իմանաք, որ իմ եղբայրը Խաչատրյանին, որը մահացել է Հալեպում, իր մահից կարճ ժամանակ առաջ 60 ոսկի է փոխ տվել, որպեսզի նա կարողանար փրկագնով ազատվել: Հիմա Խաչատրյանի գումարը բանկում է»:

Ես պետք է բանկին հորդորեի նրա եղբորը 60 ֆունտ վճարել: Ես խնդրեցի փաստաբանին, որ նա,այնուամենայնիվ, ինձ ցույց տա անդորագիրը: Նա խոստացավ այն հաջորդ առավոտյան բերել, բայց միաժամանակ սկսեց սպառնալ, որ եթե ես նրա եղբորն այդ գումարը կամավոր չվճարեմ, նա իմ դեմ կառավարությանը բողոք կներկայացնի, քանի որ Խաչատրյանի գումարն իրականում պատկանում է կառավարությանը, որովհետև դա հայկական ունեցվածք է:

«Ինչու՞ եք Դուք սպառնում ինձ: Ես հրաժարվու՞մ եմ վճարել Ձեզ: Ես ուզում եմ միայն անդորագիրը տեսնել: Ի միջի այլոց՝ Դուք կարող եք իմ դեմ կառավարությանը բողոք ներկայացնել, քանի որ եթե կառավարությունը գումարը ստանա, ես ոչինչ չեմ կորցնի: Իմ միակ ցանկությունն այն է, որ այդ գումարը օրինական ժառանգորդի ձեռքն ընկնի»: Իմ այս բառերից հետո փաստաբանը դժգոհ հեռացավ: Հաջորդ առավոտյան նա բերեց առանց ամսաթվի և դրոշմանիշի մի անդորագիր, որին նայելիս իսկ պարզ էր, որ այն հենց այդ գիշեր էր լույս աշխարհ եկել: Սակայն ես ևս անգործ չէի եղել, դեռ երեկոյան հեռագրել էի բանկ՝ գերմանական հյուպատոսին 135 թուրքական լիրա վճարելու համար: Այդպիսով, ես խնդրեցի փաստաբանին անդորրագրով դիմել Հալեպի հյուպատոսին, որին այդ ընթացքում գումարը հասել է: Նա, զայրույթից դեղնած, հեռացավ: Նաև պետք է նկատել, որ ոչ ոք երբևէ այդ գործով չդիմեց հյուպատոսին, լավագույն ապացույցն այն բանի, որ միայն գողերն էին հետամուտ լինում հայկական այս ունեցվածքին:

Իմ հրաժեշտի օրերին ահա իմ կնոջ մոտ եկած մի ասորի պատմեց նրան, թե քաղաքում լուր էր պտտվում, որ հայ բժիշկը, որը բրիտանացիների գալուց հետո շուտով կրկին Ուրֆայում էր հայտնվել, իմ դեմ բողոք է ներկայացնելու: Ես նույնպես արդեն մի քանի օր առաջ նկատել էի, որ (Հայկական ազգային կոմիտեի) կողմից ինչ-որ բան էր ձեռնարկվում իմ դեմ: Այդ պատճառով ես խնդրեցի այդ կոմիտեին գալ ինձ մոտ, որպեսզի

հնարավոր լիներ տեսնել, թե ինչ է պատահել: Բայց ոչ ոք չեկավ: Այնուհետև ես լսեցի, որ ինձ հնարավորության դեպքում նաև իմ մեկնելու օրը ձերբակալելու էին, կամ, առնվազն, չէին թույլ տա մեկնել:

Իմ որոշ չափով զգացմունքային կինն այդ կնոջ մեկնումից անմիջապես հետո մի նամակ գրեց հայ բժշկին այն բովանդակությամբ, որ հենց նոր լսել է մի մեղադրանքի մասին, որը նա ցանկանում է ներկայացնել իմ դեմ: Անշուշտ, խոսքն այստեղ միայն մի բարբաջանքի է վերաբերելու, քանի որ նա՝ իր ամուսնու երկարամյա աշխատակիցն ու ընկերը, այժմ հանկարծ ինչ կարող էր նրա դեմ ունենալ: Նա նրան խնդրում էր իրեն շտապ «այո» կամ «ոչ» պատասխանել, որպեսզի իր ամուսինը և նաև ինքն իմանան, թե ինչն ինչոց է:

Բժիշկը պատասխանեց նամակի հակառակ կողմում առանց որևէ ուղերձի. «You shall answer to the law, nothing with me!»: (Դուք պատասխանելու եք օրենքին, ինձ հետ ոչինչ չունեք անելու):

Այդժամ մենք համոզվեցինք՝ այն, ինչին չէինք ուզում հավատալ, ճիշտ էր: Սակայն, քանի որ ես արդեն վերջին օրը ձերբակալվելու ցանկություն չունեի, մենք դիմեցինք բրիտանացիներին: Մենք խնդրեցինք նրանց մեզ օգնել, հոգ տանել, որ, եթե մեր դեմ բողոքներ կային, դրանք այժմ ներկայացվեին և ոչ՝ վերջին օրը: Պարետն անմիջապես թուրքական նահանգապետին հրամայեց պատին մի հայտարարություն փակցնել, որը պետք է հայտներ, որ Կյունցլերը շուտով հեռանալու էր երկրից, և որ նրանք, ովքեր նրանից պահանջներ ունեին, պետք է դրանք անմիջապես ներկայացնեին, քանի որ մեկնելու օրն այլևս նման բաները նկատի չէին առնվելու: Հենց նույն օրը ոստիկանության կոմիսարն ինձ կանչեց իր մոտ: Բարեբախտաբար դա վերջին անգամն էր: Նա ինձ ցույց տվեց մի գրություն, որը հայ բժիշկն էր ներկայացրել նահանգապետին: Ես այն ընթերցեցի: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. «Կյունցլերը 1915 թ. իմ հիվանդությունն օգտագործել է կողպված գզրոցից 145 ոսկեդրամ գողանալու համար, որոնք ինձ հանձնել էր ոմն Խաչատրյան՝ այն նկատառումով, որ եթե նա մահանար, ես կարող էի այդ գումարն ինձ պահել» և այլն, և այլն:

Երբ ես կարդացի այդ գրությունը, կարծես ամպերից վայր ընկած լինեի: Հնարավո՞ր էր նման ինչ-որ բան: Եվ այդ բողոքը մի ընկերոջից, որն ուսանել էր գերմանական օգնությամբ և, բացի դրանից, ստույգ կերպով գիտեր, թե ինչ էր տեղի ունեցել այդ գումարի հետ: Նա հոգեկան հիվանդ է, ինչ է: Անշուշտ, այլապես ոչ մի ներում իր արարքի համար գոյություն չուներ: Բրիտանացիների՝ Ուրֆա մուտք գործելուց ի վեր թուրքերին պարտադրված կապիտուլյացիայի պայմանները կրկին ուժի մեջ էին մտել: Դրանից հետո ինձ՝ օտարերկրացուս, ոչ մի թուրք չէր կարող նման բանում դատապարտել: Եվ բացի դա, պարետը հրամայել էր, որ իմ դեմ բոլոր բողոքները պետք է իրեն հանձնվեին:

Այդպիսով, ես հայտնեցի պարետին, որ ոստիկանություն եմ կանչվել մի հայի բողոքի պատճառով: Ես փնտրեցի իմ նամակների միջից այդ դեպքին առնչվող բոլոր գրությունները և դրանք ներկայացրեցի պարետին: Իմ մեկնումից մեկ օր առաջ, երբ պարոն դր. Ֆիշերն արդեն Ուրֆայում էր, կայացավ պարետի վճիռն այդ գործի վերաբերյալ: Մենք բոլորս, նաև հայը, ներկայացել էինք նրան:

Պարետը դիմեց նրան հետևյալ բառերով. «Դուք պարոն Կյունցլերի դեմ բողոք եք ներկայացրել գողության համար: Այն, որ դուք այդ բողոքն ուղղակի մեզ չեք ներկայացրել, մեզ, ում հենց այս պարոն Կյունցլերն է Ձեր ժողովրդի համար Ուրֆա կանչել, մենք շատ տգեղ ենք համարում: Ինչ վերաբերում է Ձեր բողոքի բովանդակությանը, ապա մենք մեզ մոտ ունենք պարոն Կյունցլերի բոլոր գրավոր փաստաթղթերը, և ես կարող եմ միայն ասել, որ պարոն Կյունցլերը բացարձակապես ճիշտ է վարվել: Նա այդ գումարն այն ժամանակ, առանց իմանալու, որ այն պետք է Ձեզ նվիրված լիներ, ուղարկել է Գերմանիա: Եթե Դուք, այդուհանդերձ, դրա պատճառով ցանկանում եք շարունակել հետամուտ լինել գործին, ապա պետք է դիմեք Խաչատրյանի եղբորը՝ Գերմանիայում: Դուք պետք է, սակայն, այստեղ իմ առջև պարոն Կյունցլերից ներողություն խնդրեք և այս բողոքը պատռեք»:

Հայն առարկեց, որ իրեն հայտնի է, թե ինչ է եղել այդ գումարի հետ, որ, սակայն, Կյունցլերն իրավունք չուներ այդ փողը Գերմանիա ուղարկել, որի պատճառով, դրամանիշերի փոխարժեքի հետևանքով այդքան մեծ կորուստներ էին տեղի ունեցել: Այնուհետև նա բողոքը դրեց իր գրպանը: Երբ նա, սակայն, մի քանի րոպե հապաղելուց հետո ներողություն խնդրելու ժեստ չցուցաբերեց, ես վեր կացա, շնորհակալություն հայտնեցի պարետին՝ ասելով, որ մենք այլևս չէինք ցանկանում խլել նրա ժամանակը:

Մեկնելու օրն առավոտյան ես կրկին մի ծանուցագիր ստացա կեսօրից հետո թուրքական դատարան գնալու և գողության պատճառով պատասխան տալու համար: Հիմա ես, սակայն, չարախնդորեն ծիծաղեցի: Այժմ չափազանց ուշ էր: Արդեն մեկնելու օրն էր, և թուրքերն ինձ հետ այլևս ոչ մի անելիք չունեին, ինչպես և՝ ես նրանց հետ:

Հասկանալի է, որ այդ արարքը մեզ մեծ վրդովմունք պատճառեց: Մարդկային սրտի դեգերումը հաճախ չար մտքեր է ծնում, և ցանկանում ես ընդհանուր առմամբ բոլոր հայերին մեղադրել անշնորհակալության մեջ: Սակայն այստեղ խոսքը վերաբերում էր մի արարքի, որը ժողովրդի կողմից չի արվել, եթե նույնիսկ դրա հետևում Հայկակա ազգային կոնգրեսն էր գտնվում: Երկու ուրիշ հայեր էլ էին ընկել այդ մարդու ազդեցության տակ և անգլիացիներին ներկայացրել էին անհավատալի պահանջներ, որոնք, սակայն, մնացին առանց որևէ հիմնավորման և մերժվեցին:

Բացի բժշկի արարքից, որի հետ ես շատ տարիներ եմ աշխատել, ինձ ավելի մեծ ցավ պատճառեց այն, որ նաև արդեն բազմիցս հիշատակված

Եփրեմ քահանան, որին ես որբանոցում աշխատատեղ էի հատկացրել, որի ամուսնության պատճառով ես ուրախությամբ շատ անախորժություններ էի հանձն առել, որին ես սիրել էի ինչպես իմ եղբորը, չեկավ ինձ հրաժեշտ տալու: Դրանով նա ապացուցեց, որ նա ևս զրպարտողների շարքն էր անցել:

Երբ ես կեսօրից հետո վերջապես կարողացա Ուրֆայից մեկնել, մեր տան բակը լի էր սիրելի մարդկանցով, որոնք հեկեկոցով մեզ հրաժեշտ տվեցին: Ես պետք է խոստովանեմ, որ ամբողջովին հանգստացա միայն այն ժամանակ, երբ Բեյրութում նավի մեջ էի: Որովհետև ո՞վ կարող էր իմանալ, թե արդյոք անբարյացակամ մարդկանց ազդեցությունը այնքան ժամանակ, քանի դեռ ես թուրքական հողում էի, որևէ բռնի գործողության տեղիք չէր տա:

53. Եզրափակիչ խոսք

Իմ երկարատև գործունեության վայրից [մեկնելիս] իմ հրաժեշտն ավարտվեց տարաձայնությամբ: Քանի որ ես առիթ ունեմ կարծելու, որ այս դատողությունները որոշ ընթերցողների, որոնք մինչ այժմ հայերի հանդեպ բարեկամաբար չէին տրամադրված, էլ ավելի անբարյացակամ են դարձնելու, ցանկանում եմ վերջում հաղորդել իմ տեսակետն այս ժողովրդի մասին, որը հարկադրված եղավ կրել այնքան անասելի սարսափներ և այնպես սարսափելի կերպով է նվազել, ինչպես ոչ մի այլ ժողովուրդ աշխարհում: Ես դա անում եմ, որովհետև ես 20 տարի այդ ժողովրդի մեջ եմ ապրել ու աշխատել, և եթե ժողովրդի մասին իմ իմացությունը, հավանաբար, չի կարող սպառիչ համարվել, ապա, այնուամենայնիվ, ոչ ոք չի ժխտի, որ կարող եմ իմ կարծիքն ասել:

Ազատասեր և չափազանց ինտելիգենտ ժողովուրդը վեց դար շարունակ ապրում է կենսավեր մուսուլմանական բռնի վարչակարգի ներքո: Նա պարբերաբար կրկնվող զանգվածային ջարդերի է ենթարկվել: Անշուշտ, նման պարագայում և նման տառապանքների դեպքում ժողովրդի դրությանը չի կարող բարելավվել: Բավական է միայն դիտել այն ժողովուրդներին, որոնք քաղաքակրթության գագաթին էին և պետք է դիմանային Համաշխարհային պատերազմին: Նրանց նկարագիրը ինչ-որ չափով բարելավվել է: Ոչ ոք հաստատակամորեն դա չի կարող պնդել: Եվ այդ այն դեպքում, երբ պատերազմը տևեց «ընդամենը» հինգ տարի: Ուստի մենք կարո՞ղ ենք ակնկալել, որ հայերը պետք է ավելի լավը լինեն, քան մենք՝ Արևմուտքի երկրների բնակիչներս: Նրա՞նք, ովքեր հարյուրամյակներ շարունակ դիմագրավել են նենգությանը, խարդավանքին և բիրտ ուժին:

Հայ առևտրականների վարքագիծը Եվրոպայում բացասաբար է բնո-

ոոշվում: Ճշմարիտ է սակայն, որ հային գործարար կյանքում չեն կարող դյուրին կերպով խաբել: Մահմեդականի դեպքում, որպես կանոն, դա ավելի հեշտությամբ է հաջողվում:

Այնուամենայնիվ, հայերի գործարար վարքագիծը ոչ ոք ավելի լավ չի ճանաչում, քան թուրքը: Հարուստ թուրքն ու՞մ միջոցով է ամենից ավելի նախընտրում կատարել իր գործարքները: Հայի՞ միջոցով: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, որոնք բոլորն էլ վկայում են, որ ունևոր թուրքն իր գումարներն, իսկապես, միայն հայի միջոցով է իրացնում: Ոչ ոք այնպես լավ չի կարող բոլոր, նաև ամենադժվար հանգամանքներին հարմարվել և ամենուր շահույթ ստանալ, ինչպես հայը: Ինչպես հին Եվրոպայում ոչ մի երկաթուղի հնարավոր չէր առանց իտալացի աշխատողների կառուցել, այնպես էլ Արևելքում առևտուրը չի կարող առանց հայերի լինել: Սակայն հայերի միայն նվազագույն մասն է առևտրական: Ողջ ազգաբնակչության 80-90 տոկոսն անշուշտ երկրագործներ են, իսկ մի նշանակալից մասը՝ արհեստագործներ: Բաղդադի երկաթուղու վրա ամենաջանասեր աշխատողները հայերն էին: Երկաթուղու շինարարության ժամանակ պատասխանատու պաշտոններն ամենուր հայերն էին զբաղեցնում: Բաղդադի երկաթուղու գլխավոր գանձապահը, գլխավոր հաշվապահը հայ էր: Աներևակայելի և անհնար էր, որ Բաղդադի երկաթուղու կառուցման ընկերությունը որևէ բարձր և կարևոր պատասխանատու պաշտոնում թուրքի կամ այլ մահմեդականի նշանակեր:

Եվ եթե հիմա հին Արևելքը վերջապես պետք է ընդառաջ գնա առաջընթացին, եթե Արևելքի ավերակների միջից նոր կյանք պետք է վերընձյուղվի, պետք է մշակութային նոր գործեր ու արժեքներ ի հայտ գան, ապա դրա համար անպայման հայ ժողովրդի ուժի կարիքը կա: Առանց դրա՝ Արևելքը կմնա անապատ:

Մաքս Էյդն իր «Գութանի ու մամլակի հետևում» գրքում գրում է, որ կան բաներ, որոնցում Արևելքն ու Արևմուտքը միմյանց չեն հասկանում: Այդ միտքը, եթե ինձ թույլ տրվի այն զարգացնել, ես երկակի եմ հասկանում: Առաջինը՝ վերաբերում է ճշմարտությանը և կեղծիքին: Այն ամենի առնչությամբ, ինչ լսում ես Արևելքում, պետք է նախ ինքդ քեզ հարցնես՝ իսկ դա ճի՞շտ է: Արևելյան հանրահայտ երևակայությունը հաճախ ամենահրաշալի պտուղներ է տալիս, ընդ որում ամենաարտառոցն այն է, որ նա ոչ մի տեղ ավելի արժանահավատ չի դառնում, քան հենց՝ Արևելքում: 18 տարի առաջ մի բողոքական համայնքի եկեղեցական առաջնորդն ինձ ասաց. «Ոչ ոք չի կարող ինձ հարկադրել թուրքական կառավարության արգելափակոցների առջև ճշմարտությունն ասել, Աստված ևս ինձնից չի պահանջի դա: Որտեղ կեղծիքն է գործում, ճշմարտությունը չի կարող ի հայտ գալ»:

Այժմ, երբ ես գրեթե 20 տարի ապրել եմ այդ, ես կասեի, «ստախոս» երկրում, վերոհիշյալ մտքին ավելի ներողամտորեն եմ մոտենում, քան այն ժամանակ: Ակնհայտ այբբենական ճշմարտություն է, որ գործի և խոսքի

մեջ ճշմարտացի լինելը մարդկանց, ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին միայն նեղություն և դառը զրկանքներ է պատճառում: Բազմաթիվ օրինակներից հիշատակեմ միայն մեկը.

Պետրոս անունով մի երիտասարդ հայ գնաց Ռուսաստան՝ այնտեղ իր անհետ կորած հորը փնտրելու: Օրինական ճանապարհով, սակայն, ինչպես մի արևմուտքցի կաներ, Ռուսաստան հասնելը հայի համար միանգամայն անհնար էր: Հետևաբար նա ճանապարհորդում էր կեղծ անձնագրով: Նա գտնված հոր հետ միասին վերադարձավ Թուրքիա: Ծերունին շիտակ մարդ էր, որն ատում էր սուտը: Առանց կեղծ անձնագրի, սակայն, նրա վերադարձը նույնպես չհաջողվեց: Մի նման անձնագրով նա անցավ սահմանը: Այդուհանդերձ կրկին հայրենի քաղաքը հասնելու համար նա դարձյալ կարիք ուներ խորամանկություն բանեցնել: Ծեր հորը օրը ցերեկով կարող էր հաջողվել քաղաք մտնել միայն այն դեպքում, եթե նա դարպասի մոտ հսկող թուրք զինվորներին ասեր, որ մոտակա Սևերեկ փոքր քաղաքից էր գալիս: Ոչ ոքի մտքով չէր անցնի նրան չհավատալ: Միայն թե ծեր հայը չկարողացավ ստել, ուստի ասաց, որ Ռուսաստանից է եկել: Անմիջապես նա բանտ է նետվում: Այնտեղ հարցաքննվելիս նա նաև ասում է, որ իր որդին է իրեն բերել: Եվ հաջորդ հարցին, թե որտե՞ղ է վերջինս այժմ գտնվում, նա հայտնում է գյուղի անունը և այն, որ նա գիշերը քաղաք է գալու: Որդին նույնպես ձերբակալվեց ու բանտ նետվեց: Այստեղ նրանք երկուսն էլ ստիպված էին վեց ամիս շարունակ տառապել: Պե՞տք է մենք քար նետենք արևելյան քրիստոնյաների վրա, որոնք իրենք իրենց, ըստ հնարավորին, օգնում են անարդարությամբ լի երկրում: Նրանք ծնվել են ճահճում և պետք է իրենց ամբողջ կյանքը այդ ճահճում անցկացնեն:

Տեղեկությունների և վկայությունների ճշգրտությունը ևս արևելցիներին հատուկ չէ: Արևելքում խիստ հազվադեպ է հաջողվում սուր դիտողունակությամբ մարդ գտնել: Գործարար առօրյայում դա մեծ թերություն է: Եվրոպացի գործարարը արևելցուն հեշտությամբ բարոյական մեղադրանքներ է ուղղում, որովհետև ընկալունակության պակաս ունի: Ես հավատացնում եմ, որ չի գտնվի ոչ մի թուրք, որն այդ պատճառով մի հայի հանդիմանի: Թուրքը հայից ճշգրտություն չի պահանջում, քանի որ ինքն՝ անձամբ, նույնպես այն չի ճանաչում: Ահա ևս մի օրինակ: Իմ թուրք ընկերներից մեկը խոշոր վաճառական է: Նա մի առևտրական մասնաճյուղ ունի Դիարբեքիրում, որն ամբողջովին գտնվում է մի հայի ձեռքում: Ես հարցրեցի թուրքին՝ արդյոք նա չի՞ վախենում, որ հայը կարող էր իրեն խաբել: «Ոչ,- պատասխանեց նա,- ես այդ հարցում վախենալու առիթ չունեմ: Այո, եթե 50.000 ֆրանկը, որ գտնվում է այնտեղ՝ իմ խանութներում, իմ հավատակիցներից մեկի ձեռքերում լիներ, ես, հավանաբար, մտահոգության դրդապատճառ կունենայի, բայց հայի ձեռքերում իմ գումարի հետ ոչինչ չի պատահի: Դրա համար հայը չափազանց հաշվենկատ է: Նա գիտի,

որ եթե իմ խանութում կորուստներ ի հայտ գան, ես նրան աշխատանքից կհեռացնեմ»:

Դրանից հետո ես հակադարձեցի. «Ինչպե՞ս կարող ես դու իմանալ՝ արդյոք նա, երբ քեզ համար մի գնում է կատարում, օրինակ 5 ֆրանկի փոխարեն, որը ծախսում է, 5,5 ֆրանկ չի՞ գրանցում: Ի՞նչ վերահսկողություն ունես դու»: Իմ ընկերը ծիծաղեց և ասաց հետևյալ հատկանշական խոսքերը. «Այո, նա ի վիճակի է դա անել: Ամեն դեպքում նա այնքան հիմար չէ, որ ինքն իր օգուտը չգիտենա: Բայց մեր խանութն, անշուշտ, կարող է հանդուրժել այդ մանրուքը, այն մեզ երկուսիս էլ բավական շահ է բերում»: Այդպիսի՞ն է Արևելքը:

Անախորժությունները, որոնք Ուրֆայում մնալու վերջին օրերին մի քանի հայերի կողմից կրել եմ, ես լիովին և ամբողջովին ներում եմ: Հայ ժողովրդի մեջ կա չափազանց հասկանալի մի թուլություն, որը տհաճ կերպով իրեն զգալ տվեց նաև իմ հանդեպ: Դա խորը նստած վրեժի զգացումն է այն անասելի խայտառակ անիրավության հանդեպ, որը նրանք կրել են: Դրանից ծնվում են բաներ, որոնք, անշուշտ, շարունակ կվնասեն ժողովրդին:

Այնուամենայնիվ հնարավոր կլինի՞ յուրաքանչյուր հային ներշնչել, որ նա իրենից վանի վրեժի տրամադրությունը: Այժմ, երբ (Աստված այդպես է կամենում) ազատ Հայաստան է ստեղծվում, կրկնակի կարևոր է, որ ժողովուրդը հրաժարվի այդ մտածելակերպից, որը խաթարում է ազգային նկարագիրը: Եթե դա տեղի չունենա, պետք է որ նոր դժբախտություն ծնվի, քանի որ չի կարելի պատկերացնել, որ նոր Հայաստանում միայն հայեր կբնակվեն: Այսօրվա դրությամբ ավելի քան ատելի քրդերի և թուրքերի մի մեծ քանակություն առնվազն տարիներ ի վեր շարունակելու է այնտեղ ապրել: Եթե հայը իրեն թույլ տա ղեկավարվել խորը նստած վրեժի և հատուցման զգացումով, ապա մահմեդականը կըմբոստանա հայի դեմ: Ազատ Հայաստանն իրավունք չունի մոռանալ, որ իր երկրի շուրջ բոլորը բազմաթիվ մահմեդականներ են ապրում, մինչդեռ ինքը՝ անձամբ, մի փոքր ժողովուրդ է, որին նրանք կրկին կարող են սարսափների ենթարկել:

Չնայած բոլոր անախորժություններին, որոնք առանձին հայերի կողմից պատճառվել են նաև ինձ, ես ուզում եմ իմ կնոջ հետ կրկին մեկնել, ինչպես մինչև այժմ աշխատել այդ խեղճ ժողովրդի համար և ուժերիս ներածին չափով աջակցել այն բանին, որ նա իր կրած՝ բոլոր այդ սարսափելի տառապանքներից հետո երջանիկ ժողովուրդ դառնա:

Ես կարող էի որոշ չափով խոսել նաև քաղաքական իրադրության մասին, սակայն դա չեմ անում, որովհետև որոշ հոռետեսությամբ եմ նայում ապագային: Այդուհանդերձ ես ուզում եմ կառչել այն հույսից, որ խեղճ ժողովրդի մնացորդի համար, այնուամենայնիվ, վերջապես երջանիկ ժամանակներ կգան, երբ նա կկարողանա մոռանալ այն ամենը, ինչ կրել է 1915 թվից ի վեր:

Վերջին իրադարձությունները Թուրքիայում

[«Der Orient», 1925/7: Գլուխ 54-58; 1925/8: Գլուխ 59-64]

«Արյան և արցունքների երկրում.
Իրադարձությունները Միջագետքում
Համաշխարհային պատերազմի ժամանակ»
(Պոտսդամ, 1921 թ.) գրքին հաջորդող՝
Յ. Կյունցլերի հեղինակած հոդվածներ:

Եվս մեկ անգամ Ուրֆայում

1920 թ. հուլիսին ես պետք է ևս մեկ անգամ Ուրֆա մեկնեի: Ճանապարհին անհրաժեշտ էր ծանոթանալ Շվեյցարական հայ օգնության [կազմակերպության] աշխատանքների վիճակին, որի՝ Սվասի նստավայրն այդ ժամանակ անհայտ պատճառներով տեղափոխվել էր Սև ծովի ափին գտնվող Սամսուն քաղաքը: Միայն մի քանի շաբաթ առաջ էր վերագործարկվել «Արևելյան-ճեպընթաց»-ը: Որպես աշխատակից ինձ ուղեկցող ոմն պարոն Վ.-ն և ես օգտվեցինք այդ գնացքից:

Նախկինում մենք հիշատակել ենք հիվանդ անգլիացու խոսքը. «Thanks God, the whole world is now english» («Փառք Աստծո, ամբողջ աշխարհն այժմ անգլիական է»): Ես ստիպված էի հիշել այդ խոսքի մասին, երբ չէի կարողանում անձնագրային վիզա ձեռք բերել, մինչև որ Կոստանդնուպոլսում գտնվող բրիտանական գլխավոր հրամանատարության կողմից ստացանք համաձայնություն, որը մեզ՝ «շվեյցարացիներիս», թույլ էր տալիս Կոստանդնուպոլիս մեկնել:

Քանի որ այս տողերի նպատակը ճամփորդությունը նկարագրելը չէ, ես զերծ եմ մնում Կոստանդնուպոլիս և Սամսուն մեկնելու մանրամասները նկարագրելուց: Սև ծովի մոտ գտնվող Սամսունից ճանապարհն Անատոլիայի միջով շեղակի անցնում էր դեպի արդեն սիրիական սահմանի մոտ գտնվող Ուրֆայի շրջանը, որը ֆրանսիացիների հետ դեռ պատերազմի մեջ էր: Ես այնտեղ հասա օգոստոսի վերջին, այն բանից 4 ամիս անց, երբ ֆրանսիական զորքը, որը 1919 թ. հոկտեմբերին գրավել էր այդ քաղաքը, սովի պատճառով ստիպված էր եղել ետ նահանջել դեպի Ջերաբլուս, չնայած ոչ մի զորամաս չհասավ Ջերաբլուս. 300 հոգի Ուրֆայից 3 ժամ հեռավորության վրա կոտորվեցին, իսկ մնացածը՝ մոտ 100 մարդ, որպես գերիներ ետ տարվեցին Ուրֆա: Ֆրանսիական հրամանատարի գլուխը ցցի վրա ման ածվեց քաղաքում՝ անասելի ցնծություն պատճառելով մուսուլման բնակչությանը: Նրանք, սակայն, ովքեր այդ ժամանակ քաղաքում կրկին մահվան սարսափի մեջ էին՝ երկյուղ կրելով, որ թուրքերի բորբոքված ֆանատիզմը կրկին իրենց դեմ կուղղվեր, 1918 թվից ի վեր դարձյալ 3000-ի հասնող հայ բնակիչներն էին:

90-օրյա պաշարման ժամանակ, որը նախորդել էր ֆրանսիացիների նահանջին, հայերը չեզոք էին պահել իրենց: Թերևս այդ իրավիճակին էր պետք պարտական լինել, որ այժմ հայերին չէին ճնշում: Տեր և տիկին դր. Ֆիշերները, որոնք ստիպված էին պաշարման ընթացքում այնտեղ լինել, մայիսին վերադարձան հայրենիք՝ հիվանդանոցը թողնելով հայ բժիշկների և մի ամերիկացի տիկնոջ՝ միսս Կ. Մ. Հոլմսի վերահսկողությանը: Ես, այնուհանդերձ, հիվանդանոցի համար ամենադժվար ժամանակամիջոցին էի եկել, քանի որ ամերիկուհին, որը տեսնում էր, որ ժամանակավոր վարչակարգը հիվանդանոցին վատ է վերաբերվում, մոտ էր այն փակելու մտքին (դր. Ֆիշերի ապրումները տես "Der Orient", 1924, թիվ 3/4):

Մեծ էր մեր հայ քույրերի ուրախությունը, երբ ես կրկին ստանձնեցի հիվանդանոցի ղեկը, որը նաև պատերազմի բոլոր տարիների ընթացքում կարողացել էի ամուր պահել: Անմիջապես սկսվեց համերաշխ համատեղ աշխատանքն ի բարօրություն բազմաթիվ հիվանդների: Աշխատանքն, իրոք, չէր պակասում: Դրա առիթը՝ ֆրանսիացիների և թուրքերի միջև մոտակա պատերազմական գոտում տեղի ունեցող ռազմական գործողություններն էին: Մենք դեղորայքով հոգ էինք տանում նաև Ամերիկյան Մերձավոր արևելքի նպաստամատույցի 800 հայ որբերի համար:

Լրտեսները

Իմ կինը, երեխաներին Շվեյցարիայում թողնելով, հետևելով ինձ՝ Բեյրութով և Հալեպով պետք է գար Ուրֆա: Հալեպի և Ուրֆայի միջև, սակայն, գտնվում էր պատերազմական գոտին: Միայն ամերիկյան օգնության առաքելությունն էր ժամանակ առ ժամանակ երկու պատերազմող կողմերից ավտոմեքենայով Ուրֆա մեկնելու համար թույլտվություն ստանում: Իմ կինը պետք է այդ ավտոմեքենայով Ուրֆա գար: Ինձ հաջողվել էր դեպի Հալեպ նրան մի նամակ ուղարկել, որով ես նրան տեղեկացնում էի, որ մենք Ուրֆայում կարող էինք միանգամայն հանգիստ կերպով մեր աշխատանքով զբաղվել, որի պակասը չկար:

Երբ ավտոմեքենան Ուրֆա հասավ, անմիջապես ավտոմեքենան ոստիկանական հիմնավոր խուզարկության ենթարկվեց: Հատկապես, նամակներ էին փնտրվում: Այդ ժամանակ իմ նամակներից մեկը, որը գտնվում էր մի գրքի մեջ, ընկավ թուրքերի ձեռքը:

Ուրֆա հասնելուց անմիջապես հետո իմ կինը ձեռնարկեց թուրքական հիվանդանոցի վերագործարկումը: Բացակայում էին բոլոր անհրաժեշտ պարագաները: Նա, սակայն, հայերին պատվիրեց անհրաժեշտ սպիտակեղեն պատրաստել, և շուտով՝ արդեն մի քանի շաբաթ անց, այդ հիվանդանոցն ուներ այլ դեմք, և հիվանդների համար այնտեղ կրկին լավ պայմաններ էին ստեղծված:

Իմ կնոջ ժամանումից մեկ ամիս անց մենք հանկարծ տեղեկացանք մեզ երկուսիս սպառնացող վտանգի մասին: Ուրֆայի ռազմական դատարանը թարգմանել էր տվել վերոհիշյալ նամակը: Եթե նույնիսկ դրա մեջ ոչ մի այնպիսի բան չկար, ինչը հնարավոր կլիներ որպես լրտեսություն մեկնաբանել, ապա բավական էր այն, որ դա մի նամակ էր, որն առանց թուրքական փոստի էր Հալեպ հասել և, թերևս, ուղղակի այն հանգամանքի պատճառով, որ ավտոմեքենայի խուզարկության ժամանակ ոչ մի այլ նամակ չէր գտնվել, իմ կնոջ հանդեպ կասկած էին տածում, որ նա նամակները թաքցրել էր: Դրան գումարվում էր, հավանաբար, նաև այն, որ ես Սամսունով, իսկ նա Հալեպով էր երկիր մուտք գործել, մի առիթ՝ «լրտեսության կասկածի» համար: Այդ պատճառով դատարանը որոշեց մեզ ուղարկել երկրի խորքը: Ջինաղադարից հետո կրկին Ուրֆա եկած կաթոլիկ հայրերը և քույրերը՝ մեծավ մասամբ ֆրանսիացիներ, դեռ դրանից շաբաթներ առաջ, նույնիսկ ոչ ռազմական դատարանի որոշմամբ, նույնպես տարվել էին երկրի խորքերը:

Այն բանի համար, որ դատարանի՝ [մեզ վերաբերող] որոշումն անմիջապես չիրագործվեց, այլ գործը Դիարբեքիրի գլխավոր հրամանատարին թողնվեց, պետք էր պարտական լինել այն հանգամանքին, որ ես շվեյցարացի էի, նաև նրան, որ մենք երկուսս շատ անհրաժեշտ աշխատանք էինք կատարում: Իսկ հրամանատարը մեր աքսորն անհրաժեշտ չհամարեց, սակայն խիստ հսկողություն սահմանեց: Այդպիսով մենք դրանից հետո երեք շաբաթ շարունակ խիստ հսկողության տակ էինք: Բայց և այնպես մենք երկու հիվանդանոցում էլ հանգիստ մեր աշխատանքով էինք զբաղված: Այդ շաբաթներին մեզ այցելություններով չէին անհանգստացնում, քանի որ այն, որ մենք «վերահսկվում» էինք, շուտով դարձավ «հրապարակային գաղտնիք»: Առաջին այցելուն, որին մենք երեք շաբաթ անց կրկին ունեցանք, ռազմական դատարանի մի սպա էր իր ժամանակակից կնոջ հետ, որն Ուրֆայում շրջում էր որպես առաջին «թրքուհին առանց քողի»: Մենք արագ մտերմացանք: Յուրաքանչյուր շաբաթ մի երեկո մենք մեր տանը միասին էինք անցկացնում: Զրույցը շատ հաճելի էր: Շուտով պարոնը պարզորոշ հասկացնել տվեց, որ ինքն է եղել այն մարդը, որը խափանել է մեր աքսորը: Նա նաև չթաքցրեց իր ընտանիքի շատ ծանր դրությունը, քանի որ աշխատավարձի վճարումներն արդեն ամիսներ շարունակ ուշանում էին: Հասկանալի է, որ ես, որպես երախտագիտություն, ընկերական մի զգալի աջակցությամբ այդ թուրք ընտանիքին (նրանք ունեին երկու երեխա) այդ պահի զրկալից վիճակից դուրս բերեցի:

Անհանգստություն հայերի համար

Իմ վերադարձն Ուրֆա ուրախություն պատճառեց առանձնապես քրիստոնյա բնակչությանը, սակայն նաև՝ շատ մահմեդականների: Զուր չէի 20 տարի շարունակ աշխատել այդ բնակչության համար: Ինձ ողջունելու եկածների մեջ էր նաև բողոքական քահանան, և ես ավելի ուշ տեղեկացա 1919 թ. իմ հրաժեշտի ժամանակ նրա ցուցաբերած արտասովոր վարքագծի պատճառի մասին: Այդժամ ես ևս մեկ անգամ իմացա այն, ինչն արդեն գիտեի, որ այն ժամանակվա ամբողջ կամպանիան բացառապես պետք էր վերագրել ատելությանը այն ամենի հանդեպ, ինչ գերմանական կամ գերմանասեր էր: Քահանան փորձել էր հայկական կոմիտեում խոսել հօգուտ ինձ, բայց դա նրան խստիվ արգելվել էր այն սպառնալիքով, որ եթե շարունակեր ինձ համար բարեխոսել, ապա կվտարվեր կոմիտեից: Այդ ժամանակ բոլորի հույսն Անտանտն էր:

Նա, սակայն, ով ինձ ոչ մի անգամ չայցելեց, ավելի վաղ հիշատակված բժիշկն էր, որն իմ նկատմամբ վատ պահվածք էր ցուցաբերել: Նա իմ գալուց կարճ ժամանակ անց որպես զինվոր ռազմաճակատ ուղարկվեց, դարձավ դասալիք և, այնուհետև, Ուրֆայի ռազմական դատարանի կողմից մահվան դատապարտվեց: Քանի որ չկարողացան նրան գտնել, նրա ունեցվածքը բռնագրավվեց: Նա այսօր էլ ապրում է: Կարիք չկա ասել, որ ես նրան ամեն ինչ ներեցի և նրա վարքագիծը գրանցեցի պատերազմի հաշվին, որի պարտքերն աշխարհում ամենուր պետք է ոչնչացվեին, ներվեին, մոռացվեին:

Մի հիվանդայցի ժամանակ ես մի լուսանկար տեսա: Լուսանկարում պատկերված բոլոր հայերին ես ճանաչում էի: Խմբի առջև հայերի գանգերի և ոսկորների բլուր էր կիտված: Այդ ոսկորներն անգլիացիների գալուց հետո Ուրֆա վերադարձած հայերն էին հավաքել՝ որպես իրենց թանկագին հայրենակիցների վերջին մասունքներ: Հիշատակված բժիշկը նկարում ձեռքին պահել էր մի տախտակ, որի վրա հետևյալ բառերն էին. «Թուրքական քաղաքակրթություն. 1915»: Այդ լուսանկարները սարսափեցրին ինձ, և ես խնդրեցի դրանք անմիջապես ոչնչացնել: Թե արդյոք դա արվեց թե ոչ՝ ես չգիտեմ, սակայն կարող էին, իհարկե, ուրիշ օրինակներ ևս գոյություն ունենալ:

Գարնան սկզբին ոստիկանությունը մի ասորու տանը խուզարկություն կատարեց թղթերի պատճառով: Այնտեղ ևս նման մի լուսանկարի պատճենը հայտնաբերվեց: Հետևանքն այն էր, որ դրանում պատկերված տղամարդիկ, որչափ որ նրանց կարող էին գտնել, ձերբակալվեցին և Դիարբեքիրի բանտը նետվեցին, որտեղից նրանք միայն 1922 թ. դեկտեմբերին կրկին ազատ արձակվեցին: Բարեբախտաբար, սակայն, այդ տղամարդկանց մեծ մասը, ովքեր կային նկարում, արդեն կրկին փախել էին Ուրֆա-

յից: Միայն վեցն էին ներբակալվել, ցավոք, նրանց թվում նաև՝ վերոհիշյալ քահանան: Այդպիսով համայնքն առանց քահանայի էր, և ես ինչպես Աշխարհամարտի ժամանակ հաճախ էր պատահում, եկեղեցու բեմից պետք է նրանց մխիթարողը լինեի:

Արտագաղթը



Ֆրանկլին-Բուլոնյան խաղաղությունը վերջ տվեց թուրքերի և ֆրանսիացիների թշնամանքին: Բաղդադի երկաթգիծը Եփրատի այն կողմում դարձավ Թուրքիայի և Սիրիայի սահմանը: Այդպիսով Ուրֆան բաժին հասավ թուրքերին, և ըստ այդմ քաղաքի բոլոր քրիստոնյաների, հատկապես հայերի հայացքն ուղղված էր դեպի Սիրիա: Սակայն խաղաղության հետ նրանք ազատ տեղաշարժի հնարավորություն չստացան: Ոչ մի քրիստոնյայի չէր թույլատրվում արտագաղթել կամ նույնիսկ՝ գործով մի թուրքական գյուղ գնալ: Հենց այս պատճառով նրանց համար երկրում մնալը դարձավ դժոխք, և յուրաքանչյուրի բաղձանքն էր մոտակա սահմանով փախչել: Մի աշխույժ տրանսպորտային առևտուր սկսվեց: 10 ոսկե ֆունտ և ավելի վճարման դիմաց մահմեդականները քրիստոնյաներին մութ գիշերով անցկացնում էին սահմանը: Երբեմն, սակայն, նման խմբերը բռնվում էին և այնուհետև՝ պատժվում բանտարկությամբ: Չնայած դրան, հայերը քաղաքում շարունակ պակասում էին: Ի վերջո արդեն մնացել էին միայն ամերիկացիների խնամակալության տակ գտնվող որբերը և մի խումբ աղքատներ, ովքեր գումար չունեին, որպեսզի կարողանային փախուստի համար վճարել:

Ամերիկացիները 1919 թվին ողջ Թուրքիայում աքսորի ժամանակ թուրքական, քրդական և արաբական տներ տարված՝ ավելի քան տաս հազար որբ երեխաների էին հավաքել, երեխաներ, որոնք աքսորի ժամանակ տարվել էին թուրքերի, քրդերի և արաբների տները: Քանի որ շարունակ ուժեղացող քեմալական կառավարությունն ամերիկացիների համար շատ տեղերում ամենուր դժվարություններ էր հարուցում, նրանց վերահսկում էր, նրանցից օգնություն էր պահանջում նաև մուսուլման որբերին օժանդակելու համար, որոնք Թուրքիայում ևս մեծ քանակությամբ կային, մինչդեռ նրանց համար հատկացվող գումարներն այնուհետև հնարավոր չէր լինում վերահսկել, «Օգնության... » ընկերությունը որոշեց իր հայ որբերին մի ոչ թուրքական երկիր տեղափոխել: Այդ ժամանակ հարավարևելյան Անատոլիայի համար, որպես հանգրվան ընտրվեց Լիբանանը: Ըստ էության Անկարայի կառավարությունը դրականորեն էր տրամադրված տեղափոխման գաղափարի նկատմամբ: Բայց յուրաքանչյուր քաղաքում, որտեղ որբեր կային, պետք էր տեղական իշխանությունից համապատասխան թույլտ-

վություն ձեռք բերվեր, և այս առևտուրը որոշ չափով բարդացրեց տեղափոխման գործընթացը: Այսուհանդերձ 8 ամսվա ընթացքում, ապրիլից նոյեմբեր, միայն հարավ-արևելյան տարածաշրջանից 10.000 որբեր տեղափոխվեցին Լիբանան: Քանի որ ես և իմ կինը մեր լեզվական գիտելիքների և տեղանքի ճանաչողության պատճառով այդ աշխատանքի համար ավելի նպատակահարմար էինք, քան որևէ մեկը ամերիկյան «Օգնության... » աշխատակիցներից, որոնց մեծ մասը միայն կարճ ժամանակով էին եղել երկրում, մեզ երկուսիս հանձնարարվեց Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Դիարբեքիրից, Խարբերդից, Ակնից, Արաբկիրից և Մալաթիայից շուրջ 8000 երեխաների տեղափոխման գործը, մի աշխատանք, որը մեզ այնքան մեծ ուրախություն պատճառեց, որ մենք մեր կյանքի այս հատվածը կարող ենք լավագույններից մեկը համարել: Այդ պատճառով ես հաճույքով կուզենայի ընթերցողին նույնպես որոշ չափով զբաղեցնել՝ նրան այս փոխադրումներից մի քանի դրվագներ պատմելով:

Քրեվ-ի Դավը



Մեր երեխաների առաջին խմբի հետ ես մեկնեցի որպես նրանց ղեկավար: Ես գիտեի, թե որքան կարևոր էր, որ բոլոր քրդերը, որոնց տարածքով մենք պետք է Ուրֆայից Ջերաբլուս գնայինք, և որոնք երկու տարի ի վեր այլևս ոչ մի քրիստոնյայի իրենց տարածքում չէին տեսել, տեղեկացվեին կատարվելիքի մասին: Այժմ երեխաների այդ խմբերին՝ դարձյալ իրենց տարածքներում տեսնելն, անշուշտ, կարող էր կրկին գրգռել նրանց՝ այս երեխաներին գողանալու ախորժակը: Ես, սակայն, հավատում էի, որ երբ նրանք տեղեկանան, որ տեղափոխումը ես էի գլխավորում, նրանք, ի սեր ինձ, իրենց քրդական պատվի հետ չէին կարողանա համատեղել մեզ նեղություն պատճառելը:

Մեր առջև ընկած էր մի քրդական գյուղ: Երկու սայլ չէին հետևել միասին մնալու իմ հրահանգին: Այդ պատճառով նրանք մեր առջևում էին, և նախքան [գյուղի] բնակիչները ողջ արշավախմբին կտեսնեին, գյուղ մտան: «Վա՛յա սեվկիետ-ի գյիաուրե»՝ (Սա գյավուրների բանդա է) գոչելով՝ քրդերը կանգնեցրեցին սայլերը, և սկսվեց մի իսկական կողոպուտ: Այնուհետև ես հիմնական շարասյան հետ հասա գյուղի հրապարակ: Ինձ անմիջապես ճանաչեցին, և կողոպտիչները «Վա՛, Յագուփ Էֆենդի» գոչելով, թալանը դադարեցրին, կրկին աղջիկներին նետեցին գողացված իրերը և, չնայած կանգնելու իմ կոչին, փորձեցին փախչել գյուղի մյուս կողմը: ... ... Ես հավաքեցի գյուղի ամբողջ բնակչությանը, տեղեկացրեցի նրանց, որ այս երեխաները թուրքերի կողմից արտագաղթելու թույլտվություն են ստացել, և որ այս առաջին խմբից բացի դեռ բազմաթիվ ուրիշ խմբեր են

այստեղով անցնելու, և հույս հայտնեցի, որ նրանք հենց ի սեր ինձ՝ իրենց ընկերոջ, հոգ կտանեն, որ ոչ մի երեխայի որևէ բան չպատահի: Նրանք ներողություն խնդրեցին և երդվեցին, որ ոչ մի երեխայի ոչինչ չի պատահի: Այս գյուղի առնչությամբ ես այժմ լիովին հանգիստ էի, այստեղ մինչև տեղափոխման ավարտն իմ հովանավորյալներին, նույնիսկ եթե ես ստիպված լինեի խմբի հետ չլինել, ոչ մի վատ բան չէր պատահի: Եվ հենց այդպես էլ եղավ. ամառային ամիսներին այստեղով հազարներն անցան, և ոչ ոքի ոչինչ չպատահեց:

Մեկ այլ քրդական գյուղ, որը, սակայն, արդեն Սիրիային էր պատկանում, և որտեղ մեր երեխաներին ոչինչ չէր կարող սպառնալ, կոչվում էր Սիֆտեք: Բայց բնակչությունն, այնուամենայնիվ, զարմացած էր, երբ տեսավ դեգերող բազմությանն իրենց ջրհորներից ջուր հանելիս: Շատերը զարմացած հարցնում էին. «Վա՛յ ջի՛ե» (ինչ է սա): Ես ինքս մի քանի րոպե անց հետիոտն մի խմբի հետ եկա ջրհորի մոտ: Հազիվ էի այնտեղ հասել, երբ արդեն ինձ ճանաչեցին ու սրտագին ողջունեցին: Մեկն այնքան բարձր, որքան կարող էր, կանչեց մի փոքր հեռու գտնվող վրանաբնակներին. «Մուհամեդ, Մահմուդ, Խալո, արագ եկեք, տեսեք՝ ո՞վ է եկել, «Բրեվ-ի Դավո» (Դավիթի եղբայրը): Ուրեմն ես Դավոյի եղբայրն էի: Բայց թե ո՞վ էր Դավոն, չէի հիշում, իսկ քրդերն ընդհանրապես չէին հավատում, որ ես կարող էի չհիշել Դավոյին: Չէ որ ես նրան «ձեռքերիս վրա ման էի ածել», չէ որ նա վեց ամիս շարունակ հիվանդ վիճակում պառկել էր Ուրֆայի մեր հիվանդանոցում: Նա նրանց այնքա՛ն հաճախ էր պատմել, թե ինչ եմ ես արել իր համար՝ եղբայրն ավելի լավ չէ՞ր կարող լինել: Երբ ես հարցրեցի, թե ե՞րբ է դա եղել, պարզվեց՝ մոտ 12 տարի առաջ: Զարմանալի չէր, որ ես այլևս չէի կարող նրան հիշել: Այդ ընթացքում եկել էին Մուհամեդը, Մահմուդը, Խալոն, բայց ոչ՝ Դավոն: Նա, պարզապես, մի ուրիշ գյուղ էր գնացել: Երբ ես մի ուրիշ օր կրկին անցա այդտեղով, նա այդ ժամանակ ջրհորի մոտ էր: Երբ նա ինձ տեսավ, մոտեցավ ու համբուրեց ինձ: Նա տղամարդ էր դարձել, մեծ և ուժեղ, հաստ բեղերով և բաց, խիստ մազածածկ կրծքով, ինձ ամբողջովին անծանոթ, քանի որ տասներկու տարի առաջ, երբ նա հիվանդ պառկած էր հիվանդանոցում, ընդամենը տասներկուամյա պատանի էր եղել: Նա ճանաչեց ինձ, քանի որ ես, հավանաբար, քիչ էի փոխվել: Այնուհետև նա սրտագին կերպով հրաժեշտ տվեց ինձ՝ իր եղբորը, որին նա մեծագույն սիրով կընդուներ իր տանը հյուրասիրելու համար: Նա ինձ ցույց տվեց նաև իր երիտասարդ կնոջը և իր առաջին քայլերն անող երեխային՝ ասելով, որ ես իր «բրեվը» (եղբայրն) եմ:

Խոստովանություն

Հենց նոր էի ես մի խումբ որբերի հետ Դիարբեքիր քաղաքից դուրս եկել՝ շարունակելու համար ճանապարհը դեպի Ջերաբլուս, երբ [քաղաքի] դարպասի առջև սկսվեց անվանականչը, որը միշտ ոստիկանությունն ինքն էր ուզում անել: Ընթերցվեցին անձնագրերի անունները: Ընդսմին պարզվեց, որ չորս պատանիների անունները չընթերցվեցին, սակայն, չորս այլ անուններ ընթերցելիս ոչ ոք չներկայացավ: Դա հանելուկային չէ՞ր: Մարդինում, այդ խմբի ճանապարհ ընկնելուց առաջ, ոչ մի անվանականչ չէր արվել: Եվս մեկ անգամ բոլոր անունները կանչվեցին. նույն արդյունքով՝ չորս պատանիների անունները մնացին չկանչված, իսկ չորսը, որոնց անուններն ընթերցվեցին, ներկա չէին:

«Ինձ,- ասաց տաս տարեկան մի փոքրիկ,- երբ Մարդինից հեռանում էինք ասել են, որ ես ճանապարհին պետք է Ներսես կոչվեմ, ոչ թե Լևոն»: Այդպես էր եղել նաև մյուս երեքի հետ, նրանք կեղծ անուններ էին ստացել: Այժմ նրանք բոլորը խոստովանեցին, որ միսս. Ֆ-ն՝ մի ամերիկուհի, որը ղեկավարում էր Մարդինի որբանոցը, իրենց ասել էր, որ նրանք մինչև երկրի սահմանն անցնելը նոր անուն պետք է կրեին, և այդ անունը հիմա նրանք այլևս չէին հիշում: Ես ստիպված էի ծիծաղել այդ խոստովանության վրա, սակայն ծիծաղս կարճ տևեց, քանի որ ոստիկանությունը հայտարարեց, որ այդ չորս տղաները չէին կարող շարունակել ճանապարհը, այլ պետք է ետ վերադառնային: Ես վերադարձա քաղաք, ոստիկանապետի մոտ, և քանի որ նա նույնպես մերժեց, գնացի վալիի մոտ՝ նրան խնդրելու, որ երեխաներին թույլատրի [շարունակել ճանապարհը], բայց՝ ապարդյուն: Եվ այդպես՝ ես գնացի այդ ընթացքում ճանապարհ ընկած խմբի ետևից՝ դառնացած հիմար բախտի վրա: Այնուամենայնիվ, նրանք հետագայում մի միջոց գտան սահմանն անցնելու համար:

Պատահողմը

Ես կառքով դեռ քառորդ ժամ չէի հեռացել քաղաքի դարպասներից և մեկ անգամ ևս զննում էի բոլոր երեխաների անձնագրերը, երբ հանկարծակի մի պտտահողմ սկսվեց և մի քանի վայրկյանով ստիպեց սարսափելի փոշուց փակել իմ աչքերը ու բոլոր թղթերը սայլից դուրս նետեց: Երբ մրրիկն անցավ, ու ես կրկին կարողացա բացել աչքերս, զուր կերպով էի իմ շուրջը նայում՝ անձնագրերը գտնելու համար: Ո՞ւր կարող էին դրանք թռած լինել: Ես հեռվում տեսա պտտահողմի քույր քամուն, սակայն՝ ոչ մի թուղթ: Ես վազեցի փոշու ամպի ետևից՝ հուսալով, որ, այնուամենայնիվ, ամեն բանից ավելի անհրաժեշտ այդ անձնագրերը կգտնեի: Ճիշտ է, ժայռաբե-

կորների միջև՝ մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ես գտա հինգ թղթերով ցուցակ, բայց 22 անուններով մի էջը բացակայում էր: Որտեղ էլ ես փնտրեցի, այն մեկընդմիշտ անհետացել էր: Փոշու ամպն արդեն հեռու էր, շատ հեռու, նրա ետևից վազելն անհնար էր: Այդպես ես շարունակեցի ճանապարհն առանց այդ թղթի՝ մոտավորապես ենթադրելով, թե ինչպիսի դժվարություններ էի հիմա ունենալու, մինչև կհասնեի Սուրուջից այն կողմ գտնվող սիրիական սահմանին: Հաջորդ ոստիկանական ստուգումը Սևերեկում էր: Իրոք այդ պահին դժվարություն ծագեց: Քանի որ ես ասացի՝ տեղի անբավարարության պատճառով գիշերը քաղաքում չենք կարող մնալ, ոստիկանությունը ցանկացավ անվանականչը քաղաքի [մուտքի] առջև կատարել: Ես անմիջապես տեղեկացրեցի անձնագրերի հետ կապված ձախորդության մասին: Արդյոք ինձ հավատացին թե ոչ, այնուամենայնիվ ինձ ասվեց, որ այն երեխաները, որոնց անուններն առկա չէին, հարկադրված էին մնալ, դրա դեմ ոչինչ անել հնարավոր չէր: Ես մտա քաղաք մութեսարիֆին (գավառապետին) փնտրելու: Քանի որ ուրբաթ էր, պետք է նրան իր տանն այցելեի, ինչը թուրքական գավառներում այնքան էլ հաճելի բան չէ: Տանը օտարականներին դժկամությամբ էին ընդունում, քանի որ այցելությունների համար, այնուամենայնիվ, պաշտոնական վայր կար: Սակայն պարոնը բարեկամաբար էր տրամադրված, ինձ լսեց, բայց հայտնեց իր ափսոսանքը, որ այդ երեխաներին չէր կարող թույլ տալ շարունակել ճանապարհը: Ի վերջո նա մեղմացավ և ինձ թույլ տվեց բոլոր երեխաների հետ գնալ քաղաքից մոտ 6 կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի աղբյուրի մոտ, որովհետև ես միայն այնտեղ էի կարող մարդկանց և կենդանիների համար բավականաչափ ջուր գտնել, և խոտն էլ կբավարարեր գիշերային ճամբարատեղի պատրաստելու համար: Բայց հաջորդ գիշեր մենք հսկվում էինք ոստիկանների կողմից, որպեսզի մեզանից ոչ ոք չփախչեր: Հաջորդ օրը եկավ ոստիկանության կոմիսարը և ևս մեկ անգամ անվանականչ կատարեց ու դրանից հետո պահանջեց, որ բոլոր երեխաները, ում անուններն առկա չէին, վերադարձվեին Սևերեկ: Ես տեղավորեցի նրանց երեք սայլերում և նրանց հետ գնացի նահանգապետի մոտ՝ խնդրելով, որ, այնուամենայնիվ, նա նրանց թույլ տա մինչև Ուրֆա մեզ հետ գալ, քանի որ մենք այնտեղ մի մեծ տուն ունենք, մինչդեռ այստեղ՝ Սևերեկում, նրանց ընդունման համար պատրաստ ոչինչ չկա: Ժամը 11-ին մենք կարողացանք վերադառնալ մեզ սպասող խմբի մոտ և այնուհետև շարունակել ճանապարհը: Հաջորդ օրը երեկոյան մենք հասանք մեր որբանոցը, սակայն հազիվ էինք բոլորս բակում հավաքվել, երբ ոստիկանապետի հետ միասին երեք ոստիկան եկան և պահանջեցին ստուգում կատարել: Դրանից հետո Մարդին՝ կառավարությանը հեռագիր ուղարկվեց, որով հարցում արվեց մեկնող երեխաների թվաքանակի մասին, և երբ հետագա երեք օրերին հարցն այնպիսի պարզաբանում ստացավ, ինչպես ես նրանց տեղեկացրել էի, մեզ թույլ տրվեց շարունակել ճանապարհը:

Սայլադղյակը

Խարբերդից սկսած, որտեղից մոտ 5000 հոգու պետք է տեղափոխեինք, անհրաժեշտ էր այնպես անել, որ հնարավորինս մեծ խմբեր ճանապարհ ընկնեին: Դա ծառայողական ճանապարհորդությանը վերաբերող մեծ նախապատրաստություններ էր պահանջում: Ճանապարհ էին ընկնում մեծ մասամբ 300-400 երեխաներից բաղկացած 50-ական խմբերով: Փոխադրման այդ երեք ամիսների ընթացքում ինձ երկու անգամ հաջողվեց մեկ օրվա ընթացքում մոտ 700 երեխա տեղափոխել: Մի մասը սայլերով՝ Դիարբեքիրով դեպի Ջերաբլուս, իսկ մի մասը ջորիներով՝ Մալաթիայով դեպի Կարխեմիս (Ջերաբլուս): Մեծ օրեր էին դրանք: Որքա՜ն շողշողուն էին երեխաների դեմքերը, որ կարողացել էին ճանապարհ ընկնել: Անկասկած, հրեաներն ավելի ուրախ չէին, երբ հեռանում էին Եգիպտոսից:

Այդ ամառային ամիսներին որպես գիշերային ճամբար հասարակական օթևանները չէին օգտագործվում, որոնք, իհարկե, հիմնականում փոքր էին, և ճամբար էր պատրաստվում քաղաքից դուրս, բայց մշտապես, ըստ հնարավորին, ջրին մոտ: Սայլերով մի «դղյակ» էր պատրաստվում, այսինքն դրանք բոլորը լայն շրջանով այնպես էին դասավորվում, որ մի սայլի առեղը դիպչում էր մյուս սայլի ետնամասին: Այդպես 20-30 սայլերով մի մեծ շրջան էր ստեղծվում: Ապա ձիերը շրջանի ներսում կապվում էին սայլերին, և հետո կենտրոնում պառկում էին երեխաներն իրենց հետ վերցրած բրդե ներքնակների վրա: Սնունդը՝ միշտ սառը, երեխաները ստանում էին մեծ մասամբ հիսունական հոգուց բաղկացած, երբեմն սակայն, ավելի փոքր խմբերով, այսպես կոչված՝ սայլախմբերով, տվյալ սայլին որպես ղեկավար կցված տղայի միջոցով: Այնուհետև, նախքան քուն մտնելը նաև երգեր էին երգվում, որոնք տարածվում էին գիշերային լռության մեջ: Կարևոր էր, որ երբ մի այդպիսի խումբ վերջապես Ուրֆա էր հասնում, բոլոր երեխաների համար բաղնիք էր պատրաստվում, և կարելի էր մաքրվել և փոշոտ սպիտակեղենը լվանալ, ինչի պատճառով մշտապես ստիպված էինք լինում մեկ-երկու օրվա կանգառ կատարել: Իսկ երեխաների հետագա տեղափոխման համար պետք է իմ կինը հոգ տաներ: Մեծ մասամբ նա երեխաների հետ մինչև Ջերաբլուս մեկնող կայարան էր հասնում:

Մալաթիայի հույն որբերը

1920-1921 թթ. ձմեռը աննկարագրելի դժբախտություն բերեց նաև Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայի ուղղափառ բնակչությանը: Քանի որ Թուրքիան պատերազմի մեջ էր հույների հետ, թուրքերի խորհրդարանը որոշեց երկրից աքսորել նաև հույն ուղղափառ բնակչությանը: Եվ

Մարզվանից, Սվասից, Կոնիայից դեպի Խարբերդ, Դիարբեքիր և Բիթլիս ճանապարհ ընկան անվերջ շարասյունները: Վրա հասավ ձմեռը: Մոտ 90 տոկոսը մահացան ճանապարհին: Դեպի Խարբերդ կատարած իմ առաջին ճամփորդության ժամանակ ես Տավրոսի լեռներում տեսա այդ հազարավոր զոհերի գունաթափված ոսկորները...

«Մերձավոր արևելքի նպաստամատույցը», որը դեռ աշխատում էր երկրում, Մալաթիայում հավաքում էր երեխաներին: Ես պետք է գնայի այնտեղ նաև նրանց՝ թվով 900 հոգու, տեղափոխելու համար: Ամերիկացին, որը պետք է այդ երեխաներին խնամեր, իրավունք ուներ նրանց միայն կերակրել և անկողին տալ մի վարձված տան մեջ: Երեխաների համար ավելին անելը չէր թույլատրվում: Մալաթիայում իշխում էր մալարիան: Ամեն օր բազմաթիվ երեխաներ էին մահանում: Երբ ես այնտեղ էի, մի շաբաթում այդ խեղճ էակներից 20-ը մահացան: Ինչպե՞ս կարող եմ ես երեխաների այդ բազմությանը փոխադրել՝ հարցնում էի ինքս ինձ: Կառավարությունը, որն այստեղ տվորականին հակառակ իմ նկատմամբ ամենևին բարյացակամ չէր, նախ գնացող երեխաների ցուցակը պահանջեց: Նրանց առողջական վիճակին համապատասխան ես նրանց երեք խմբերի բաժանեցի: Առողջ երեխաները պետք է ջորիների վրա նստած, լեռների վրայով հարավ հասնեին, երկրորդ՝ ավելի թույլերի խմբին, ես հույս ունեի սայլերով Դիարբեքիրով ուղարկել, և վերջապես՝ կիսակենդան երեխաներին փոխադրել ավտոմեքենաներով: Ինձ՝ հունարենին անտեղյակիս, մեծ դժվարություն էր պատճառում արտասովոր անունների արտասանությունը. մի աղջկա անունը Նեթսեմանե Կարալամբոս էր, մի տղայինը՝ Կարալամբոս Նեթսեմանոս, մի ուրիշ աղջկանը՝ Նորդանե Արեստակի, բայց մի ուրիշ տղայինը՝ Արեստակի Նորդանոս և այլն:

Առաջին խումբը ջորիների վրա բարեհաջող ճանապարհ ընկավ: Քանի որ, սպասվող սայլերը չէին գալիս, իսկ աշունն արդեն սկսվել էր, ես ստիպված էի որոշում ընդունել, որ երկրորդ խումբը նույնպես ջորիներով տեղափոխվեր: Վատը, սակայն, այն էր, որ երկրորդ խմբից ամեն օր երեխաներ էին ամենածանր կերպով հիվանդանում, բայց երրորդ խմբի մյուս երեխաները կազդուրվում էին, և ես նրանց, քանի որ իմ տրամադրության տակ միայն մեկ ավտոմեքենա կար, պետք է միացնեի երկրորդ խմբին: Դա այնուհետև դարձյալ դժվարություններ ստեղծեց՝ կապված ոստիկանության հետ, որն անձնագրերը պատրաստել էր ըստ իմ ցուցակների:

Վերջապես մոտ տասը սայլ եկավ: Ես դրանց մեջ տեղավորեցի թույլ երեխաներին և ուղարկեցի Խարբերդ: Ինքս հաջորդ օրն ավտոմեքենայով մնացածների՝ մոտ 12 երեխաների հետ մեկնեցի Խարբերդ: Մի փոքրիկ տղայի, որն արդեն մահվան ճիրաններում էր, ես վերցրեցի իմ գիրկը, քանի որ լիքը լցված ավտոմեքենայում այլևս տեղ չկար: Մեկնումից մեկ ժամ անց նա իր հոգին ավանդել էր իմ ծնկների վրա: Քանի որ, սակայն, ոչ մի տեղ չկար, հենց այդպես, երեք ժամ մինչև Խարբերդ հասնելը մնաց իմ ծնկներին...

Թշնամի-բարեկամ

Մալաթիայում ես նաև մի առանձնահատուկ ապրում ունեցա: Այնտեղ ամերիկյան որբանոցը պատկանում էր պարոն Քրիստոֆելին, որն այնտեղ մինչև պատերազմի ավարտը կույրերի մի հաստատություն էր հիմնել: Հետագայում նա նույնպես, որպես գերմանացի, պետք է երկրից հեռանար: Ամերիկացիներն այդ հաստատության շենքը տեղափոխվեցին և այնտեղ էլ հավաքեցին որբերին: Ամերիկացիների մեկնումից հետո ինքնըստինքյան հասկանալի էր, որ թուրքերը, որոնք իրենց համարում էին գերմանական սեփականության ժառանգորդներ, սեփականացրին գերմանական այդ շենքը: Տեղյակ լինելով այդ մասին՝ ես փորձեցի թուրքերին համոզել էմալապատ մահճակալներով այդ գեղեցիկ տունը հիվանդանոցի վերածել, այլապես մահճակալները կգողանային:

Դեռ ամերիկացիների ժամանակ այնտեղ ծառայում էր մի հայ, որը, որպես ամերիկյան քաղաքացի, պատերազմի բռնկումից կարճ ժամանակ առաջ Մալաթիա էր եկել իր ծեր մորն Ամերիկա տանելու համար: Այնուհետև նա չորս տարի շարունակ ապրել էր՝ թաքնված մի քարայրում: Պատերազմից հետո նա դարձավ ամերիկացիների համահանձնակատարը: Այժմ ամերիկացիներն ուզում էին այդ մարդուն իր ընտանիքի հետ Սիրիա տեղափոխել, սակայն նահանգապետը ոչ մի կերպ թույլ չէր տալիս: Ես, ավաղ ապարդյուն, բոլոր լծակները գործի էի դնում նրան օգնելու համար: Այդ ժամանակ սանիտարական տեսուչն ակնարկեց, որ նահանգապետն իր նոր հիվանդանոցի համար հաճույքով կուզենար իմ ձին և ավտոմեքենան ունենալ: Ես գնացի պալատ՝ նրա հետ առանձին խոսելու: Երբ մենք սկսեցինք զրուցել ձիու և ավտոմեքենայի մասին, ես նրան անկեղծորեն ասացի, որ նրան հաճույքով կմատուցեի այդ ծառայությունը, բայց ես նրանից մի պատասխան ծառայություն էի ակնկալում, այն է՝ մեր վերոհիշյալ հայի ազատ արձակումը: Հազիվ էի դա ասել, երբ այդ պարոնն ընկավ կատաղության մոլուցքի մեջ. «Ի՞նչ, դու ուզում ես կաշառել ինձ: Օ՜, դուք՝ անիծյալ ամերիկացիներդ և եվրոպացիներդ, դուք ամբողջ աշխարհում մեզ վատն եք դարձնում, բայց դուք եք վատը»: Նա թույլ չտվեց որ խոսեմ, այլ ուղղակի վռնդեց ինձ. «Դուրս եկե՛ք»: «Դուք կարիք չունեք ինձ դուրս անելու, - ասացի ես,- ես ինքս կգնամ»: Եվ ես դուրս եկա այն հույսով, որ այլևս չեմ տեսնի նահանգապետին, որն առանց այդ էլ ինձ խիստ ձանձրացրել էր:

Այդ օրերին, սակայն, այդ պարոնի միակ դուստրը ծանր հիվանդացել էր: Քաղաքի երեք բժիշկները՝ մի թուրք, մի հայ և մի վտարանդի հույն, շվարել էին երեխայի անկողնու առջև: Քաղաքի ոստիկանապետը նախկինում եղել էր Ուրֆայում, նա ինձ լավ էր ճանաչում, քանի որ ես մի անգամ Ուրֆայում հաջողությամբ կարողացել էի նաև նրա երեխային բուժել:

Վերջինս հարցրել էր նահանգապետին, թե ինչու՞ նա ինձ իր երեխայի համար չի հրավիրում: Այդժամ նա բացատրել էր պարետին, որ նա ինձ շատ վատ է վերաբերվել ու այժմ չի համարձակվում ինձ կանչել: «Դու նրան չես ճանաչում, նա ոխակալ է, սպասիր, ես նրան կկանչեմ և վստահ եմ, որ նա կգա»: Երևի այդպես պետք է որ պարետն ասած լիներ: Այդ օրը երեկոյան, երբ ես անցնում էի զորանոցի մոտով, պարետը կանչեց ինձ իր մոտ և ներկայացրեց դեպքը: Ես դարձյալ հիշատակեցի այն վերաբերմունքը, որ ինձ բաժին էր հասել, մի վերաբերմունք, որպիսին ես թուրք պաշտոնյաների հետ իմ 22 տարվա շփումների ընթացքում դեռ ոչ մի անգամ չէի տեսել, բայց և այնպես համաձայնվեցի երեխային զննել, եթե այդ ցանկությունը նահանգապետն ինքն՝ անձամբ, հայտներ: Հաջորդ օրը վաղ առավոտյան ես նահանգապետից ստացա մի փոքրիկ նամակ, որում նա ինձ խնդրում էր գալ և զննել իր երեխային: Ես գնացի: Նախքան ինձ երեխայի մոտ տանելը նա ներողություն խնդրեց, որը ես ընդունեցի՝ մեկնելով ձեռքս: Չնայած ես իմ տրամադրության տակ միջոցներ չունեի հիվանդ երեխայի արյան հետազոտության համար, այնուամենայնիվ կարծում էի, որ ճշգրիտ ախտորոշումն ունեմ, և կարողացա վախեցած հորը և էլ ավելի վախեցած մորը հանգստացնել: Ասացի, որ երկու օր անց ջերմությունը կանցնի, և երեխան կառողջանա: Այդպես էլ եղավ: Ես այլևս չգնացի պալատ հրաժեշտ տալու կամ հայի համար խնդրելու: Թե արդյոք կարելի՞ է այդ հիվանդայցի արդյունքը համարել այն, որ դրանից քիչ ժամանակ անց, այնուամենայնիվ, այդ հայը դուրս եկավ, ես չգիտեմ: Արդեն իսկ բավական է, որ նա ազատվեց և այսօր կրկին Ամերիկայում է գտնվում:

Ուրֆայի կայանավայրի վերջը



1922 թ. բացվեցին դռները Թուրքիայում դեռ մնացած բոլոր հայերի համար: Այժմ նրանք ազատ էին՝ երկրից հեռանալու: Այո՛, նրանց բազմիցս հասկացնել էին տալիս, որ արտագաղթեն, և երբ նրանք չէին ուզում դա հասկանալ, այդ դեպքում օգնության էին գալիս հետապնդումների մասին լուրերը: Դրանից առաջ արդեն Ուրֆայից հարյուրավոր հայեր փախել էին դեպի Սիրիա: Դեռ սեպտեմբերին փախավ նաև հայ բժիշկը, որի հետ ես 1920 թվի՝ իմ վերադարձից հետո աշխատում էի: 1922 թվի ներկայացրածս բյուջեն Շվեյցարիայում իմ կոմիտեի կողմից ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հավանություն չստացավ: Հիվանդանոցի փակելը թողել էին իմ հայեցողությանը: Այնուամենայնիվ, ես չկարողացա նման վճիռ կայացնել, չնայած բժիշկը նույնպես չէր ցանկանում մինչ այդ եղած աշխատավարձով շարունակել աշխատել: Նա մեծ ծախսեր էր ունեցել թուրքական զինվորական ծառայությունից ազատվելու համար, այդ

պատճառով այժմ պետք է կարևորություն տար իր վաստակին: Ես նրա հետ համաձայնության եկա, և դրա արդյունքում նրա վարձատրությունը կրկնակի բարձրացավ: Մենք շատ անելիքներ ունեինք: Ես պահանջեցի մեզ վիրահատությունների համար ավելի բարձր վճարել, քան մինչ այդ: Արդյունքում՝ հիվանդանոցի դրամարկղի պարունակությունը հուլիսի 1-ին ավելի փոքր չէր, քան եղել էր հունվարի 1-ին: Դա չտեսնված արդյունք էր Ուրֆայի հիվանդանոցի պատմության մեջ: Դրսից ոչ մի օժանդակություն: Սակայն, հուլիսի սկզբին ես պետք է գնայի Խարբերդ՝ որբերի փոխադրումը ղեկավարելու համար, և այդ պահից հիվանդանոցի եկամուտները կտրուկ անկում ապրեցին: Ուրֆայի սանիտարական տեսուչը մեր աշխատանքի հանդեպ բավական բարեկամաբար էր տրամադրված: Ես հոգ էի տանում նաև դրա համար: Այդ նա էր, որ ինձ կոչ էր անում գործնական բժշկության իմ ունակությունների վերաբերյալ 1920 թ. կատարված քննության վկայականն ուղարկել Անկարա, քանի որ համոզված էր, որ [դրա հիման վրա] ես ծառայողական թույլտվություն կստանամ, որի միջոցով հնարավոր կլինի առանց հայ բժշկի շարունակել աշխատելը: Ես նրան ասացի, որ ինձ չի թվում, թե դրա համար ժամանակը նպաստավոր է, քանի որ, այնուամենայնիվ, ինձ հայտնի էր, թե դիպլոմավոր ամերիկացի բժիշկները Թուրքիայում ինչպիսի դժվարությունների հետ էին առնչվում: Այդուհանդերձ տեսուչի դրդմամբ վկայականն ուղարկվեց, և Խարբերդում իմ բացակայության ժամանակ Անկարայից ստացվեց պատասխանը, որ Թուրքիայում ոչ մի արտասահմանյան բժշկի, որն իր ուսումը թուրքական համալսարանում չի ստացել, չի թույլատրվում վարել բժշկական գործունեություն: Նաև՝ որ հիմա արտասահմանցիներն այլևս քննություն չեն հանձնում, ինչպես մինչ այդ է եղել:

Այժմ դրան ավելացավ ահա այն, որ հայ բժիշկը, որը պաշտոնապես մեր հիվանդանոցի բժիշկն էր եղել, փախավ, քանզի հիմա բոլոր հայերն էին փախչում Ուրֆայից: Բացի այդ, ամերիկացիներն իմ կնոջը և ինձ խնդրեցին ստանձնել Ղազիրի որբանոցի ղեկավարումը, այնպես որ ես վերջապես ծանրացած սրտով որոշեցի Ուրֆայի կայանավայրը գոնե ժամանակավորապես փակել: Հիմա ես միայնակ այլևս չէի կարող շարունակել աշխատանքը, իսկ որևէ թուրք բժշկի հետ առնչվել չէի համարձակվում: Ստացվեց այնպես, որ մենք 1922 թ. դեկտեմբերին լրիվ հեռացանք Ուրֆայից: 1897 թ. դր. Լեփսիուսի առաջին միսիոներական աշխատողները եկան Ուրֆա և 25 տարի անց՝ թողեցինք քաղաքը: Կարելի՞ է ևս մեկ անգամ այնտեղ հանգրվանել, թե՞ մենք ստիպված ենք ընդմիշտ հեռու մնալ այդ երկրից, որին մենք մեր լավագույն կենսաուժերը, մեր ամենամեծ սերը նվիրեցինք: 25 տարիների ընթացքում այնտեղ որքա՞ն քրտինք, որքա՞ն աղոթքներ են զոհաբերվել երկրի և ժողովրդի համար:

Ժողովրդի համար

[«Der christliche Orient», 1920]

Երբ պատերազմը բռնկվեց, և Թուրքիան նույնպես դրա մեջ մտավ, իմ կինը ցանկացավ Ուրֆայի կանանց շրջանում մի հանգանակություն կազմակերպել «Կարմիր մահիկի» համար: «Կարմիր մահիկը» միջազգային կարմիր խաչի մի ճյուղն է: «Խաչ» բառը մահմեդականին գրեթե ատելի է, որովհետև այն քրիստոնյաների խորհրդանիշն է: Այդ պատճառով մահմեդականներն իրենց Կարմիր խաչի հաստատությունը «Կարմիր մահիկ» են անվանել: Կանանց շրջանում նման հանգանակությունն Ուրֆայի համար միանգամայն նոր, չլսված բան էր: Պարզ էր, իմ կինը միայնակ չէր կարող այցելել քաղաքի բոլոր կանանց, ինչի պատճառով նա դիմեց մի քանի երեվելի հայ կանանց: Վերջիններս, այնուհետև, հանգանակություն են կազմակերպել նաև քրիստոնյա կանանց շրջանում: Այնուհանդերձ պարզ էր, որ իմ կինը պետք է գնար մահմեդական կանանց մոտ, եթե նրանց կողմից հանգանակության համար ընդհանրապես ինչ-որ բան պետք է հատկացվեր, իսկ մահմեդականների մեծ մասը տեղացի քրիստոնյա կանանց՝ հենց դռների առջևից անկասկած կվռնդվեին:

Այդքանով իսկ մահմեդական տները գնալու համար իմ կինը պետք է մի երևելի և հայտնի թրքուհու գտներ: Վերջինիս նա գտավ ի դեմս Էմինե խանումի, որն իմ կնոջը չորս օր շարունակ առավոտյան ժամը ութից մինչև երեկոյան վեցը հավատարիմ կերպով ուղեկցեց տնից-տուն: Ձմեռ էր, և դրա հետ մեկտեղ՝ վատ անձրևային եղանակ: Կանայք մեծ մասամբ արդեն կեսօրին թրջված էին: Մի տանը նրանց տաք գուլպաներ էր տրվել՝ փոխելու համար, և թացերը չորացվել էին քարածխի վառարանի մոտ:

Արդեն առաջին օրը պարզ էր դարձել, որ Էմինե խանումը ոչ բոլոր մուսուլմանական տներն էր ճանաչում, որի պատճառով [այդ աշխատանքում] ժողովրդի միջից մի կին՝ մի արաբուհի ներգրավվեց: Հետո ներկայացավ կիսով չափ հոգեկան հիվանդ մի քրդուհի ևս, որի մասին ստորև դեռ կխոսվի: Այդպես չորս կանայք շրջում էին տնից տուն և բախում դռները «Կարմիր մահիկի» համար: Շատ տներում նրանք անմիջապես ընդունում էին գտնում: Արևելյան սովորույթների համաձայն՝ իմ կինը պետք է որոշ չափով իրեն գովաբաներ, քանի որ նման բան այնուամենայնիվ դեռ երբեք ոչ

մի կին չէր համարձակվել անել, առավել ևս մի օտար կին, որը, ըստ նրանց կարծիքի, թուրք զինվորների հետ ոչ մի առնչություն չուներ: Շատ կանայք նաև բացահայտ ասում էին, որ իրենք ոչինչ չեն տա, եթե իմ կինը նրանց բավականաչափ երաշխիք չտա, որ հոգ կտանի նաև այն բանի համար, որ այդ փողով վիրավորված զինվորների համար ինչ-որ օգտակար բան արվեր:

Մի աղքատ թրքուհի չզլացավ կանանց նաև սուրճով և խմորեղենով հյուրասիրել: Դրանից զատ նա տվեց նաև մի փոքրիկ ընծա՝ «Կարմիր մահիկի» համար: Այլ տեղերում կանանցից ինչ-որ բան ստանալու համար համոզելու մեծ ուժ էր անհրաժեշտ: Պետք էր լինում տհաճ դիտողություններ անել, ինչպես օրինակ. «Դուք ոչ մի զավակ չունեք պատերազմում: Ինչպե՞ս է լինելու, եթե նա վիրավորվի և ոչինչ չլինի նրան վիրակապելու համար»: Նման ակնարկներից հետո պատահում էր, որ կանայք սարսափելի անեծքներ էին արտաբերում պատերազմի հանդեպ, այո՛, անձամբ սուլթանի և գերմանացիների հանդեպ կամ՝ թշնամիների հանդեպ: Այլ կանայք կարծում էին, թե դրամահավաքը կատարվում է գերմանացիների համար. այդ դեպքում նրանք չէին ցանկանում օգնել: Երբեմն պետք էր լինում ցույց տալ նվիրատուների ցուցակն՝ ասելով, որ այն նահանգապետին էր ներկայացվելու, ընդ որում՝ ցավալի կլինի, եթե նրա անունն այդ ցուցակում գրված չլինի:

Էմինե խանումը նույնպես ուզում էր ապացուցել, որ ինքը հավատացյալ մահմեդական էր, քանի որ նա երբեք բաց չէր թողնում կեսօրի և հետկեսօրյան աղոթքները: Կարող էր այնպես պատահել, որ նա մի տանը ջուր ուզեր ու իր ծիսական լվացումները կատարեր, իսկ հաջորդ տանը՝ աղոթքը կատարեր:

Մի տանը, երբ տեղեկացել էին, թե ինչ էին նրանք ուզում, հանգանակություն իրականացնող մեր կանանց սարսափելի անեծքներով դուռն էին ցույց տվել: Այնուամենայնիվ իմ կինը ոչ մի տեղ թույլ չէր տալիս իրեն մերժել: Ահա վերոհիշյալ դեպքում ևս նա [տանտիրուհուն] ասում էր. «Hiç olmazsa bir kahve verin!» (Դուք կարող էիք ինձ գոնե մի բաժակ սուրճ տալ): Նրանք չէին կարողանում դա մերժել, և սուրճ խմելու ընթացքում նոր համառ բացատրություններ էին տրվում այցելության նպատակի մասին, ու այդպիսով այստեղ նույնպես, ինչպես յուրաքանչյուր այլ տանը, մի նվիրատվություն տրվում էր, թեկուզ այն երբեմն բավականին փոքր էր լինում: Հաճախ նաև [նվիրատվությունն] ուղեկցվում էր օրհնանքի խոսքերով: Որոշ նվիրատու կանայք որդի ունեին պատերազմի դաշտում, և հաճախ նվիրատվության ժամանակ արցունքներ էին գլորվում մայրական այտերն ի վար:

Մի անգամ ամենահարուստ, բայց ամենևին ոչ ամենաերևելի տանը միայն տհաճությամբ մի ֆրանկ տրվեց հանգանակության համար: Բայց

իմ կինը դա վերադարձրեց հետևյալ խոսքերով. «Սա չափազանց քիչ է, Դուք Ուրֆայի ամենահարուստ մարդկանցից եք, Դուք կարող եք մի ոսկի տալ վիրավոր զինվորների համար»: Այդ ժամանակ եկավ թուրք ամուսինը: Նա հայհոյեց իմ կնոջը՝ ասելով. «Geberesin!» այսինքն «սատկես դու»: Բայց նա պատասխանեց նրան. «Եթե Դուք դա ասելով՝ մեռնելը նկատի ունեք, ապա մտածեք այն մասին, որ Դուք ավելի տարիքով եք, և, թերևս, Ձեր հերթը ինձնից շուտ կգա, բայց ես Ձեզ մահ չեմ ցանկանում, այլև երկար կյանք, որը կամենայիք օգտագործել նվիրատվություններ կատարելու համար, քանի որ այժմ ներողամտության ժամանակն է»: Գյավուրներին հայհոյելով՝ նա հրամայեց մի 2 ֆրանկանոց դրամ նետել իմ կնոջ ոտքերի մոտ: Քրդուհին բարձրացրեց այն և իրեն պահեց, քանի որ իմ կինը չուզեց այդ փողը միացնել մյուս գումարին:

Այդ այցելությունների ժամանակ իմ կինը հատկապես վերը հիշատակված Սուբհա անունով քրդուհու կողմից բարոյական մեծ աջակցություն էր ստանում: Նա իր՝ ժամանակ առ ժամանակ խանգարվող հոգեկան վիճակի պատճառով մահմեդական ժողովրդի մոտ, մի տեսակ, սրբի համարում ուներ, ինչպես առհասարակ բոլոր հոգեկան հիվանդներն էին սրբեր դիտվում: Սուբհան այրի էր: Սեփական երեխաներ չուներ: Այնուհանդերձ նա ոչ մեկի երեխային չէր «որդեգրում»: Հազվագյուտ չեն այն դեպքերը, երբ փոքրիկ երեխաներին նետում էին մզկիթների բակերը. Սուբհան մայր դարձավ այդ երեխաների համար: Այն ժամանակ նա ուներ այդպիսի երեք երեխա, այդ թվում՝ մի ծծկեր երեխա, որին նա վերցրել էր իր հետ «Կարմիր մահիկի» համար խնդրայցեր կատարելու ժամանակ: Նա նրան մերթ այս, մերթ այն կնոջ մոտ կերակրել էր տալիս, քանի որ նա այդ ժամանակ ընդհանրապես բոլոր երեխաների սննդի և հագուստի համար մուրում էր: Ով «Կարմիր մահիկի» համար կատարվող խնդրայցերի ժամանակ փոքր հանգանակություն էր կատարում Սուբհան կարող էր նրան հանդիմանել, որ Ալլահը նրան այդ ժլատության համար, անշուշտ, պատժելու էր, և քանի որ կանայք, հատկապես սուրբ Սուբհայից վախենում էին, նվիրատվությունն ավելանում էր:

Կարելի է արձանագրել, որ այդ հանգանակությունը բավական գոհացուցիչ արդյունք տվեց: Դրանով մենք կարողացանք 1500 ֆրանկի վիրակապային նյութեր և դեղորայք ձեռք բերել և դրանք, դեռ 1914 թ. վերջին, ձիերի վրա բեռնած, հասցնել Վանի ռազմաճակատ: Մեզ հայտնի չէ, արդյոք այլ քաղաքներում նույնպես կանանց շրջանում «Կարմիր մահիկի» համար հանգանակություններ կազմակերպվել են, թե՝ ոչ: Իմ կինը, սակայն, շատ գոհ էր իր ստացած փորձառության և այն դիտարկումների համար, որոնք նա կատարել էր այդ խնդրայցերի ընթացքում. նա լայն պատկերացում ձեռք բերեց թուրքական հարեմների մասին: Իսկ ահա մահմեդական կանանց համար քրիստոնյա կնոջ այդ ձեռնարկը մի այնպիսի արարք էր, որը նրանք շուտ չեն մոռանա:

Բազել, Շյոնբայնշթրասե 36, 1920 թ. ապրիլի 26
Պարոն դր. Յոհ. Լեփսիուսին
Պոտսդամ

Սիրելի, մեծարգո պարոն դոկտոր.

Ահա ես շարադրել եմ իմ «արկածները» և ուղարկել Տեմպել հրատարակչությանը: Քանի որ ես մինչ այժմ դեռ երբեք ոչ մի գիրք չեմ հրատարակել, դիմում եմ Ձեզ՝ խնդրելով, որ, այնուամենայնիվ, ինձ խորհրդով և գործով օգնեք: Բարի եղեք և ընթերցեք այդ շարադրանքը: Այդտեղ շատ բաներ կան, որոնք Ձեզ նույնպես մեծ չափով կհետաքրքրեն: Ըստ այդմ Դուք ամենից լավ կիմանաք, թե այդ փոքրիկ գործն ինչպես կարելի է ամենալավ կերպով հրատարակել: Արդյոք գրքույկի՞, թե՞ գրքի տեսքով, ի՞նչ գին դրա համար պետք է պահանջեն, արդյոք տպարանը պետք է գնի՞ աշխատանքը, թե՞ ես նախ պետք է բոլոր ծախսերը ստանձնեմ, և հետո մուտքերն ինձ պատկանեն: Ես այդ ամբողջին տեղյակ չեմ: Այդ ամենը ես լիովին Ձեզ եմ թողնում, քանի որ Դուք, իրոք, գիտակ եք նման գործերում: Ինձ նաև շատ հաճելի կլիներ, եթե ես կարողանայի նախքան կրկին Արևելք մեկնելը կատարել շարվածքի սրբագրությունը: Ես մեկնելու եմ հունիսի սկզբին: Դա պետք է, ուրեմն, նկատի ունենալ: Թե՞ պետք է մեկ ուրիշը կատարի սրբագրումը, ինչը, սակայն, շատ անունների պատճառով խիստ անցանկալի կլիներ:

Հուսով եմ, որ Դուք լավ եք: Եվս մեկ անգամ գալո՞ւ եք Շվեյցարիա: Անկասկած, ո՛չ մինչև մեր մեկնումը: Ես պետք է իմ կնոջ հետ դրսում՝ ազատ Հայաստանում, մի շվեյցարական որբախնամ հաստատություն հիմնեմ: Ես առաջարկեցի, որ այն զբաղվի հողագործության, գյուղատնտեսության և արդյունաբերության [ոլորտներով]: Ունենալու եմ աշխատողների անհրաժեշտ անձնակազմ: Գործը հիմնականում ղեկավարելու եմ իմ կնոջ հետ, որը ստանձնելու է աշխատանքի՝ առյուծի բաժինը, քանի որ ես իմ բժշկական գործունեությանը, ավելի քան երբևէ, հավատարիմ եմ մնալու: Սակայն որտե՞ղ է լինելու ազատ Հայաստանը: Հույս ունեմ մոտակա օրերին Ահարոնյանի[10] հետ հանդիպել և նրա հետ նաև այդ մասին զրուցել:

Անգլիացիները Սաֆեդում իմ քեռուց՝ տիկին Մաասից այժմ նաև իր տունն են խլել:

[10] Ավետիս Ահարոնյան, բանաստեղծ և բժիշկ, Անկախ Հայաստանի հանրապետության (մայիս 1918-նոյեմբեր 1920) նախագահ, մահացել է աքսորավայրում: (Ծանոթ. թարգմ.)

Ես Արևելքում հետագայում նույնպես հետամուտ կլինեմ Ձեր գործերին և, որտեղ կարող եմ, կաջակցեմ: Դրանում Դուք կարող եք վստահ լինել:

Մեր որդուն այժմ մենք տեղավորել ենք Շիրսի ուսումնադաստիարակչական հաստատությունում, որտեղ նա նախ պետք է ռեալական դպրոցն ավարտի, այնուհետև՝ ուսանի տեխնիկական դասարանում և հասունության վկայականը ստանալուց հետո ընդունվի Ցյուրիխի տեխնիկական համալսարանը:

Դուք ինձ գրեցիք, որ կկամենայիք դառնալ Ուրֆայում դր. Ֆիշերի և իմ տան գնորդը: Դա, այնուամենայնիվ, կարող է միայն այն ժամանակ կատարվել, եթե Դուք վստահ լինեք, որ այնտեղ հնարավոր կլինի շարունակել Ձեր հետագա աշխատանքը: Կարող է երկար տևել, մինչև Դուք դա կկարողանաք ճշտել: Երբ ազատ Հայաստանն իրականություն դառնա, մենք կհամոզվենք, որ Ուրֆայում միայն հայերի հետքերն են մնացել, որոնցով այլևս հնարավոր չի լինի գորգագործական գործունեություն իրականացնել: Մուսուլմանական բնակչությունը նույնպես այնքան է նվազել, որ ֆաբրիկայի աշխատանքի համար այլևս քիչ ուժեր կլինեն:

Դրա հետ մեկտեղ Դուք պետք է նաև նկատի ունենաք, որ գորգագործական արդյունաբերության վերականգնումն այնտեղ մի նոր մեծ կապիտալ է կլանելու: Եթե ես կարողանայի այդ հարցում ավելի լավատես լինել... :

Ես նախ Ուրֆա եմ գնալու, այնտեղ պետք է կայանավայրը լուծարեմ և, այնուհետև, հնարավորինս շուտ Հայաստան մեկնեմ: Թե ո՞ւր, սակայն, պետք է գնամ, ինչպես արդեն հիշատակեցի, դեռ հայտնի չէ: Միայն խաղաղության պայմանագրի կնքումը կարող է որոշ չափով հստակեցնել այն հարցը, թե մենք որտե՞ղ ենք հաստատվելու: Ըստ հնարավորին դա պետք է մի այնպիսի վայր լինի, որտեղ մինչ այժմ ոչ մի այլ ավետարանական առաքելություն չի գործել և նաև՝ ապագայում չի գործի:

Ես Գրիգոր Գրիգորյանին[12] ինձ հետ եմ վերցնելու: Նա պետք է այնուհետև ներգրավվի մեր աշխատանքում:

Շատ ջերմ բարևներ իմ կնոջից.

Ձեզ հավատարիմ՝

Եղբայր Յակոբ Կյունցլեր

[12] Հայ ավետարանական քահանա Պետրոս Գրիգորյանի որդին, որը որպես որբանոցի հայր Ուրֆայում էր աշխատում և սպանվել էր այնտեղ 1915 թ.: Գրիգոր Գրիգորյանի մայրը և քույրերից մեկը աքսորվել են: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Գրիգոր Գրիգորյանը Գերմանիա էր մեկնել՝ Բրեսլաուում մեքենաշինություն ուսանելու: Երբ նա պատերազմի ժամանակ հարկադրված եղավ ընդհատել ուսումը, իր ապրուստը վաստակում էր բանվորական աշխատանքով. (չշփոթել Բուլղարիայում գտնվող Գերմանական արևելյան առաքելության հետ կապի մեջ գտնվող քահանա Գրիգորյանի հետ): (Ծանոթ. թարգմ.)

Էլիզաբեթ և Յակոբ Կյունցլերները իրենց թոռան և շվեյցարական հյուպատոս Կարլ Լուցի և իր տիկնոջ՝ տիկին Գերթրուդի հետ Յաֆայում, Պաղեստին, 1937թ.

"Գերմանական արևելյան առաքելության" Ուրֆայի որբանոցի սաները, ուր 1913-1915թթ. որբանոցի տնօրությունը ստանձնել էր Կ. Եփփեն: Այս մանուկների մեծ մասը, եթե ոչ բոլորը, զոհ գնացին 1915թ. Ուրֆայի մեծ աղետին:

Մեծ եղեռնը վերապրած Եդեսիայի հայերը՝ լուսանկարված թուրքական բռնություններին զոհ դարձած հայերի աճյունների հետ (լուսանկարը 1919 թվի):
Պաստառի վրա գրված է "Քաղաքակրթության հիմքերը Մերձավոր Արևելքում. հայերի գանգերը. Ուրֆա, 1914-1919":

Յ. Կյունցլերի ինքնագիր մատիտանկարը՝
անօթևան ընտանիքների համար բնակավայրի պատկերով



Յ. Կյունցլերի ինքնագիր կատականկարը


ՄԷՍՆԻ
ՍԱՄՈՍԱՏ
ԳԱՐԱՃՈՒՐՈՒՆ
ՍԵՐԵՐԵԿ
ՀԷՎԷՆՔ
(հովակ)
ՀՌՈՄԿԼԱՅ
(Թոմ գալէ)
ԷՀՆԷՇ
ԵԴԵՍԻԱ
(ՈՒՐՖԱ)
ՍՈՒՐՈՒՃ
ՃՐԱՊԼՈՒՍ
ՄՄՊԷՃ
(հիերոպոլիս)
ՄԱՊ
ՀԱՐԱՆ
ՌԱՍ-ԷԼ-ԱՅՆ
ԹԼ-ԱՆԷՃԷ
ԱՍՍԱՏ
ԹՈՒԱԼ ՍԱՊԱ
ԹԼ-ԷՍ-ՍԷՄՄԷ
ՄԷՍՔԷՆԷՃ
ՄԷՅՏԱՆ
ԳՈՒՊԱ
ՄԷԿՏԻՔ
ՊԱՂ ՔԷՕՅ
ՃԷՐԱՆ
ԹԼ-ԱՊՈՒՆ
ԱՊՈՒՐՃԱՄ
ԷԼ ՀԱՄՄԱՄ
ՇԷՐԱԿՊԱՊ
ՆԱՀՐ ՊԱՆԻՆ
ՄԱՐԱԳՈՂ ՀԱՄՄԱՄ
ՍԱՐՆԻՃ
ՎԷՐԱՆՇԷՀ
ՄԱՐԱՃԱՎԷՐԱՆ
ԹԼԿՈՒՂԱՆ
ԹԻԼՃԱՖԷՐ
ՇԱԼԱՊՏԷՐ
ՁԱՄՈՒՐԼՈՒ
ԱՂՎԷՐԱՆ
ՇԷՊԷՔ
ՇԵՆՈՒԿ ՏԱՂԼԱՐ
ՍԱՐՄԱՂԱՐԱ
ՔԷՇԻՂԼԻՔ
ԹԼՄՈՒՍԱ
ԿԱԶԻԱՆԹԷՓ
ՆԻՁԻՊ
ՊԻՐԷՃԻՔ
ԹԻԼՔԱՐ
ՖԱՅԱՄԼԸ
ՀԱՐԱՊԱՏԱՌ
ԹԷԼԱՆՊԱՐ
ՃԱՆԱՏԱՂԻՐ
ՊԻՐՈՎԷՅՐՈՒՆ
ՀԱՏԱՊԷԱԿԸՐ
ԹԼ-ՄԱՐԻՆ
ԹԼ ԽՆՁԻՐ
ՄԱՐԱԳՈՂ
ՕՍՈՍԳԱ
ՏԱՂԼԷՊ
ՏԱՂԼԱՐԸ
ՓԱՁԱՐԾԸՂՕ
ՋԷՔԷԼԻՍ
ԹԻԼ
ՄԱԼՕՂԼԻ ՀԱՅԻԿ
ՏԻԵԳՈՒՏԱՔ
ՀՈՎՍԿԻՐՔ
ՊԻՇԻՅԱՆ
ԹՈԼՈՊԻՍ
ՊԻԼԻՊԱՂՏԱՏ
ԳԱՄԸՂԼԸ
ՇԵՔԷՐԼԻ
ԹԷՔԻՐ ԹԻՒՔԻՒՐ ՏԱՂ
ՔՕՂՄԻՔ ՏԱՂ
ԿԱՐՕՂ
ՀԻՆ ՃԳՆԱՐԱՂ
ԵԷՏԻԳՈՒՅՈՒ
ՍԻՔՉԱՀԻԱՐ
ՍՈՒՍՈՒՂ
ԳԱՐԱՔԷՕՓՐԻ
ԿԱՐՄՈՒՆՔ
ՁԻՄՏԻՆՔԱԼԷ
ԹԷՔ ԹԷՔ ԼԵՌ
(ՔԷԿՔԷՊ)
ԿԷԱՒՈՒՐԻՕՐԸ
ՍԱՐՄԱՂԱՐԱ
ՔԷՇԻՂԼԻՔ
ՕՍՈՍԳԱ